

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

ԱՆՆԱՅՈՒՐԻԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ՂԱՐԱՔԱՂԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽԵՂԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտություն**

**քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
համար**

**Գիտական ղեկավար՝
քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մ.Մ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ ----- 3

ԳԼՈՒԽ 1 ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԲԱԶՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԵՆԹՅՈՒՄ ----- 16

1.1. Քաղաքական արդիականացման արժեքային էվոլյուցիան: Քաղաքական արդիականացումն անհատ – ազգ – պետություն - քաղաքակրթություն հարթություններում ----- 16

1.2. Ինքնորոշումը որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ ----- 35

ԳԼՈՒԽ 2 ՂԱՐԱՔԱՂԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾՆԵՆԹՅԻ ԿԵՐՊԱՓՈԽՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ ----- 53

2.1. Ազգերի ինքնորոշման իրավունքն ու տարածքային ամբողջականության սկզբունքը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում ----- 53

2.2. Տարածքային խնդիրների ընկալման փոխակերպումները Ղարաբաղյան հակամարտության համատեքստում ----- 66

2.3. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարակից և անհնարաբար քաղկացուցիչները և դրանց փոխակերպումը բանակցային գործընթացում ----- 76

ԳԼՈՒԽ 3 ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ, ԴՐԱ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂԱՐԱՔԱՂԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ----- 93

3.1. Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը. ընդհանուր դիտարկումներ ----- 93

3.2. Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը. առանձնացված օրինակներ ----- 102

3.3. Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում ----- 132

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ----- 144

ՀԱՎԵԼ ՎԱՃԵՐ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արդի աշխարհակարգը նոր մարտահրավերներ է նետում մարդկությանը, ինչն առաջացնում է ինքնորոշման գաղափարի նորովի դիտարկման և վերարժևորման անհրաժեշտություն:

Պատմության հոլոպոլյթում գերազանցապես դիտարկվում է ժողովուրդների ինքնորոշման խնդիրը, մինչդեռ գլոբալ իզացիայի պայմաններում կերպափոխվող հասարակություններում առկա քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ինքնորոշման հիմնախնդիրը դիտարկելու երեք մակարդակում՝ անհատ, ազգ, պետություն: Այս համատեքստում ազգային պետություններում ընթացող արդիականացման գործընթացները սերտորեն փոխկապակցվում են ինքնորոշման հիմնախնդրի հետ:

Ազգային պետությունը շարունակում է դիտարկվել որպես արդի աշխարհակարգի հիմք բազմաթիվ տեսաբանների, այդ թվում՝ ամերիկացի վերլուծաբան, մտածող Ջ.Քլիստենցերի կողմից, ով գլոբալ աշխարհակարգի տեսությունը կառուցում է «ազգային մոդելների» կայացման և զուգամիտման սկզբունքի վրա՝ հիմնավորելով «խաղի ընդհանուր կանոնների» անհրաժեշտությունը՝ բախումներից և կոնֆլիկտներից խուսափելու համար¹:

Զուգահեռաբար արդիականացման ընթացքում էթնոքաղաքական հակամարտություններն ստանում են որոշակի քաղաքակրթական բնույթ: Ինչպես նշում է հայ հետազոտող Ջայկ Քոթանջյանը, «համաշխարհային քաղաքակրթության զարգացման ներկայիս շրջանը բնութագրվում է միջքաղաքակրթական շփումների աճող անկայունությամբ և, միաժամանակ, ներքաղաքակրթական երկխոսության՝ համաձայնության ամրապնդմամբ»²: Դա մեծապես պայմանավորում է ներքաղաքակրթական հակամարտությունների խաղաղ կարգավորումը: Ընդհանուր արժեքների առկայությունը ու

¹ Kissinger H., World Order, Penguin Random House LLC, New York, 2014, p. 371-375

² Քոթանջյան Ջ Ս, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր.: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010.

Ներքաղաքակրթական համերաշխությունը, հիմնականում, առավել նպաստավոր պայմաններ են ապահովում նաև ինքնորոշման իրավունքի իրացման, դրա միջոցով կայունության և անվտանգության ապահովման համար: Հակամարտության կողմերի՝ միջքաղաքակրթական շփումների բարդության պայմաններում, առաջնային կարևորություն է ստանում առնվազն ընդհանուր արժեքների առկայությունն ու դրանց հիման վրա կարգավորման կառուցումը: Այս համատեքստում Ղարաբաղյան հակամարտության քննարկումը հնարավորություն է տալիս դիտարկել կողմերի արժեքային տարբերությունների և կարգավորման գործընթացի ընկալումների միջև փոխադարձ կապն ու դրա ազդեցությունը բանակցային գործընթացի վրա:

Վերոնշյալի համատեքստում Ղարաբաղյան հիմնախնդրի վերլուծությունը՝ միջազգային փորձի հետ համադրամբ, արդիական է, քանի որ հնարավորություն է ընձեռում մի կողմից քննարկելու Ղարաբաղի ինքնորոշման հարցի արդիականացման հնարավորությունները ժամանակակից քաղաքական գործընթացների համատեքստում, մյուս կողմից՝ դիտարկելու դրա արդյունավետության բարձրացման միջոցները՝ հաշվի առնելով բանակցային գործընթացի կերպափոխումներն ու հիմնական խոչընդոտները: Տվյալ դեպքում հիմնախնդրի արդիականացումը ենթադրում է նաև միջազգային հանրության շրջանում այն ընկալման ամրապնդումը, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը, հիմնարար իրավունք էլ ինչպես զատ, առաջին հերթին, ֆիզիկական գոյության, անվտանգության և տարածաշրջանային կայունության խնդիր է:

Արցախի ժողովրդի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման հրամայականն անհրաժեշտություն է ձևավորում խնդիրն ուսումնասիրելու միջազգային քաղաքական գործընթացների, նման խնդիրների կարգավորման փորձի համատեքստում: Ելնելով հակամարտությունների սկզբունքային նմանություններից և միաժամանակ հաշվի առնելով դրանց միջև առկա տարբերությունները՝ աշխատանքում դիտարկվել է ինքնորոշման

իրացման, այդ հիմքով ձևավորված հակամարտության ունենրի կարգավորման միջազգային փորձը: Դիտարկվել են ինչպես եվրոպական (Ալանդյան կղզիներ, Կատալոնիա, Ֆրանս-գերմանական հակամարտություն, Կոսովո, Կիպրական հիմնախնդիր, ՅՆՍԻՍային Իռլանդիայի և Շոտլանդիայի անկախացման հանրաքվե), այնպես էլ տարածաշրջանային (Մերձդնեստրի հակամարտություն, Աբխազիայի, Յարավային Օսեթիայի հակամարտություններ) ու հեռավորարևելյան (Արևելյան Թիմոր) և աֆրիկյան (Յարավային Սուդան, Էրիթրեա) հակամարտությունների օրինակներ՝ հաշվի առնելով ինքնորոշման հիմնախնդիրների և դրանց լուծման քաղաքական յուրահատկությունները:

Յիմնական գիտական մշակվածություն և աստիճանը: Ձեռնարկելով մեզ հետաքրքրող հիմնախնդրի ուսումնասիրությունը՝ ելակետ ենք ընդունել Բ.Դոյչի այն մոտեցումը, որ «արդիականացումն ակտիվացնում է էթնիկ գիտակցումը»³: Աշխատանքում դիտարկվել է արդիականացման գործընթացի ազդեցությունն արժեքային կերպափոխումների, հատկապես ազգային գիտակցության աճի վրա, արդիականացման գործընթացի ազդեցությունն ինքնորոշման վրա:

Ուսումնասիրված գրականությունը համակարգել ենք ըստ մի քանի հիմնական խնդիրների՝ քաղաքական արդիականացման գործընթաց և նոր աշխարհակարգ, ինքնորոշումը որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ և հետխորհրդային տարածքում տեղի ունեցող կերպափոխման գործընթացներ, Ղարաբաղյան հակամարտություն:

Դանիել Բելլը տարանջատում է մտցնում երեք հասկացությունների միջև՝ մոդեռնիթի («modernity»), մոդեռնիզմ («modernism») և մոդեռնիզացիա («modernization») ⁴:

³ **Deutsch Karl W.**, Social Mobilization and Political Development. The American Political Science Review, 1961, pp. 493-514. **Дойч К.**, Национальная интеграция: обзор некоторых концепций и исследовательских подходов, Этнос и политика: Хрестоматия/Авт.-сост. А.А.Праззаускас.-М.: Изд-во УРАО, 2000, с. 190-199.

⁴ **Белл Д.**, Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования/ Перевод с английского. Изд. 2-ое, испр. и доп. – М.: Academia, 2004. CLXX. – 788 с. **Белл Д., Иноземцев В.Л.**, Эпоха разобщенности: Размышления о мире XXI века. - М.: Центр исследований постиндустриального общества, 2007. – 304 с.

Արդիականության տեսության մեջ առանձնանում է երկու ուղղություն՝ պահպանողական (Ս.Յանթինգթոն, Խ.Լինց⁵), որի հետևորդները հիմնական խնդիրը տեսնում են հասարակության մոբիլիզացման, քաղաքական կյանքում նրանց ներգրավման անհրաժեշտության և դրա համար անհրաժեշտ նրանց շահերն ազդեցացնող ինստիտուտների բացակայության մեջ, և ազատական (Յ.Ալմոնդ, Լ.Պայ⁶), որի հետևորդներն առաջնային էին համարում սոցիալական շարժունակության ապահովումն ու քաղաքական համայնքի ներքո հանրության ինտեգրման կարևորումը: Շ.Յանթինգթոնն արդիականացումը կապում է իշխանության ռացիոնալիզացման, կառույցների դիֆերենցման և բնակչության քաղաքական ակտիվության աճի հետ:

Արժեքային համակարգի Էվոլյուցիան ինստիտուցիոնալ տեսության հետևորդները դիտարկում են անհատ-պետություն և հարաբերությունների պարադիգմում և բաժանում են երեք փուլի: Դեռևս մոդեռնի փուլում զարգացող անհատի ինքնորոշումը՝ բարօրության համապատասխան մակարդակի առկայության պարագայում, հանգեցնում է ոչ նյութական արժեքների գերակայությանը՝ ինքնաիրացում, պարտավորություններ, վստահություն և այլն⁷: Ռ.Ինգելհարթը Բ.Վելցելի հետ միասին առաջ է քաշում «ժողովրդավարության ազատականացման տեսությունը (the emancipatory theory of democracy)», որն ուղիղ կախվածության մեջ է դնում ազատականացման արժեքներն ու

⁵ **Samuel P. Huntington**, *The Clash of Civilizations?*, Foreign Affairs, 1993. Volume 72, N 3, pp. 22-49. **Хантингтон С.**, Столкновение Цивилизаций. М.: АСТ, 2003. – 603 с. **Хантингтон С.**, Третья волна. Демократизация в конце XX века /Пер. с англ. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003. – 368 с. **Хантингтон С.**, Политический порядок и меняющиеся общества. — М.: Прогресс – Традиция. 2004. – 480 с. **Linz J., Stepan A.**, *Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe*, 1996. – 479p.

⁶ **Gabriel A. Almond and G. Bingham Powell**, *Comparative Politics: A Developmental Approach*, Boston: Little, Brown and Co., 1966. – 348 p. **Lucian Pye**, *Aspects Of Political Development: The Concept Of Political Development*, 1966. - 205 p.

⁷ **Ортега-и-Гассет Хосе**, Восстание масс.-М: ООО "Издательство АСТ" (перевод с исп.), 2016. - 256 с. **Маркузе Г.**, Эрос и цивилизация. Одномерный человек: Исследование идеологии развитого индустриального общества.- М: ООО "Издательство АСТ", 2002. - 526, [2] с.- (Philosophy) **Мартьянов В. С.**, Глобальный Модерн, постматериальные ценности и периферийный капитализм в России. – Полис. Политические исследования. 2014. № 1, с. 83-98.

ժողովրդավարական ինստիտուտները⁸: Նրանք անդրադարձ են կատարում այն սոցիալական փոփոխություններին, որ հանգեցնում են արժեհամակարգային փոփոխությունների արդիականացման գործընթացում: Ըստ նրանց, արդիականացումը հանգեցնում է փոփոխությունների մշակութային ոլորտում, մեծացնում է անհատական անկախությունը:

Ըստ Ռ.Ռաստոկի, անցումը ժողովրդավարության տեղի է ունենում երկու փոխկապակցված գործոնների համադրման պարագայում՝ ազգային միասնության որոշակի մակարդակի առկայության և սոցիալական հիմնական ուժերի որոշակի քաղաքական մրցապայքարի⁹:

ժամանակակից աշխարհակարգի, դրանում քաղաքակրթությունների յուրահատուկ դերի և դրան զուգահեռ «ազգային մոդելների» աճող դերակատարության մասին գրում են Ս. Յանթինգթոնը, Յ.Քիսինջերը, Ֆ. Չաքարիան¹⁰: Նոր աշխարհակարգում նրանք կարևորում են ազգային պետության դերակատարումը: Ծ. Յանթինգթոնն ազգային ինքնության արդիականացման գործընթացն ուսումնասիրում է ամերիկյան ինքնության ձևավորմանը և արդիականացմանը նպաստող հիմնական գործոնների համատեքստում՝ կարևորելով կրոնը, մշակույթը, կրեդոն և այլն¹¹:

Ազգային գիտակցության և մշակույթի հարցն արդիականացման տեսության մեջ նորովի ուսումնասիրել է ռուս տեսաբան Վ. Ֆեդոտովան՝ փաստարկելով արդիականացում-արևմտականացում

⁸ **Инглхарт Р.**, Модернизация и демократия, Демократия и модернизация, под ред В.Л. Иноземцев. Изд. «Европа»,-М.: 2010, с. 163-182. **Инглхарт Р., Вельцель К.**, Модернизация, культурные изменения и демократия: Последовательность человеческого развития М.: Новое издательство, 2011. — 464 с. **Инглхарт Р.**, Зачем социологи, психологи, экономисты и политологи изучают ценности?, Четвертая лекция цикла «Мировой класс», Москва, 2015. **Welzel C., Inglehart R., Kruse S.**, Pitfalls in the Study of Democratization: Testing the Emancipatory Theory of Democracy, British Journal of Political Science, Cambridge University Press, 2015.

⁹ **Rostow W.**, The Stages of Economic Growth, The Economic History Review, New Series, Vol. 12, No.1. 1959. **Растой Д.А.** Переходы к демократии: попытка динамической модели. – Полис. Политические исследования. 1996. № 5. С. 5, с. 5-15.

¹⁰ **Samuel P. Huntington**, Political Order in Changing Societies, New Haven and London, Yale University Press, Seventh Printing, 1973. – 263 p. **Zakaria Fareed**, The post-American World, W.W.Norton and Company, New York, London, 2008. - 292 p. **Henry Kissinger**, World Order, Penguin Books Limited, United States, 2014.– 420p.

¹¹ **Хантингтон С.**, Кто мы?: Вызовы американской национальной идентичности / С. Хантингтон; Пер. с англ. А. Башкирова. — М.: ООО «Издательство АСТ»: ООО «Транзиткнига», 2004. (Philosophy). — 635, [5] с.

(վեստերնիզացիա) գործընթացների տարբերությունը, և առաջ է քաշել «արդիականացման ազգային մոդել» հասկացությունը՝ հակադրելով այն «վազոդ-հասնոդ» մոդելին: Նա յուրովի է մեկնաբանում արդիականացման գործընթացի զարգացման հրամայականները՝ պայմանավորված ազգ-պետության զարգացմամբ, մարդու անվտանգությունամբ, կապիտալի հոլմանիզացմամբ¹²: Արդիականացման «ազգային մոդելը» զարգացնելիս Թել-Ավիվի համալսարանի ամբիոնի վարիչ, հրեա հետազոտող Շ.Էյզենշտադը կարևորում է «բազմաթիվ մոդեռնիզացիաների» գոյությունը¹³:

ԱՄՆ հետազոտող Ռ. Ռոբերթսոնն ինքնորոշման խնդիրներն ուսումնասիրել է քաղաքական արդիականացման գլոբալիստական առանձնահատկությունների դրսևորման համատեքստում¹⁴: Գլոբալ գործընթացների բնույթը տվյալ դեպքում պայմանավորվում է անհատի ինքնորոշմամբ մի քանի հարթություններով՝ անհատ-ազգ-պետություն-մարդ:

Լ.Դայմոնդն արձանագրում է ժողովրդավարության թուլացում և ռեցեսիա ոչ միայն զարգացող, այլև Արևմտյան, զարգացած երկրներում¹⁵:

Ինքնորոշման գործընթացում ազգային ինքնագիտակցության աճն ուսումնասիրել են Ու.Ալտերմատը, Օ. Բաուերը, Յ.Յաբերմասը¹⁶: Է.Սմիտն ազգը դիտարկում է որպես մոդեռնիզմն առաջ մղող

¹² **Федотова В.Г.**, От догоняющей модернизации к национальной: теоретический аспект, Фонд исторической перспективы, 07/12/2007. **Федотова В. Г.**, Модернизация и культура. М.: Прогресс-Традиция, 2016. – 336 с. **Федотова В. Г.**, Различия политических культур и международные конфликты // Полит. исслед. 2015. № 1. С. 44–54. **Fedotova V.**, Democratic Transit: Lessons and Perspectives in Russia // Democracies XXI: A Paradigm Shift. Analytical Report. М., 2015. P. 261–274.

¹³ **Eisenstadt S. N.** Multiple Modernities // Daedalus. Winter 2000. Vol. 29, № 1, p.p. 1-29. **Эйзенштадт Ш.**, Срывы модернизации, Неприкосновенный запас. Дебаты о политике и культуре № 74 (6/2010). — М.: Новое литературное обозрение, 2010, с. 42-67.

¹⁴ **Robertson R.**, Beyond the discourse of globalization, Glocalism: journal of culture, politics and innovation, University of Pittsburgh and University of Aberdeen, 2015, 1, p.p. 1-14.

¹⁵ Democracy after Communism/edited by **Larry Diamond and Marc F. Plattner**, The Johns Hopkins University Press, 2002 – 288p. **Diamond Larry**, Facing Up to the Democratic Recession, Journal of Democracy Volume 26, Number 1 January 2015, pp. 141-155.

¹⁶ **Альтерматт У.**, Этнонационализм в Европе. М.: Российск. гос. гуманит. ун-т, 2000. – 367 с. **Бауэр О.**, Национальный вопрос и социал-демократия, Нации и национализм / Б. Андерсон, О. Бауэр, М. Хрох и др; Пер с англ. Н 28 и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского — М.: Праксис, 2002, с. 52-121. **Хабермас Ю.**, Европейское национальное государство: его достижения и пределы. О прошлом и будущем суверенитета и гражданства, Нации и национализм / Б. Андерсон, О. Бауэр, М. Хрох и др; Пер с англ. Н 28 и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского — М.: Праксис, 2002, с. 364-381.

հիմնական ուժ¹⁷: Է.Գելներն ազգային գիտակցության, ինքնագիտակցության, ինքնորոշման խնդիրները կապում է կրթության, արդյունաբերության, ազգային տնտեսության զարգացման հետ¹⁸:

Վերլուծելով արդիականացման գործընթացը հետխորհրդային իրականության մեջ՝ հասարակության և պետության մեջ անհատի ինքնաիրացման և ինքնորոշման հնարավորությունը, կերպափոխման յուրահատկությունները նորովի վերաթևորեցին Ի.Սեմենենկոն, ԱՄելվիլը¹⁹:

Ինքնորոշման հիմնախնդիրները քաղաքական արդիականացման համատեքստում հայ իրականության մեջ առաջին անգամ ուսումնասիրել է Յ.Քոթանջյանը²⁰, որը համակարգված վերլուծել է միջազգային և տարածաշրջանային հակամարտությունները Եթնօրաքաղաքականության և անվտանգային խնդիրների տեսանկյունից, այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում: Մ.Մարգարյանն ուսումնասիրել է քաղաքական արդիականացման գործընթացը, դրա զարգացումները, դրսևորման առանձնահատկությունները ՅՅ քաղաքական զարգացման համատեքստում²¹: Յետխորհրդային տարածքի արդիականացման

¹⁷ Смит Энтони Д., Национализм и модернизм: Критический обзор современных теорий и национализма/Пер.с англ. – М.:Праксис, 2004. – 466 с.

¹⁸ Геллнер Э., Нации и национализм. М.: Прогресс, 1991. – 126 с.

¹⁹ Семененко И. С., Дилеммы национальной идентичности: политические риски и социальные приобретения // Полис. Политические исследования. № 6. 2009, с. 8-23. Мельвиль А.Ю., О траекториях посткоммунистических трансформаций / А.Ю. Мельвиль // Полис. – 2004, с. 64-75. Melville A., “Bad enough governance”: state capacity and quality of institutions in post-soviet authoritarian and hybrid regimes, 23rd World Congress of Political Science (IPSA), July 2014.

²⁰ Քոթանջյան Յայկ Ս., Յայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., ՅՅ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008, 604 էջ; Քոթանջյան Յայկ Ս., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Յայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Եր., ՅՅ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2009, 655 էջ:

²¹ Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման եւ զարգացման հիմնահարցեր, պատ. խմբ. Գ. Յ. Սաֆարյան, Եր., «Պետական ծառայություն», 2004, 269 էջ: Մարգարյան Մ., Քաղաքական ընտրանին եւ ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Յայաստանի Յանրապետությունում, Եր., «Պետական ծառայություն», 2006, 391 էջ: Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի Եվոլյուցիան, Քաղաքական արդիականացումը և ՅՅ քաղաքական գործընթացները (Քաղաքագիտական հանարապետության երրորդ գիտաժողովի նյութեր). - Եր.: Խ.Արովյանի անց. պետական մանկավարժական համալսարան, 2013: Մարգարյան Մ.,

գործընթացները՝ ըստ կիսանախագահական կառավարման համակարգի, ուսումնասիրել է Ա.Մարկարովը²²:

Ղարաբաղյան հիմնահարցի տարբեր ասպեկտներն ուսումնասիրել են Ա.Մանասյանը, Տ.Թորոսյանը, Ս.Մինասյանը, Յ.Բարսեղովը, Մ.Մայիլյանը²³ և այլոք: Օտարերկրացի հետազոտողներից խնդրին առավել մանրամասն անդրադարձել են Թոմաս դե Վաալը, Ս.Մարկեդոնովը, ԵԱՀԿ ՄԽՁԼ սաստանցի նախկին համա-նախագահ Վ.Կազիմիրովը²⁴: Այդուհանդերձ, Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման հարցը, մասնավորապես՝ բանակցային գործընթացում բախումնային դրույթների, դրանց ընկալման կերպափոխումը, միջազգային փորձի հետ համադրման համատեքստում ուսումնասիրված է:

Յետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները: Սույն առենախոսության հիմնական նպատակն է, ուսումնասիրելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում բախումնային դրույթների և դրանց հանրային ընկալումների

Ազգային պետության արդիականացման առանձնահատկությունները գլոբալացման գործընթացում, Եր., «Հանրային կառավարում» գիտական հանդես, ՀՀ ՊԿԱ, Միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, ՄԱՍ 1, 2014, էջ 104-114: **Մարգարյան Մ.**, Ազգային ինքնության արդիականացման հրամայականները (ըստ Ս. Հանթինգթոնի «Ո՞վ ենք մենք. ազգային ինքնության մարտահրավերները» աշխատության), Եր., «Հանրային կառավարում» գիտական հանդես, ՀՀ ՊԿԱ, 2/2015, էջ 139-146:

²² **Маркаров А.**, Проблемы консолидации демократии в Армении (на основе анализа ценностных ориентаций и отношений населения Армении), Политическая наука и политические процессы в Российской Федерации и Новых Независимых Государствах. Отв. ред. К. В. Киселев. Екатеринбург: Институт философии и права УрО РАН, Уральская академия государственной службы, 2005, с. 56 – 66. **Маркаров А.**, Полупрезидентализм в контексте постсоветской трансформации (на примере Республики Армения), ПОЛИТЭКС 2, 2006, с. 279-288.

²³ **Մանասյան Ա.**, Ղարաբաղյան հիմնախնդիր, փաստարկեր և փաստաթղթեր (փորձագիտական հայացք), Եր. 2005: **Մանասյան Ա.**, Ղարաբաղյան հակամարտությանը ԽՅՄ տրոհման համատեքստում, Եր., 21-րդ ԴԱԸ 4(62), 2015, էջ 47-77: **Թորոսյան Տ.**, Հակամարտությանը կարգավորման իրավական հիմքը. տարածքային ամբողջականությանը, թե՞ ինքնորոշման իրավունք, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, N 1, էջ 3-16: «Нагорный Карабах в международном праве и мировой политике». Комментарии к документам. Том II / Д. ю. н., проф. Ю.Г. Барсегов; отв. ред. А.О. Меликян — М.: «Мелихово», 2009. — 480 с. **Минасян С.**, Сдерживание в карабахском конфликте; Ред. А. Искандарян. — Ер.: Институт Кавказа, 2016. — 276с. **Маилян М.**, Карабахский мирный процесс. Взгляд из Арцаха.- Ер: Де-Факто, 2016 -320 с.

²⁴ **Վաալ**, **Թոմաս դե**, Սև այգի: Հայաստանն ու Ադրբեյջանը խաղաղության և անտերազմի միջով. - Լրացված ու խմբագրված հրատարակություն. - Եր.: «2անգակ» հրատ, 2014, 488 էջ: **Маркедонов С.**, Де-факто государства постсоветского пространства: двадцать лет государственного строительства, Аналитические доклады Института Кавказа, №5, январь 2012.- Ер.: Институт Кавказа, 2012. — 180с. **Казимиров В.**, Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта. — М.: Междунар. отношения, 2009.- 456с.

կերպափոխումը, նմանատիպ խնդիրներին հաղթահարման միջազգային փորձը, մշակել առաջարկություններ՝ ուղղված Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում հայկական կողմերի դիրքորոշման ամրապնդմանն ու հետևողական պաշտպանությանը և Արցախի ժողովրդի ինքնորոշման հիմնախնդրի միջազգային ընկալումների վրա ազդեցություն գործելուն՝ հիմք ընդունելով արդիականացման գործընթացի համատեքստում ինքնորոշման հիմնախնդրի ընկալումները:

Նշված նպատակի իրականացման նկատառումներով սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- քննարկել արդիականացման գործընթացի բազմաչափությունն ու դրսևորումները տարբեր մակարդակներում՝ արժեքային էվոլյուցիայի համատեքստում,

- ուսումնասիրել ինքնորոշման խնդիրը տարբեր մակարդակներում՝ արդիականացման գործընթացի համատեքստում,

- վերլուծել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը, բախումնային հիմնական դրույթները, դրանց կերպափոխումը բանակցային գործընթացում և հակամարտող կողմերի ընկալման տարբերությունները և դրանց փոփոխման միտումները,

- քննարկել նմանօրինակ հակամարտությաններում բախումնային դրույթների վերաբերյալ փոխհամաձայնության ձեռքբերման յուրահատկություններն ու դրանց կիրառելիությունը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում:

Ուսումնասիրողական օբյեկտ Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդիրն է՝ ժամանակակից քաղաքական գործընթացների, միջազգային փորձի համատեքստում:

Ուսումնասիրողական առարկան Արցախյան հիմնախնդրի առանձնահատկություններն են, բախումնային դրույթների և դրանց ընկալման կերպափոխումը կարգավորման գործընթացում՝ միջազգային փորձի հետ համարդրամամբ:

Յետագոտության մեթոդաբանության ու նրա: Ել ակետենք ընդունել այն փաստը, որ մեթոդն իրականության օբյեկտիվ օրենքների բացահայտման գործիք է, որևէ երևույթի կամ գործընթացի տեսական ուսումնասիրության եղանակ²⁵:

Արդիականացման գործընթացում ինքնորոշման հիմնախնդրի դիտարկման համար կիրառվել է համակարգային մոտեցում՝ համադրելով վարքաբանական, սոցիոլոգիական, հոգեբանական մեթոդների հետ: Այս մեթոդների կիրառումը հնարավորություն է տվել դիտարկելու արդիականացման գործընթացում տեղի ունեցող արժեքաբանական, ինստիտուցիոնալ և այլ կերպափոխումներ, որոնք ուղղակի և անուղղակի հիմք են ապահովում անհատի, ազգի, պետության, քաղաքակրթության մակարդակներով ինքնորոշման համար:

Միջազգային փորձի համատեքստում Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման հետազոտության ընթացքում շեշտը դրվել է պատմական և համեմատական, սիներգիզմի մեթոդների վրա, ինչը հնարավորություն է տվել Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդիրը դիտարկելու քաղաքակրթական բազմաչափության մեջ, քննարկելու բանակցային գործընթացում բախումնային դրույթների և դրանց ընկալումների կերպափոխումը, նմանօրինակ այլ հակամարտության ունեցող դեպքում այդ բախումնային դրույթների հաղթահարման համար կիրառվող գործիքակազմն ու դրա կիրառելիությունը Ղարաբաղյան հակամարտության պարագայում:

Գիտական նորոշյալ: Ատենախոսության շրջանակում առաջադրված հիմնախնդիրների բազմաչափությունը պայմանավորել է վերլուծական մոտեցումների կիրառումը, որոնք հնարավորություն են տվել ինքնորոշման հիմնախնդիրը դիտարկելու քաղաքական արդիականացման գործընթացի համատեքստում: Առաջին անգամ փորձ է կատարվել, առանձնացնելով Ղարաբաղյան հիմնախնդրի բախումնային դրույթները (կարգավիճակի հարց, տարածքային հարց, փախտականների հարց և

²⁵ Методология научных исследований/А.Б.Пономарев, Э.А.Пикулева. – Пермь: Изд-во Перм. нац. исслед. поли-техн. ун-та, 2014, с. 24.

այլն), վերլուծելու դրանց կերպափոխումը բանակցային գործընթացում և դիտարկելու առանձին հարցերի շուրջ միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի համատեքստում՝ այդ կերպ նաև Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման նպատակ հետապնդելով: Կատարված հետազոտությունը հնարավորություն է տվել հեղինակին հասնելու գիտատեսական և գիտակիրառական նորոյթ հանդիսացող հետևյալ արդյունքների.

- քաղաքական արդիականացման գործընթացում ինքնորոշումը դիտարկվել է չորս մակարդակում՝ անհատ, ազգ, պետություն, քաղաքակրթություն, և ցույց է տրվել այդ չորս մակարդակներում ինքնորոշման հարաբերակցական կապը,

- հիմնավորվել է քաղաքական արդիականացման գործընթացում արժեքային էվոլյուցիայի և ինքնորոշման հիմնախնդրի ընկալման միջև առկա կապը: Հակամարտության կողմերում Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի ընկալումների կերպափոխման հիման վրա դիտարկվել է հակամարտության կողմերի քաղաքական արդիականացման ազդեցությունը հակամարտության և դրա կարգավորման գործընթացի ընկալման վրա,

- բացահայտվել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի ընթացքում հիմնական բախումնային դրույթների կերպափոխումը (եկնելով գաղտնագերծված փաթեթներից)՝ սահմանելով դրանց փոփոխման միտումներն ու ընկալման առանձնահատկությունները հակամարտության կողմերում,

- նորովի է դիտարկվել հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը՝ հիմքում դնելով բախումնային առանձին դրույթների նմանությունը տարբեր հակամարտությունների պարագայում, դիտարկվել են դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, քննարկվել է այդ հարցերում միջազգային փորձի հնարավոր տեղայնացման արդյունավետությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում,

▪ Ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի հետագա զարգացումներից բխող (հայկական կողմերի համար) հնարավոր մարտահրավերների կանխարգելման գործիքակազմի մշակմանը: Չուգահեռաբար, առաջարկվել են քայլեր՝ ուղղված միջազգային հարաբերություններում Արցախի սուբյեկտայնության բարձրացմանը:

Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:

Աշխատանքի տեսական նշանակությունը հիմնավորվում է ինքնորոշման հիմնախնդրի բազմաչափության և արդիականացման գործընթացի փոխկապակցված դիտարկման մոտեցմամբ: Չորս մակարդակում ինքնորոշման քննարկումը հնարավորություն է տալիս այդ հիմնախնդիրը դիտարկելու ոչ միայն անհատի, ազգի, պետության ինքնորոշման հոլոկոլոյթում, այլև հաշվի առնելու դրա քաղաքական յուրահատկությունները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս արդիականացման ժամանակակից ընկալումների համատեքստում հիմնավորելու ինքնորոշման իրացման կարևորությունը տարածաշրջանային և գլոբալ կայունության համար:

Կիրառական տեսանկյունից աշխատանքը կարևորվում է նրանով, որ Արցախյան հիմնախնդրի, կարգավորման գործընթացի, դրա ընկալումների կերպափոխման խորքային և համակարգված ուսումնասիրությունը՝ միջազգային փորձի համադրմամբ, հնարավորություն է տալիս մշակելու կիրառական առաջարկություններ՝ ուղղված Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացմանն ու միջազգային ճանաչմանը: Առաջարկությունները զուգահեռաբար ենթադրում են Արցախի միջազգային ճանաչման ուղղությամբ ջանքերի ինտենսիվացում և քայլերի ձեռնարկում՝ բանակցային գործընթացի հնարավոր զարգացումների պարագայում հայկական կողմերի համար մարտահրավերների նվազեցման և հայկական կողմերի դիրքերի ամրապնդման ուղղությամբ: Առաջարկները կիրառելի են ինչպես բանակցող կողմերի՝ ի դեմս հիմնական բանակցողների, որոշում

ընդունողների, այնպես էլ միջնորդների հետ շփումներում ներգրավված և միջազգային հարթակներում գործունեություն ծավալող պետական ու ոչ պետական այլ դերակատարների համար:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Առաջին գլխում՝ **«Ինքնորոշման բազմաչափության հիմնախնդիրները քաղաքական արդիականացման գործընթացում»**, ներկայացվել է քաղաքական արդիականացման արժեքային էվոլյուցիան, արդիականացման գործընթացում ինքնորոշման համար ստեղծվող հնարավորությունները՝ անհատ-ազգ-պետություն-քաղաքակրթություն հարթություններում, ինչպես նաև հետխորհրդային տարածաշրջանում այդ գործընթացների դրսևորմանյուրահատկությունները:

Երկրորդ գլխում՝ **«Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի արտացոլումը բանակցային գործընթացի կերպափոխող դրույթներում»**, ուսումնասիրվել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմնական բախումային դրույթների կերպափոխումը բանակցային գործընթացում, հակամարտության կողմերում դրանց ընկալման փոփոխությունները, այդ թվում՝ հակամարտության երեք կողմերում ժողովրդավարացման գործընթացները՝ դիտարկելով նաև կառավարման համակարգի փոփոխությունները սահմանադրական բարեփոխումների միջոցով:

Երրորդ գլխում՝ **«Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը, դրա ստեղծյալացման հնարավորությունները Ղարաբաղյան կարգավորման համատեքստում»**, դիտարկվել են ինքնորոշման իրավունքի հիմքով այլ հակամարտությունները, նմանօրինակ խնդիրներին տրված լուծումները և այդ փորձի կիրառման հնարավորությունները Ղարաբաղյան հակամարտության համատեքստում՝ հաշվի առնելով հակամարտություններիյուրահատկություններն ու տարբերությունները:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացվել են աշխատանքից արված հիմնական եզրակացությունները և ներկայացվել են առաջարկություններ՝ ըստ սահմանված խնդիրների:

ԳԼՈՒԽ 1

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԲԱԶՄԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՍՑՄԱՆ ԳՈՐԾՆԹՅՈՒՄ

1.1. Քաղաքական արդիականացման արժեքային Էվոլյուցիան: Քաղաքական արդիականացումն անհատազգ- պետություն-քաղաքակրթություն հարթություններում

Քաղաքական արդիականացումը բազմաշերտ և բազմավեկտոր գործընթաց է: Պայմանավորված լինելով ներքին և արտաքին միջարթ գործոններով՝ այն հանգեցնում է արժեքային փոփոխությունների և ազդում անհատի, ազգի, պետության վրա՝ ինքնագիտակցության ձևավորումից և ինքնորոշումից մինչև կենսագործունեության կայացում և կերպափոխում:

Քաղաքական արդիականացումը սահմանվում է որպես անցում՝ ավանդական հասարակությունից ժամանակակից, մոդեռն հասարակության: Անցման գործընթացում կարևորվում են հասարակական կարգի, մշակույթի, կենսակերպի, գիտակցության միջարթ փոփոխություններ, որոնք հիմք են տալիս նկարագրելու արդիականացումը որպես քաղաքակրթական գործընթաց:

Որպես համալիր ամբողջություն, քաղաքական արդիականացումը ենթադրում է նաև նոր ձևավորված քաղաքական համակարգի հարահոս հարմարում (ադապտացիա)՝ շարունակական ժողովրդավարական բարեփոխումների տրամաբանությամբ: Փաստացի, քաղաքական զարգացումը հանդես է գալիս որպես մարտահրավեր, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է իր արժեշահային համակարգի և ինստիտուտների կայացման միջոցով, որի արդյունքում տեղի է ունենում յուրաքանչյուր հասարակության արդիականացումը²⁶:

²⁶ Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան, Քաղաքական արդիականացումը և ՀՀ քաղաքական գործընթացները (Քաղաքագիտական հանրապետության երրորդ գիտաժողովի նյութեր). - Եր.: Խ. Աբովյանի անց. պետական մանկավարժական համալսարան, 2013, էջ 37-38:

Դրան զուգընթաց ժամանակակից աշխարհակարգում տեղի է ունենում հրաժարում համընդհանուր մոդելներից, գլոբալ աշխարհակարգի տեսույթյունը կառուցվում է «ազգային մոդելների» կայացման և զուգամիտման սկզբունքի վրա: Նոր աշխարհակարգի ձևավորումն, ըստ ամերիկյան ժամանակակից քաղաքական մտքի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Յ.Քիսինջերի, շարունակելով հիմնված լինել Վեստֆալյան համակարգի վրա, պետք է կառուցվի «համաձայնեցված ռազմավարության մշակման միջոցով՝ ուղղված առանձին տարածաշրջանների ներսում կարգի հայեցակարգի ստեղծմանը և այդ տարածաշրջանային կարգերի փոխադարձ կապակցմանը»²⁷: Աշխարհակարգի հաստատման հիմնական նպատակը նա տեսնում է բախումներից և կոնֆլիկտներից խուսափելու, «խաղի ընդհանուր կանոններ» հաստատելու անհրաժեշտության մեջ:

Համընդհանուր մոդելից հրաժարման, Արևմուտքի գերիշխանության թուլացման կողմնակից է նաև արդիականացման տեսույթյան «հիմնադիրներից» մեկը՝ Շ.Հանթինգթոնը, դեռևս «Քաղաքակրթությունների բախման» իր աշխատությունում: Ըստ նրա՝ նոր աշխարհակարգի որոշիչ գործոններից մեկը քաղաքակրթական-մշակութային տարբերություններն են: Ժողովրդավարությունն ու համաշխարհային տնտեսական զարգացումը չեն կարող հաղթահարել կրոնական, էթնիկ այդ տարբերությունները, որոնք արդիականացման գործընթացում որոշիչ դերակատարում են ստանում և հանգեցնում ազգային ինքնագիտակցության աճի²⁸: Արդյունքում, նոր աշխարհակարգը ոչ թե հիմնված է համամարդկային կոնստենսուսի վրա, այլ ձևավորվելու է քաղաքակրթությունների բախման հիմքի վրա:

Նոր աշխարհակարգում ավանդական «աշխարհի կենտրոնների» առաջատար դերից առաջարկում է հրաժարվել նաև ժամանակակից առավել ազդեցիկ քաղաքական վերլուծաբաններից մեկը՝ Ֆ.

²⁷ Kissinger H., World Order, Penguin Random House LLC, New York, 2014, p.p. 371-375.
²⁸ Хантингтон. С., Столкновение Цивилизаций. М.: АСТ, 2003, с. 22-24.

Չաքարիան, ով նոր աշխարհակարգը նկարագրում է որպես «մյուսնեթիա»²⁹:

Նոր աշխարհակարգում, գլոբալ գործընթացներին զուգընթաց, նոր և փաստացի հիմնաքարային նշանակություն է ստանում «ազգային» վերլուծությունը, ուսումնասիրումը, վերաբերումը: Ազգային ինքնորոշման արժեքային բազմաչափությունը, իր մեջ ներառելով ավանդական արժեքներն ու դրանք գուգամիտելով արդի մարտահրավերներից բխող բարեփոխումների հետ, ապահովում է ազգի, պետության արդիականացումը և նրա տեղն ու դերը քաղաքական գործընթացներում:

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ, քաղաքագիտության դոկտոր Հ.Քոթանջյանն ընդգծում է, որ արդիականացումը կարևոր նշանակություն ունի էթնոազգային գործընթացների զարգացման համար, որովհետև արմատապես փոխում է ազգի կամ էթնիկական խմբի գործունեության պայմանները՝ ակտիվացնելով էթնիկական գիտակցությունը: «Որպես արդյունք՝ ազգային հակամարտություններն ապագայում կսկսեն ավելի հաճախ ծագել և առաջին հերթին կներառեն բազմազգ պետությունները, ինչի հետևանք կլինի դրանց տրոհումն առանձին տարածաշրջանների»³⁰:

Արդիականացման գործընթացում ազգային գիտակցության աճն ու դրա դրսևորումներն ուսումնասիրելու նպատակով աշխատանքի այս ենթաբաժնում ներկայացված է արդիականացման գործընթացի արժեքային Եվոլյուցիայի ազդեցությունն ինքնորոշման խնդրի վրա, դիտարկված են արդիականացման գործընթացի առանձնահատկությունները հետխորհրդային տարածքում:

«Արդիականացում» («մոդեռնիզացիա») տերմինը սկսել է կիրառվել 1950-ական թվականներից, որպես գիտական մոտեցում՝

²⁹ Zakaria Fareed, The post-American World, W.W.Norton and Company, Ner York, London, 2008, p.p. 1-6.

³⁰ Քոթանջյան Հ., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները,- Եր.: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010, էջ 265:

հիմնված Մաքս Վեբերի սոցիալական ֆունկցիոնալ իզմի տեսության վրա:

Դանիել Բելլը տարանջատում է մտցնում երեք հասկացությունների միջև՝ մոդեռնիթի («modernity»), մոդեռնիզմ («modernism») և մոդեռնիզացիա («modernization»):

«Մոդեռնիթին աշխարհի հանդեպ վերաբերմունք է: Նույնիսկ Աթենքում մոդեռնիթիի լուրջ էլեմենտներ են եղել: Առաջինը, ում կարելի է աշխարհի բացություն մարմնավորում համարել, Դիոգենեսն է: Մոդեռնիթին՝ աշխարհի բացություն ընկալումն է: Ընդհակառակը, մոդեռնիզմը պատմականորեն սահմանված մշակութային ֆենոմեն է, որը սկիզբ է առնում Բողլերից: Դա փորձարարության, արվեստի տարբեր ժանրերի ընկալման ձև է: Մոդեռնիզացիան լիովին հատուկ տերմին է, որը նշանակում է ռացիոնալ իզացիայի որոշակի ձև, ադմինիստրատիվ, քաղաքական և մշակութային էլեմենտների համադրման ձև»³¹: Այս երեք տերմինները կիրառվում են իրականության տարբեր ասպեկտները նկարագրելու համար:

«Մոդեռնիթի» մշակույթը, որպես եվրոպական քաղաքակրթության հիմնական ուղղորդիչ, հիմնվում է առաջընթացի, համամարդկային արժեքների վրա՝ ժողովրդավարական քաղաքական համակարգ, տնտեսական ազատություն, անհատի ինքնուրույնություն, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացում և իրավական պետություն³²:

Առանձնացվում է արդիականացման տեսության զարգացման երեք փուլ՝ 50-60-ականներ, 60-70-ականներ և 80-90-ականներ:

Առաջին փուլի համար բնորոշ է ունիվերսալ իզմը, բոլոր հասարակությունների արդիականացումն արևմտյան՝ ավելի ճիշտ, ամերիկյան մոդելով: Այն ենթադրում է նաև արժեհամակարգի փոփոխություն՝ ինդիվիդուալիստական արժեքների աճ, ինչպես նաև

³¹ Белл Д., Иноземцев В., Эпоха разобщенности: Размышления о мире XXI века. - М.: Центр исследований постиндустриального общества, 2007, с. 206.

³² Добренъков В., Кравченко А. История зарубежной социологии, - М.: Академический проект, 2005, http://www.gumer.info/bibliotek_Buks/Sociolog/dobr/13.php

իշխանությունը և լեգիտիմացիան մեխանիզմի փոփոխությունը՝ մասնակցային ժողովրդավարություն ներդրում:

Կիրառման այդ փուլում արդիականացումը ընկալվում է որպես՝

- ♦ արժեքային համակարգում ազգային մտահայեցողություն և պահպանած երկրների հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարացում՝ արևմտյան օրինակով,

- ♦ «Երրորդ աշխարհի» երկրների ինդուստրիալ իզացմանը և քաղաքական զարգացմանը նպաստող և՛ պայման, և՛ հետևանք,

- ♦ Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ-ի և Երրորդ աշխարհի միջև քաղաքական ակտիվ համագործակցություն արդյունք³³:

Երկրորդ փուլում ընդգծվում է տարբեր տարածաշրջաններում արդիականացման արտահայտման յուրահատկությունը: Ակնհայտ է դառնում, որ մինչ այդ քիչ ուշադրություն է հատկացվել ներքաղաքական գործոններին, իշխանության համար պայքարին և դրահետևանքներին:

Ավելի շատ ուշադրություն է հատկացվում պետության կայունությանը: Ռուս քաղաքագետ, ՄԳԻՄՕ-ի քաղաքական տեսության ամբիոնի պրոֆեսոր Ա.Դեգոյարյովը, որպես արդիականացման երրորդ փուլի հիմնական հատկանիշներ, առանձնացնում է պետության իշխանության և կենտրոնական իշխանության դերի աճը՝ իշխանության ցեղային աղբյուրների թուլացմամբ, քաղաքական ինստիտուտների դիֆերենցիացումով և մասնագիտացմամբ, և երրորդը, քաղաքականության մեջ հասարակության մասնակցություն մակարդակի բարձրացմամբ³⁴:

Երկրորդ փուլում կարևորվեց մարդու քաղաքական գիտակցության, մշակույթի, ավանդական և քաղաքական նոր արժեքների փոխներդրման և ցուցումը³⁵: Այս փուլում գերխնդիր համարվեց այնպիսի հնարավորությունների ստեղծումը, որոնք գլոբալ մակարդակով թույլ կտան աշխարհի ցանկացած ծայրում

³³ Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Եր.: «Պետական ծառայություն», 2004, էջ 9:

³⁴ Дегаев А., Основы политической теории. -М.: Высшая школа, 2002, с. 213.

³⁵ Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, Երևան, «Պետական ծառայություն», 2004, էջ 9:

ապրող մարդու, ընդունելով ազատական արժեքների գերակայությունը, ինքնորոշվել (ինքնորոշված մարդ):

Երրորդ փուլը որոշակի կերպափոխման է ենթարկել արդիականացման տեսությունը՝ արդիականացումը սկսելով դիտարկել որպես քաղաքակրթության զարգացման մոդել՝ ավանդական հասարակությունից ժամանակակիցի՝ ռացիոնալիանցման միջոցով: Այս փուլում արդիականացման տեսությունը զարգացնում են Բ.Ալմոնդը և Ա. Պաուելը³⁶, Լ.Պայը³⁷ և Շ.Յանթինգթոնը:

Ֆ.Ֆուկույաման դիտարկում է զարգացման հետևյալ բաղկացուցիչները՝ տնտեսական աճ, սոցիալական մոբիլիզացիա, փոփոխություններ գաղափարների ոլորտում, քաղաքական զարգացում: Քաղաքական զարգացումն, իր հերթին, նաբաժանում է երեք կոմպոնենտների՝ պետություն, օրենքի գերակայություն և հաշվետվողական մեխանիզմներ: Այս վեց փոփոխությունները, ըստ Ֆուկույամայի, կարող են տեղի ունենալ միմյանցից անկախ և գտնվելով տարբեր մակարդակների վրա՝ կազմել բարդ հարաբերություններ³⁸:

Երրորդ փուլն ընթանում է «մոդեռնիզացիա առանց մոդեռնիթի» սկզբունքով՝ յուրաքանչյուր երկրի՝ իր սոցիալ-մշակութային ավանդույթների հիման վրա արդիականացման միջոցով: Այն չի ենթադրում արևմտյան ստանդարտների պարտադրում և սեփականի վերացում: Ըստ էության, այս փուլում ձևավորվում է «արդիականացման ազգային մոդելի» գաղափարը:

Այս փուլերը համընկնում էին արդիականացման առաջին և երկրորդ փուլերի մոտ, ինչպիսիք են Արևմտյան Եվրոպայի երկրները, հատկապես Նիդերլանդները, ՅուՆԱՍԿ-ի Գերմանիան, Անգլիան, այնուհետև ՅուՆԱՍԿ-ի Ամերիկան: Մինչդեռ արդիականացման երկրորդ և երրորդ փուլերի երկրների մոտ արդիականացման գործըն-

³⁶ Almond B. G. and Powell A. G., Comparative Politics: A Developmental Approach, Boston: Little, Brown and Co., 1966, p. 22.

³⁷ Pye L., Aspects Of Political Development: The Concept Of Political Development, 1966, <http://www2.stetson.edu/~gmaris/Pye.htm>

³⁸ Fukuyama F., Political Order and Political Decay, The American Interest, August 28, 2014, <http://www.the-american-interest.com/2014/08/28/political-order-and-political-decay/>

թացը սկսվել է արտաքին ազդակների ներքո և ներքին գործընթացները զգալիորեն հետեին մնում³⁹:

Եթե անդրադառնանք քաղաքական արդիականացման արժեքային էվոլյուցիային, ապա արժեքային համակարգի էվոլյուցիան ինստիտուցիոնալ տեսույթյան հետևորդները դիտարկում են անհատապետություն և հարաբերությունների պարադիգմում և բաժանում են երեք փուլերի: Առաջին՝ նախամոդեռնի փուլում արժեքային համակարգի հիմք են ընդունվում միջերը, մոդեռնի փուլում՝ բացարձակ արժեքները: Երրորդ՝ պոստմոդեռնիզմի փուլում արժեհամակարգը հիմնվում է հասարակական բարոյականության այլընտրանքային սկզբունքների վրա: Դեռևս մոդեռնի փուլում սկիզբ առած անհատի դերի աճն ու նրա ինքնորոշումը՝ բարօրության համապատասխան մակարդակի առկայության պարագայում, հանգեցնում է ոչ նյութական արժեքների գերակայությանը՝ ինքնաիրացում, պարտավորություններ, վստահություն և այլն: Չուգահեռաբար, պոստմոդեռնիզմի հիմնական հատկանիշներից մեկն այս տեսության հետևորդները համարվում են նեոլիբերալիզմի զգալի աճը, որը հիմնվում է ռադիկալ տնտեսական մարդու վրա, որն առաջնորդվում է բացառապես սեփական տնտեսական շահերով և գերադասում է դրանք հանրային, պետական կամ ազգային շահերին: Նեոլիբերալիզմն այս դրսևորմամբ դիտարկվում է որպես պետությունը խարխուղ և պետության ինստիտուցիոնալ զարգացմանը խոչընդոտող⁴⁰:

Արդիականացման գործընթացն իր խաղային տրամաբանությամբ, չի բացառում, որ որպես համալիր ամբողջություն այն իր մեջ ներառում է արժեքների մի քանի համակարգ⁴¹: Խաղային տեսության համաձայն, քաղաքականությունը դիտարկվում է որպես ռացիոնալ ընտրություն շահերի բախման պարագայում: Այդ տեսակետից

³⁹ Красильщиков В., От авторитаризма к демократии на путях модернизации: общее и особенное, Демократия и модернизация, под ред В.Л. Иноземцев. Изд. «Европа»,-М.: 2010, с. 215-230.

⁴⁰ Мартынов В. С., Глобальный Модерн, постматериальные ценности и периферийный капитализм в России. – Полис. Политические исследования. 2014. № 1, с. 83-98.

⁴¹ Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան, Քաղաքական արդիականացումը և ՀՀ քաղաքական գործընթացները (Քաղաքագիտական հանրապետության երրորդ գիտաժողովի նյութեր). - Եր.: Խ. Աբովյանի անց. պետական մանկավարժական համալսարան, 2013, էջ 38:

արդիականացման գործընթացը հասարակության կողմից իր համար առավել ընդունելի և առաջընթացն ապահովող արժեքների ընտրությունն է կամ դրանց համադրումն առկա ազգային արժեհամակարգի հետ՝ փաստացի խուսափումը գրոյական ելքով խաղից: Նշենք, որ խաղային դասական տեսությունը դիտարկում է անհատի ռացիոնալ գործողությունները, որոնք ռազմավարական համագործակցության բնույթ են կրում անհատակետորոն հասարակություններում⁴²: Այդ համատեքստում անհատի ինքնորոշումը արդիականացման գործընթացում նույնպես կարող է դիտարկվել, որպես խաղային տեսության մաս:

Վերոնշյալ մոտեցումների համադրումը ցույց է տալիս, որ արժեքային այս փոփոխություններն ու հասարակության արդիականացումը սերտորեն կապված է պետության ժողովրդավարացման հետ: Ա.Մելվիլն առանձնացնում է ժողովրդավարացման գործընթացի հետևյալ փուլերը՝ ավտորիտարիզմի կազմաքանդում և անկում, վարչակարգային լիբերալիզացիա, ինստիտուցիոնալ ժողովրդավարացում, չհամախմբված ժողովրդավարության փուլ և ժողովրդավարական համախմբում⁴³: Այս գործընթացը կարելի է նկարագրել որպես պետության արդիականացման գործընթաց: Անցման բոլոր այս փուլերի հաղթահարման և համախմբման համար քաղաքական արդիականացման գործընթացում կարևոր նախադրյալ է դառնում խորհրդանիշերով ու արժեքներով ճկուն քաղաքական համակարգի ձևավորումը, արդյունավետ վարչական մեքենայի ստեղծումը և քաղաքական գործընթացի կանխատեսելի ծավալումը:

Արդիականացման տեսության զարգացման մեջ մեծ ներդրում ունեցած Ու. Ռաստոկն արդիականացումը, կամ անցումն ավանդականից ժամանակակից ինդուստրիալ հասարակարգի հնարավոր է համարում միայն տնտեսական բարեփոխումների, մասսայական

⁴² Дегтерев Д., Дегтерев А., Теория игр и международные отношения, мировая экономика и международные отношения, 2011, No 2, с. 79-89.

⁴³ Мельвиль А.Ю. О траекториях посткоммунистических трансформаций / А.Ю. Мельвиль // Полис. – 2004. – № 2, с. 64-75.

սպառման և ժողովրդավարական ինստիտուտների զարգացման դեպքում⁴⁴:

Մի շարք տեսաբանների կողմից արդիականացումը տարանջատվում է ժողովրդավարացումից, առանձնացվում է անցման երկու հիմնական փուլ՝ ազատականացում և ժողովրդավարացում:

Ըստ Խուան Զ.Լինցի ու Ալֆրեդ Ստեփանի, ազատականացումը ոչ ժողովրդավարական միջավայրում կարող է նպաստել մի շարք փոփոխությունների և արդյունքում չհանգեցնել ժողովրդավարացման: «Իսկ ժողովրդավարությունը տանում է ազատականացման, սակայն այն ավելի լայն և զուտ քաղաքական հասկացությունն է»⁴⁵, - նշում են տեսաբանները: Ժողովրդավարության կայացման մեջ նրանք կարևորում են դրա անդառնալիությունը՝ հասարակության մոտայն գիտակցության ձևավորումը, որ ժողովրդավարությունը «դարձել է լավագույն տարբերակը»: Անցման համար կարևորվում է լեգիտիմ ընտրված իշխանությունների առկայությունը, որը դե ֆակտո օժտված է նոր քաղաքականություն մշակելու լիազորությամբ և ստիպված չէ իշխանությունը դեյուրե կիսել այլ կառույցների հետ⁴⁶:

Այս մոտեցման պարագայում ժողովրդավար հասարակության կայացման հիմքում պետությունն է: Փաստացի, առաջ է քաշվում պետության ներքո և միջոցով հասարակության ինքնորոշման գաղափարը, քանի որ ժողովրդավար պետության համար առանձնացվում է հինգ հիմնասյուն՝ քաղաքացիական հասարակություն, քաղաքական հասարակություն, օրենքի գերակայություն, հասարակության աջակցությունը վայելող վարչակարգ և տնտեսական հասարակություն: Սա հասարակության բոլոր հատվածների վրահիմնված ժողովրդավարության մոդել է:

Ինստիտուցիոնալ մոտեցման նոր սերնդի ներկայացուցիչները, դիտարկելով պետականաշինության գործընթացի և ժողովրդավարացման փոխկապակցվածությունը,

⁴⁴ Rostow W., The Stages of Economic Growth, The Economic History Review, New Series, Vol. 12, No.1. 1959, p.p. 1-16.

⁴⁵ Juan J. Linz, Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, JHU Press, 1996. p. 21:

⁴⁶ The same

շեշտը դնում են քաղաքական կարգի և ադմինիստրատիվ կառավարման արդյունավետության վրա: Պետականաշինությունն ու ժողովրդավարացումը դիտարկվում են որպես փոխընդդեմություններ: Միայն երկարաժամկետ արդյունքով արդյունավետ ժողովրդավարացումն ու համախմբումն է նրանց կողմից դիտարկվում որպես պետականության ամրապնդման խթան⁴⁷:

Հանրագումարելով առկա մոտեցումները Վ.Ֆեդոտովան առանձնացնում է արդիականացման և ժողովրդավարացման փոխկապակցվածության երեք կոնցեպտ. անցում ժողովրդավարության՝ հիմնված հասարակության սոցիալ-տնտեսական արդիականացման վրա, անցում հասարակության արդիականացման ազատական ժողովրդավարության կառուցման միջոցով, ժողովրդավարական անցում քաղաքական արդիականացման դանդաղ, փուլային գործընթացի միջոցով⁴⁸:

Շ.Էյզենշտադտը փորձ է արել առանձնացնել այն գործոնները, որոնք խոչընդոտում են ժողովրդավարությունների կայացմանը և հանգեցնում են արդիականացման գործընթացի խափանմանը: Առաջնային գործոններից նա առանձնացնում է հասարակության տարբեր խմբերի՝ կուսակցությունների, կլանների, բյուրոկրատիայի, բանակի, պահանջների միջև կտրուկ տարբերություններն ու կենտրոնական իշխանությունների անկարողությունը՝ արձագանքել դրանց: Արդյունքում՝ առկա քաղաքական համակարգի ու ինստիտուտների անհամապատասխանությունը ձևավորված նոր արժեքներին փուլով է համակարգը: Մյուս խնդիրը նա համարում է հաղորդակցության տեսակների տարբերությունը հասարակության մեջ և հասարակության անկարողությունը՝ կայուն կերպով ընկալել և յուրացնել հաղորդակցության այդ ուղիներով հաղորդվող ազդակները: Եվս մեկ պատճառ հասարակության և

⁴⁷ CARBONE G., MEMOLI V., Does Democratization Foster State Consolidation? Democratic Rule, Political Order, and Administrative Capacity, Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions, Vol. 28, No. 1, January 2015, p.p. 5–24.

⁴⁸ Fedotova V., Democratic Transit: Lessons and Perspectives in Russia // Democracies XXI: A Paradigm Shift. Analytical Report. M., 2015. P. 261–274.

իշխանությունն սուլիդարության սիմվոլների բացակայությունն է, որոնք ընկալելի կլինեին հասարակության կողմից⁴⁹:

Արդիակալանացման գործընթացին և հատկապես անցմանը հաջորդող փուլում բավական մեծ է անորոշությունների և անկայությունների հավանականությունը: Ժամանակակից հեղինակների կողմից այդ համատեքստում առաջարկվում է վերանայել պետության-հասարակության և հարաբերությունները և առավել մեծ արդյունավետության ապահովման համար հիերարխիկ կառավարման փոխարեն դիտարկել ցանցային կառավարման մոդելը: Քաղաքական ցանցը սահմանվում է որպես «ոչ հիերարխիկ և փոխադարձ կապվածություն ունեցող կայուն քաղաքական կապերի համախումբ, որը շաղկապում է բազմաթիվ դերակատարների, որոնք կիսում են քաղաքական ընդհանուր շահերը և իրականացնում են ռեսուրսների փոխանակում՝ իրենց շահերն առաջ մղելու համար՝ ընդունելով, որ համագործակցությունն իրենց ընդհանուր նպատակներին հասնելու լավագույն միջոցն է»⁵⁰: Ցանցային կառավարման ներքո բոլոր որոշումները կայացվում են պետական և ոչ պետական դերակատարների միջև բնակցությունների և փոխհամայնությունների միջոցով՝ մեծացնելով անկայությունների հաղթահարման հնարավորությունը: Այս համատեքստում քննարկվում է նաև պետության դերի հնարավոր թուլացումը, ինչպես նաև պետության գործառույթի փոփոխությունը՝ կոորդինացիոն, խթանող դերակատարման մեծացումը՝ ուղղված համայնեցված գործողությունների կատարմանը: Քաղաքական ցանցի հիմքերից մեկը քաղաքական հաղորդակցությունն է:

Եթե անհատ-ազգ-պետությունն պարադիգմը դիտարկենք արդիակալանացման վերոնշյալ տեսությունների համատեքստում, կարելի է եզրակացնել, որ արդիակալանացման բնականոն գործընթացի պարագայում, առանց արտաքին գործոնների արհեստական

⁴⁹ Эйзенштадт Ш., Срывы модернизации, Неприкосновенный запас. Дебаты о политике и культуре № 74 (6/2010). — М.: Новое литературное обозрение, 2010, с. 42-67.

⁵⁰ Borzel T., Organizing Babylon — on the Different Conceptions of Policy Net-works // Public Administration. 1998. Vol. 76. No 2, p. 254.

միջամտության, արդիականացման գործընթացը մեկնարկում է անհատի ինքնորոշման գործընթացից: Ստեղծվում է որոշակի միջավայր, որն անհատներին սահմանափակում է իրենց իրավունքների և ազատությաննների մեջ և նրանք սկսում են փնտրել իրացման նոր հնարավորություններ: Արդյունքում, հասարակության ներքո տեղի ունեցող փոխակերպումների հետևանքով աճում է ազգային գիտակցությունը, և առաջանում է պետական ինստիտուտների միջոցով ազգային շահերի պաշտպանություն, ինքնաիրացման պահանջ: Վերջինիս չբավարարման դեպքում աճում է ազգային պետության ձևավորման համար ինքնորոշման պայքարի ծավալման հավանականությունը: Միաժամանակ, պետության արդիականացումն ու ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, հաղորդակցության ուղիների ակտիվ կիրառմամբ ապահովում են այն համակարգը, որի ներքո անհատը ստանում է իր անհատական, ազգային և քաղաքացիական իրավունքների և ազատությունների իրացման լիարժեք հնարավորություն և իր հետագա արդիականացումն իրականացնում է պետական համակարգի ներքո: Դա, իր հերթին, թելադրում է պետության հետագա արդիականացման ուղին՝ ելնելով ազգային առանձնահատկություններից և առկա մարտահրավերներից, «արդիականացման ազգային մոդելը»:

Ուսումնասիրելով արդիականացման տեսության զարգացումը, մշակույթի և արդիականացման գործընթացի փոխազդեցությունն ու արդիականացման ժամանակակից միտումները՝ ռուս տեսաբան Վ. Ֆեդոտովան, առաջ է քաշում «արդիականացման ազգային մոդել» հասկացությունը՝ հակադրելով այն «վազոդ-հասնոդ» մոդելին: Նա առաջարկում է հրաժարվել գծային արդիականացման գործընթացից և ընդունել արդիականացման ազգային, յուրահատուկ ուղիների առկայությունը, որոնք մեծամասամբ կախված են արժեհամակարգից և դրա կերպափոխումներից: Նա առաջարկում է այսպես կոչված երրորդ ուղու գաղափարը, որը ենթադրում է մասնակցություն Գլոբալ գործընթացներին և տեղեկացություն, սակայն դրա հիմքում դնելով ազգային, պետական առաջընթացն ու այդ տեղեկացություն

տեղայնացումը, ռեֆորմիզմն ազգային մոդելով⁵¹: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս արդիականացման գործընթացի ներքո դաշտ ստեղծել անհատի ինքնորոշման համար թե՛ պետության ներսում, թե՛ գլոբալ հարթությունում:

Արդիականացման «ազգային մոդելների» գաղափարը զարգացնում է նաև արդիականացման խոշորագույն տեսաբաններից Շ.Էյզենշտադը, ով գրում է «բազմաթիվ մոդեռնիզմների» մասին: «Մոդեռնիզմի Արևմտյան պատկերացումները միակ «իրական» մոդեռնիզմն չեն՝ չնայած որ շարունակում են պատմական նախադեպ և հիմնական հենման կետ հանդիսանալ մյուսների համար»⁵², - նշում է Շ. Էյզենշտադը: Տարբեր ազգային պետություններում արդիականացման մասին պատկերացումն ու ինքնին արդիականացման գործընթացը տարբեր կերպ է ընթանում՝ ելնելով էթնիկ, մշակութային և այլ գործոններից:

Հասարակություններից յուրաքանչյուրի արդիականացման յուրահատկության գաղափարը կարելի է առանձնացնել նաև Դ.Բելլի մոտ: Նա առաջարկում է չդիտարկել արդիականացումը կոնվերգենցիայի սկզբունքի ներքո: «Եթե նույնիսկ կոնվերգենցիայի գաղափարն իմաստ ունի, ապա այն կայանում է նրանում, որ հասարակությունները նման են մինչև որոշակի մակարդակ որոշ հարթություններում կամ կարող են բախվել միևնույն խնդիրների: Այնուամենայնիվ, դա որևէ կերպ չի երաշխավորում նույնանման կամ նույնիսկ նման արձագանք այդ խնդիրների: Արձագանքը կախված է լինելու տվյալ հասարակության քաղաքական և մշակութային կառուցվածքից»⁵³:

Հիմք ընդունելով վերոնշյալ մոտեցումները՝ կարելի է պնդել, որ մեխանիկական վեստերնիզացիայով պայմանավորված

⁵¹ Федотова В.Г. Хорошее общество. — М.: Прогресс Традиция, 2005, с. 325. Федотова В., От догоняющей модернизации к национальной: теоретический аспект, Фонд исторической перспективы, 07/12/2007,

http://www.perspektivy.info/book/ot_dogonajushhej_modernizacii_k_nacionalnoj_teoreticheskij_aspekt_2007-12-07.htm

⁵² Eisenstadt S. N., Multiple Modernities // Daedalus. Winter 2000. Vol. 29, № 1, p. 2-3.

⁵³ Белл Д., Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования/ Перевод с английского. Изд. 2-ое, испр. И доп. — М.: Academia, 2004/ CLXX, p. 319.

քաղաքական զարգացման ճգնաժամերից խուսափելու համար նախընտրելի մոդելն ազգային ինքնուրոյան բնականոն արդիականացումն է: Այդ նպատակով ազգերից շատերն ընտրում են արդիականացման սեփական ուղին: Դատեղի է ունենում ազգային ինքնագիտակցության աճի, ինքնորոշման անհրաժեշտության գիտակցման և պետական համակարգի կառուցման միջոցով՝ ազգային շահերի իրացման ձգտման արդյունքում: Տվյալ դեպքում, արդիականացումն ու ժողովրդավարական արժեքների յուրացումն ապահովում են անհրաժեշտ գործիքներն ու գուճահեռ նպաստում են քաղաքական գիտակցության ու մշակույթի ձևավորմանը, որոնց արդյունքում բարձրացվում է ազգային պետության ձևավորման խնդիրը: Այս կապակցությամբ Դ.Փիլպոտը, սահմանելով ինքնորոշման բանաձևը, ընդգծում է, որ ինքնորոշման ձգտող խումբը պետք է օժտվի ինքնորոշման իրավունքով իր նախընտրած տարածքում, երբ ունի լիբերալիզմի, մեծամասնականության և փոքրամասնության ունեների հանդեպ համապատասխան քաղաքականության առվազն հավասար մակարդակ այն պետությանը, որից ձգտում է առանձնանալ, և հատկապես, երբ իրեն վտանգ է սպառնում⁵⁴:

Արդիականացման գործընթացում ազգային պետությունների դերակատարումն ու ազգային գործոնի կարևորությունն անհրաժեշտություն են առաջացնում դիտարկել նաև արդիականացման գործընթացների քաղաքակրթական հարթությունը: Ազգային գիտակցության իմաստավորումն ու էթնոօրին գործընթացների ակտիվացումը որոշ պայմաններում հանգեցնում է լրացուցիչ հակամարտայնության, ինչի մասին նշում է նաև Յ. Քոթանջյանը: Հիմնվելով էթնոքաղաքական երևույթների քաղաքակրթական վերլուծության վրա՝ հեղինակն առանձնացնում է էթնո-սոցիալական նույնականացման մի քանի հիմնական մակարդակներ: «Էթնոսը՝ որպես էթնոազգային նույնականության հիմքային մակարդակ, ազգը՝ որպես էթնոսի և քաղաքակրթության

⁵⁴ Philpott Daniel, In Defense of Self-Determination, Ethics, The University of Chicago Press. Vol. 105, No. 2. (Jan., 1995), pp. 381-385.

միջև միջանկյալ նույնականություն, կենսատարածքային կամ «պատմական» մակարդակ, քաղաքակրթությունը՝ որպես ինտեգրիչ միջէթնիկական արժեքների վրա խարսխվող բաղադրյալ նույնականություն, և, վերջապես, համընդհանուր քաղաքակրթությունը՝ որպես համամարդկային արժեքային կողմնորոշումների վրա խարսխվող բարձրագույն բաղադրյալ նույնականություն»⁵⁵:

Քաղաքակրթություններից յուրաքանչյուրի ներսում զարգացման, արդիականացման գործընթացները տեղի են ունենում տարբեր արագություններով և ուղղություններով, ինչը հանգեցնում է որոշակի հակասությունների, և ձևավորվում են համաձայնային-հակամարտային գործընթացներ: Քաղաքակրթությունների յուրահատկություններից է կախված նաև այդ գործընթացների հանգուցալուծումն ու առկախնդիրների լուծման համար կիրառվող գործիքակազմը: Այդ տարբերություններն արտացոլված են նաև Շ.Յանթինգթոնի կողմից մշակված ժողովրդավարացման ալիքների տեսության մեջ: Առանձնացվում է նաև առաջնային և երկրորդային արդիականացում: Առաջին տիպը բնորոշ էր ԱՄՆ-ին և Արևմտյան Եվրոպայի երկրներին, որոնցում արդիականացումը տեղի էր ունենում ներքին մի շարք բնականոն փոփոխությունների արդյունքում: Իսկ երկրորդ տիպը բնորոշ է մյուս երկրներին, որոնք կիրառելով առաջինների փորձը՝ ձգտում են հասնել նրանց զարգացման գործընթացում: Դրանց թվին են պատկանում զարգացող երկրները՝ նախկին գաղութները, ԱՊՅ երկրները և այլն:

Առաջնային և երկրորդային արդիականացման յուրահատկություններն առավել խորքային դիտարկում են Շ. Յանթինգթոնի կողմից մշակված ժողովրդավարացման ալիքների տեսության ներքո⁵⁶: Ալիքներից յուրաքանչյուրի պարագայում այդ մասսայական անցմանը դրդող ներքին և արտաքին գործոնները

⁵⁵ Քոթանջյան Յ.Ս., Յակամարտության էթնոքաղաքագիտություն: Յայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները,- Եր.: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010, էջ 279:

⁵⁶ Хантингтон С. Третья волна. Демократизация в конце XX века /Пер. с англ. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003, с. 26.

տարբերվել են: Առաջին պիքին (1828-1926թթ.) առավել բնորոշ են հասարակության ներսում տեղի ունեցող փոխակերպումները, քաղաքական համակարգի հասունության որոշակի մակարդակի ձեռքբերումը: Կարելի է ասել, որ առաջին պիքի ժամանակ գերակշռում է անհատի ինքնորոշումը, ինչի արդյունքում տեղի են ունենում ամերիկյան և ֆրանսիական հեղափոխությունները, երկրների ներսում գործադիր և օրենսդիր մարմինների միջև փոխադարձ պարտավորությունների և պատասխանատվության տարանջատումները:

Երկրորդ պիքին առավել բնորոշ է հասարակական, պետական ինքնորոշումը: Մասնավորապես, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (1943-1962) տեղի է ունենում ավտորիտար ռեժիմների տապալում, դիտվում է հասարակական-պետական ինքնորոշում, հասարակություններն ընտրում են կառավարման ժողովրդավարական մոդելները:

Իսկ ահա ժողովրդավարացման երրորդ պիքն առանձնանում է ազգային ինքնորոշման լայն փուլով: Ուստի, ժողովրդավարացման գործընթացն արդիականացման երրորդ պիքի ընթացքում զուգակցվում է ազգային գաղափարի զարթոնքով ու ազգային ինքնորոշման անհրաժեշտության աճով⁵⁷, սակայն, անցումը նոր համակարգի անհրաժեշտաբար չի հանգեցնում ժողովրդավարության հաստատման, իսկ վերջինս էլ միշտ չէ, որ կայունություն է դրսևորում:

Շ.Յանթինգթոնի մոտեցումները, որոնց շրջանակներում մինչ օրս վերլուծության են ենթարկվել քաղաքակրթական, էթնոքաղաքական գործընթացները, քննադատության են ենթարկվել Նյու-Յորքի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Ա.Ուիքսի, Ջոն Յոֆեինսի անվան միջազգային հարաբերությունների համալսարանի պրոֆեսոր Ֆ.Աջամիի, Ջորջթաունի համալսարանի պրոֆեսոր Ջ.Քիրքպատրիկի և այլ հետազոտողների կողմից: Նրանց կողմից հարցի տակ է դրվել քաղաքակրթությունների որոշիչ ազդեցությունը աշխարհաքաղաքական գործընթացներում:

⁵⁷ Там же: с. 98-99.

Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր Լ. Դայմոնդն առաջ է քաշում 21-րդ դարում ժողովրդավարության ռեցեսիայի, հետընթացի մոտեցումը: Ըստ նրա, այդ հետընթացը նկատվում է ոչ միայն նոր ժողովրդավարացող երկրներում, այլև անմիջապես Արևմուտքում: Նա առանձնացնում է զուգահեռաբար նկատվող մի քանի միտումներ՝ 1.միջարք երկրներում ժողովրդավարության փլուզում, ավտորիտար կարգերի վերականգնում (օր.՝ Թուրքիա), 2.ոչ միայն աղքատ, այլև հարուստ երկրներում ժողովրդավարության որակի և կայունության թուլացում, որի պատճառը կոռուպցիան և վատ կառավարումն է, 3.ավտորիտարիզմի խորացում և ամրապնդում ռազմավարական կարևորություն ունեցող խոշոր երկրներում (Չինաստան, ՌԴ), 4.ժողովրդավարության սկզբնաղբյուր հանդիսացող երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ-ում, ժողովրդավարության սկզբունքների ոտնահարում:

Ըստ Լ.Դայմոնդի, չնայած այս ամենին, տեղեկատվական հեղափոխությունը, տնտեսական զարգացումն ու գլոբալիզացիան, այնուամենայնիվ, թուլացնում են ավտորիտար բոլոր տիպի ռեժիմներն ու բարձրացնում հաշվետվողականության ու թափանցիկության հանրային պահանջը, ինչը հույս է ապահովում, որ ժողովրդավարության ամբողջական անկում չի գրանցվի: Ստեղծված իրավիճակից ելքը նատեսում է նույնիսկ անկայուն և ոչ լիբերալ ժողովրդավարությունների բարեփոխման և համախմբման մեջ, նրանց միասնական գլոբալ գործընթացի մեջ ներգրավմամբ⁵⁸:

Արդիականացման գործընթացի բազմազանությունը և յուրահատկությունները տեսաբանները դիտարկել են նաև հետխորհրդային տարածաշրջանում: Ի հակադրում Շ,Յանթինգթոնի, նոր սերնդի տեսաբանները հրաժարվում են դիտարկել հետխորհրդային երկրների արդիականացման և ժողովրդավարացման գործընթացը, որպես ժողովրդավարացման երրորդ ակիբի շարունակություն:

Յետխորհրդային տարածաշրջանում ժողովրդավարացման գործընթացի արդյունավետությունից և ընթացքից ելնելով

⁵⁸ Diamond L., Facing Up to the Democratic Recession, Journal of Democracy Volume 26, Number 1 January 2015, p. 141-155.

պայմանականորեն առանձնացվում է երեք տարածաշրջան՝ ժողովրդավարական Արևելյան Եվրոպան, ժողովրդավարացող Բալկանյան երկրները և «հիբրիդային» կամ ավտորիտար հետխորհրդային երկրները:

Սառը պատերազմից հետո հետխորհրդային երկրներում արդիականացման և ժողովրդավարացման գործընթացների ուսումնասիրության նորագույն մոտեցումներից մեկի հեղինակները Ս.Լ.Լևիտսկին և Լ.Ա.Վեյն են: Նրանք անցման գործընթացը պայմանավորում են ներքին և արտաքին երեք գործոններով՝ «Արևմուտքի լծակներով», Արևմուտքի հետ կապերով և իշխող ռեժիմի կազմակերպչական իշխանությամբ⁵⁹: Արևմուտքի լծակների ներքո ենթադրվում է Արևմուտքի հնարավոր ազդեցությունը երկրի վրա, տնտեսական, քաղաքական լծակները, ինչպես նաև հակառակ բևեռների ազդեցությունը, որը կարող է սահմանափակել կամ խաթարել Արևմուտքի ազդեցությունը: Արևմուտքի հետ կապերը ենթադրում են տարբեր ոլորտներում համագործակցությունը, պատմականորեն ձևավորված կապերը և այլն: Որպես ներքին գործոն առանձնացվում է քաղաքական Էլիտան, նրա քաղաքական կողմնորոշումները: Այս երեք գործոնների համադրությունը, դրանցից մեկի գերակայությունը կամ թուլությունը, ըստ տեսաբանների, պայմանավորում է անցման արդյունավետությունն ու անդառնալիությունը:

Ընդհանրապես, Յարավային Կովկասում արդիականացման գործընթացը մեծապես ենթակա է արտաքին գործոնների և ուժերի ազդեցությանը, ինչպես Արևմուտքի, այնպես էլ ՌԴ-ի կողմից: Ժամանակակից ուսումնասիրողներից Բ.Լեբանիձեի մոտեցմամբ, ժողովրդավարացումը հնարավոր է լծակների ճիշտ կիրառման և այլ ուժերի ազդեցության թուլացման պարագայում⁶⁰: Սակայն, հետխորհրդային տարածքում, և այդ թվում՝ Յարավային Կովկասում, ժողովրդավարացման գործընթացն ու արդիականացումն ընթանում է

⁵⁹ Levitsky S., Lucan A. Way, Competitive authoritarianism: Hybrid regimes after the Cold War. New York: Cambridge University Press. 2010, p.p. 37-71.

⁶⁰ Lebanidze B., What makes authoritarian regimes sweat? Linkage, leverage and democratization in post-Soviet South Caucasus, Southeast European and Black Sea Studies, 2014 Vol. 14, No. 2, p.p. 199–218.

ոչ թե արտաքին կապի թուլացման, այլ ընդհակառակը դրա ուժեղացման, Արևմուտքի և ՌԴ-ի միջև ընտրության, կամ այդ տիրույթում մանևրելու միջոցով:

Մ.ՄաքՖոլն առանձնացնում է անցումագիտության երկու հիմնական մոդել, որ չեն աշխատում հետխորհրդային տարածքում՝ պատկերացում առայն, որ պահպանողական և բարեփոխումների ձգտող ուժերի հավասարակշռության արդյունքում առաջացող փակուղուց ելքը պետք է լինի պակտը, որը հիմք է ապահովում ժողովրդավարության համար, և ժողովրդավարության թելադրումը «վերևից» էլիտայի կոմպրոմիսի արդյունքում: Ըստ նրա, հետխորհրդային երկրների համար առավել բնորոշ է հակասությանների բռնի կարգավորումը, երբ նոր ռեժիմի ձևավորումն ավելի շատ կախված է նրանից, թե որտեղից է բխել փոփոխության նեների ազդակը⁶¹:

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո հետխորհրդային տարածքի համար առանձնացվում է բնորոշ հինգ առանձնահատկություն՝ հետխորհրդային փոխակերպումների երկակի բնույթը (և բազմակարծիք ժողովրդավարություն, և շուկայական տնտեսություն ստեղծելու անհրաժեշտություն); սոցիալ-տնտեսական և արդյունաբերական ավելի բարձր վիճակը, քան երրորդ պիլի երկրներում; ազգային հարցի առկայությունը; քաղաքացիական հասարակության թույլ և չձևավորված մակարդակը; միջազգային իրավիճակի անկայունությունը 90-ական թվականներին⁶²:

Ա.Մելվիլը նշում է նաև հետխորհրդային տարածքում ձևական ժողովրդավարությունների ձևավորման մասին, որոնք «ցույց են տվել, որ ինստիտուցիոնալ կայունացումը և վարչակարգային համախմբումը դեռևս չի նշանակում լիբերալ ժողովրդավարության համախմբում»⁶³: Չետխորհրդային ժողովրդավարությունների

⁶¹ Michael A. McFaul, The Fourth Wave of Democracy and Dictatorship: Noncooperative Transitions in the Postcommunist World, World Politics, January 2002, Vol. 54, p.p. 212-244.

⁶² Terry S., Thinking about Post-Communist Transition: How Are They? Slavic Review, 1993, p.p. 52, 2, 333-337.

⁶³ Мельвилъ А.Ю. О траекториях посткоммунистических трансформаций / А.Ю. Мельвилъ // Полис. – 2004. – № 2, с.64-75.

համար օգտագործվում են նաև «հիբրիդային ռեժիմ»⁶⁴ և «դելեգատիվ ժողովրդավարություն»⁶⁵ եզրույթները:

Յետխորհրդային երկրներում ժողովրդավարական, արդյունավետ ինստիտուտների բացակայությունը պայմանավորված է նաև հիմքում տնտեսական և քաղաքական էլիտաների փոխկապակցվածությունամբ, շահերի սերտաճումով և քաղաքական իշխանությունը պահպանելու միջոցով տնտեսական ռեսուրսները պահպանելու մոտիվով, որը գրոյացնում է պետական ինստիտուտները բարեփոխելու մոտիվը: Ելքը հասարակության մեջ ռեֆորմիստների ու մոդեռատորներ գերակշռման մեջ է: Այդ դեպքում, հնարավոր է եթե ոչ լիարժեք ժողովրդավարացում և լավ կառավարման ապահովում, ապա առնվազն «բավական լավ կառավարում»⁶⁶:

Բացի այդ, հետխորհրդային երկրների արդիականացման գործընթացի վրա զգալի ազդեցություն է ունեցել նաև քաղաքակրթական գործոնը: Մասնավորապես, նախախորհրդային շրջանում նրանց անցած ուղին, կրոնը, արժեհամակարգը, որոնք պայմանավորել են նաև հետխորհրդային շրջանում նրանց ընտրությունը: Իսկ դա, իր հերթին, ազդեցություն է ունենում հետխորհրդային երկրների փոփոխարարությունների, նրանց միջև առկա տարածայնությունների և հակամարտությունների վրա: Ոչ ժողովրդավարացման ճանապարհով արդիականացման ընտրությունը որոշ երկրների կողմից առավել բարդ է դարձնում երկխոսության ունենում մեծացնում արժեհամակարգային տարբերությունները:

Այսպիսով, քաղաքական արդիականացումը մշտապես շարունակվող խորքային քաղաքական գործընթաց է, որը հանգեցնում է մի շարք համակարգային փոփոխությունների, այդ թվում՝ փոփոխությունների ենթարկելով գլոբալ աշխարհակարգն ու դրանում տիրող արժեհամակարգը: Ժամանակակից աշխարհը կառուցվում է ոչ միատարր, բազմաթիվ կենտրոնների զարգացման

⁶⁴ Гельман В. Трансформация в России: политический режим и демократическая оппозиция. М., 1999.

⁶⁵ O'Donnel G., Delegation Democracy // Journal of Democracy. 1994. № 5 (1)

⁶⁶ Melville A., "BAD ENOUGH GOVERNANCE": STATE CAPACITY AND QUALITY OF INSTITUTIONS IN POST-SOVIET AUTHORITARIAN AND HYBRID REGIMES, 23rd World Congress of Political Science (IPSA), July 2014, http://paperroom.ipsa.org/papers/paper_34424.pdf

ուղով, որոնցից յուրաքանչյուրում պահպանվում է ազգային պետության ներքին կարևորությունը՝ թեկուզև կերպափոխվող դերակատարմամբ ու գործառույթներով: Չուգահեռաբար, աճում է ազգային գործունի նշանակությունը, աստիճանաբար ավելի մեծ տարածում է ստանում ազգային արժեհամակարգի և մշակույթի վրա հենվող ազգային մոդելով արդիականացումը, որը հնարավորություն է տալիս ազգային պետության ներքին զարգանալ ժամանակին համընթաց՝ պաշտպանելով ազգային ինքնությունը:

Այդ համատեքստում ազգային գործունի նշանակությունը նոր վերարժևորման է ենթարկվում՝ ուրույն դերակատարում ստանալով լոկալ և գլոբալ հարթություններում անհատ-ազգ-պետության քաղաքակրթություն քառամակարդակ համակարգում ինքնորոշման գործընթացում:

1.2. Ինքնորոշումը որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ

Արդյունաբերական կերպափոխումների, հասարակական կարգերի փոփոխության և ընդհանուր աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում առաջ են գալիս «մենք-նրանք» հարացույցի ներքո հարաբերությունների կառուցման նոր հրամայականներ: Առաջանում է ինքնորոշման անհրաժեշտություն, որը հնարավորություն է տալիս ներքին և արտաքին մարտահրավերներին արձագանքել՝ ելնելով նոր իրողություններից, միաժամանակ պահպանելով ազգային, պետական, անհատական ինքնությունը: Այդ հարաբերությունների կառուցման համար կարևոր նախապայման է դառնում նաև ինքնորոշման ճանաչումը մյուսների կողմից՝ համագործակցային հիմքով հարաբերությունների հետագա կառուցման համար:

Բացի այդ, քաղաքական արդիականացման գործընթացը, ենթադրելով տնտեսության, կառավարման համակարգի, քաղաքական մշակույթի փոխակերպում և համապատասխանեցում արդի հրամայականներին, հանգեցնում է հասարակության մոտ

ինքնուրոյան գիտակցութեան փոփոխութեան ներքին, ազգային ինքնուրոյան գիտակցութեան աճի: Ըստ քաղաքագետ Դոյչի, արդիականացումն անխուսափելիորեն ակտիվացնելով էթնիկական գիտակցութեանը, նպաստում է ազգային ինքնավարութեան հասնելու քաղաքական նպատակադրվածութեան ձևավորմանը⁶⁷:

Ըստ Ս.Յանթինգթոնի, ազգային ինքնութեան արժեհամակարգի հիմքը պատմամշակութային և առասպելադիցաբանական նշանակութեամբ ունեցող սրբազան տարածքն է՝ իր բնական և ինստիտուցիոնալ ժամանակով⁶⁸: Յիմնվելով Ս.Յանթինգթոնի վերլուծութեան ներքին վրա՝ կարելի է փաստել, որ 21-րդ դարում միջարք գործունեութեան ներքո տեղի է ունենում ազգային ինքնութեան կերպափոխում և այն սկսում է նույնականանալ անձնական ինքնութեան հետ: Սա հիմք է տալիս կառուցելու ինքնութեան գիտակցման և համապատասխանաբար ինքնորոշման իրացման եռաստիճան համակարգ՝ անհատ-ազգ-պետութեան: Արդյունքում, անհատ-ազգ-պետութեան տիրույթում ինքնորոշումը կարելի է դիտարկել, որպէս արդիականացման հրամայական:

Արդիականացման գործընթացի համատեքստում ինքնորոշման խնդրի ուսումնասիրութեան համար որպէս հիմք ընդունվել է ազգային ինքնութեան, ինչպէս նաև ազգային «Ես»-ի փոխակերպման հիմնախնդիրը քաղաքական արդիականացման համատեքստում: Ուսումնասիրվել է ազգային ինքնութեան արդիականացման որպիսութեանն ու տրանսֆորմացիան՝ պետականաշինութեան մշակույթի արդիականացման ներքո:

Գլոբալ գործընթացների և ցանցային կառավարման համատեքստում ազգային ինքնութեան «Ես»-ի կերպափոխումների ուսումնասիրութեանը հնարավորութեան է տալիս առանձնացնել մի քանի հիմնական միտումներ: Մասնավորապէս ազգային ինքնութեան անհատական տեսակետից կարևորվում է ոչ միայն ռացիոնալ նուրազիոնալի ներդաշնակեցման անհրաժեշտութեանը, այլ և

⁶⁷ Дойч М.. Национальная интеграция: обзор некоторых концепций и исследовательских подходов, Этнос и политика: Хрестоматия/Авт.-сост. А.А.Праззаускас.-М.: Изд-во УРАО, 2000, с. 190-199.

⁶⁸ Хантингтон С. Кто мы?: Вызовы американской национальной идентичности/С. Хантингтон; Пер. с англ. А. Башкирова. — М.: ООО «Издательство АСТ»: ООО «Транзиткнига», 2004, с.72-74.

նացիոնալ ընտրություն մոտեցումը: Հատվածայնություն և անորոշություններ պարունակող «ավանդական» արժեքների համահարթեցման միտումներին դիմակայելու նպատակով առաջարկվում է բարձրացնել ազգային ինքնության եվոլյուցիայի հիմքի վրա արդիականացող պետական կառավարման արդյունավետությունը: Բացի այդ, գլոբալացման պայմաններում «Ես»-ին միտված միջարթ մարտահրավերների դիմակայման համար առաջարկվում է որդեգրել նազմավարական նախագծերի ծրագրավորման քաղաքականություն, որն ուղղված է ինիավանդական և արդիական արժեքների գուգամիտմանը⁶⁹: Չուգահեռաբար տեղի է ունենում նաև աշխարհընկալման փոփոխություն, առաջնային տեղը պոստմոդեռնիստական հասարակությունում ի տարբերություն մոդեռնիստականի՝ նյութական շահերից և անձնական անվտանգությունից անցնում է ինքնարտահայտման և կյանքի որակի հարցերին: Այսպիսով, արդիականացման գործընթացը հանգեցնում է ինքնադրսևորման, ավելի մեծ անկախության և ազատության արժեքների ամրապնդման, ինչը մեծացնում է ինքնորոշման անհրաժեշտությունը և դարձնում արդի հրամայական:

Ռ.Ինգլիսարթն ու Կ.Վելցելն արդիականացումը դիտարկում են որպես մարդկային զարգացման գործընթաց, որի շրջանակներում սոցիալ-տնտեսական առաջընթացը հանգեցնում է փոփոխությունների մշակութային ոլորտում, մեծացնում է անհատական անկախությունը, ձևավորվում է նոր տիպի հասարակություն: Նոր ձևավորվող արժեհամակարգը ստիպում է մարդկանց ձգտել ավելի մեծ ազատության, որոշումների կայացման վրա ավելի մեծ ազդեցություն⁷⁰: Չուգահեռաբար, նրանց դիտարկմամբ, տեղի է ունենում նաև անհատական տրոն համակարգի ձևավորում, այդ թվում կրոնի, արժեհամակարգի մեջ⁷¹: Արդիականացումը դրվում է արժեհամակարգի փոփոխության հիմ-

⁶⁹ Մարգարյան Մ., Ազգային ինքնության արդիականացման հրամայականները (ըստ Ս. Հանթինգթոնի «Ո՞վ ենք մենք. ազգային ինքնության մարտահրավերները» աշխատության), Եր., «Հանրային կառավարում» գիտական հանդես, ՀՀ ՊԿԱ, 2/2015, էջ 139-146:

⁷⁰ Инглхарт Р., Вельцель К. Модернизация, культурные изменения и демократия: Последовательность человеческого развития М.: Новое издательство, 2011, с. 3.

⁷¹ Там же: с. 54-55.

քում և դիտարկվում որպես հասարակության ներսում տեղի ունեցող փոփոխության նկատմամբ դրդապատճառ և շարժիչ ուժ: Այդ տեսանկյունից արդիականացման գործընթացը, անկախ ժողովրդավարական պետության կայացումից, հանգեցնում է մարդու դերի մեծացմանը, ընդլայնում է «ես»-ի ինքնաիրացման տարածքը:

Շ.Յանթինգթոնը, ուսումնասիրելով ամերիկյան ինքնության ձևավորումը, ազգային ինքնության ձևավորման մեջ առանձնացնում է կրոնի դերը՝ որպես ներքին ինտեգրում ու կոնսոլիդացում ապահովող գործոն, ինչպես սեփական «ես»-ը այս կամ այն խմբի հետ նույնացնելու ընտրությունը՝ դրանից բխող վարքով: «Մինչ մարդիկ հարաբերվում են շրջապատի մարդկանց հետ, նրանք այլ էլք չունեն, քան սահմանել իրենց մյուսների հետ հարաբերությունների միջոցով և հիմնվել նմանությունների և տարբերությունների վրա: Ինքնությունը կարևոր է, քանի որ թելադրում է մարդու պահվածքը», - գրում է Յանթինգթոնը⁷²: Տվյալ դեպքում տարբեր խմբերի, հասարակությունների միջև առկա հակամարտությունները և թշնամանքը դառնում են այդ խմբերից մեկին պատկանող անհատի ինքնորոշման բաղադրիչ՝ էլ ավելի խորացնելով ու երկարաձգելով առկա հակամարտությունները:

Ոչ Արևմտյան հասարակություններում արդիականացումը ենթադրում է ավանդականի և ժամանակակիցի համադրում, որտեղ մեծ դերակատարում են ստանում սոցիո-մշակութային ավանդույթները և պատմական էվոլյուցիայի ընթացքում ձևավորված հասարակական զարգացման կարծրատիպերը⁷³: Արդյունքում, չնայած արդիականացմանն ու նոր արժեքների որդեգրմանը, նման հասարակություններում առավել արմատացած են սերնդեսերունդ փոխանցվող կարծրատիպերը, որոնք վերաբերում են նաև արտաքին աշխարհի ու առանձին խմբերի, ազգերի հանդեպ վերաբերմունքին:

Այդ երևույթը բացատրվում է նաև կենսաբաղադրականության օգնությամբ, որն էթնիկ հակամարտությունների հիմքում դնում է

⁷² Хантингтон С. Кто мы?: Вызовы американской национальной идентичности / С. Хантингтон; Пер. с англ. А. Башкирова. — М.: ООО «Издательство АСТ»: ООО «Транзиткнига», 2004, с. 51.

⁷³ Лапкин В. В. Модернизация, глобализация, идентичность. Общие проблемы и российские особенности. — Полис. Политические исследования. 2008. № 3, с. 50-55.

Էթնակենտրոնությունը՝ ներքին աֆիլիացիայի արդյունքում ձևավորելով աշխարհի ընկալում «մենք-նրանք» պրիզմայի ներքո: Ըստ այս մոտեցման, էթնակենտրոնությունը ձևավորվում է որպես սեփական ընտանիքի նկատմամբ հատուկ վերաբերմունքի արդյունք, որի հիման վրա կառուցվում է նաև հայրենիքի գիտակցումը: Ձևավորվում է երկու կարծրատիպ՝ օգտակար և վնասակար երևույթների և համապատասխան արձագանքներ: Արդյունքում, էթնիկ նույնականացման հիմքով ձևավորվում է նաև մյուս էթնոսների հանդեպ վերաբերմունքը⁷⁴:

Չարգացող երկրներում անհատի ինքնորոշումը պայմանավորում են պետություն-քաղաքացիական հասարակություն հարաբերություններով՝ դիտարկելով ժողովրդավարության որակը: Ի. Սեմենենկոյի պնդմամբ, զարգացող աշխարհում առաջին պլան է դուրս գալիս պետության արդյունավետության հարցը և դրա կարողությունը հանդես գալ «հասարակական», այլ ոչ թե կլանային շահերից⁷⁵: Այդ պայմաններում քաղաքականության մեջ նոր կարևորություն է ստանում ազգային ինքնության թեման, որպես արդիականացման գործընթացում զարգացման ռեսուրս: Այս համատեքստում ազգային ինքնությունը դիտարկվում է որպես ինքնանույնականացում ազգային-պետական հանրույթի պատկերացումների, և թե՛ հասարակության այլ անդամների, թե՛ պետության նկատմամբ պարտավորությունների ու իրավունքների հետ, որոնք թույլ են տալիս քաղաքացուն իրեն դրամաս գալ: Նրա գնահատմամբ հետխորհրդային երկրներից շատերն ի վիճակի չեն ապահովել իրենց տարածքում բնակվող ազգերի ինքնության արտահայտումը, ինչը հարցականի տակ է դնում ազգային պետությունների կենսունակությունն ու բարձրացնում անհատի ինքնորոշման, ինքնության իրացման կարևորությունը: Ազգային ինքնությունն անսպառ ռեսուրս է պարունակում, եթե ապահովվում են դրա համար անհրաժեշտ պայմանները, հակառակ դեպքում՝

⁷⁴ Олескин А.В., БИОПОЛИТИКА, Политический потенциал современной биологии: философские, политологические и практические аспекты, Московский государственный университет им. М.В. Ломоносова, МОСКВА, 2006 год, с. 275-287.

⁷⁵ Семененко И. С., Дилеммы национальной идентичности: политические риски и социальные приобретения // Полис. Политические исследования. № 6. 2009, с. 8-23.

քայքայվում են տվյալ հասարակության և անհատի կապը, անհատը կամ հասարակության տվյալ հատվածը փնտրում է ինքնորոշման այլ հարթակներ՝ մարգինալ ացվելով տվյալ պետության կազմում⁷⁶:

Արդիականացման գործընթացի համատեքստում ինքնորոշման խնդրի ուսումնասիրությունն անհրաժեշտ է դարձնում ուշադրություն դարձնել նաև գլոբալ միտումներին, գլոբալ ացման գործընթացի համատեքստում այս խնդրի դրսևորման յուրահատկություններին: Անհատ-ազգ-պետությունն եռաստիճան համակարգում ինքնորոշման խնդրի դիտարկումն անուղղակիորեն առնչվում է նաև գլոկալ իզացիայի տեսությանը: Վերջինիս հեղինակներից մեկը՝ Ռոլանդ Ռոբերթսոնը, առանձնացնում է գլոբալ տարածքի չորս հիմնական դերակատար՝ ազգային պետությունները, անհատները, հասարակություններին միջազգային հարաբերությունները և մարդկությունը: Նա ընդգծում է, որ ազգային պետությունները, հակառակ շատերի պնդումներին, չեն կորցնում իրենց արդիականությունը, այլ ադապտացվում են նոր իրականությանը գլոկալ իզացիայի ներքո՝ ապահովելով գլոբալ միտումների տեղայնացումը⁷⁷: Ազգային պետությունը դիտարկվում է, որպես ինքնորոշման իրացման ոչ միակ, բայց կարևոր բաղադրիչ: Անհատն այլևս չի դիտարկվում միայն որպես առանձին հասարակության մաս, այլ նաև դրանից դուրս գլոբալ գործընթացների մասնակից, օրինակ՝ միջազգային ծայրահեղական խմբավորումների անդամ և այլն:

Այսպիսով, գլոբալ ացման գործընթացը պարարտ հող է ապահովում նաև ինքնորոշման այլընտրանքային տիրույթների ձեռքբերման համար: Արդյունքում առաջանում է ինքնորոշման գործընթացում պետության դերի սահմանման խնդիրը: Մի կողմից, պետությունը կարող է ապահովել այն հարթակն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են անհատի ինքնորոշման, նույնականացման և ժողովրդավարական ռեսուրսների կիրառմամբ իր ամբիցիաների ու նպատակների

⁷⁶ Там же

⁷⁷ Robertson R., Beyond the discourse of globalization, glocalism: journal of culture, politics and innovation, 2015, 1, p. 8-9.

իրացման համար: Հակառակ դեպքում, պետությունը դառնում է անհատի ազգային ինքնության, «Ես»-ի իրացման խոչընդոտ և ինքնորոշումը տեղի է ունենում տվյալ պետությանից դուրս: Գլոբալացման համատեքստում, դա գուցամիտվում է պետության դերի թուլացման - ուժեղացման դիլեմայի հետ:

Գլոբալացման պայմաններում ինքնորոշման իրավունքի հանդեպ յուրօրինակ մոտեցման հեղինակ է ամերիկացի Իրիս Յանգը: Կարևորելով պետության դերը քաղաքական գործընթացների տեսակետից, Յանգն այն չի դիտարկում որպես ինքնորոշման համար միակ տարածք՝ տարբերակելով վերաբերյալ տիրույթում անհատի կամ խմբի ինքնորոշման հնարավորությունը և ինքնորոշման համար պայքարը պետության հետ⁷⁸: Այսինքն, տվյալ մոտեցմամբ, ինքնորոշումը հնարավորություն է տալիս անկախ ինքնավար միավորներից մեկի գերակայությունից, անկախ պետության լիազորություններից, ինքնորոշման ձգտող անհատին կամ խմբին ներգրավվել գլոբալ գործընթացի մեջ՝ իր շահերը պաշտպանելու համար:

Հաշվի առնելով 21-րդ դարում ընձեռված տեղեկատվական, գլոբալ հնարավորությունները՝ անհատը ձգտում է սոցիալական առավել լայն ինքնիրացման, ինչն առաջացնում է կոնֆլիկտային իրավիճակներ⁷⁹: Աճում է էթնիկության դերը անձի ինքնագիտակցության, ինքնանույնականացման մեջ: Եվ ի տարբերություն արդիականացման ավելի վաղ շրջանների, էթնիկականությունն այժմ հիմնվում է ոչ միայն այս կամ այն էթնիկ խմբի հետ նույնականացման, այլև մնացյալ աշխարհի հետ հարաբերություններում իր ինքնության պաշտպանության վրա: Սա հիմք է տալիս խոսելու քառամակարդակ ինքնորոշման մասին՝ ոչ միայն անհատ-ազգ-պետություն, այլև քաղաքակրթության մակարդակում:

⁷⁸ Young I. M. Inclusion and Democracy. Oxford, N. Y., 2000, p.p. 11–12 (Федотова В.Г. Хорошее общество. — М.: ПрогрессТрадиция, 2005. —323)

⁷⁹ Семенов И. С. Политика идентичности и идентичность в политике: этнонациональные ракурсы, европейский контекст. – Полис. Политические исследования. 2016. № 4, с. 8-28.

Նման քառամակարդակ ինքնորոշումը ենթադրում է, որ անհատը հիմնվելով իր էթնիկ գիտակցության վրա արտաքին աշխարհի հետ հարաբերվում է ոչ միայն որպես այս կամ այն ազգի ներկայացուցիչ կամ որևէ պետության քաղաքացի, այլև որպես կոնկրետ քաղաքակրթության արժեհամակարգի կրող: Դա զգալիորեն մեծացնում է երկխոսության հնարավորությունը՝ այդ թվում կոնֆլիկտային միջէթնիկ հակասությունների կարգավորման տիրույթում:

Եթե անդրադառնանք ինքնորոշման իրավական կողմին, ապա այն սահմանվում է որպես մարդու գործունեության ֆունդամենտալ հիմքերից մեկը, որը հիմնվում է մարդու բնական էակ լինելու հանգամանքի վրա: Մարդկանցից բաղկացած խումբը հանդես է գալիս որպես բնական էակներից բաղկացած բարդ համակարգ, որի ներքո դրսևորվում է մարդու, անհատի բնականությունը՝ գիտակցված գործունեությունը, կամարտահայտումը, նպատակադրումը՝ բնականության այն բաղկացուցիչները, որոնք սահմանում են մարդու կամ քաղաքացու ընտրությունը: Դրա հիման վրա ձևավորվում է նաև մարդկանցից բաղկացած խմբի բնական ընտրությունը, մեծ և փոքր խմբերի ինքնակազմակերպումը՝ ընտանիքից մինչև ազգ և պետություն:

Ինքնորոշումը սահմանվում է որպես գործընթաց, որի միջոցով երկիրը սահմանում է իր պետականությունը և ձևավորում է իր կառավարությունը: Չուգահեռաբար, այն սահմանվում է որպես անհատի կողմից իր կյանքի կառավարման գործընթաց⁸⁰:

Կյանքի, զարգացման, մշակույթի հետ զուգահեռ ինքնորոշումը դիտարկվում է որպես այն անկյունաքարային հիմքը, որը պայմանավորում է անհատի, խմբի, մարդկային քաղաքակրթության գոյությունը:

Ինքնորոշումը հիմնարար իրավունք է: «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի վրա հենվելով՝ նրանք ազատ հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատ ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և

⁸⁰ Oxford dictionary (<https://www.oxforddictionaries.com/definition/english/self-determination>)

մշակութային զարգացումը», - ասված է ՄԱԿ Կանոնակարգի առաջին գլխում:

20-րդ դարում, պայմանավորված աշխարհաքաղաքական գործընթացներով, դիսկուրսի առարկա է դարձել ժողովուրդների ինքնորոշման հարցը: Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի մասին առաջին անգամ նշվել է Վուդրո Վիլսոնի «14 կետերում», որոնք հրապարակվել են Առաջին Համաշխարհային պատերազմից հետո: Հետագայում այն տեղ է գտել ՄԱԿ Կանոնադրության, Գաղութային երկրների և ժողովուրդներին անկախության շնորհման մասին հռչակագրում (1960թ.) և Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում (1970թ.):

ՄԱԿ Կանոնադրության առաջին հոդվածում նշվում է, որ «ՄԱԿ-ի նպատակն է զարգացնել ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունները՝ հիմնվելով իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման վրա և ձեռնարկել այլ անհրաժեշտ միջոցները՝ համաշխարհային խաղաղության ամրապնդման համար»⁸¹:

Հետագայում ՄԱԿ Կանոնադրության հիման վրա ընդունված Միջազգային իրավունքի սկզբունքների վերաբերյալ Հռչակագրում առանձնացված սկզբունքների մեջ ներառված է ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը: «Բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատ կերպով որոշել իրենց քաղաքական կարգավիճակը և տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացումը՝ առանց արտաքին միջամտության, և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այս իրավունքը»⁸²: Նշվում է նաև, որ ինքնավար և անկախ պետության հաստատումը, անկախ պետությանը միացումը կամ այլ քաղաքական կարգավիճակի ընտրությունը նույնպես ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մաս է:

1975թ.-ին ընդունված ԵԱՀԽ առաջին գագաթաժողովի Հելսինկյան եզրափակիչ ակտում նշվում է, որ «Մասնակից

⁸¹ Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրություն, Գլուխ 1, Հոդված 1-2, <http://www.un.org/en/sections/un-charter/chapter-i/index.html>

⁸² 2625 (XXV). Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations, 24 October 1970, <http://www.un-documents.net/a25r2625.htm>

պետությունները կհարգեն ժողովուրդների իրավահավասարությունը և ինքնորոշման իրավունքը՝ մշտապես գործելով ըստ ՄԱԿ կանոնադրության նպատակների և սկզբունքների և միջազգային իրավունքի համապատասխան նորմերի՝ ներառյալ նրանք, որոնք վերաբերում են պետությունների տարածքային ամբողջականությանը: Ելնելով ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի սկզբունքից՝ բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, երբ և ինչպես նրանք ցանկանում են, որոշել իրենց ներքին ու արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության, և սեփական հայեցողությամբ իրականացնել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»⁸³:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ենթադրում է ազգի կամ ժողովրդի իրավունքն ինքնուրույն որոշել պետական գոյության իր ձևը: Այն ենթադրում է այլ ազգերի հետ հարաբերությունների հաստատման ձևերի ազատ ընտրությունը՝ Ֆեդերատիվ պետություն կամ ինքնավարություն, ինչպես նաև անկախ պետության ձևավորում, դրա ներքին կառուցվածքի սահմանում: Ազգերի ինքնորոշման իրավունքը ժողովրդի կոլեկտիվ իրավունք է, որը դասվում է միջազգային իրավունքի նորմերին:

Միջազգային իրավունքի շրջանակներում ինքնորոշման սկզբունքի կարգավիճակի ճշգրտման տեսակետից էական նշանակություն ունեն նաև ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության դատարանի որոշումները մի շարք գործերի վերաբերյալ: Յոթանասունականների սկզբին այդ դատարանին ուղղակի դերակատարություն էր վերապահված ինքնորոշման իրավունքի կիրառման հարցում: Հենց ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության դատարանի վճռի հիման վրա ճանաչվեց Նամիբիայի անկախությունը: Դատարանն անդրադարձել է ինքնորոշման իրավունքին նաև 1995-ին՝ Արևելյան Թիմորի կապակցությամբ: Արդարադատության

⁸³ OSCE, Helsinki Final Act, 1 August 1975, <http://www.osce.org/hy/mc/39507?download=true>

միջազգային դատարանն այդ գործի 29-րդ պարագրաֆում ինքնորոշման իրավունքը ճանաչել է որպես միջազգային իրավունքում erga omnes (լատիներեն՝ բոլորին առնչվող, համապարտադիր) բնույթ ունեցող նորմ⁸⁴:

Ինքնորոշման իրավունքը դասվում է հիմնական միջազգային իրավունքի մանդատային նորմերի շարքին, որոնց պարտադիր լինելուց որևէ մեկը չի կարող իրեն ազատ համարել կամ որևէ մեկին ազատել՝ ի տարբերություն միջազգային իրավունքի jus dispositivum նորմերի, որոնք սկսում են գործել որևէ կողմի համար, եթե այդ կողմը համաձայն է այդ նորմը ստանձնել միջազգային համաձայնագրի միջոցով:

ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված 1514(XV) բանաձևը սահմանում է ինքնորոշման հետևյալ տարբերակները՝ անկախ, ինքնավար պետության ձևավորում, անկախ պետության հետ ազատ միավորում, միաձուլում անկախ պետության հետ⁸⁵: Շաշտերն առանձնացնում է այն պայմանները, որոնք ազգերի համար ապահովում են անկախացման հիմք.

- նման նկրտում ունեցող համայնքը պետք է իր ինքնուրույն տարբերվի երկրի մնացած բնակչությանից և մեծամասնություն կազմի այն տարածքում, որը ձգում է անջատման,
- համայնքը պարբերաբար ենթարկվում է քաղաքական և տնտեսական խտրականության,
- կենտրոնական ռեժիմը մերժել է ինքնավարության հիմնավորված առաջարկները և համայնքի փոքրամասնությանն առնչվող իրավունքները⁸⁶:

Ինքնորոշման հիմնական խնդիրը, սակայն, ազգի համար՝ «ինքն»-ի սահմանումն ու որոշումն է⁸⁷: Ինքնորոշման իրավունքին առնչվող ՄԱԿ-ի կողմից ընդունված փաստաթղթերում խնդրահարույց

⁸⁴ Թորոսյան Տ., Ինքնորոշման իրավունքի կարգավիճակը, կիրառման չափանիշներն ու պայմանները. Լրաբեր Հասարակական Գիտությունների, 2008, № 1, p.p. 18-37:

⁸⁵ Резолюция 1514 (XV) Генеральной Ассамблеи от 14 декабря 1960 года, http://www.un.org/russian/ga/15/docs/res15_2.htm

⁸⁶ Schachter, "Sovereignty – Then and Now", p. 684 (Diversity and Self-Determination in International Law by Knop, Karen C.)

⁸⁷ Политика. Толковый словарь. — М.: "ИНФРА-М", Издательство "Весь Мир". Д. Андерхилл, С. Барретт, П. Бернелл, П. Бернем, и др. Общая редакция: д.э.н. Осадчая И.М.. 2001.

կետն ինքնորոշման սուբյեկտն է՝ ժողովուրդը և ազգ հասկացությունների պատճառով առաջացող տարածայնությունները: Քաղաքական գործընթացների և մասնավորապես՝ ինքնորոշման համար պայքարի համատեքստում մյուս կարևոր կոնսոլիդացման միավորը էթնիկ պատկանելությունն է, որն ավելի լայն է ազգ և ժողովուրդ հասկացություններից:

Էթնոս հասկացությունը կիրառվում է նույն մշակույթին պատկանող, կոնսոլիդացիայի տարբեր մակարդակներ ունեցող պատմական հանրության սահմանման համար: Դրանք ձևավորվում են միևնույն տարածքում երկար բնակվելու արդյունքում: Էթնոսին միավորում են էթիկայի, էսթետիկայի, բարոյականության միևնույն հասկացողությունները: Միևնույն էթնոսի ներկայացուցիչները դավանում են միևնույն կրոնը, խոսում նույն կամ որոշ տարբերություններ ունեցող լեզուներով, և ունեն ընդհանրության գիտակցում, «մենք»- «նրանք» տարանջատմամբ:

Ժամանակակից գրականության մեծ օգտագործվում է էթնոսի երկու սահմանում՝ որպես պետական սոցիալական համակարգ և որպես մարդու գոյության ձև:

Մասնագետների կողմից փորձ է արվել սահմանել ժողովուրդ հասկացությունը: ՅՈՒՆԵՍԿՕ-ն հատուկ զեկույցում նշվում է, որ ժողովուրդ է համարվում.

1. Մարդկանց խումբը, որը օժտված է նշվող բոլոր հատկանիշներով կամ դրանց մեծ մասով. ա) ընդհանուր պատմական ավանդույթներ, բ) ռասայական կամ էթնիկ ընդհանրություն, գ) մշակութային միասնականություն, դ) լեզվական ընդհանրություն, ե) տարածքային կապեր, զ) տնտեսական ընդհանուր կյանք:

2. Պարտադիր է, որ խումբը մեծաքանակ լինի (օրինակ՝ միկրո պետության բնակչություն), սակայն պետք է ավելի լինի, քան անհատների սովորական միավորում:

3. Խումբն ինքնին պետք է ձգտի, որ իրեն ժողովուրդ համարեն և պետք է ունենա ժողովրդի ինքնագիտակցություն՝

չնայած վերոնշյալ հատկանիշներով օժտված լինելու դեպքում, խումբ կամ խմբի անդամները կարող են նաև նման ցանկություն և գիտակցություն չունենալ :

4. Խումբը պետք է ունենա կազմակերպություններ և այլ միջոցներ իր հատկանիշների և ընդհանրության ձգտման դրսևորման համար»⁸⁸:

Ժողովուրդը պատմականորեն ձևավորված լեզվական, տարածքային, տնտեսական և մշակութային ընդհանրություն է, որը նախորդում է ազգին: Այն օժտված է միևնույն հատկանիշներով, ինչ ազգը, սակայն տարբերում է տնտեսական և սոցիալական զարգացման աստիճանով: Ազգերը կարող են ձևավորվել նաև մի քանի ժողովուրդների հիման վրա:

Ֆրանսիական Մեծ Յեղափոխությունից հետո ազգ հասկացությունը լայնորեն կիրառվում է առավել քաղաքական, ոչ թե էթնիկ իմաստով: Դրա հետ մեկտեղ ազգը դիտարկվում է որպես վերացական երևույթ, որը դժվար է սահմանամաբ տարանջատել ժողովուրդի, էթնոս հասկացություններից: Յամլետ Գևորգյանը դրա համար դիմում է պատմական մոտեցմանը՝ դիտարկելով հասարակական-պատմական իրական ընթացքը: Ըստ նրա, մշակույթի վերին՝ քաղաքակրթական շերտի ընդհանրական ձևերի առկայությունն է, որ ժողովրդին դարձնում է ազգ, բնութագրում է ազգը որպես միասնական հանրություն⁸⁹:

Քաղաքական գործընթացներում ազգերը հանդես են գալիս, որպես սուբյեկտներ, որոնք պայքարում են իրենց սոցիալ-մշակութային պահանջմունքների բավարարման, քաղաքական և տնտեսական շահերի պաշտպանության, իրավահավասարության համար:

Ազգի սահմանման տեսակետից երկու դպրոց է առանձնացվում՝ պետական-ազգային դպրոց, որը հենվում է ազգի քաղաքական բաղադրիչի վրա և ընդունում է, որ ազգը ձևավորվում է արդեն իսկ

⁸⁸ UN Doc SHS-89/CONF. 602/7, Paris, 22.2.1990.

⁸⁹ Գևորգյան Յ., Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ: ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ: - Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005, էջ 502-517:

գոյություն ունեցող պետության հիման վրա: Երկրորդ՝ մշակութային-ազգային դպրոցը, շեշտը դնում է էթնիկ ընդհանրության վրա, որի համաձայն ազգերը ձևավորվում են ժողովուրդների հիման վրա, իսկ պետության գոյությունը պարտադիր նախապայման է:

Ու.Ալտերմատը՝ հիմնվելով այս երկու մոտեցումների վրա, պնդում է, որ այն դեպքում, երբ ազգային ինքնությունը ձևավորվում է գոյություն ունեցող պետության հենքի վրա, առաջնային պլան է մղվում քաղաքական ընդհանրության ձգտումը: Իսկ ընդհանուր պետության բացակայության դեպքում ձևավորվող ազգերի դեպքում նույնականացումը տեղի է ունենում լեզվի, մշակույթի հիման վրա և ազգը գոյություն ունի պետությունից դուրս⁹⁰: Ինքնորոշման գործընթացում ազգային ինքնության գիտակցումը, ազգայնական տրամադրությունները մեծ դերակատարում են ստանում:

Ազգային-պետական մոտեցումն առավել վերագրում է արևմտյան, իսկ ազգային-մշակութայինը արևելաեվրոպական, արևելյան քաղաքական իրողություններին:

Օտտո Բաուերն ազգը բնորոշում է մի կողմից որպես բնական ընդհանրություն, մյուս կողմից՝ մշակութային ընդհանրություն: Այլ կերպ, նա ազգը սահմանում է որպես ճակատագրի ընդհանրություն, որը գործում է երկու ուղղությամբ: Մի կողմից ժառանգականության սկզբունքով փոխանցվում է ազգի կողմից ձեռքբերված հատկանիշները, մյուս կողմից՝ մշակութային արժեքները: Նա անբնական և սխալ է համարում ազգային պետությունների ձևավորումը, ըստ նրա առավել արդյունավետը տարբեր ազգերի համակցությունն է, առանց դրանցից մեկի գերակայության: Ազգային ինքնորոշման համար պայքարը նրա կողմից դիտարկվում է որպես ճնշված ազգի էլիտայի պայքար, այլ ոչ թե հանրության լայն շրջանակների⁹¹:

⁹⁰ Альтерматт У., Этнонационализм в Европе. М.: Российск. гос. гуманит. ун-т, 2000, с. 37.

⁹¹ Бауэр О., Национальный вопрос и социал-демократия, Нации и национализм / Б. Андерсон, О. Бауэр, М. Хрох и др; Пер с англ. Н 28 и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского — М.: Праксис, 2002, с. 52-121.

Յ. Հաբերմասն իր հերթին ժամանակակից «ազգ» հասկացությունը դիտարկում է որպես դրա մշակութային և քաղաքական նշանակությունների հակասական ժառանգորդ⁹²:

Է.Սմիտն ազգը դիտարկում է որպես մոդեռնիզմի առաջ մղող հիմնական ուժ: Դիտարկելով ազգային պետությունները, նա ազգը սահմանում է որպես հասարակության մեծամասնությունը մոբիլիզացնող ուժ, որն առաջ է մղում պետության զարգացումը, իսկ նացիոնալիզմի գաղափարախոսությունը՝ որպես բնակչության քաղաքական դերի և եզրիտիմացնող ուժ, որը խթանում է եվոլյուցիոն գործընթացը: Է.Սմիտի մոտեցման մյուս կարևոր առանձնահատկությունն ազգի էթնիկ պատկանելության կարևորումն է, որն ապահովում է ազգի պատմականության հիմքն ու թելադրում նրա ազգային, այդ թվում՝ քաղաքական մոտեցումների առանձնահատկությունները: Ազգային պետությունների ձևավորման համատեքստում նա անդրադառնում է նաև այդ գործընթացում այլ ազգերի կողմից բարձրացվող ինքնորոշման պայքարին՝ հղում կատարելով Է.Գիդդենսի դիտարկմանը, համաձայն որի «Մեծամասամբ ազգային պետության ձևավորումը խթանում է ընդդիմադիր նացիոնալիզմները: Դրանց աղբյուրը պետք է փնտրել ոչ թե տնտեսական տարբերությունների, այլ ավանդական կենսակերպի խախտման մեջ, որոնք դրդում են պատմականության և ադմինիստրատիվ ինքնավարության պահանջների»⁹³:

Արդիականացման ներքո բնական է դիտարկվում ազգերի կողմից ազգային ինքնավարության, անկախ պետականության ձևավորման ձգտումը: Շատ ազգերի կողմից անկախ պետության ձևավորումը դիտարկվում է որպես ազգային մշակույթի պաշտպանության կենսական անհրաժեշտության գործիք: Ազգային անկախ պետությունը դառնում է ազգային արժեքների հիմնական կրող և միաժամանակ դրանց պաշտպանության հիմնական գործիք⁹⁴:

⁹² Хабермас Ю., Европейское национальное государство: его достижения и пределы. О прошлом и будущем суверенитета и гражданства, Нации и национализм / Б. Андерсон, О. Бауэр, М. Хрох и др.; Пер с англ. Н 28 и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского — М.: Праксис, 2002, с. 365.

⁹³ Энтони С., Национализм и модернизм: Критический обзор современных теорий и национализма/Пер.с англ. — М.:Праксис, 2004, с. 138.

⁹⁴ Там же: с. 180-185.

Յ.Յաբերմասն ազգային պետության հիմնական առավելությունը տեսնում է նրանում, որ դրա ներքո բյուրոկրատիայի և կապիտալիզմի համադրումը լավագույն պայմաններն են ապահովում սոցիալական արդիականացման համար⁹⁵: Վերջինս ազգային գիտակցության և դրա շուրջ ինտեգրման հիմնական դերակատարումը տեսնում է պետականաշինության գործընթացում: Որևէ պետության ներքո ապրող ազգի պայքարն ազգային ինքնորոշման, իր ազատությունների իրացման համար ապահովում է ժողովրդավարական արժեքների վրա հիմնված ամուր ժողովրդավարության, ազգային պետության ձևավորման հիմք: Սակայն, արդեն հաջորդ փուլում պետության արդիականության և կայունության համար ինտեգրման և սոցիալիզացիայի հիմքը պետք է լինեն էգալիտար, իրավական նորմերն ու քաղաքացիությունը: Արդեն այդ փուլում պետության ներքո ազգայնականությունն առաջարկվում է փոխարինել սահմանադրական հայրենասիրությամբ՝ նույնականացման հիմքում դնելով հավատարմությունը պետությանն ու սահմանադրությանը:

Երևեստ Գելների մոտեցմամբ էթնիկ բախումներն առաջանում են էթնիկ և ազգային միավորների չհամընկնման դեպքում, երբ կոնկրետ էթնիկ խումբը չի կարողանում գերիշխել առանձին պետության ներսում: Յիմնական խնդիրը քաղաքական և ազգային սահմանների տարբերությունն է, չհամընկնումը⁹⁶: Ազգայնականությունը տվյալ դեպքում դիտարկվում է որպես քաղաքական և մշակութային արդիականացման խոշոր շարժիչ, որը հանգեցնում է ազգի ձևավորմանը և հանգեցնում ազգայնական շարժումների, որոնց նպատակն ազգային պետության ձևավորումն է:

Ա.Ստեփանը և Խ.Լինցը անդրադառնում են այն միտմանը, որ մի շարք ոչ ժողովրդավար երկրներում անցման գործընթացը գուճադրվում է ազգային պետության բարձր միատարրության

⁹⁵ Хабермас Ю., Европейское национальное государство: его достижения и пределы. О прошлом и будущем суверенитета и гражданства, Нации и национализм / Б. Андерсон, О. Бауэр, М. Хрох и др; Пер с англ. Н 28 и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского — М.: Праксис, 2002, с. 365.

⁹⁶ Геллнер Э., Нации и национализм. М : Прогресс, 1991, с. 23-24.

աստիճանով: Այդ դեպքում տեղի է ունենում ազգային, կրոնական փոքրամասնության ներքին իրավունքների ոտնահարում: Նրանք ընդգծում են, որ ազգային պետության ներքին, ժողովրդավարության ներքին ձևավորումը, որը կապահովի հասարակության բոլոր շերտերի ներկայացվածություն, հնարավոր է միատարր հասարակության պարագայում, հակառակ դեպքում առաջանում է պետության և եզրիտիմության հարցը, քանի որ հասարակության որոշակի խումբ հրաժարվում է ենթարկվել պետության կողմից սահմանված կանոններին⁹⁷: Այդ դեպքում, գիտակցելով սեփական իրավունքների սահմանափակումն, ազգային փոքրամասնությունները ձգտում են անհնազանդության, անկախացման և այլն:

Լորդ Ակտոնն ազգերի ինքնորոշման իրավունքի իրացումը քաղաքականության մեջ կապում է 1688թ. Ֆրանսիական հեղափոխության հետ: Նրա գնահատմամբ ազգերի ինքնորոշման ժամանակակից տեսությունը ձևավորվել է մասամբ որպես դրա օրինական արդյունք, մասամբ որպես արձագանք դրան⁹⁸:

Կատարված հետազոտությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ ինքնորոշումը, և ինչպես քաղաքական արդիականացման հրամայական, անկյունաքարային դերակատարում է ստանում արդի քաղաքական զարգացումներում՝ կարևոր նշանակություն ստանալով թե՛ էթնոքաղաքական հակամարտությունների առաջացման, թե՛ դրանց կարգավորման գործընթացներում:

Քաղաքական արդի զարգացումներում նկատվում է էթնիկության քաղաքականացում, որը մեծացնում է ազգային գործոնի դերը՝ էթնիկությունը դնելով քաղաքական մոբիլիզացիայի հիմքում: Չուգահեռաբար աճում է նաև ազգային պետությունների նշանակությունը, սակայն արդիականացվող, կերպափոխվող, առավել ճկուն ինստիտուտներով և միջպետական

⁹⁷ Juan J. Linz, Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, JHU Press, 1996. p.p. 49-54.

⁹⁸ Лорд Актон, Принцип национального самоопределения, Нации и национализм / Б. Андерсон, О. Бауэр, М. Хрох и др; Пер с англ. Н 28 и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского — М.: Праксис, 2002, с. 31.

հարաբերություններով: Ձևավորվում է այսպես կոչված «նոր նացիոնալ իզմ», որը յուրահատուկ բախման մեջ է մտնում մոլլ տիկոլլ տուրալ իզմի հետ՝ անհրաժեշտություն առաջացնելով ձևավորել արլիեթնիկություն վրա հիմնված նոր «ինկլուզիվ ինքնություն»⁹⁹, որը բաց է երկխոսության համար:

Ինքնորոշումը դառնում է արդիականացման գործընթացի անբաժան մաս: Դրա դիտարկումն անհատ-ազգ-պետություն-քաղաքակրթություն հարթության ներքո հնարավորություն է տալիս ինքնորոշման բազմաչափության ներքո դուրս բերել դրավճռորոշ դերը պետությունների կայունության, միջպետական հարաբերությունների ռացիոնալ զարգացման, էթնոքաղաքական հակամարտությունների կանխարգելման, ինչպես նաև արդեն իսկ առկա հակամարտությունների կարգավորման գործընթացում:

Ըստ էության, ինքնորոշումը նաև, առաջին հերթին, անվտանգության հարց է: Կրոնական, մշակութային, ազգային խորականության կիրառումն ավտորիտար ռեժիմների կողմից առաջացնում է անվտանգության լրջագույն սպառնալիք, այդ թվում՝ ֆիզիկական գոյության, ինչը ծնում է կոնսոլիդացիայի անհրաժեշտություն: Տվյալ դեպքում ինքնորոշման համար պայքարն անվտանգային նշանակություն է ստանում:

Միջազգային իրավական ակտերում ինքնորոշման իրավունքը ամրագրվում է որպես միջազգային հարաբերությունների կարգավորման հիմնասյուններից մեկը: Ազգերին իրավունք է վերապահվում ձգտել ինքնորոշման ցանկացած տարբերակի: Այս իրավունքը միջազգային իրավունքի տեսակետից փորձ է արվում համատեղել տարածքային ամբողջականության և վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքների հետ: Սակայն, խաղաղ կարգավորման անհնարինության պարագայում որոշ դեպքերում ազգային պետության ձևավորումն ու դրա միջազգային ճանաչումը դառնում են ազգի անվտանգության միակ երաշխիքը: Միջազգային հարաբերությունների ուսումնասիրության անգլիական դպրոցի

⁹⁹Семенов И., Политика идентичности и идентичность в политике: этнонациональные ракурсы, европейский контекст. – Полис. Политические исследования. 2016. № 4, с. 8-28.

Ներկայացուցիչ Բ.Բուզանը, կարևորելով անվտանգությանը, որպես խաղաղության և ուժի միջև բալանսավորող երրորդ հայեցակարգ, անվտանգությանը դիտարկում է երեք մակարդակում՝ անհատական, պետական և միջազգային հարաբերություններին: Անվտանգությանը նա սահմանում է որպես ազատությանը և սպառնալիքից և «պետության ու հասարակության կարողությունը՝ պաշտպանելու իրենց անկախ ինքնությունը և գործառնական միասնությունը դրանք փոխելու բռնի ձգտումներից»¹⁰⁰:

Արդյունավետ արդիականացման գործընթացը նվազեցնում է նման իրավիճակներում ուժի կիրառման հավանականությունը և մեծացնում՝ խաղաղ կարգավորման հնարավորությունը: Արդիականացման գործընթացում տեղի ունեցող արժեհամակարգային կերպափոխումները լրացուցիչ գործիքակազմն են ստեղծում «խաղաղության ու պատերազմի պարադիգմում» մանևրելու համար, հակամարտության բոլոր կողմերի արդիականացման բարձր, միմյանց մոտ մակարդակի պարագայում, մեծացնելով խաղաղության ընտրության հավանականությունը:

Կողմերի արժեհամակարգն է պայմանավորում հակամարտության, դրա կարգավորման ուղիների ընկալումը, պատրաստակամությունը իրական քայլերի, ինչպես նաև սեփական հանրության հանդեպ իրականացվող, այդ թվում՝ քարոզչական քաղաքականությունը: Էթնիկ լարվածությանը նպաստում է «տուժած ազգի» և «օրինական իրավունքի» սկզբունքների ամրապնդումը ազգերի միջև, որոնք առաջացնում են թշնամական, լարված հարաբերություններ¹⁰¹: Ուստի, հակամարտությունները պետք է այնպիսի կարգավորում ստանան, որոնք կբացառեն նման մտածողության ձևավորումը հակամարտության կողմերի մոտ՝ հետկոնֆլիկտային սրացումը կանխելու նպատակից ելնելով: Իսկ դա ուղղակիորեն կախված է քաղաքական կարգավորման ընթացքում փոխադարձ զիջումների գնալու և «win-win» ելքով

¹⁰⁰ Barry Buzan, "New Patterns of Global Security in the Twenty-first Century" *International Affairs*, 67.3 (1991), pp. 432-433.

¹⁰¹ Черныш М. Ф. Факторы возникновения и воспроизводства межэтнической напряженности в теоретической перспективе. – Полис. Политические исследования. 2016. № 5, с. 25-36.

պատրաստակամությանից:

Միաժամանակ, «դեմոկրատական խաղաղության» մոտեցումը չի գործում այն հակամարտությանների պարագայում, երբ կողմերից մեկը ոչ միայն առաջ չի շարժվում ժողովրդավարացման ուղով՝ այլև ակնհայտ նախապատվություն է տալիս պատերազմին: Նման իրավիճակը բարդացնում է հակամարտության կարգավորումն ու հակամարտության մյուս կողմին դրդում կոշտացնել սեփական դիրքորոշումը՝ ապահովելով անվտանգության և րացուցիչ երաշխիքներ:

ԳԼՈՒԽ 2 ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԻ ԿԵՐՊԱՓՈԽԱՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ

2.1. Ազգերի ինքնորոշման իրավունքն ու տարածքային ամբողջականության սկզբունքը Ղարաբաղյան հակամարտության համառոտում

Արցախի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացումն ուղղակիորեն կապված է հակամարտության կարգավորման հետ: Վերջնական կարգավորումն ու Արցախի վերջնական կարգավիճակի միջազգային ճանաչումը միայն կարող են ապահովել ինքնորոշման լիակատար իրացում և արտաքին աշխարհի հետ Արցախի բնականոն հարաբերությունների կառուցում: Ուստի, Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացի ուսումնասիրությունը կարևոր է հիմնախնդրի արդիականացման, ինքնորոշման իրացման հնարավորությունների սահմանման համար՝ հաշվի առնելով գործընթացի զարգացման միտումները:

Ազգերի ինքնորոշման իրավունքը և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը միջազգային իրավունքի հիմնասյուներից են: Միջազգային իրավունքի այլ սկզբունքների հետ միասին դրանք ծառայում են հակամարտությունների կարգավորմանն ու կոչված են ապահովելու խաղաղությունն ու կայունությունը միջազգային հարաբերություններում: Այս երկու սկզբունքները՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ու իրավահավասարությունը և տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելը, սահմանների անխախտելիությունը, վեճերի խաղաղ կարգավորումը, ներքին գործերին չմիջամտելը և այլն, ամրագրված են նաև ԵԱՀԿ ՅԵԼՍԻՆԿյան եզրափակիչ ակտում¹⁰², որպես Մասնակից պետությունների միջև հարաբերությունները կարգա-

¹⁰² Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով, Եզրափակիչ ակտ, ՅԵԼՍԻՆԿի, 1975թ., <http://www.osce.org/hy/mc/39507?download=true>

վորող սկզբունքներ, որոնց հենքի վրա պետք է կարգավորվեն առկա հակամարտության ունեւորը, այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտության ունը: Սակայն այդ սկզբունքների, դրանց հարաբերակցության կամայական մեկնաբանության ու իրական քաղաքականության մեջ դրանց կիրառման վերաբերյալ պատկերացումների տարբերությունը հանգեցնում է բախման, որի հաղթահարման պարագայում է միայն հնարավոր դառնում հակամարտության ունեւորի խաղաղ, քաղաքական կարգավորումը:

Ղարաբաղյան հակամարտության ներկայիս փուլը սկսվել է 1988թ.-ին Ղարաբաղյան շարժումով, որը մեկնարկեց ի պատասխան տարիներ ի վեր ԽՍՀՄ շրջանում Ադրբեջանի կողմից կիրառած խորական քաղաքականությանը: Հակամարտության ռազմական փուլը սկսվել է ԽՍՀՄ փլուզման ընթացքում Ղարաբաղի ժողովրդի կողմից այդ պահին գործող օրենքների շրջանակներում իր ինքնորոշման իրավունքի իրացման և դրան ի պատասխան Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի հետևանքով: Անդրադառնալով ԽՍՀՄ փլուզման փուլում էթնիկ հակասություններին, Խ.Լ.Ինցը և Ս.Ստեփանը նշում են, որ էթնիկ հակասությունները, ինչպես օրինակ Ղարաբաղյանը «նորընտիր նախագահներին դրդում են ճնշել իրենց էթնիկ խմբերի բարձրացող ձայնը և ավելի մեծ անհանդուրժողականություն ցուցաբերել ազգային փոքրամասնությունների նկատմամբ»¹⁰³:

Խորհրդային Միության տարիներին Ադրբեջանի իրականացրած խորական քաղաքականության, այդ թվում՝ նպատակային հայաթափության մասին վկայում են մարդահամարի տվյալներն ու դրանց համադրումը բնական աճի ցուցիչների հետ (Տես՝ **Հավելված 2**): Բացի այդ, ԼՂԻՄ-ի նկատմամբ վարած խորական քաղաքականության մասին արձանագրում է նաև ադրբեջանական կողմը: «Ադրբեջանական ԽՍՀ ժողովուրդները» ժողովածուի տվյալներով, մեկ մարդու ն բաժին ընկնող կապիտալ ներդրումների ծավալով ԼՂԻՄ ցուցանիշը 1981-1985թթ. ավելի քան երկու անգամ, իսկ 1986թ. 2,7 անգամ պակաս է

¹⁰³ Juan J. Linz, Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, JHU Press, 1996, p. 385.

եղել ողջ Ադրբեջանի միջին ցուցանիշից¹⁰⁴: Դա հանգեցրել է հայ քնակ խոշոր քաղաքների թուլացմանը, կապիտալ ներդրումների կրճատմանը, սոցիալ ական ոլորտների անտեսմանը և այլն: Փաստացի, ստեղծվում էին նպաստավոր բոլոր պայմանները ԼՂ-ից հայ բնակչու թյան արտագաղթի համար¹⁰⁵:

Բանակցային գործընթացի միջոցով փորձ է արվում գտնել հակամարտության կարգավորման այնպիսի փոխզիջումային տարբերակ, որն ընդունելի կլինի կողմերի համար և հնարավորություն կտա բալանսավորման միջոցով հաղթահարել բախումը Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի և Ադրբեջանի տարածքային ամբողջականության միջև: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում այս սկզբունքներն արտացոլվում են Ղարաբաղի կարգավիճակի և տարածքային հարցերի մեջ:

Միջնորդական առաքելությանը 1992թ-ից իրականացնում է ԵԱՀԿ Մինսկի խումբը, իսկ 1995թ. մարտի 23-ին հաստատվել է ԵԱՀԿ ՄԽ համանախագահության մանդատը¹⁰⁶, որի հիման վրա ԱՄՆ-ը, Ֆրանսիան և ՌԴ-ն ստանձնել են միջնորդական պարտավորությունները: Չնայած նրան, որ ԵԱՀԿ ՄԽ համանախագահությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միջազգայնորեն հաստատված միջնորդական լիազորություններ ունեցող միակ ձևաչափն է, վերջին տարիներին Ադրբեջանն ամեն կերպ տորպեդահարում է այն՝ դժգոհություն հայտնելով միջնորդների գործունեության վերաբերյալ, մեղադրելով նրանց անգործության մեջ, հակամարտության կարգավորման քննարկումներն այլ հարթակներ տեղափոխելու ջանքերով և այլն: Դա հարված է հասցնում և՛ ԵԱՀԿ-ի, և՛ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հեղինակությանը և շարունակման դեպքում կարող է սկսել հարված հասցնել նաև այս ձևաչափի լեգիտիմությանը: Այդ

¹⁰⁴ Народное хозяйство АзССР к 70-летию Великого Октября, с.3, 11, 270, 279.

¹⁰⁵ Իսկանդարյան Գ., Ղազարյան Յ., Մալխասյան Ս., Պետրոսյան Ս., Քոթանջյան Վ., Յիմնակյան փաստեր Ղարաբաղի համարտության մասին, Երևան, 2008, էջ 8:

¹⁰⁶ Mandate of the Co-Chairmen of the Conference on Nagorno Karabakh under the auspices of the OSCE, Vienna, 23 March 1995, <http://www.osce.org/mg/70125?download=true>

հայ տարարությունների և գործողությունների հետ մեկտեղ Ադրբեջանը երբեք պաշտոնապես չի հրաժարվել ԵԱՀԿ ՄԽ համանախագահության միջնորդությամբ բանակցություններին մասնակցելուց, սակայն զուգահեռ քայլեր է ձեռնարկում ԵԱՀԿ-ին հարված հասցնելու և տարածաշրջանում կառույցի դիրքերը թուլացնելու ուղղությամբ, օրինակ՝ զգալի դերակատարում ունենալով Երևանում ԵԱՀԿ գրասենյակի փակման հարցում: Գրասենյակի փակումն, ըստ էության, կրկնակի հարված էր ԵԱՀԿ-ի համար, քանի որ մի կողմից խախտեց ԵԱՀԿ հիմնաքարային կոնսենսուսի սկզբունքը և զրկեց տարածաշրջանում ուղղակի ներկայացվածությունից, մյուս կողմից՝ ցույց տվեց կառույցի թուլությունն ու անկարողությունը՝ ազդելու անդամ երկրի վրա և կանխարգելելու նման զարգացումները: Այս ամենի հետ մեկտեղ, ԵԱՀԿ ՄԽ համանախագահությունն այսօր մնում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման միակ լեգիտիմ կառույցը, ուստի աշխատանքում բանակցային գործընթացի դինամիկան դիտարկվում է այդ կառույցի ներքո ընթացող գործընթացի հիմքով:

Ստորև անդրադարձ ենք կատարում միջազգային իրավունքի ներքո ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքների հնարավոր բախմանը կամ համադրմանը, այնուհետև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ դրույթի կերպափոխմանն ու ընկալմանը:

Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքը սահմանված է, որպես ՄԱԿ նպատակներից մեկը՝ ըստ կառույցի կանոնադրության 1-ին հոդվածի¹⁰⁷: Տարածքային ամբողջականության վերաբերյալ կանոնադրության երկրորդ հոդվածում ամրագրվում է, որ պետությունները պետք է ձեռնպահ մնան «ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ կամ

¹⁰⁷ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, http://www.un.org/res/un20Treaties/Charter_arm_unicode.pdf

ՄԱԿ-ի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից»: Դրա հետ մեկտեղ, երկրորդ հոդվածի նախաբանում նշված է, որ կազմակերպության անդամները, հետամուտ լինելով առաջին հոդվածում շարադրված նպատակներին, գործելու են երկրորդ հոդվածում թվարկված սկզբունքներին համաձայն¹⁰⁸: ՄԱԿ-ի կանոնադրություները հստակ սահմանում է, որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է պետության ներքին միջև հարաբերություններին: Տարածքային ամբողջականությունը, հանդիսանալով ՄԱԿ-ի նպատակների իրականացմանը ուղղված սկզբունք, չի կարող հակադրվել ՄԱԿ-ի նպատակ հանդիսացող ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքին¹⁰⁹:

1975թ.-ին ընդունված ԵԱՀԿ Եզրափակիչ ակտով ևս ամրագրվում է, որ. «Մասնակից պետությունները կհարգեն Մասնակից պետություններից յուրաքանչյուրի տարածքային ամբողջականությունը», ինչպես նաև նշվում է, որ «բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, երբ և ինչպես նրանք ցանկանում են, որոշել իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության, և սեփական հայեցողությամբ իրականացնել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»¹¹⁰, ինչպես նաև «մասնակից պետությունները վերահաստատում են ժողովուրդների իրավահավասարության և նրանց ինքնորոշման իրավունքի հարգման և արդյունավետ իրականացման համընդհանուր նշանակությունը»: Ուստի, ՅԵԼՍԻՆԿԻ անդամ բոլոր պետությունները

¹⁰⁸ Նույն տեղում

¹⁰⁹ Քոչարյան Շ., Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Երևան, 2015, էջ 11-12:

¹¹⁰ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով, Եզրափակիչ ակտ, ՅԵԼՍԻՆԿԻ 1975, <http://www.osce.org/hy/mc/39507?download=true>

պետք է հարգեն ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ու դրա ազատիրացումը:

Որպես օրինակ, Արդարադատության միջազգային դատարանի՝ Կոսովոյի վերաբերյալ 2010թ. հունիսի 22-ի՝ ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա կայացված եզրակացությունում նշվում է, որ միակողմանի անկախության հռչակումը միջազգային իրավունքում որևէ կերպարգելված չէ, և որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միջպետական հարաբերություններին¹¹¹:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միջնորդների կողմից կիրառվել են մի քանի մոտեցումներ: «Փաթեթային» և «Ընդհանուր պետություն» տարբերակների պարագայում միջնորդների կողմից առաջարկվել են դետալացված կարգավորման համապարփակ ծրագրեր, ինչպես Ծովային օրենքի պարագայում¹¹²: «Փուլային» տարբերակում առանձնացվել են մի քանի սկզբունքային հարցեր, որոնց դետալային կարգավորում է առաջարկվել, իսկ մյուս հարցերը թողնվել են հետագա բանակցությունների: Այս մոդելը բանակցային այլ մոդելների հետ մեկտեղ քննարկվել է Ի.Վազների, Պ.Չազեկի և Ի.Վ.Չարտմանի կողմից¹¹³: «Մադրիդյան սկզբունքների» պարագայում ընտրվել է երկփուլ մոդել՝ սկզբում սկզբունքների համաձայնեցում, այնուհետև շրջանակային պայմանագրի կնքում՝ արդեն դետալացված բաղադրիչներով: Այս մոդելը կիրառվել է Օգոնի համաձայնագրի կնքման ժամանակ և գիտականորեն հիմնավորվել է Ռ.Է.Բենեդիկի կողմից¹¹⁴:

Արցախի ինքնորոշման հիմնախնդիրը բանակցային գործընթացում արտացոլվում է Ղարաբաղի վերջնական

¹¹¹ International Court of Justice, "Accordance With International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo", Advisory Opinion of 22 July 2010, <http://www.icjci.org/docket/files/141/15987.pdf>

¹¹² James K. Sebenius, Negotiating the Law of the Sea, Harvard University Press, 1984, p. 55-57.

¹¹³ Wagner L., Zartman I. W., Chasek P., The North African environment at risk / edited by Will D. Swearingen and Abdellatif Bencherifa, Boulder, Colo. : Westview Press, 1996, p. 255-278.

¹¹⁴ Benedick Richard Elliot, Ozone Diplomacy: New Directions in Safeguarding the Planet, Cambridge: Harvard University Press: 1991, 293pp.

կարգավիճակի հարցում: Ստորև դիտարկել ենք կարգավորման գործընթացում միջևորդների կողմից առաջարկված բանակցային փաթեթներում կարգավիճակի հարցի փոխակերպման դիմամիկան և միտումները, ինչպես նաև հանրային ընկալումները: Փոխակերպման միտումներն ու պատճառները հասկանալու համար հատուկ ուշադրություն ենք դարձրել փաթեթների առաջարկման և բանակցման պահին հակամարտության կողմերում ներքաղաքական գործընթացների և բանակցային տրամաբանության վրա դրանց ազդեցությանը: Հաշվի առնելով, որ հակամարտության ծագման փուլը, խորհրդային շրջանում ու մինչև 1994թ. -ն ընդունված փաստաթղթերը մանրամասն ուսումնասիրվել և ներկայացվել են, այդ թվում՝ քաղաքական գիտությունների թեկնածու Հրայր Փաշայանի՝ «Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում» ատենախոսության շրջանակներում, սույն աշխատանքում առավել մեծ ուշադրություն է հատկացվել 1994-ից հետո քննարկման դրված կարգավորման տարբերակների վերլուծությանը: Բանակցային տրամաբանության վերլուծության հիման վրա անդրադարձ է կատարվել նաև ներկայումս բանակցվող տարբերակի («Մադրիդյան սկզբունքների», կամ այսպես կոչված՝ Կազանյան փաստաթղթի) նկատմամբ կողմերի վերաբերմունքին: Նշված փուլերից գատնաբանակցային գործընթացն ունեցել է նաև այլ փուլեր, այդ թվում՝ Կազանյան փաստաթղթի բանակցում, 2013թ. -ին բանակցային գործընթացի վերամեկնարկ, 2016թ. Ապրիլյան պատերազմից հետո բանակցությունների վերսկսմանն ուղղված ջանքեր և այլն: Սակայն դրանք ստորև առածին դիտարկված չեն, քանի որ չկաստույգ տեղեկատվություն բանակցային փաթեթի փոփոխության վերաբերյալ և չկան պաշտոնապես գաղտնագերծված բանակցվող դրույթներ:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը կարգավորման փաթեթներում

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցին կարգավորման փաթեթներում մոտեցումները տարբերվում են: Փաթեթային և

«Ընդհանուր պետություն» տարբերակներում, ինչպես նաև Քի-Վեսթում (այս բանակցությունների արդյունքները չեն փաստաթղթավորվել և դրանց մասին պատկերացումը հիմնված է բանակցությունների մասնակցած բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունների վրա) Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կանխորոշվում էր: Փաթեթային տարբերակում նշվում է. «Լեռնային Ղարաբաղը պետական և տարածքային կազմավորում է Ադրբեջանի կազմում, և նրա ինքնորոշումը կներառի ստորև թվարկված իրավունքներն ու առավելությունները, երբ նրանք կձևակերպվեն Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջև կնքված համաձայնագրում, հավանության կարժանանան Մինսկի համաժողովի կողմից և կներառվեն Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի սահմանադրություններում»¹¹⁵: «Ընդհանուր պետություն» տարբերակում, ինչպես և փաթեթային տարբերակում Ղարաբաղի կարգավիճակը սահմանվում է Ադրբեջանի կազմում՝ սակայն ինքնավարության ավելի լայն աստիճանով. «Լեռնային Ղարաբաղը դառնում է Հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում և Ադրբեջանի հետմիասին կազմավորում է «Ընդհանուր պետություն»՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը ստորագրում են Համաձայնագիր տնօրինման առարկաների և պետական իշխանության համապատասխան մարմինների միջև իրավասությունների փոխադարձ տարանջատման մասին, որը սահմանադրական օրենքի ուժ կունենա»¹¹⁶:

Քի-Վեսթի բանակցությունների մասին պատկերացում կազմելու համար հղվել ենք 2001թ. գործող բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք անմիջականորեն ներգրավված են եղել բանակցային գործընթացում: «Այն ժամանակ խոսքը Լեռնային

¹¹⁵ ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր (նախագիծ), Համաձայնագիր թիվ 2 – կարգավիճակը, 1997թ. հունիս:

¹¹⁶ ԼՂ հարցի կարգավորման «Ընդհանուր պետություն» տարբերակ Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, 10 նոյեմբերի, 1998թ.:

Ղարաբաղը՝ Լաչինի մի հատվածով Յայաստանի սուվերենության տակ դնելու մասին էր: Այսինքն, Յայաստանն ու Լեռնային Ղարաբաղը պետք է լինեին մեկ պետություն»,- ասել է ՀՀ ԱԳ նախկին նախարար Վարդան Օսկանյանը¹¹⁷: Ինչպես նշվում է Թոմաս դե Վաալի «Սև այգի գրքում», բանակցություններին մասնակցող ադրբեջանցի մի պաշտոնյա ասել է, որ «Նա(Ալինը), ըստ էության, առաջարկեց, որ Ղարաբաղը Յայաստանի մաս կազմի»: Ըստ Թոմաս դե Վաալի, Հ.Ալինի համար գերադասելի է զիջել հայաբնակ Ղարաբաղը՝ փոխանակը Յայաստանից զիջումներ ստանալ այլ հարցերում: Բայց Ալինի այս փորձը չափազանց համարձակ ու ցինիկ էր ադրբեջանական վերնախավի այլ ներկայացուցիչների համար¹¹⁸:

Ի տարբերություն վերոնշյալ փաթեթների՝ Փուլային տարբերակում և Մադրիդյան սկզբունքներում կարգավիճակի հարցը նախատեսվում է լուծել կարգավորման ընթացքում՝ մեկ կարևոր տարբերությամբ. Փուլային տարբերակի դեպքում չէր հստակեցվում կարգավիճակի որոշման մեխանիզմը, ամրագրվում էր, որ այն կորոշվի երեք կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ Մադրիդյան սկզբունքներում ամրագրվում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտման անհրաժեշտությունը: Փուլային տարբերակում ասվում է. «Սույն Համաձայնագրի երեք կողմերը, այսպիսով վերջ դնելով հակամարտության պատերազմական կողմին, համաձայն են Մինսկի համաժողովի համանախագահների օժանդակությամբ բարեխղճորեն շարունակել վարել բանակցություններ ԵԱՀԿ Գործող նախագահի կողմից համապատասխանաբար հրավիրված այլ կողմերի հետ հակամարտության մյուս բոլոր կողմերի անհետաձգելի համընդգրկուն կարգավորմանը հասնելու նպատակով, ներառյալ քաղաքական կողմը, ինչը ներառում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումը և Լաչինի, Շուշի և

¹¹⁷ «Քի-Վեսթը “շեղում” էր բանակցային գործընթացի տրամաբանությունից», 4 Ապրիլ 2011, <http://www.mediamax.am/am/news/keywest/544/>

¹¹⁸ Վաալ, Թոմաս դե, Սև այգի: Յայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով. - Լրացված ու խմբագրված հրատարակություն. - Եր.: «Չանգակ» հրատ, 2014, էջ 383-386:

Շահումյանի հետ կապված խնդիրների լուծումը»¹¹⁹: Սակայն, Փուլային տարբերակի ամբողջական ուսումնասիրությունը հանգեցնում է եզրակացության. 1) բանակցային այս տարբերակը, ինչպես Ղարաբաղի կարգավիճակը կանխորոշող մյուս տարբերակները, շրջանցելով ժողովրդավարության հիմքում ընկած սկզբունքները և արժեքները, զրկում է ԼՂՅ ժողովրդին սեփական ճակատագիրը որոշելու հնարավորությունից, 2) բանակցային այն տրամաբանությունն ու քայլերի հաջորդականությունը, որոնք ենթադրվում են այս տարբերակում, ըստ էության կարգավիճակի հարցի բանակցման փուլում ԼՂՅ-ին, ինչպես նաև Հայաստանին, Ադրբեյջանի կողմից այլևս գիշումներ ակնկալելու հնարավորություն չեն տալիս, և անորոշության մատնում կարգավիճակի որոշման հարցը՝ հնարավորություն ընձեռելով Ադրբեյջանին անորոշ ժամկետով հետաձգել դրակարգավորումը:

Մադրիդյան սկզբունքների դեպքում այս խնդիրը բացակայում է, քանի որ քայլերի հաջորդականությունը կրում է ոչ թե փուլային, այլ ամբողջական բնույթ, և կարգավիճակի որոշումը կախման մեջ է դրվում ոչ թե բանակցող կողմերից յուրաքանչյուրի դիրքերի ամրությունից, այլ ժողովրդի կամարտահայտման արդյունքից: Մադրիդյան սկզբունքները մինչև վերջնական կարգավիճակի սահմանումն ու ճանաչումը Լեռնային Ղարաբաղի համար նախատեսում են նաև ժամանակավոր կարգավիճակ: Մադրիդյան սկզբունքներում նախատեսվում է. «Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակ, որը կտրամադրի անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ; Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշում իրավականորեն պարտադիր բնույթ կրող կամարտահայտման միջոցով»¹²⁰: Սկզբունքներում ժամանակավոր կարգավիճակի էությունը հստակեցված չէ, սակայն այս հարցի վերաբերյալ միջնորդների

¹¹⁹ ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակ, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության դադարեցման մասին (նախագիծ), 1997թ. դեկտեմբերի 2:

¹²⁰ Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009.

մոտեցման վերաբերյալ պատկերացում կազմել ու հնարավորություն էն տալիս նրանց հայտարարությունները: «Նախքան վերջնական խաղաղության ստորագրումը, որը կարող է տեղի ունենալ այս տարածքում հանրաքվեի անցկացումից հետո, գոյություն ունի միջանկյալ կարգավիճակի հարցը: Չատուկ կարգավիճակը չպետք է նշանակալից տարբերություն ունենա այն կարգավիճակից, որն այս պահին ունի Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը: Այդ ժամանակ անհրաժեշտ կլինի այդ ժամանակավոր կազմավորման միջազգային ճանաչումը: Ծրջանակային համաձայնագրի ընդունումից հետո մանրամասների շուրջ բանակցություններ կընթանան», - նշել է ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպրիկը¹²¹:

Եթե դիտարկենք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի փոխակերպման դինամիկան, ապա Փաթեթային տարբերակում Լեռնային Ղարաբաղը նախատեսվում էր ներառել Ադրբեջանի կազմում որպես ինքնավար մարզ՝ ինքնավարության բարձր մակարդակով, այդ թվում սեփական Սահմանադրությամբ, ոստիկանությամբ և Ազգային գվարդիայով: Փոփոխություն տարբերակում հարցը ենթակա է ապագայում կողմերի միջև համաձայնեցման: «Ընդհանուր պետություն» տարբերակում ամրագրվում է, որպես Ադրբեջանի հետ միասին հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում «Ընդհանուր պետության» մեջ: Այս երեք փաստաթղթերից խիստ տարբերվում է Քի-Վեսթում քննարկված տարբերակը, որում, ըստ տարբեր աղբյուրների, ԼՂ-ն միավորվում էր Յայաստանի հետ: Մարդիդյան սկզբունքները չեն նախատեսում որևէ հարցի, այդ թվում նաև կարգավիճակի խնդրի կարգավորման մանրամասն նկարագրություն, այլ ամրագրում են ժամանակավոր կարգավիճակի շնորհումից հետո Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտման միջոցով վերջնական կարգավիճակի որոշում:

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի տարբեր կարգավիճակների դիտարկումից հետո, չհաշված

¹²¹ <http://www.regnum.ru/news/1412963.html>

Քի-Վեսթի քննարկումները, բանակցային գործընթացում կարգավիճակի հարցի լուծման վերաբերյալ մոտեցումը փոխակերպվել է՝ ինդրի լուծումը պայմանավորելով ժողովրդի կամքով, որը պետք է որոշի իր ճակատագիրը: Տես՝ **Չալել ված 1:** Նշենք, որ կարգավորման Փաթեթային և Փուլային տարբերակները մերժվել են Լեռնային Ղարաբաղի, «Ընդհանուր պետության» տարբերակը՝ Ադրբեջանի կողմից: Քի-Վեսթում քննարկման թե՛ փաստից, թե՛ արդյունքներից ադրբեջանական կողմը հետագայում հրաժարվել է:

Ղարաբաղյան հակամարտությանը՝ լինելով հակամարտության բոլոր կողմերի համար գերակա ինդիր, իր ազդեցությունն է ունենում նաև ներքաղաքական զարգացումների վրա: Բացի այդ, կողմերից յուրաքանչյուրի ներքաղաքական զարգացումները, իշխանության մոտ գտնվող ուժերի փոփոխություններն ու նրանց դիրքորոշումները, ինչպես նաև երկրի կառավարման համակարգն իրենց ազդեցությունն ունեն բանակցային տրամաբանության և ընթացքի վրա:

Չայաստանում Արցախյան հիմնախնդիրը մշտապես եղել է արտաքին քաղաքական ամենակարևոր գերակայությունը և իր ազդեցությունն է ունեցել, այդ թվում՝ ներքաղաքական զարգացումների վրա: 1996թ.-ին Ղարաբաղյան հիմնախնդիրն է դարձել Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարական պատճառը, քանի որ նրա կողմից առաջարկվող «խաղաղության պարտիզմը» անընկալելի է դարձել հանրության համար: Լ.Տեր-Պետրոսյանն առ այսօր շարունակում է փուլային կարգավորումը համարել լավագույն տարբերակ, ինչի մասին հայտարարել է նաև 2017թ. խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում: Նրան հաջորդած երկու նախագահները՝ Ռոբերտ Քոչարյանը և Սերժ Սարգսյանը, առավել կոշտ դիրքորոշում են որդեգրել՝ նրանց կողմից գիջումների հնարավորությունը չի բացառվել, բայց դրանց հիմքում դրվել է համաչափության սկզբունքն ու երաշխիքների անհրաժեշտությունը: Առաջին պլան է մղվել Արցախի ժողովրդի

միջոցով վերջնական կարգավիճակի սահմանման անհրաժեշտությունը: ԼՂՀ-ի դիրքորոշումն այս հարցի առնչությամբ էական փոփոխություն չի կրել, Ստեփանակերտը երբեք համաձայնություն չի տվել «Մադրիդյան սկզբունքներին» և մշտապես շեշտադրվել է բանակցություններին ԼՂՀ անմիջական մասնակցության կարևորությունը: Ադրբեջանի դեպքում Յեյդար Ալիևի համեմատ, ով նախնական համաձայնություն էր տվել Քի-Վեսթի պայմանավորվածություններին, իլ համ Ալիևը զգալիորեն կոշտացրել է Ադրբեջանի դիրքորոշումը՝ միաժամանակ մեծացնելով ռազմատենչ հռետորաբանությունը: Մանրամասն տես՝

Չավել ված 3:

Չակամարտության կողմերի մոտ առկա են ընկալման էական տարբերություններ՝ ինչպես հակամարտության կարգավորման, այնպես էլ դրա նշանակության վերաբերյալ: Չարավկովկասյան Բարոմետրի ցուցանիշները ցույց են տալիս, որ Չայաստանում և Ադրբեջանում Ղարաբաղյան հակամարտության և դրան առնչվող խնդիրների կարևորումը բավական տարբերվում է, և այդ տարբերությունը տարիների ընթացքում զգալի փոփոխություն չի կրել: Այսպես, Ադրբեջանի հանրության կողմից տարածքային ամբողջականության, չկարգավորված հակամարտության խնդիրը մշտապես դիտարկվել է երկրի համար առաջնային խնդիր՝ կարևորվելով հարցվածների 30-45 տոկոսի կողմից, մինչդեռ Չայաստանում չկարգավորված հակամարտությունը որպես երկրի համար առաջնային խնդիր կարևորել են հանրության 3-4 տոկոսը¹²²: Նման տարբերությունները մեծամասամբ պայմանավորված են հենց իշխանությունների իրականացրած քաղաքականությամբ:

Այդ համատեքստում կարևոր է դիտարկել իշխանությունների գործողությունները: Ադրբեջանի իշխանությունները, «Մադրիդյան սկզբունքների» գաղտնագերծումից հետո խուսափում

¹²² Տվյալները ներկայացված են ըստ CRRC կենտրոնի կողմից իրականացվող «Եվրոբարոմետրի» ցուցանիշների, որը հիմնված է գուգահեռ հարցումների վրա Չարավկային Կովկասի երեք հանրապետություններում և իրականացվում է 2004թ.-ից: 2015թ.-ից հարցումներն այլևս չեն իրականացվել Ադրբեջանում: Steu` Caucasus Barometer, <http://caucasusbarometer.org/>.

Եին դրանց բովանդակությունը հանրությանը լիարժեք ներկայացնելուց, մասնավորապես՝ հանրաքվեի մասին բարձրաձայնելուց¹²³: Սա մի կողմից կարող է դիտարկվել, որպես բանակցային հնարք, մյուս կողմից, հաշվի առնելով վերոնշյալը, կարող է ցույց տալ հանրության արձագանքից որոշակի վախ, ինչը փաստում է, որ ադրբեջանական հանրության շրջանում հանրաքվեի անցկացման դրույթն ընդհանուր առմամբ ընկալելի և ընդունելի չէ:

ԼՂՀ կողմից հանրաքվեի անցկացման վերաբերյալ սկզբունքի ամրագրումը բանակցային փաթեթում ընկալվում է որպես միանգամայն բնական և անհրաժեշտ, այն չի դիտարկվում որպես զիջում, որի դիմաց ղարաբաղյան կողմը պետք է գնա համազոր զիջումների: Միաժամանակ, Արցախի համար անընդունելի է ինքնորոշման իրավունքի սահմանափակումն Ադրբեջանի տարածքային ամբողջականությամբ:

Հայաստանյան կողմի համար այս փոխակերպումը միանգամայն բնական և ընկալելի է համարվում: Դրա հետ մեկտեղ, մշտապես նշվում է, որ բանակցային գործընթացը չի կարող արդյունավետ լինել առանց Արցախի ուղղակի մասնակցության և շեշտվում է, որ Արցախի ապագան որոշողը միայն ու միայն Արցախի ժողովուրդն է:

Քաղաքագիտության դոկտոր Ս.Մինասյանը նշում է, որ ոչ Հայաստանը, ոչ Արցախը, ոչ Ադրբեջանն այսօր բավարարված չեն «Մադրիդյան սկզբունքներով», և պահպանվող ստատուս-քվոյի պայմաններում յուրաքանչյուրը ձգտում է իր քաղաքական ռազմավարությունն առաջ մղել: Ադրբեջանի պարագայում այն

¹²³ «Конфликт может быть урегулирован лишь на основе норм международного права. Четыре резолюции Совета Безопасности ООН должны быть выполнены, оккупационные силы — выведены со всех захваченных земель, граждане Азербайджана — беженцы, переселенцы должны вернуться на все оккупированные территории, в том числе в Нагорный Карабах, после чего может быть определен статус Нагорного Карабаха. Вместе с тем, этот статус возможен только и только в рамках территориальной целостности Азербайджана. Азербайджанское государство никогда не согласится ни с каким статусом за рамками этого. Без нашего согласия никто не признает Нагорный Карабах, являющийся незаконным образованием, как независимое образование», — заявил Алиев.

Заявление президента Азербайджана Ильхама Алиева на открытии заседания Кабинета министров, посвященного итогам социально-экономического развития в первом квартале 2010 года., 14. 04. 2010, <http://news.am/rus/news/19107.html>

Ենթադրում է քաղաքական ճնշում, հաղորդակցության ուղիների շրջափակում և Էներգետիկ գործոնի շահարկում, Հայաստանի դեպքում՝ արտաքին քաղաքական կոմպլեմենտարիզմ, սփյուռքի գործոնի կիրառում և թուրքական գործոնի նվազեցում՝ միաժամանակ Անկարայի հետ հարաբերությունների կարգավորմամբ, իսկ Արցախի դեպքում՝ հակամարտության ռազմական բաղադրիչի անհամաչափության հետ մեկտեղ ֆիզիկական անվտանգության ապահովում, դե-ֆակտո պետության սուվերենացում և բանակցային գործընթացում սեփական անվտանգության երաշխիքների ապահովում¹²⁴:

Կարգավիճակի խնդրից զատ մյուս հարցը, որ կարևոր նշանակություն ունի Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորման համար, տարածքային խնդիրներն են, որոնց անդրադարձ է կատարվում աշխատանքի այս գլխի երկրորդ ենթագլխում:

2.2. Տարածքային խնդիրների ընկալման փոխակերպումները Ղարաբաղյան հակամարտության համառոտում

Արցախի ժողովրդի ինքնորոշման ձգտմանն ի պատասխան Ադրբեյջանի սանձազերծած պատերազմը ստեղծեց նոր իրավիճակ, որն ամրագրվեց 1994թ. զինադադարի համաձայնագրի կնքմամբ: Արդյունքում, Ադրբեյջանի և Արցախի միջև առաջացան տարածքային խնդիրներ: Ղարաբաղյան հակամարտության պարագայում տարածքային հակասություններն ունեն մի քանի առանձնահատկություններ, որոնք արտացոլվում են նաև կարգավորման փաթեթների մեջ:

Կարելի է առանձնացնել տարածքների հետևյալ պայմանական տարանջատումը, որն օգտագործվում է կարգավորման տարբերակների քննարկման ընթացքում՝ ԼՂԻՄ տարածքը 1988թ. սահմաններով,

¹²⁴ Минасян С., Сдерживание в карабахском конфликте; Ред. А. Искандарян. – Ер.: Институт Кавказа, 2016, ст.- 196-222.

պատերազմի ժամանակ ազատագրված 7 շրջանները, որոնք ժամանակին
ԼՂԻՄ մաս չեն կազմել, բայց այսօր ԼՂՅ տարածքի մաս են կազմում,
Շահումյան շրջանը և Գետաշեն ենթաշրջանը (նախկին Ադրբեջանի
ԽՍՀ կազմում գտնվող գերազանցապես հայերով բնակեցված պատ-
մական հայկական տարածքներ), որոնք գտնվում են Ադրբեջանի վերա-
հսկողության տակ, և պատերազմից հետո Ադրբեջանի
տիրապետության տակ մնացած Մարտակերտի շրջանի հյուսիս-
արևելյան հատվածն ու Մարտունու շրջանի արևելյան հատված:
Կարգավորման որոշ փաթեթներում առանձին անդրադարձ է
կատարվում նաև Շուշի քաղաքին, որը լինելով ԼՂԻՄ տարածքում՝
ԼՂԻՄ մյուս շրջաններից ավելի խիտ է բնակեցված եղել
ադրբեջանցիներով: Ազատագրված 7 շրջաններից փաթեթներում
առանձին անդրադարձ է կատարվում նաև Լաչինի շրջանին (որպես
ԼՂՅ-ն ՅՅ-ին կապող միջանցք), որը կապ է ապահովում Յայաստանի և
Արցախի միջև:

Յրադարարի կնքումից հետո տարածքային խնդիրների
ընկալման փոխակերպումներն ուսումնասիրելու նպատակով
դիտարկվել է տարածքային միջնորդների կողմից՝ խնդիրների
լուծման առաջարկվող տարբերակների և խնդրի ընկալումների
փոփոխությունը երեք կողմերում և առանձնացվել են ընդհանուր
միտումները:

Եթե փաթեթային տարբերակով¹²⁵ փորձ է արվում հստակ
սահմանում առաջարկել՝ ամրագրելով, որ միջանցքը չի կազմել ու
ողջ Լաչինի շրջանը, փուլային տարբերակում¹²⁶ Լաչինի շրջանի
հարցը, Շահումյանի և Շուշի քաղաքի հետ միասին նախատեսում է
քննարկել հետագա բանակցությունների ժամանակ, «Ընդհանուր
պետություն» տարբերակն¹²⁷ ամրագրում է այս շրջանով միջանցքի

¹²⁵ ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակ, Լեռնային Ղարաբաղի
հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր (նախագիծ),
Յամաձայնագիր թիվ 2 – կարգավիճակը, 1997թ. հունիս:

¹²⁶ ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակ, Յամաձայնագիր
Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության դադարեցման մասին (նախագիծ), 2
դեկտեմբերի, 1997թ.:

¹²⁷ ԼՂ հարցի կարգավորման «Ընդհանուր պետություն» տարբերակ Լեռնային
Ղարաբաղի գինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների

տրամադրումը, սակայն դրա վերջնական սահմանումը նույնպես թողնվում է բանակցությունների միջոցով կարգավորելուն: Քի-Վեսթի պայմանավորվածությունները¹²⁸ նույնպես ամրագրում էին Լաչինի շրջանով միջանցքի տրամադրում մի շեշտադրումով, որ այն Լեռնային Ղարաբաղի հետ միևնույն կարգավիճակն ունենա: «Մադրիդյան սկզբունքներն»¹²⁹ ամրագրում են տարածքների վերադարձի անհրաժեշտությունը և միջանցքի տրամադրման կարևորությունը, սակայն լրացուցիչ մանրամասներ չեն նշվում (առնվազն գաղտնագերծված հատվածում):

Ըստ փաթեթային և «Ընդհանուր պետություն» տարբերակների ծուշին և ծահումյանը համապատասխանաբար փոխանցվում են Բաքվի և Ստեփանակերտի վարչարարության ներքո: Փոփոխություն տարբերակայն հարցը ևս թողնում է հետագա կարգավորմանը: Քի-Վեսթի պայմանավորվածություններն ու «Մադրիդյան սկզբունքներն» այս հարցին գաղտնագերծված հատվածում չեն անդրադարձնում: Տես

Յակել ված 4:

Կողմերի ընկալումները և դրանց կերպավորումը

Տարածքային խնդիրների ընկալումների փոխակերպումը երեք կողմերում դիտարկելու համար կառանձնացնենք տարբեր ժամանակահատվածներում դրանցից յուրաքանչյուրի բարձրաստիճան պաշտոնյաների՝ նախագահների և ԱԳ նախարարների մի քանի հայտարարություններ:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 20 տարուց ավել «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը, այդ տարիների ընթացքում բանակցային գործընթացի ցածրարդյունավետությունն ու Ադրբեյջանի ահազանցող ռազմատենչ հռետորաբանությունը զգալի փոփոխությունների են ենթարկել հայկական երկու կողմերի ընկալումները: Եթե հրադարձի կնքումից անմիջապես հետո ԼՂԻՄ-ին հարակից ազատագրված շրջաններն ընկալվում էին որպես

մասին, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, 10 նոյեմբերի, 1998թ.:

¹²⁸ «Քի-Վեսթը «շեղում» էր բանակցային գործընթացի տրամաբանությունից», , 4 Ապրիլ, 2011, <http://www.mediamax.am/am/news/keywest/544/>

¹²⁹ Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009.

բուժերային գոտի, որը ԼՂՀ անկախության ճանաչման և անվտանգության ամուր երաշխիքների դիմաց կողմերը պատրաստեին վերադարձնել Ադրբեյջանին, ապա այսօր դրանք արդեն կայացած պետության՝ ԼՂՀ անքակտելի մաս են՝ թե՛ պետական կառավարման համակարգի, թե՛ հասարակության ընկալ ու մտերի մեջ: Իսկ Ադրբեյջանական կողմն, իր հերթին, աստիճանաբար կոշտացնում է իր դիրքորոշումը, և եթե առաջ քննարկվում էր 6 կամ 5 շրջանների վերադարձի խնդիրը, այսօր Ադրբեյջանը պնդում է բոլոր տարածքների վերադարձի վրա և հավակնություններ ցուցաբերում նույնիսկ Չայաստանի տարածքների նկատմամբ:

Տարածքային խնդիրների առնչությամբ Արցախում ընկալ ու մտերի փոփոխություն է տեղի ունեցել: «Եթե անցյալում ազատագրված տարածքներն ընկալվում էին որպես բուժերային գոտի, ապա այժմ դրանք ընկալվում են որպես ԼՂՀ անքակտելի մաս՝ ամրագրված Սահմանադրությամբ», - խոսելով կերպափոխման մասին պնդում է ԼՂՀ նախագահի մամլո խոսնակ Դավիթ Բաբայանը¹³⁰: 2017թ. փետրվարի 20-ին հանրաքվեի միջոցով ընդունված ԼՂՀ նոր սահմանադրությամբ ամրագրվում է, որ «Մինչև Արցախի Չանրապետության տարածքային ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունը իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Արցախի Չանրապետության իրավագործության ներքո»¹³¹:

Ներկայումս ԼՂՀ-ն չի քննարկում ազատագրված տարածքների վերադարձի հարցը՝ դրանք դիտարկելով, որպես ԼՂՀ անբաժան մաս: «Եթե խոսքը գնում է Արցախին պարտադրված պատերազմի արդյունքում ազատագրված տարածքների մասին, ապա դրանք Լեռնային Ղարաբաղի անբաժանելի մասն են կազմում, և տվյալ փաստն ամրագրված է ԼՂՀ Սահմանադրության մեջ: Պետք է մոռանալ նաև ԼՂՀ այն տարածքների մասին, որոնք մարտական գործողությունների ընթացքում բռնազավթվել են Ադրբեյջանի

¹³⁰ ԼՂՀ նախագահի մամլո խոսնակ Դավիթ Բաբայանի հարցազրույցը «Armtimes.am» կայքին, 22 Յունիս, 2013, <http://armtimes.com/hy/read/43027>

¹³¹ Արցախի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված փետրվարի 20, 2017, հոդված 175:

կողմից և մինչև օրս գտնվում են ադրբեջանական կողմի վերահսկողության տակ: Խնդիրը պետք է դիտարկել հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև պատմական արդարության վերականգման և ԼՂՅ Ժողովրդի անվտանգության համակողմանի ապահովման համատեքստում»,- հարցազրույցներից մեկում ասել է ԼՂՅ ԱԳ նախարար Կարեն Միրզոյանը¹³²: Տարածքների զիջումը դիտարկվում է, որպես ԼՂՅ ֆիզիկական գոյությանն ուղղակի սպառնալիք:

Հայաստանի դիրքորոշումը միջևորդների կողմից առաջարկված փաթեթներից յուրաքանչյուրի հանդեպ արտահայտվել է դրանց ի պատասխան ուղարկված գրություններով, որոնք գաղտագերծվել են փաթեթների հետ միասին: Հայաստանն իսկզբանե դեմ չի արտահայտվել ազատագրված տարածքների վերադարձին՝ անվտանգության երաշխիքների, ինչպես նաև Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման դեպքում: Նաև եթե դիտարկենք առաջին երեք առաջարկները՝ Փուլային, Փաթեթային, «Ընդհանուր պետության», ԼՂՅ-ն այդ շրջանում եղել է բանակցային լիարժեք կողմ, և Հայաստանն իր կողմից պատրաստ է եղել համաձայնել ցանկացած տարբերակի, որը կբավարարեր ԼՂՅ շահերը և կարժանանար վերջինիս համաձայնությանը¹³³: Պայմանավորված նման մոտեցմամբ՝ հայաստանյան կողմի դիրքորոշումն առավել մեղմ է եղել այդ շրջանում:

1997թթ. երկրի ղեկավար Լևոն Տեր-Պետրոսյանի տեսլականը հակամարտության կարգավորման վերաբերյալ արտահայտված է «Պատերազմ, թե խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածում: «Գաղափարը շատ պարզ է. Բանակցությունների արդյունքում ստորագրվում է կարգավորման փուլային տարբերակը, բայց այն կիրառվում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցումից հետո: Դրանով Ղարաբաղը միջազգային հանրությանն ապացուցում է իր կառուցողականությունը, ցույց է տալիս, որ ոչ մի

¹³² ԼՂՅ ԱԳ նախարար Կարեն Միրզոյանի բացառիկ հարցազրույցը Մեդիամաքս-ին, <http://www.nkr.am/hy/speeches-articles-and-interviews/39/>, 20.06.2013:

¹³³ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՎԵՐՋԻ ՍԿԻԶԲԸ, 25.06.2016, «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ» 376, N264 (կիրակնամու), <http://www.chi.am/index.cfm?objectID=80F51EE0-8DC0-11E0-9A42005056A30FF7&year=2011&month=6&legacyURL=110625/print>

մտադրու թյ ու ն չ ու ն ի պահ պանել գրավված տարածքները, իսկ մյ ու ս կողմից՝ լ ու ր ջ առաջ խաղաց ու մ է արձանագրվ ու մ կարգավորման գործընթաց ու մ, և վերսկսվ ու մ են շ ու ր ջ մեկ տարի ընդհատված բանակց ու թյ ու ն ներք յ»¹³⁴:

Այ ս հոդված ու մ հստակ արտահայ տվ ու մ է փո լ լ այ ի ն տարբերակ ո վ հակամարտ ու թյ ու ն ը կարգավորել ու Ռ Յ նախագահ ի պատրաստակամ ու թյ ու ն ը և համոզված ու թյ ու ն ը, որ դա անհրաժեշ տ և կարևոր ք այ լ է խաղաղ ու թյ ան վերականգնման համար: Սակայ ն, այ ս հոդված ն ու Ղարաբաղյ ան հակամարտ ու թյ ան հարց ու մ Ռ Յ նախագահ ի ու ն եցած դիրքորոշ ու մ ը նրա հրաժարական ի պատճառ ը դարձ ան, ինչ ը վկայ ու մ է այ ն մասին, որ Ադրբեյ ջ ան ի հանդեպ հասարակ ու թյ ան և Յ այ աստան ի քաղաքական ընտրան ու շ ը ջ ան ու մ վստահ ու թյ ան պակաս ի ու տարածքները նման պայ մաններ ո վ վերադարձ նել ու անհամաձ այ ն ու թյ ան ֆոնին նախագահ ի հայացքներ ն ու մոտեց ու մ ներ ն ը նդ ու ն ել ի և ը նկալ ել ի չ է ի ն անգամ իր թի մ ի մյ ու ս ներկայաց ու ց ի չ ներ ի համար:

1998թ. փետրվար ի 3-ին Լևոն Տեր-Պետրոսյ ան ը հրաժարական տվեց, արտահերթ ընտր ու թյ ու ն ներ ի արդյ ու ն ք ու մ իշխան ու թյ ան եկավ Լ Ղ Յ նախկին նախագահ, Ռ Յ վարչապետ Ռոբերտ Քոչարյ ան ը:

Նոր իշխան ու թյ ու ն ներք յ բանակց ու թյ ու ն ներք յ վարել ու համար նոր սկզբ ու ն ք որդեգրեց ի ն, որ ը ենթադր ու մ էր տարածքայ ի ն հնարավոր գ ի ջ ու մ ներ մի այ ն Ղարաբաղ ի կարգավիճակ ի հստակ ամրագրման պարագայ ու մ: «Առանց Լեռնայ ի ն Ղարաբաղ ի կարգավիճակ ի հարց ու մ հստակ ու թյ ան, որևէ մեկ ը պատրաստ չ էր և այ ս օր էլ պատրաստ չ է վերադարձ նել ու Լեռնայ ի ն Ղարաբաղ ը շ ը ջ ապատող, հայկական վերահսկող ու թյ ան տակ գտնվող տարածքները, որ ու ն ք ապահով ու մ են Ղարաբաղ ի անվտանգ ու թյ ու ն ը:

¹³⁴ «Յ այ աստան ի Յ անրապետ ու թյ ու ն ն», 1 նոյեմբեր ի, 1997 թ.: Ռ Յ Ա Ն Ա, 28/01.11.97: Բնագիր: Ի ն ք ն ա գ ի ի, https://hy.wikisource.org/wiki/%D5%8A%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%A6%D5%B4,%D5%A9%D5%A5%D5%9E_%D5%AD%D5%A1%D5%B2%D5%A1%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%E2%80%A4_%D5%AC%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AC%D5%B8%D6%82_%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A8#cite_note-2

Սա, անշուշտ, նախագահ Քոչարյանի հաստատ համոզմունքն էր», - գրում է Վարդան Օսկանյանը¹³⁵:

2001թ.-ին, ելնելով Քի-Վեսթի բանակցություններից, ՀՀ իշխանությունները փաստացի պատրաստ էին զիջել ազատագրված վեց շրջանները Լեռնային Ղարաբաղի և Լաչինի՝ Հայաստանին միանալու դիմաց:

Այսօր ՀՀ իշխանությունները համաձայնություն են հայտնում ընդունել, որ Մինսկի խմբի առաջարկած Մադրիդյան սկզբունքները կարող են հակամարտության լուծման առանցք դառնալ¹³⁶:

Հայաստանյան կողմի մոտեցումների կերպափոխման դինամիկան ցույց է տալիս, որ ազատագրված տարածքների հարցը մշտապես դիտարկվել է որպես բանակցային բաղադրիչ: Սակայն այն պայմանները, որոնց դիմաց Հայաստանը պատրաստ է եղել ստորագրել տարածքների վերադարձը փոփոխվել են՝ եթե Լևոն Տեր-Պետրոսյանի համար ընդունելի էր համարվում փոփոխյին կարգավորումը՝ տարածքների հանձնում և անորոշ ժամանակում կարգավիճակի հստակեցում, ապա Ռոբերտ Քոչարյանի, իսկ հետո նաև Սերժ Սարգսյանի մոտեցմամբ այդ երկու հարցերը դրվում են միաժամանակ պարտադիր կարգավորման ներքո և տարածքների վերադարձը դիտարկվում է որպես հնարավոր զիջում՝ հանրաքվեի միջոցով կարգավիճակի սահմանման և ճանաչման դիմաց:

Ադրբեջանական կողմը մշտապես հանդես է եկել իր բնորոշմամբ «օկուպացված» շրջաններն իրեն վերադարձնելու պահանջով: Ադրբեջանի քաղաքականության հիմքում Հայաստանին որպես օկուպանտներ կայացնելու սկզբունքն է: Պատահական չէ, որ մշտապես ընդգծվում է, որ այդ տարածքներն օկուպացրել է Հայաստանը և պետք է դուրս բերի իր զորքերն այդ տարածքներից: «Հայաստանի իշխանությունները՝ միջազգային

¹³⁵ Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ: Ելույթների ընտրանի.-Եր.: «Սիվիլիթաս» հիմնադրամ, 2009, էջ 28:

¹³⁶ Նախագահն ընդունել է Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Չալբերին, 30.07.2014, <http://www.president.am/hy/press-release/item/2014/07/30/President-Serzh-Sargsyan-meeting-with-EU-special-representative/>

պարտավորությունների համապատասխան պետք է դադարեցնեն օկուպացիան և դուրս բերեն զորքերն Ադրբեջանի գրաված տարածքներից: Յակառակ դեպքում, ցանկացած միջադեպի համար պատասխանատվությունը ողջ ծավալով Յայաստանի վրա է», -ասված է Ադրբեջանի ԱԳՆ հերթական հայտարարության մեջ¹³⁷:

Իր այս պահանջները հիմնավորելու համար ադրբեջանական կողմը մշտապես հղում է կատարում ՄԱԿ ԱԽ 4 բանաձևերին: Դրանցում, սակայն, ոչ թե ամրագրվում է Յայաստանի կողմից շրջանների օկուպացիայի փաստը, այլ կոչ է արվում Յայաստանին ազդեցություն գործել Արցախի հայերի վրա՝ ստիպելով նրանց դուրս բերել զորքերը զբաղեցված շրջաններից¹³⁸:

Ժամանակ առ ժամանակ ադրբեջանական կողմը շրջանառության մեջ էր դնում, կամ արձագանքում էր այլ երկրների կամ միջնորդների կողմից շրջանառության մեջ դրվող այլ առաջարկներին՝ ենթադրող շրջանների մի մասի վերադարձ այլ պայմանների դիմաց:

Օրինակ՝ 2004թ. հունվարի 29-ին շրջանառության մեջ դրվեց «շրջանները երկաթգծի բացման դիմաց» բանաձևը, որի հեղինակն, ըստ ադրբեջանական կողմի, Եվրամիության խորհրդարանի պատգամավոր Պեր Գարթոնն էր: Ադրբեջանի խորհրդարանի խոսնակ Մուրթուզ Ալեսկերովը հայտարարել է, թե իրենք «պատրաստ են վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը Յայաստանի և Ադրբեջանի միջև, եթե Յայաստանը վերադարձնի գրավյալ 7 շրջաններից 5-ը»: Յայաստանի ԱԳՆ-ն դեմ է արտահայտվել այդ մոտեցմանը՝ պնդելով, որ հարցը պետք է ստանա ամբողջական լուծում¹³⁹:

Այսօր Ադրբեջանի հռետորաբանությունը կտրուկ փոփոխությունների է ենթարկվել: Այժմ Ադրբեջանը հավակնություններ է ցուցաբերում ոչ միայն ազատագրված

¹³⁷ Армении следует, проявив ответственность, освободить оккупированные территории Азербайджана - МИД АР, 23.05.2015, <http://www.1news.az/politics/20150523062731836.html>

¹³⁸ ՄԱԿ Անվտանգության խորհրդի բանաձևեր 822(1993), 853(1993), 874 (1993), 884 (1993):

¹³⁹ Յայաստանը դեմ է գրավյալ տարածքներ վերադարձնելու դիմաց երկաթգծը բացելու Ադրբեջանի առաջարկին, 30 հունվար 2004, <https://www.azatutyun.am/a/1573006.html>

տարածքների, ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի տարածքների նկատմամբ: «Մերն է ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլ նույնիսկ ներկայիս Հայաստանն է ստեղծվել պատմական ադրբեջանական հողերի վրա: Մենք դալավ գիտենք: Արդեն նաև աշխարհը դագիտի: Երիվանի խանութայնը, Գեյջիսի, Չանգեզուրի մաղալը՝ մեր պատմական հողերն են, և մենք՝ ադրբեջանցիներս, պետք է վերադառնանք և կվերադառնանք նաև այդ տարածքներ», - ասել է Ալիևը¹⁴⁰:

Ընդհանուր առմամբ, Ադրբեջանը փորձում է հնարավոր բոլոր եղանակներով խուսափել խնդրի համակարգային և ամբողջական լուծումից՝ առաջ մղելով կարգավորման առանձին տարրերը կարգավորելու սկզբունքը: Օրինակ՝ տարածքների վերադարձ առանց կարգավիճակի հարցի լուծման: Դրան գուգահեռ, այսօր Ադրբեջանի վարած քաղաքականությունն ուղղված է «Մադրիդյան սկզբունքների» ստորագրումից խուսափելուն և անմիջապես խաղաղության համաձայնագրի բանակցություններին անցնելուն, ինչն իր կարծիքով հավանականություն կստեղծի վերջինիս այս փուլում խուսափել հանրաքվեի միջոցով Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի սահմանման ու դրա ճանաչման վերաբերյալ պարտավորություններ ստանձնելուց և այդ հարցի շուրջ մանևրելու ավելի մեծ դաշտ ստանալ: Մեծ համաձայնագրի շուրջ բանակցելիս:

Ի տարբերություն կարգավիճակի խնդրի, որը բանակցային գործընթացի ընթացքում ենթարկվել է կերպափոխման, տարածքային խնդիրը՝ չհաշված Լաչինի շրջան-Լաչինի միջանցք բաղկացուցիչը, կայուն է մնացել՝ ազատագրված տարածքների պահանջի ներքո: Ուստի, այս հարցում փոխակերպում չի կատարվել:

Տարածքների խնդրի փոխակերպման չենթարկվել և անմիջականորեն վկայում է առնվազն միջևորդների այն ընկալման մասին, որ սաշատ կայուն դրույթ է և հարցականի տակ դրվել չի

¹⁴⁰ Речь Президента, Верховного главнокомандующего Ильхама Алиева, 26 июня 2015, <http://news.day.az/politics/591463.html>

կարող: «Մադրիդյան սկզբունքների» բանակցման ընթացքում միջնորդների կողմից շրջանառության մեջ է դրվում «արդարացի կարգավորման» մոտեցումը, և փոխակերպված կարգավիճակի դրույթը չտրանսֆորմացված տարածքային դրույթի հետ համադրությամբ, միջնորդների ընկալմամբ, ապահովում են արդարացի կարգավորումը:

Միաժամանակ, տպավորություն է ստեղծվում, որ հետկոնֆլիկտային ապակայունացումից խուսափելու և բանակցային գործընթացը հնարավորինս թեթևացնելու համար «Մադրիդյան սկզբունքներում» արդեն միջնորդները բանակցություններից հանել են կողմերից յուրաքանչյուրի համար կարևոր մի հարց՝ այն է զուգահեռաբար Շուշիի և Շահումյանի հարցերը: Թերևս անտրամաբանական է մնում Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան հատվածի ու Մարտունու շրջանի արևելյան հատվածի հարցի բացակայությունը բանակցությունների օրակարգից, որը չի բացառվում, որ պարունակվում է սկզբունքների դեռևս չգաղտնազերծված հատվածում:

Հակամարտության կողմերի մոտեցումներն այս հարցի շուրջ ենթարկվել են կերպափոխման: Ադրբեջանի հանրային ընկալումների վերաբերյալ օբյեկտիվ եզրակացությունն անել գրեթե հնարավոր չէ՝ հաշվի առնելով հանրության փակությունն ու ժողովրդավարության ցածր մակարդակը: Սակայն ակնհայտ է, որ Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշման մեջ արձանագրվել է հստակ կոշտացում, ինչը կարող է պայմանավորված լինել իրավիճակը բալանսավորելու փորձով՝ կարգավիճակի հարցում բանակցային կերպափոխմանն ի պատասխան: Դրանից կարող է ածանցվել այն, որ այդ կոշտացումը հանգեցրել է անտրամաբանական և հիմնավորում չունեցող հայ տարարությունների՝ հավակնությունների ԼՂԻՄ նախկին տարածքի և նույնիսկ ՀՀ որոշ հատվածների նկատմամբ:

Այս տարիների ընթացքում կրած վնասների, մեկուսացման, սահմաններին ունեցած կորուստների, ինչպես նաև անկախության շրջանում ծնված և մեծացած սերնդի հաշվին արցախյան

հասարակության շրջանում տեղի է ունեցել սեփական պետության, հայրենիքի ընկալման էական փոխակերպում: ԼՂՀ ներկայիս տարածքներն արդեն երիտասարդ սերնդի կողմից չեն ընկալվում որևէ տարանջատմամբ և չեն դիտարկվում, որպես զիջման առարկա: Կարելի է փաստել, որ արցախյան ընկալումների մեջ մենք գործ ունենք ժամանակային գործոնով պայմանավորված, որոշ չափով օբյեկտիվ փոխակերպման հետ:

ՀՀ-ի պարագայում, փոխակերպումը ԼՂՀ-ի պես սկզբունքային և կարծրացած չէ, բայց որոշակի փոփոխություն հանրային ընկալումներում առկա է: Այս հարցի ընկալումը բավական զգացմունքային է հայաստանյան հանրության շրջանում և հանրության կողմից ընկալելի չեն տարածքային զիջումները, առավել ևս Լաչինի և Քելբաջարի շրջանների հնարավոր հանձնումն Ադրբեջանի վերահսկողությանը: Միաժամանակ, պահպանվում է հայաստանյան քաղաքական Էլիտայի շրջանում այն մոտեցումը, որ Արցախն ինքն է իր ապագայի որոշողը և Հայաստանը կհամաձայնի այն տարբերակին, որին համաձայնություն կտա Արցախը, ինչն իր հետագիծ հետևանքն է թողնում նաև հանրային ընկալման վրա՝ անուղղակիորեն ՀՀ-ի վրա պրոյեկտելով Արցախի ընկալումների փոխակերպումը և կոշտացնելով նաև Հայաստանի հանրության ընկալումը:

2.3. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարակից և ածանցվող բաղկացուցիչները և դրանց փոխակերպումը բանակցային գործընթացում

Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման վերջնական արդյունքը պետք է լինի Ղարաբաղյան հակամարտության կարգավորումն ու Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը: Իսկ կարգավորումն, իր երթին, ենթադրում է բացի նախորդ երկու ենթազվույթներում դիտարկված կարգավիճակի և տարածքային հարցերից, նաև ածանցյալ ու հարակից

բաղկացուցիչներ, որոնց համաձայնեցումը սկզբունքային նշանակություն է ունենալու Արցախում խաղաղության հարատևության վրա:

Հակամարտության կարգավորման հիմքում դրված են ԵԱՀԿ ՅԵԼՍԻՆԿյան եզրափակիչ ակտի երեք սկզբունքները՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը, պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը և ուժի ու ուժի սպառնալիքի չկիրառումը: Անդրադարձ կատարվել է ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքի արտացոլմանը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում և դրանց պրոյեկտմանը Ղարաբաղի կարգավիճակի և տարածքային հարցերի վրա: Այս բաժնում անդրադարձ է կատարվում ուժի և ուժի սպառնալիքի չկիրառմանը, կարգավորման փաթեթներում արտացոլված հարակից բաղկացուցիչներին՝ փախստականների խնդրին, հաղորդակցության ուղիների վերականգնմանը, հակամարտության համապարփակ կարգավորման դրույթին, ինչպես նաև կարգավորման ածանցյալ բաղկացուցիչներին, մասնավորապես՝ վստահության միջոցներին:

Ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքով ԵԱՀԿ-ն սահմանում է, որ «ուժի ոչ մի կիրառում կամ ուժի սպառնալիք չպետք է որպես միջոց օգտագործվի վեճերի կամ վեճեր առաջացնող հարցերի կարգավորման համար»¹⁴¹: Այս սկզբունքը կարևորվում է կողմերի անվտանգությունը երաշխավորելու և ռազմական գործողություններից խուսափելու համար: Միջնորդներն այս սկզբունքին հղում են կատարվում՝ կոչ անելով պահպանել 1994թ.-ին հաստատված հրադարարի ռեժիմը, ինչպես նաև զերծ մնալ ռազմատենչ հռետորաբանություններից¹⁴² և գործողություններից կամ հայտարարություններից, որոնք վտանգում են խաղաղ գործընթացը: Այս դրույթը բանակցային գործընթացում միջնորդների կողմից

¹⁴¹ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողով, Եզրափակիչ ակտ, ՅԵԼՍԻՆԿի 1975:

¹⁴² Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group on the Twentieth Anniversary of the Ceasefire Agreement, MOSCOW, PARIS, WASHINGTON, 11 May 2014, <http://www.osce.org/mg/118419>

կերպափոխման չի ենթարկվել, նրանք մշտապես կոչ են արել հակամարտությանը լուծել բացառապես խաղաղ, քաղաքական ճանապարհով: Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո հրադարարի պահպանման խնդիրն առավել մեծ արդիականություն է ստացել:

Ինչ վերաբերում է հակամարտության կողմերին, ապա ադրբեջանական կողմի ռազմատեսչ հռետորաբանությունն աստիճանաբար սաստկացել է՝ ուղեկցվելով պարբերաբար սահմաններին տեղի ունեցող սրացումներով, որոնք իրենց գագաթնակետին հասան 2016թ.ապրիլյան՝ հանգեցնելով Քառօրյա պատերազմի: Յ.Ալիևը բազմիցս հայտարարել է, որ բանակցությունների միջոցով իր նպատակին չհասնելու դեպքում, Ադրբեջանը «դիմելով ռազմական ճանապարհին՝ կվերականգնի իր տարածքային ամբողջականությունը»¹⁴³, այդ մասին պարբերաբար հայտարարում են նաև Ադրբեջանի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ¹⁴⁴: Ապրիլյան պատերազմից հետո Մոսկվայում Հայաստանի և Ադրբեջանի ՉՈՒ Շտաբի պետերի միջև ձեռք բերվեց բանավոր համաձայնություն վերսկսված ռազմական գործողությունները դադարեցնելու վերաբերյալ, ինչից հետո ադրբեջանական կողմը փորձում էր բանակցությունների հիմք դարձնել այդ համաձայնությունը՝ նպատակ հետապնդելով նվազեցնել 1994-1995թ. եռակողմ համաձայնագրերի նշանակությունը՝ այդ կերպ և՛ չեղարկելով ԼՂՀ-ի հետ ուղղակիորեն կնքված համաձայնագիրը, և՛ ամրագրելով սահմանների փոփոխությունը, որ տեղի էր ունեցել ապրիլյան պատերազմի արդյունքում:

Հայաստանյան կողմը մշտապես կոչում է հանդես եկել հակամարտության քաղաքական կարգավորմանը և քննադատել է ռազմատեսչ հռետորաբանությունն ու հակամարտությունը ռազմական ուղով լուծելու սպառնալիքները: Դրա հետ մեկտեղ,

¹⁴³ Ильхам Алиев: вопрос Карабаха может быть решен военным путем, 08 ноября 2010, <https://www.kavkaz-uzel.eu/articles/176677/>

¹⁴⁴ "22 года идут попытки мирного решения этого конфликта. Ну сколько же можно? Мы готовы к мирному решению вопроса. Но если не будет решаться мирным путём, то будем решать военным путем", - заявил Посол Азербайджана в РФ Полад Бюльбюль Оглы. 2 апреля, 2016, <http://govoritmoskva.ru/news/74103/>

Յայ աս տանի իշխանությունները մշտապես շեշտադրել են, որ անհրաժեշտության դեպքում կատարելու են Արցախի անվտանգության երաշխավորի իրենց պարտականությունները¹⁴⁵: Ապրիլյան պատերազմից հետո ՅՅ իշխանությունների կողմից բարձրաձայնվեց նաև ՅՅ-ԼՂՅ փոխադարձ ռազմական օգնության մասին պայմանագրի նախապատրաստման մասին:

Արցախի դիրքորոշումն այս հարցում մոտ է հայաստանյան դիրքորոշմանը՝ որոշ հարցերում առավել կոշտ շեշտադրումներով: Պաշտոնական Ստեփանակերտը մշտապես կողմնակից է եղել հակամարտության կարգավորմանը խաղաղ ճանապարհով և Բաքվի հետ անմիջական երկխոսության հաստատման միջոցով¹⁴⁶: Միաժամանակ, հատկապես 2016թ. ապրիլյան պատերազմի օրերին նկատվել է Արցախի դիրքորոշման որոշակի կոշտացում: ԼՂՅ նախագահը հայտարարել է.«Մենք պատերազմում ենք խաղաղության համար: Եվ այս վերջին գործողությունները մենք ընկալում ենք այնպես, որ մենք պատրաստ ենք զրկանքներ կրելու՝ հնարավորություն ունենալով վերջնական ազատություն ձեռք բերելու»¹⁴⁷:

Ուժի և ուժի սպառնալիքը կանխելու համար քայլեր են ձեռնարկվում կողմերի միջև վստահության մակարդակը բարձրացնելու և տարածաշրջանային անվտանգության երաշխիքներ ստեղծելու ուղղությամբ: 2010թ. հոկտեմբերի 27-ին Աստրախանում Յայ աս տանի և Ադրբեջանի նախագահները, ՌԴ նախագահի հետ միասին, ստորագրեցին համատեղ հայտարարություն, որով համաձայնեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ անհապաղ կատարել ռազմագերիների փոխանակում և

¹⁴⁵ ՅՅ նախագահ Սերժ Սարգսյանի բացման խոսքը ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների հետ հանդիպման ժամանակ, 04. 04. 2016, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/04/04/President-ASerzh-Sargsyan-meeting-with-Ambassadors-of-OSCE-states-speech/>

¹⁴⁶ ԼՂՅ նախագահի հանդիպումը ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հետ, 30. 08. 2016, <https://armenpress.am/arm/news/447102/lxh-nakhagah-bako-sahakyany-handipum-e-unecel-eahk-minski.html>

¹⁴⁷ ԼՂՅ նախագահ Բակո Սահակյանի ելույթը Լրագրողների հետ հանդիպման ժամանակ, 07. 04. 2016, <http://www.panorama.am/am/news/2016/04/07/%D4%B2%D5%A1%D5%AF%D5%B8-%D5%8D%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6/1559474>

գոհվածների աճյունների վերադարձ¹⁴⁸, 2011թ. մարտի 5-ին, իւրումն 2010թ. Աստրախանում ձեռք բերված պայմանավորվածություների, նախագահներն ընդունեցին ևս մեկ համատեղ հայտարարություներ, որով պայմանավորվեցին ամենակարճ ժամկետում ավարտել ռազմագերիների փոխանակումը և ձգտել բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ միջոցներով և կրակի դադարեցման գծի երկայնքով կողմերի մասնակցությամբ անցկացնել հնարավոր միջադեպերի հետաքննություներն՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հովանուներքո և ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցչի աջակցությամբ¹⁴⁹: Կողմերին առաջարկ է արվել նաև դուրս բերել դիպլոկահարներին սահմաններից, սակայն ի տարբերություներ Յայաստանի և ԼՂՀ-ի, որոնք դրական արձագանք են տվել, Ադրբեջանը չի արձագանքել այս առաջարկին¹⁵⁰:

Ապրիլյան պատերազմից հետո Վիեննայում 2016թ. մայիսի 16-ին Յայաստանի և Ադրբեջանի նախագահները համաձայնություներ ձեռք բերեցին հնարավորինս կարճ ժամանակում ավարտին հասցնել ԵԱՀԿ հետաքննության մեխանիզմի համաձայնեցումն ու հաստատումը, ընդլայնել ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցչի գործող գրասենյակի կազմը և շարունակել ԿԽՄԿ հովանուներքո իրականացնել անհետ կորած անձանց մասին տեղեկատվության փոխանակում, ինչին նախագահները հավատարմություներ էին հայտնել 2014թ. հոկտեմբերին Փարիզի գագաթաժողովի ժամանակ¹⁵¹: Յամաձայնություները վերահաստատվեց հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում, ՌԴ նախագահի միջնորդությամբ ՅՅ և ԱՅ նախագահի հանդիպման արդյունքում, իսկ հետագայում նաև ժնևում 2017թ.

¹⁴⁸ Совместное заявление Президентов Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации по нагорно-карабахскому урегулированию, 27 октября 2010 года, <http://kremlin.ru/supplement/749>

¹⁴⁹ Совместное заявление президентов Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации по нагорно-карабахскому урегулированию, 5 марта 2011 года, <http://kremlin.ru/supplement/882>

¹⁵⁰ Ըստ Է. Նալբանդյանի՝ սահմանների շփման գծից դիպլոկահարներին դուրս բերելու համար առաջին հերթին պետք է աշխատել Ադրբեջանի հետ, 23.03.2011, <http://armenpress.am/arm/news/645637/yst-e-nalbandyani-sahmanneri-shpman-gtsic-dipukaharnerin.html>

¹⁵¹ Joint Statement of the Minister of Foreign Affairs of the Russian Federation, Secretary of State of the United States of America and State Secretary for Europe Affairs of France, VIENNA 16 May 2016, <http://www.osce.org/mg/240316>

հեկտեմբեր Սարգսյան-Ալիև հանդիպման ընթացում, սակայն կյանքի չկոչվեց:

Անկախ ընդունվող հայ տարարության ներքին՝ վստահության միջոցների վերաբերյալ հակամարտության կողմերի ընկալումները խիստ տարբերվում են: Ադրբեջանական կողմը փորձում է խուսափել պայմանավորվածության ներքին կատարումից, այդ թվում՝ առաջադրելով հավելյալ պահանջներ: Բաքուն ձգտում է, որպես վստահության միջոց, հասնել հայ կական գործերի դուրսբերմանը հակամարտության գոտուց¹⁵²¹⁵³: Մինչդեռ հայ կական կողմերի համար, գործերի դուրսբերումը ոչ թե վստահության միջոց է, այլ հակամարտության կարգավորման ամբողջական փաթեթի բաղկացուցիչ մաս:

Հայաստանյան կողմը կարևորում է այն վստահության միջոցները, որոնք կապահովեն հրադադարի ռեժիմի պահպանումն ու կկանխեն մարդկային զոհերը¹⁵⁴: Բացի այդ, Հայաստանի իշխանության ներքին մշտապես հանդես են եկել սահմաններից դիպուկահարների դուրսբերման օգտին:

Արցախյան կողմն աջակցում է վստահության միջոցների առաջարկներին և դրական գնահատում հրադադարի պահպանմանն ուղղված ջանքերը՝ դրա հետ մեկտեղ ընդգծելով իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը բանակցության ներքին և վստահության միջոցների համաձայնեցմանը¹⁵⁵:

Վստահության միջոցները, կոչված լինելով ամրապնդել փոխադարձ վստահությունը և տարածաշրջանային կայունությունը, պետք է հիմք կապահովեն կառուցողական քաղաքական երկխոսության

¹⁵² Алиев: для урегулирования конфликта в Карабахе Армения должна вывести войска, 20 июня 2016, <http://vognebroda.net/aliev-dlya-uregulirovaniya-konflikta-v-karabahe-armeniya-dolzha-vyvesti-voyska>

¹⁵³ МИД: "Режим в Армении пытается восстановить полностью утраченные в обществе авторитет и доверие", 19 Апреля 2016, http://ru.apa.az/nagornyj_karabakh/mid-rezhim-v-armenii-pytaetsya-vosstanovit-polnostyu-utrachennyye-v-obshestve-avtoritet-i-doverie-.html

¹⁵⁴ Հայաստանի ԱԳ նախարարի ելույթը Արևելյան գործընկերության երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը, 11.07.2016, http://mfa.am/hy/press-releases/item/2016/07/11/min_eap_7th/

¹⁵⁵ Դավիթ Բաբայան. Վիեննայի հանդիպումը բանակցության ներքին կոմայից դուրս բերելու մի փորձ էր, 17.05.2016. <http://www.panorama.am/am/news/2016/05/17/%D4%B2%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%AB%D5%BA%D5%B8%D6%82%D5%B4/1581027>

համար ու մեծացնեն փոխզիջումների հնարավորությունը: Սակայն բանակցային գործընթացի դինամիկայի դիտարկումը հնարավորություն է տալիս ամրագրել, որ կողմերի միջև վստահությունը չի ամրապնդվել, իսկ վերջին տարիներին հռետորաբանությունն ու հրադարձի խախտման դեպքերը զգալի սրացում են արձանագրել, ինչն այս պահի դրությամբ կողմերի հասարակությունների համար անընդունելի է դարձնում փոխզիջումների հարցն ու հակամարտության համապարփակ կարգավորումը:

Համապարփակ կարգավորումը ենթադրում է միաժամանակ բոլոր հարցերի շուրջ համաձայնության ձեռքբերում և դրանց փոխկապակցվածության ապահովում: Ղարաբաղյան հակամարտության բանակցային տրամաբանությամբ այն ենթադրում է սկզբունքների ստորագրումից հետո դրանց հիման վրա խաղաղության շրջանակային համաձայնագրի կնքում, որն իր մեջ կներառի կարգավորման բոլոր բաղադրիչները, այդ թվում՝ իրականացման հստակ ժամանակացույցը:

Ադրբեջանի կողմից բազմիցս առաջ է քաշվել, կարգավորման սկզբունքների համաձայնեցումը շրջանցելով, անմիջապես շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունների անցման գաղափարը, 2014թ.-ից նման մոտեցման միտումներ պարբերաբար առկա են եղել նաև ԵԱՀԿ համանախագահ երկրների բարձր մակարդակի ներկայացուցիչների, Մինսկի խմբի համանախագահների հայտարարություններում¹⁵⁶:

Պաշտոնական Բաքվի տեսանկյունից անցումն անմիջականորեն շրջանակային համաձայնագրի բանակցմանը, առանց կարգավորման սկզբունքների համաձայնեցման, կարող է մանևրել ու լրացուցիչ հնարավորություն ստեղծել՝ խուսափելու «մադրիդյան սկզբունքներով» նախատեսված կարգավիճակի հարցի որոշման

¹⁵⁶ Sommet Haut-Karabagh, 27 Octobre 2014, <http://www.elysee.fr/communiqués-de-presse/article/sommet-haut-karabagh/>. Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, BASEL, Switzerland, 4 December 2014, <http://www.osce.org/mg/129421>. Statement by OSCE Chairperson-in-Office and Co-Chairs of the OSCE Minsk Group on latest developments in the Nagorno-Karabakh peace process, MUNICH, GERMANY, 7 February 2015, <http://www.osce.org/node/139411>

համար հանրաքվեի անցկացման դրույթից: Բացի այդ, հաշվի առնելով ենթադրվող խաղաղության համաձայնագրի ծավալն ու դրանում ներառվող դրույթների մեծաթիվը, այդ փաստաթղթի բանակցություններն էապես երկարաժամկետ հնարավորություն կստեղծեն՝ լրացուցիչ ժամանակ ընձեռնելով Ադրբեյջանին իր ռազմական ներուժը մեծացնելու, ինչպես նաև գլոբալ աշխարհաքաղաքական զարգացումներից, ինքնորոշման իրավունքի գլոբալ փոխակերպումներից օգտվելով բանակցային գործընթացի տրամաբանությունը փոխելու համար: Անմիջականորեն Շրջանակային համաձայնագրի բանակցություններին անցնելով՝ Ադրբեյջանը կփորձի խախտել բանակցությունների տրամաբանական ընթացքը և շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցություններ սկսել միայն Յայաստանի հետ՝ առանց ԼՂՀ մասնակցության: Մինչդեռ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից քննիցս նշվել է, որ սկզբունքների շուրջ համաձայնությունից հետո, երբ անցում կատարվի արդեն հաջորդ փուլին՝ շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցություններին, գործընթացին միանալու է նաև ԼՂՀ-ն:

Յայաստանյան կողմի համար կարևոր է նախքան խաղաղության համաձայնագրի բանակցություններին անցում կատարելը համաձայնեցնել կարգավորման սկզբունքները, մասնավորապես՝ ամրագրել հանրաքվեի միջոցով կարգավիճակի հարցի որոշման անհրաժեշտությունը, ինչպես նաև պահպանել բանակցային տրամաբանությունը՝ ԼՂՀ-ին հետագայում բանակցային գործընթաց վերադարձնելու նպատակով: Միաժամանակ, Յայաստանի համար կարևոր է հակամարտության համապարփակ կարգավորումը՝ բոլոր հարցերի միաժամանակյա կարգավորման տեսակետից: Բանակցային այդ տրամաբանության դեպքում առկա են որոշակի երաշխիքներ, որ զիջումները չեն լինի միակողմանի և կողմերից մեկը կարգավորման որոշակի պահի չի հրաժարվի հետագա քայլերից, մասնավորապես՝ ստանալով տարածքային զիջումներ, Ադրբեյջանը չի

կարողանա հրաժարվել հանրաքվեի անցկացման միջոցով կարգավիճակի հարցի կարգավորումից:

ԼՂ-ն, նույնպես, համապարփակ կարգավորման կողմնակից է, սակայն, ինչպես և Չայաստանը՝ նախընտրելի է համարում նախ սկզբունքների համաձայնեցումը, հետո միայն անցումը ծրջանակային համաձայնագրի բանակցմանը: ԼՂ-ի համար կարևոր է իր անմիջական մասնակցությունը բանակցություններին, և այս մոտեցմամբ սկզբունքների համաձայնեցումից հետո ԼՂ ուղղակի ներգրավման հնարավորությունները բավական մեծ են:

Չամապարփակ կարգավորման բաղկացուցիչ դրույթներից մեկը պատերազմի հետևանքով հեռացած փախստականների վերադարձի հարցն է իրենց բնակության նախկին վայրեր: Այս դրույթը ներառված է եղել միջևորդների կողմից առաջարկված կարգավորման բոլոր փաթեթներում: Մասնավորապես՝ կարգավորման Փաթեթային տարբերակը նախատեսում է փախստականների վերադարձ նախկին ԼՂԻՄ մաս չկազմող շրջաններ, որոնք պետք է վերածվեն բաժանարար գոտու, ինչպես նաև Շուշի քաղաք և Շահումյանի շրջան: Շուշի քաղաքի և Շահումյանի շրջանի հետ կապված մեկ այլ դրույթով ամրագրվում է, որ «Տեղահանված անձինք կարող են վերադառնալ իրենց նախկին մշտական բնակության վայրերը: Նրանց անվտանգությունը կերպի խավորվի համապատասխան տեղական իշխանությունների կողմից: Վերադարձած բնակիչները համապատասխանաբար ներկայացված կլինեն Բաքվի և Ստեփանակերտի խորհրդարաններում և ընտրական խորհուրդներում, այդ վայրերի ոստիկանությունում և անվտանգության ուժերում՝ համապատասխանաբար այդ վայրերի ողջ բնակչության տկոսային հարաբերակցությամբ»¹⁵⁷:

Փուլային տարբերակը, նույնպես, նախատեսում է փախստականների վերադարձ ԼՂԻՄ նախկին տարածք չհանդիսացող շրջաններ, սակայն այս փաթեթում առաջին փուլում չի

¹⁵⁷ ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր (նախագիծ), Չամաձայնագիր թիվ 2 – կարգավիճակը, 1997թ. հունիս:

նախատեսվում փախտականների վերադարձ Շուշի քաղաք և Շահումյանի շրջան, քանի որ վերջիններիս վերաբերյալ համաձայնությունն նախատեսվում էր ձեռք բերել հետագայում՝ կողմերի միջև առանձին բանակցությունների արդյունքում: Բացի այդ, առանձին շեշտվում է, որ փախտականների վերադարձի այս դրույթը չի վերաբերում Ադրբեջանից և Չայաստանից հեռացած անձանց: «Կողմերը օժանդակում են տեղահանված անձանց անվտանգ և ինքնակամ վերադարձին իրենց նախկին մշտական բնակության վայրեր՝ Բաժանարար գոտում, ինչպես շարադրված է թիվ 2 Յավելվածում...Կողմերը բանակցություններ են վարում նաև այլ անձանց արագ, անվտանգ և ինքնակամ վերադարձի շուրջ՝ մի կողմ թողած նրանց, ովքեր ընդգրկված են այս Չամաձայնագրի կամ համընդգրկուն կարգավորման ծրագրի մեջ, և որոնք տեղահանվել են 1987թ. հետո Չայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության և վարվածության արդյունքում»¹⁵⁸:

«Ընդհանուր պետությունն» տարբերակով նախատեսվում է փախտականների վերադարձ ինչպես նախկին ԼՂԻՄ չհանդիսացող տարածքներ, այնպես էլ Շուշի քաղաք և Շահումյան: Ի տարբերություն նախորդ փաթեթների, նախատեսվում է նաև բանակցությունների միջոցով Ադրբեջան և Չայաստան՝ փախտականների վերադարձի համաձայնեցում: «Կողմերն աջակցում են փախտականների և տեղահանված անձանց կամավոր վերադարձին նրանց մշտական բնակության նախկին վայրեր, որոնք տեղադրված են Տարանջատիչ գոտում, ինչպես շարադրված է 2-րդ Յավելվածում: Կողմերը բանակցություններ են վարում, իրագործելու նաև անվտանգ և կամավոր վերադարձը բոլոր այլ անձանց, ովքեր, բացի սույն համաձայնագրի ընդգրկվածներից, նույնպես հանդիսանում են փախտականներ կամ էլ տեղահանվել են հակամարտության և Չայաստանի և Ադրբեջանի միջև 1987 թվականից հետո ստեղծված վարվածության հետևանքով»: «Կողմերը համաձայնության են գալիս

¹⁵⁸ ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակ, Չամաձայնագիր Լեռնային Ղարաբաղի գիսված հակամարտության դադարեցման մասին (նախագիծ), 1997թ. դեկտեմբերի 2:

են այն մասին, որ բոլոր ադրբեջանցի փախտականները կարող են վերադառնալ Շուշի քաղաքի իրենց բնակատեղիները: Նրանց անվտանգությունը կերաշխավորվի Լեռնային Ղարաբաղի համապատասխան իշխանությունների կողմից: Նրանք կունենան Լեռնային Ղարաբաղի բոլոր քաղաքացիներին հավասար իրավունքներ... Նույնպես իրավունքներ կստանան նաև հայ փախտականները քաղաք Շահումյան վերադառնալ ու դեպքում»¹⁵⁹:

«Մադրիդյան սկզբունքների» գաղտնագերծված մասում նշվում է. «ներքին տեղահանված և փախտական հանդիսացող անձանց՝ իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք», ինչը նախատեսում է նաև ԼՂԻՄ նախկին տարածքը¹⁶⁰:

Փախտականների վերադարձի դրույթի փոխակերպումը բանակցային գործընթացի ընթացքում, ելնելով դրա հումանիտար նշանակությունից, մշտապես պահպանվել է առաջարկված բոլոր փաթեթներում: Միաժամանակ, փաթեթներում առկա են որոշակի տարբերություններ՝ կապված վերադարձի տարածքի հետ: Բոլոր փաթեթներում պահպանվում է ԼՂԻՄ հարակից տարածքներ փախտականների վերադարձի դրույթը, Շուշի քաղաք և Շահումյանի շրջան վերադարձի հարցին տարբեր մոտեցումներ է ցուցաբերվել, իսկ Հայաստանից և Ադրբեջանից հեռացած փախտականների հարցը դիտարկվում է որպես հետագա բանակցությունների առարկա: Ուշագրավ է նաև փախտականներին վերաբերող բառակազմի փոփոխությունը. եթե կարգավորման փուլային, փաթեթային և «Ընդհանուր պետություն» տարբերակներում օգտագործվում է «փախտականներ» տերմինը, ապա «Մադրիդյան սկզբունքներում»՝ «փախտականներ և ներքին տեղահանված անձինք» տերմինը, ինչն ադրբեջանական մոտեցման արտացոլում է, համաձայն որի «ադրբեջանական տարածք հանդիսացող» ԼՂԻՄ-ից և հարակից

¹⁵⁹ ԼՂ հարցի կարգավորման «Ընդհանուր պետություն» տարբերակ Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, 10 նոյեմբերի, 1998թ.:

¹⁶⁰ Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, L'AQUILA, 10 July 2009.

շրջաններից հեռացած անձինք ներքին տեղահանվածներ են և ոչ փախտականներ:

Կողմերի մոտեցումներն այս հարցում ևս տարբերվում են: Ադրբեջանական կողմը ձգտում է հնարավորինս մեծ հնչեղություն և հաղորդել փախտականների վերադարձի հարցին: Դրանով է պայմանավորված 25 տարի շարունակ նրանց առանձնացված ճամբարներում բնակեցնելը, ինչպես նաև ադրբեջանական հասարակություն և նրանց ինտեգրման համար որոշակի խոչընդոտների ստեղծումը: Ադրբեջանը նաև որոշակիորեն ուճացնում է փախտականների թիվը: Հիմնական նպատակն է՝ հասնել փախտականների վերադարձին իրենց բնակության նախկին վայրեր, այդ թվում՝ նախկին ԼՂԻՄ տարածք և ազդել անցկացվելիք հանրաքվեի արդյունքների վրա, ինչպես նաև, անկախ դրա արդյունքներից, ապահովել ադրբեջանական բնակչության գերակշռումը հայ կականի նկատմամբ:

Հաշվի առնելով բնակցությունների գաղտնի բնույթը՝ Հայաստանի դիրքորոշումը փախտականների հարցով հստակ չի արտահայտվում: Սակայն, այն պետք է որ հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա՝ փախտականների վերադարձի հարցում բալանսների պահպանում՝ ներառող այդ թվում Ադրբեջանից հեռացած հայերի վերադարձ, վերադարձի կամավորության և Արցախում առկա դեմոգրաֆիկ պատկերի պահպանում: Փախտականների վերադարձը նախապատրաստելու համար հայ կական կողմը պետք է ունենա երաշխիքներ նրանց վերադարձի գործընթացի թափանցիկության առումով: Ցանկալի է նաև քայլեր ձեռնարկել՝ կանխելու Ադրբեջանի իշխանությունների հնարավոր օրինախախտումներն ու կեղծ փաստաթղթերով իրականում փախտական չհանդիսացող մարդկանց բնակեցումը Ղարաբաղում: Բացի այդ, կարևոր է բարձրաձայնել նաև Ադրբեջանի տիրապետության տակ մնացած այլ բնակավայրերի, ինչպես նաև Ադրբեջանի նախկին հայ կական բնակչության վերադարձի կամ նրանց փոխհատուցման հարցը: Փախտականների վերադարձի խնդիրն,

առաջին հերթին, առնչվում է մարդու խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությանը, հետևաբար, զուգահեռ կարգավորման համատեքստում պետք է դիտարկվի նաև Արցախից մարդու իրավունքների խախտման՝ խորական քաղաքականության կամ պատերազմի հետևանքով հեռացած հայերի, այսպես կոչված՝ Սփյուռքի Արցախյան հատվածի իրավունքների վերականգնման խնդիրը: Դա կարող է ենթադրել ինչպես նրանց մասնակցությունը Արցախի վերջնական կարգավիճակի որոշմանը, այնպես էլ վերջնական կարգավորման փուլում կորուստների փոխհատուցման ապահովմանը:

ԼՂՀ-ի մոտեցումն այս հարցում հստակեցված չէ: Այն դիտարկվում է, որ ԼՂՀ-Ադրբեջան բանակցությունների բաղկացուցիչ մաս:

Կարգավորման մյուս բաղադրիչը հաղորդակցության վերականգնումն ու սահմանների ապաշրջափակումն է: Բանակցային սեղանին դրված բոլոր փաթեթները նախատեսել են միջոցառումներ՝ ճանապարհները, երկաթուղին, Էլեկտրամատակարարման և կապի գծերը բացելու, առևտրական և այլ հարաբերություններ հաստատելու նպատակով: Փաթեթային տարբերակում առանձնակի շեշտվում է նաև Ադրբեջանի և Նախիջևանի միջև տրանսպորտային հաղորդակցության ապահովումը, Հայաստանի տարածքով Նախիջևանի և Ադրբեջանի միջև ճանապարհի ապահովման դրույթը ներառվել է նաև Քի-Վեսթի բանավոր համաձայնությունների մեջ, մյուս փաթեթներն այս կետին առանձին անդրադարձ չեն կատարել:

Փաթեթային տարբերակը հաղորդակցության հարցին անդրադարձ է կատարում հետևյալ կերպ. «Ուժերի դուրսբերման հետ միաժամանակ միջոցներ կկիրառվեն ճանապարհների, երկաթուղիների, Էլեկտրահաղորդակցման և կապի գծերի, առևտրային և այլ հարաբերությունների բացման նպատակով՝ ներառելով այդ նպատակի համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Կողմերը երաշխավորում են այդ կապերի օգտագործումը բոլորի կողմից՝ ներառյալ Եթնիկ փոքրամասնությունների՝ երաշ-

խավորելով վերջիններիս հասանելիությունը իրենց էթնիկ խմբերին տարածաշրջանի այլ վայրերում: Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է վերացնել բոլոր շրջափակումները և ապահովել մյուս բոլոր կողմերի համար բեռների և մարդկանց փոխադրումը առանց խոչընդոտների: Չայաստանը և Ադրբեջանը երաշխավորում են իրար միջև ազատ և անվտանգ երկաթուղային հաղորդակցություն և մասնավորապես Բաքու-Յորդանիա-Մեդրի-Օրդուբադ-Նախիջևան-Երևան գծով»: «Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը կունենան Ադրբեջանի և Չայաստանի հետ ազատ և առանց խոչընդոտների տրանսպորտային հաղորդակցության և կապի իրավունք»¹⁶¹:

Փուլային տարբերակում նշվում է. «Ուժերի դուրսբերման հետ զուգահեռ՝ Կողմերն անմիջապես միջոցներ են իրականացնում ճանապարհների, երկաթուղիների, էլեկտրահաղորդալարերի և կապի, առևտրային և այլ հարաբերությունների բացման նպատակով, ներառյալ բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են թիվ 3 Յալթա վաճուճ շարադրված գրաֆիկներին և կոնկրետ դրույթներին համապատասխան հնարավոր կարճագույն ժամկետներում սույնին հասնելու համար: Կողմերը երաշխավորում են այդ կապերի օգտագործումը բոլորի կողմից՝ ներառյալ էթնիկ փոքրամասնությունների՝ ապահովելով վերջիններիս հասանելիությունը իրենց էթնիկ խմբերին տարածաշրջանի այլ վայրերում: Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է հանել բոլոր շրջափակումները և ապահովել մարդկանց և բեռների փոխադրումը բոլոր այլ Կողմերի համար առանց խոչընդոտների: Կողմերը երաշխավորում են ազատ և անվտանգ երկաթուղային հաղորդակցություն իրար միջև»¹⁶²:

«Ընդհանուր պետություն» տարբերակում նշվում է. «Լեռնային Ղարաբաղը կունենա Չայաստանի և Ադրբեջանի հետ ազատ և անարգել

¹⁶¹ ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր (Նախագիծ), Չամաձայնագիր թիվ 2 – կարգավիճակը, 1997թ. հունիս:

¹⁶² ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակ, Չամաձայնագիր Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության դադարեցման մասին (Նախագիծ), 1997թ. դեկտեմբերի 2:

տրանսպորտային հաղորդակցման և կապի իրավունք: Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև անարգել հաղորդակցությունն ապահովելու նպատակներով Լեռնային Ղարաբաղի կողմից Լաչինի միջանցքն օգտագործելու հարցը հանդիսանամ է առանձին պայմանավորվածության առարկա, եթե Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի համաձայնությամբ չընդունվեն այլ որոշումներ Լաչինի շրջանի հատուկ ռեժիմի վերաբերյալ»: «Ուժերի դուրսբերման հետ միաժամանակ Կողմերն անհապաղ միջոցառումներ են իրագործում ճանապարհները, երկաթուղին, Էլեկտրամատակարարման և կապի գծերը բացելու, առևտրական և այլ հարաբերություններ հաստատելու նպատակով, ներառյալ բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են դրանց հասնելու հնարավոր նվազագույն ժամկետներում՝ համաձայն 3-րդ Հավելվածում շարադրված ժամանակակարգի և կոնկրետ դրույթների: Կողմերն ապահովում են այդ կապերի օգտագործումը բոլորի համար, ներառյալ Էթնիկ փոքրամասնությունները՝ վերջիններիս համար ապահովելով անարգել մուտք տարածաշրջանի այլ վայրերում գտնվող իրենց Էթնիկ համայնքներ: Կողմերից յուրաքանչյուր պարտավորվում է հանել բոլոր շրջափակումները և ապահովել բեռների և մարդկանց ժամանումը բոլոր մյուս Կողմերի համար առանց խոչընդոտների: Կողմերն ապահովում են ազատ և անվտանգ երկաթուղային հաղորդակցությունն միմյանց միջև»¹⁶³:

Քի-Վեսթում, ըստ ՀՀ նախկին ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի, պայմանավորվածությունն է ձեռք բերվել, որ «Ադրբեջանն ընդամենը պետք է իրավունք ստանար ՀՀ տարածքով անխափան կապ հաստատել Նախիջևանի հետ»¹⁶⁴:

¹⁶³ ԼՂ հարցի կարգավորման «Ընդհանուր պետություն» տարբերակ Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, 10 նոյեմբերի, 1998թ.:

¹⁶⁴ «Քի-Վեսթը “շեղում” էր բանակցային գործընթացի տրամաբանությունից», 4 Ապրիլ 2011, <http://www.mediamax.am/am/news/keywest/544/>

«Մադրիդյան սկզբունքների»՝ Լ՛Ակվիլայում հրապարակայնացված հատվածում հաղորդակցության դրույթին անդրադարձ չի կատարվում¹⁶⁵:

Չակամարտության բոլոր կողմերի համար կարևոր է հաղորդակցության ուղիների վերականգնումը: Սակայն, ադրբեջանական կողմը դեռևս Արցախյան պատերազմից հետո ձգտում է հաղորդակցության ուղիների շրջափակումն օգտագործել որպես Չայաստանի և Արցախի վրա ճնշման լծակ: Միաժամանակ, Ադրբեջանի համար սկզբունքային հարց է Նախիջևանի հետ ուղղակի հաղորդակցության վերականգնումը:

Չայաստանի համար սահմանների վերաբացումը կարող է տևտեսական զարգացման տեսակետից մեծ նշանակություն ունենալ, սակայն դրա շահարկումը որպես ադրբեջանական կողմից զիջում Չայաստանի համար ընդունելի չէ: Միաժամանակ, Նախիջևան-Ադրբեջան հաղորդակցության վերականգնումը Չայաստանի տարածքով դիտարկվում է որպես այդ տարածաշրջանում ադրբեջանական ազդեցության մեծացման սպառնալիք, ինչպես նաև Չայաստանի անմիջական սահմանների մոտ ռազմական մեծ արտենցիալի կուտակման, Չայաստանի տարածքով գեներալ և զինամթերքի տարանցման վտանգ:

Արցախի համար հաղորդակցության ուղիների վերականգնումը կենսական նշանակություն ունեցող հարց է՝ առավել ևս կարգավորման այն տարբերակի դեպքում, երբ Չայաստանի հետ ուղղակի հաղորդակցությունը հնարավոր կլինի իրականացնել միայն Լաչինի շրջանի տարածքով: Արցախի համար նաև հումանիտար նշանակություն ունի Ստեփանակերտի օդանավակայանի գործարկումը, ինչն արգելափակվում է Ադրբեջանի կողմից:

Ամփոփելով կարող են եզրակացնել, որ Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման դիտարկումը անհատազգ-պետություն-քաղաքակրթություն մակարդակներում թույլ է տալիս պնդել, որ այսօր առկա դե-ֆակտո իրավիճակը՝ այն է

¹⁶⁵ Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, L'AQUILA, 10 July 2009.

չ ճանաչ ված պետության կարգավիճակը, թույլ չի տալիս լիովին ապահովել ինքնորոշման իրացումը: Անհատի ինքնորոշումն այսօր սահմանափակվում է չճանաչվածության և ինքնից բխող, Ադրբեջանի կողմից շրջափակման և հայաստացույթան քաղաքականության հետևանքով առաջացող մի շարք խնդրներով: Պետական ինքնորոշումը սահմանափակվում է միջազգային հարաբերություններում Արցախի լիարժեք ներգրավման համար առկա խնդրներով, միջազգային կազմակերպություններում ներկայացվածության և չունենալով և տարածաշրջանային ու գլոբալ քաղաքական գործընթացներից մասամբ իզոլացված լինելով: Միաժամանակ, ազգային և քաղաքակրթական հարթություններում ինքնորոշման համար առկա սահմանափակումներն անկախության հռչակումից հետո վերացել են, քանի որ Արցախում հաստատվել է ազգային պետություն, որը հետևողականորեն արդիականացվում է, քաղաքակրթական առումով Արցախն իրեն հռչակել է եվրոպայի մաս և կիսում է եվրոպական արժեքները:

Բանակցային գործընթացում Ղարաբաղյան հակամարտության բխումնային դրոյթների կերպափոխման և հակամարտության կողմերում դրանց ընկալումների առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանակցային գործընթացի առաջընթացի հիմնական խնդրներից մեկը կողմերի փոխադարձ անվստահությունն է և քաղաքական կամքի բացակայությունը, որն արտահայտվում է մի շարք հարցերում:

Հակամարտության կարգավորումը պայմանավորված է հակամարտության կողմերի՝ թե՛ պետությունների, թե՛ հասարակությունների միջև կառուցողական երկխոսությամբ, որը հնարավորություն կընձեռի խլուսափել փոխադարձ թշնամանքից, ավերսիվ մոտեցումներից և զարգացնել համագործակցային մշակույթը: Մինչ դեռ Ադրբեջանում քարոզվող հայաստացույթան և քաղաքացիական հասարակության հանդեպ բռնաճնշումների աճը խնդրներում է ժողովրդավարական

դիվանագիտության զարգացմանը և համակեցության միջոցով տարածաշրջանային կայունության ապահովմանը: Բացի այդ, ավտորիտար իշխանության ամրապնդումը բարձրացնում է բնակչային գործընթացի անկանխատեսելիությունն ու խոչընդոտում է կարգավորման վերաբերյալ հանրային օբյեկտիվ ընկալումների ձևավորմանը:

Արդյունքում, հայկական և ադրբեջանական կողմերը, տարբեր կերպ ընկալելով հակամարտության բախումնային դրույթները՝ իրենց փոխհարաբերությունները կառուցում են ոչ թե երկխոսության, այլ հակադրման սկզբունքով՝ նվազեցնելով հակամարտության խաղաղ կարգավորման հնարավորությունը:

Հակամարտության կարգավորման վերաբերյալ կողմերի տեսլականի և հանրային ընկալումների վրա ուղղակի ազդեցություն է ունենում նաև հակամարտության կողմերի ժողովրդավարացման գործընթացը, միաժամանակ անվտանգային խնդիրներն, իրենց հերթին, ազդում են երկրի ներքաղաքական գործընթացների վրա: Կարելի է ասել, որ տվյալ դեպքում գործունենք անվտանգության-բնակչային գործընթաց-ժողովրդավարություն փոխկապակցված շղթայի հետ, և այդ համատեքստում բավական հետաքրքիր էին նաև Արցախում և Հայաստանում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումները, որոնք հանգեցրին հակառակ լուծումների, առաջին դեպքում՝ կիսանախագահականից անցման նախագահական, մյուս դեպքում՝ կիսանախագահականից խորհրդարանական կառավարման համակարգին: Ծառերի համար միանշանակ ընկալելի չէ նման փոփոխությունների նպատակահարմարությունը՝ ելնելով անվտանգային խնդիրներից, մասնավորապես՝ խորհրդարանական համակարգի անցումն իր հետ կարող է լրացուցիչ որոշումների ընդունման դանդաղությունից բխող մարտահրավերներ առաջացնել՝ հաշվի առնելով պատերազմի վերսկսման պահպանվող վտանգը, որը կարող է շատ արագ որոշումներ և լուծումներ պահանջել: Սակայն միանշանակ է, որ 2016թ. սահմանադրական փոփոխություններից հետո Ադրբեջանի

ամրապնդվող ավտորիտարիզմի ֆոնին հայկական երկու հանրապետության ներքին լրացուցիչ ջանքեր են պահանջվելու նման կերպափոխումներից բխող մարտահրավերների հաղթահարման համար և լրացուցիչ ժամանակ է անհրաժեշտ լինելու՝ կատարված փոփոխության ներքին արդյունավետության գնահատման, և դրանից բխող հետագահնարավոր փոփոխության ներքին համար:

Լինելով ինքնորոշման իրավունքի իրացման շուրջ ծագած հակամարտության, Ղարաբաղյան հիմնախնդիրը ներառում է մարդու իրավունքներին, ազգերի ինքնորոշմանն ու միջպետական հարաբերության ներքին առնչվող խնդիրներ և ուղղակիորեն ազդում է հակամարտության կողմերի ներքաղաքական զարգացումների, հանրային տրամադրության ներքին ու, այդ թվում՝ անհատի ինքնության ձևավորման վրա: Այդ պատճով հիմնախնդիր լուծման արդյունավետությանն ու հաջողությանը կախված է ինչպես հակամարտության կողմերի քաղաքակրթական յուրահատկության ներքին, ժողովրդավարության մակարդակից, այնպես էլ հակամարտության հանրային ընկալումներից: Չորս մակարդակներում ինքնորոշման դիտարկումը հնարավորության է ընձեռում ուղիներ որոնել՝ միջազգային միտումներն ու արդի աշխարհակարգի կողմից ընձեռվող հնարավորության ներքին իշահ Ղարաբաղի ինքնորոշման լիարժեք իրացման:

ԳԼՈՒԽ 3
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ, ԴՐԱ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

3.1 Հակամարտության ոլորտների կարգավորման միջազգային փորձը. ընդհանուր դիտարկումներ

Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման հարցը քննարկելու, կիրառելի և իրատեսական առաջարկներ անելու համար կարևոր է դիտարկել ինքնորոշման իրավունքի իրացման, դրա շուրջ ծագող հակամարտության ոլորտների կարգավորման միջազգային փորձը՝ միջազգային իրավունքի սկզբունքների կիրառման արդի միտումները, Ղարաբաղյան հիմնախնդրի համար կիրառելի մոտեցումները:

Միջազգային փորձն ուսումնասիրելիս հաշվի են առնվել դիտարկվող հակամարտության ոլորտների առանձնահատկությունները և հիմքում դրվել է այն սկզբունքը, որ մի հակամարտության փորձը չի կարող միանշանակ կիրառելի լինել որևէ այլ հակամարտության համար՝ առանց տեղայնացման և տվյալ իրավիճակի յուրահատկությունների համապատասխանեցման: Հետազոտության նպատակ է սահմանվել ոչ թե առանձին հակամարտության ոլորտների կարգավորման բոլոր բաղադրիչների ու դրանց կիրառման հնարավորությունների դիտարկումը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում, այլ առանձին խնդիրների հաղթահարման համար ձեռնարկված միջոցների ու դրանց արդյունավետության ուսումնասիրումը: Հատուկ ուշադրություն է հատկացվել յուրաքանչյուր հակամարտության առանձնահատկություններին, Ղարաբաղյան հակամարտության հետ դրանմանություններին և տարբերություններին:

Հետազոտության ընթացքում դիտարկվել է օրինակների հնարավորինս լայն շրջանակ՝ ընդգրկող բոլոր այն հակամարտության ոլորտները, որոնք տարբեր ասպեկտներից ելնելով

հակամարտության կողմերի կամ միջնորդների, փորձագետների կողմից դիտարկվել են որպես հնարավոր օրինակ Ղարաբաղյան հակամարտության համար: Միաժամանակ, հատուկ ուշադրություն է հատկացվել քաղաքակրթական ասպեկտին, ինչը հնարավորություն է տվել հիմնավորել, որ հակամարտության կողմերի քաղաքակրթական պատկանելությունն ու արժեհամակարգը որոշիչ դերակատարում են ունենում հակամարտության կարգավորման գործընթացում՝ ապահովելով ինքնորոշման իրացումը:

Հակամարտությունը սահմանվում է որպես լուրջ բախում կամ վեճ՝ որպես կանոն ձգձգված¹⁶⁶: Որպես ուսումնասիրության հիմք ընդունվել է հակամարտության այն սահմանումը, որը չի ենթադրում պարտադիր ռազմական գործողությունների առկայություն: Առավել մոտ սահմանումն այս տեսակետից տրվում է Ա.Անցուկարվի և Ա.Շիպիլովի կողմից. «Հակամարտության ներքո հասկացվում է փոխգործակցության ընթացքում առաջացող կարևոր հակասությունների հաղթահարման առավել սուր եղանակ, որը կայանում է սուբյեկտների հակադրության մեջ և սովորաբար զուգակցվում է բացասական հոլյգերով»¹⁶⁷:

Նման սահմանումը հնարավորություն է տալիս հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի հետազոտման ընթացքում դիտարկել ինչպես ռազմական փուլ ունեցող հակամարտությունները, այնպես էլ ինքնորոշման քաղաքիչ պարունակող այլ հակասությունները, որոնք չեն ունեցել ռազմական փուլ, սակայն պարունակել են սուբյեկտների հակադրություն և հակասություններ:

Այս ենթազլխում անդրադարձ է կատարվում ԱՊՀ տարածքի հակամարտություններից՝ Մերձդնեստրի հակամարտությանը, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի հակամարտություններին, Եվրոպական տարածաշրջանից Ալանդյան կղզիների փորձին, Կատալոնիային, Ֆրանս-գերմանական հակամարտությանը, ԱՖրիկայից՝ Հարավային Սուդանի անկախացմանը, Էրիթրեային:

¹⁶⁶ <https://en.oxforddictionaries.com/definition/conflict>

¹⁶⁷ Анцупов А.Я., Шипилов А.И., Конфликтология. — М.: ЮНИТИ, 2000, с. 8.

Սույն գլխի երկրորդ ենթագլխում առավել հանգամանորեն անդրադարձ է կատարվել Կոսովոյի անկախացմանը, Կիպրական հիմնախնդրին, ՅՆՈՍԻՍային Իռլանդիայի հակամարտության կարգավորման օրինակին և Շոտլանդիայի անկախացման հանրաքվեին, Արևելյան Թիմորի անկախացմանը: Երրորդ ենթագլխում ամփոփված է Ղարաբաղյան հակամարտության համատեքստում կիրառելի փորձը, տեղայնացման յուրահատկություններն ու անհրաժեշտ քայլերը:

Մերձդնեստրի հակամարտության հիմնական բախումնային դրույթներից մեկը կարգավիճակի հարցն է: Սակայն, Մերձդնեստրում Մոլդովայից անկախացման հարցը ծագել է վերջինիս՝ Ռումինիային միանալու ձգտման և ռումիներենը որպես միակ պետական լեզու սահմանելու ցանկության հետևանքով, ինչը հարուցել է Մերձդնեստրի մեծաքանակ ռուսալեզու բնակչության դժգոհությունը¹⁶⁸: Բացի այդ, այս հակամարտության յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն չունի միջեթնիկ բնույթ¹⁶⁹: Այն բնութագրվում է որպես ռուսալեզու շրջանի և ազգայնական Մոլդովայի հակամարտություն: Դրա հետ մեկտեղ, մոլդովացիների և մերձդնեստրացիների միջև կա ինքնանույնականացման տարբերություն: Մերձդնեստրի բնակիչներն իրենց նույնականացնում են որպես մերձդնեստրացիներ, նման ինքնության գիտակցումը կապվում է 1992թ. հակամարտության և Աջ ափից ներխուժման դեպքում սեփական հանրապետությունը պաշտպանելու պատրաստակամության հետ: Այս չճանաչված պետության տարածքում ձևավորվել է նոր ինքնություն՝ Մերձդնեստրի ժողովուրդ, մինչդեռ Մոլդովայի ներսում կան ինքնության սահմանման հակասություններ՝ ռումինացիներ և մոլդովացիներ եզրույթների միջև¹⁷⁰: Սակայն, Մոլդովայի և Մերձդնեստրի միջև սահմանը ռուսալեզու և

¹⁶⁸ Mitrofanova V. A., Transnistrian conflict in the context of post-Soviet nation-building, EQUINOX PUBLISHING, Russian Orthodox University; SOLS VOL, 2015, p. 193.

¹⁶⁹ Приднестровский кризис: человеческое измерение, Отчет миссии региональной сети общественных организаций Восточной Европы в рамках глобального партнерства по предотвращению вооруженных конфликтов, 2008-2009, с.33.

¹⁷⁰ Mitrofanova V. A., Transnistrian conflict in the context of post-Soviet nation-building, EQUINOX PUBLISHING, Russian Orthodox University; SOLS VOL, 2015, p. 203.

ռու մինչև եզրու բնակչության նկատմամբ միջև սահման չէ: Մեր ձգտումների
բնակչության մեկ երրորդը մոլդովացիներ են, նույն
Մոլդովայում բնակվում է մեծաքանակ ռուսական
փոքրամասնությունը¹⁷¹:

Չնայած հակամարտության դեռևս կարգավորված չլինելուն՝
այս հակամարտության պարագայում ուշագրավ է ներքին
ինտեգրացիան, Մոլդովային և Մեր ձգտումների միջև բաց
հաղորդակցությունը և փոխադարձ ռազմատենչ հռետորաբանության,
այլապես այս սերմանման բացակայությունը¹⁷²: Դահնարավոր է
դարձնում հասարակությունների ներքին ինտեգրումը և
նվազեցնում է ռազմական բախման կրկնության
հավանականությունը: Բացի այդ, հակամարտության կարգավորման
համար ընտրված է «5+2» ձևաչափը՝ ներառող Մոլդովան և
Մեր ձգտումները որպես հակամարտության կողմեր, և Ուկրաինան,
Ռուսաստանը, ԵՄ-ն որպես միջնորդներ, և ԵՄ-ն ու ԱՄՆ-ն, որպես
դիտորդներ:

Աբխազիայի և Չարավային Օսեթիայի հակամարտությունների
դիտարկումը այս համատեքստում էական արդյունավետություն
չունի, քանի որ այս հակամարտությունները ևս կարգավորման
գործընթացում առաջընթաց չեն արձանագրում, բացի այդ
Ղարաբաղյան հակամարտության հետ դրանք ունեն բավական էական
տարբերություններ: Աբխազիան, ի տարբերություն Ղարաբաղի, իր
անկախությունը հռչակել է ԽՍՀՄ փլուզումից ավելի ուշ՝ 1999թ.-
ին, չնայած որ Վրաստանի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալիս Աբխազիայում
փոքրամասնություն կազմող աբխազական համայնքը դեմ է քվեարկել
ԽՍՀՄ կազմից դուրս գալուն¹⁷³: Բացի այդ, վրաց-օսական և վրաց-
աբխազական հարաբերություններում մեծ է Ռուսաստանի դերը:

¹⁷¹ В чем причины и суть приднестровского конфликта?, 03.03.07, <http://www.nr2.ru/pmr/107536.html>

¹⁷² Bahar Çamözü, The Road to the Reintegration of Transnistria Within the Republic of Moldova, Political Center of the Former States of the Soviet Union Research Division on Moldova, Brussels, No.123, May 2016, https://www.academia.edu/25768527/The_Road_to_the_Reintegration_of_Transnistria_Within_the_Republic_of_Moldova

¹⁷³ Маркедонов С., Де-факто образования постсоветского пространства: двадцать лет государственного стороительства, Аналитические доклады Института Кавказа, N5, январь 2012/С.Маркедонов; Науч.ред.: А.Искандарян. – Ер.: Институт Кавказа, 2012, с. 58.

Յարավային Օսեթիայի պարագայում որոշիչ դերակատարում ունի ՅՆՍԻՍԱՅԻՆ Օսեթիայի էթնիկ գործոնն ու վերջինիս միավորվելու օսերի ձգտումը: Վրաց-աբխազական հակամարտության պարագայում, չնայած վրացիների հետ էթնիկ տարբերության գործոնի առկայությանը, վրացական կողմնայն բնորոշում է որպես քաղաքական հակամարտություն, իսկ աբխազական կողմը որպես էթնիկ ինքնության, ինքնորոշման հարց, սակայն վրացական կողմի հետ հակասության պատճառը տեսնում են ոչ թե էթնիկ հակասությունների, այլ քաղաքականության մեջ՝ համարելով վրացական կողմին զավթիչներ¹⁷⁴: Դրա հետ մեկտեղ, ըստ որոշ աղբյուրների, ԽՍՀՄ տարիներին աբխազ բնակչությանը վրացական իշխանությունների կողմից ենթարկվել է էթնիկ խտրական քաղաքականության¹⁷⁵: Մյուս տարբերությունն այն է, որ պատմականորեն վրաց-աբխազական, վրաց-օսական համագործակցության շրջանները քիչ չեն, ի տարբերություն հարցախա-ադրբեջանական հարաբերությունների:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի համատեքստում կարևոր է այն, որ Աբխազիան և Յարավային Օսեթիան այսօր որպես հակամարտության կողմ ներգրավված են ժնևյան բանակցություններում հետևյալ ձևաչափով՝ Վրաստան, Ռուսաստան, Աբխազիա, Յարավային Օսեթիա, ՄԱԿ, ԵՄ, ԵԱՀԿ և ԱՄՆ: Բացի այդ, Վրաստանն այսօր Աբխազիայի և Յարավային Օսեթիայի հանդեպ չի կիրառում մեկուսացման այնպիսի քաղաքականություն, ինչպիսին Ադրբեջանը կիրառում է Արցախի հանդեպ: Առկա է բավական երկար սահման ՌԴ-ի հետ:

«Ալանդյան կղզիների մոդելը» նույնպես քննարկվել է, որպես Ղարաբաղին՝ Ադրբեջանի կազմում ինքնավարություն տրամադրելու մոդել: Շվեդերով բնակեցված Ալանդյան կղզիներն Ազգերի Լիգայի որոշմամբ ինքնավարություն են ստացել Ֆինլանդիայի կազմում՝

¹⁷⁴ SÜSLÜ Zafer, Georgia at a Glance; Abkhazian and South Ossetian Conflict, IBSU International Refereed Multi-diciplinary Scientific Journal, N 1, 2006, <https://journal.ibsu.edu.ge/index.php/ibsusi/article/viewFile/10/10>

¹⁷⁵ Нодия Г., Конфликт в Абхазии: национальные проекты и политические обязательства. Грузины и абхазы. Путь к примирению. Ред. Бруно Коппитерс и др. – М.: Весь мир, 1998, с. 30.

առանց արտաքին քաղաքականության հարցերին միջամտելու իրավունքի և որպես սպառազմականացված գոտի¹⁷⁶: Այս մոդելն Ադրբեջանի կողմից դիտարկվում է որպես կիրառելի Ղարաբաղի համար: Սակայն մի քանի հանգամանքներ անհամադրելի են դարձնում այս երկու հակամարտությունների փորձը: Երբ 1918թ. հունվարի 4-ին Շվեդիայի և Ռուսաստանի որոշմամբ կղզիները փոխանցվել են Ֆինլանդիային, վերջիններս որևէ սահմանադրական մեխանիզմներ չեն ունեցել անկախապես համար, և 1919թ. անցկացված հանրաքվեն, որով բնակչության 95,48%-ը կողմ է արտահայտվել Շվեդիայի կազմում մնալուն, իրավական ուժ չի ունեցել: Մինչ դեռ, ԼՂՀ անկախությունը հռչակվել է ԽՍՀՄ օրենսդրության համաձայն և չի հակասել այդ ժամանակ գործող օրենքներին: Բացի այդ, Ալանդյան կղզիների ինքնորոշման պատճառը եղել է ազգային գիտակցությունն ու ինքնանույնացումը, ազգակիցների հետ նույն պետության կազմում գտնվելու ցանկությունը, որը պայմանավորված չի եղել նրանց հանդեպ խորական քաղաքականությամբ կամ ֆիզիկական որևէ վտանգով, ի տարբերությունն արցախյան բնակչության, որը խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից ենթարկվել է խորական և հայաթափման քաղաքականության: Պետք է հաշվի առնել նաև, որ Ալանդյան կղզիների կարգավիճակի որոշումը չի ուղեկցվել պատերազմով և փոխադարձ քսենոֆոբիայի տարածմամբ: Կարևոր գործոն է նաև Ֆինլանդիայում ժողովրդավարության մակարդակն ու շվեդական բնակչության առկայությունը, ի տարբերություն Ադրբեջանի, որն իր ժողովրդավարության մակարդակով զգալիորեն զիջում է ԼՂՀ-ին և ուղղակի սպառնալիքներ է հնչեցնում հայերի հասցեին: Այս գործոնների համադրումը աննպատակահարմար է դարձնում «Ալանդյան մոդելի» դիտարկումը որպես օրինակ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար:

¹⁷⁶ Foreign Minister Tuomioja: The Åland islands - a Finnish model for good governance, 12.3.20026 <http://formin.finland.fi/public/default.aspx?contentid=56674&contentlan=2>

Կատալոնիայի օրինակի դիտարկումը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում կարևոր է քաղաքակրթական համատեքստում, մասնավորապես, նույնիսկ անվտանգության սպառնալիքի բացակայության պայմաններում ինքնորոշման պայքարի ծավալման տեսակետից: Միաժամանակ, կատալոնական գործընթացն իր հետ մի շարք մարտահրավերներ ստեղծեց՝ ցույց տալով ԵՄ բավական անտարբեր արձագանքն ինքնորոշման պայքարի ճնշման Մադրիդի կոշտ քայլերի նկատմամբ, և կրկին օրակարգ բերելով ողջ երկրի տարածքում հանրաքվե անցկացնելու տարբերակը, որն առաջ է քաշում Մադրիդը, և որից փորձում է օգտվել նաև Ադրբեյջանը:

Այս պարագայում գործ ունենք Իսպանիայի պետական սահմանների ներքո էթնիկ միավորի կենտրոնացված բնակման հետ, և չնայած, որ հիմնականում շահարկվում են տնտեսական գործոնները, ըստ հետազոտության ունենք, էթնիկ գործոնը, եթե նույնիսկ կենտրոնական չէ, ազդեցություն կարող է ունենալ հնարավոր հանրաքվեի ժամանակ քվեարկության վրա¹⁷⁷: Չնայած նրան, որ 2013-2014թթ. Կատալոնիայի անկախացման հանրաքվեի հարցն ու շարժումն ունեն հրավիրեց ինքնորոշման իրավունքի վրա, Իսպանիայի սահմանադրական դատարանի և դրանից հետո Կատալոնիայի կառավարության որոշման արդյունքում հանրաքվե չանցկացվեց, դրա փոխարեն անցկացվեց հարցում¹⁷⁸: Անկախացման հանրաքվեն անցկացվեց 2017թ. հոկտեմբերի 1-ին՝ Մադրիդի կողմից շատ մեծ ճնշման պայմաններում՝ այդ թվում ոստիկանության կողմից բռնության կիրառման: Արդյունքում, Կատալոնիայի խորհրդարանն անկախության հռչակեց, սակայն Իսպանիայի կառավարությունը կիրառեց Սահմանադրության 155-րդ հոդվածը և ուղղակի կառավարում մտցրեց Կատալոնիայի նկատմամբ, իսկ Իսպանիայի

¹⁷⁷ Jordi Muñoz and Raül Tormos, Economic considerations play only a limited role in explaining support for Catalan independence, but could be crucial in deciding the final outcome, Democratic Audit UK, 12/01/2015, <https://eprints.lse.ac.uk/62447/1/democraticaudit.com-Economic%20considerations%20play%20only%20a%20limited%20role%20in%20explaining%20support%20for%20Catalonian%20independence%20bu.pdf>

¹⁷⁸ Toni Rodon and Xavier Cuadras Morató, Catalonia's quest for independence: Plain dead or alive and kicking?, October 29, 2015, <http://www.the-plot.org/2015/10/29/catalonias-quest-for-independence-plain-dead-or-alive-and-kicking/>

Գերագույն դատարանն ընդունեց Կատալոնիայի խորհրդարանի խոսնակի և այլ ղեկավարների նկատմամբ դատական հայցը, ովքեր մեղադրվում են ապստամբության, հեղաշրջման փորձի և վատնումների մեջ: Կատալոնիայի գործընթացը կարևոր է դիտարկել մի կողմից որպես ինքնորոշման պայքարի առավել թարմ օրինակ, մյուս կողմից՝ որպես միևնույն քաղաքակրթության ներսում գարգացող բավական սուր գործընթաց, որն հսպանիայի որդեգրած քաղաքականության տեսանկյունից որոշակի հակասության մեջ է մտնում եվրոպական արժեհամակարգի հետ:

Սաար երկրամասի շուրջ \$րանս-գերմանական համաձայնության դիտարկումը կարևոր է տվյալ միավորի բնակչության կողմից հանրաքվեի միջոցով սեփական ճակատագիրը որոշելու տեսանկյունից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո 1945-1955թթ. համադաշնային ուժերի կողմից օկուպացիայի ենթարկվելուց հետո որոշում է կայացվել Սաարի երկրամասին անկախություն տրամադրել եվրոպական ստատուտի ներքո, մինչ դեռ Սաարի բնակչությունը դեմ է քվեարկել և արտահայտվել է Գերմանիայի համադաշնային Հանրապետության կազմի մեջ մտնելու օգտին¹⁷⁹: Անց է կացվել երկրորդ հանրաքվեն, որի արդյունքում Սաարը միացել է Գերմանիային: Այս հիմնահարցի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ Սաարը \$րանսիական տիրապետության տարիներին տնտեսական սերտ կապեր էր հաստատել \$րանսիայի հետև գործում էր, որպես դե-ֆակտո անկախ պետություն, սակայն էթնիկ և այլ գործոններից ելնելով բնակչությունը քվեարկեց ի օգուտ Գերմանիայի հետ միավորման: Փաստացի, չնայած Սաարի երկրամասի՝ \$րանսիայի հետ ունեցած սերտ տնտեսական կապերին և հարաբերություններին¹⁸⁰ միավորի կարգավիճակի որոշման գործընթացում բնակչության

¹⁷⁹ Results of the referendum on the Saar Statute, 23 October 1955, http://www.cvce.eu/obj/results_of_the_referendum_on_the_saar_statute_23_october_1955-en-26859090-52d0-4850-9019-92748182042a.html

¹⁸⁰ Hurst Hannum, *Autonomy, Sovereignty, and Self-Determination: The Accommodation of conflicting rights*. University of Pennsylvania Press, 1996, p. 399.

մեծամասնության կողմից նախապատվությունը տրվեց էթնիկ ինքնության գործոնին:

Հարավային Սուդանը պետք է դիտարկել, որպես երկարատև պատերազմներից հետո խաղաղ քաղաքական կարգավորման օրինակ: Էթնիկ և կրոնական միջարք պատճառներ ունեցող հակամարտության սրման պատճառ են դարձել քրիստոնեական հարավի նկատմամբ իսլամական հյուսիսի ճնշումները, շարիաթի օրենքների տարածումը ողջ երկրի տարածքում¹⁸¹: Երկու անգամ փորձ է արվել հակամարտությանը խաղաղ լուծում տալ: Առաջին խաղաղության պայմանագիրը կնքվել է 1971թ.-ին Ադիս-Աբեբայում՝ Եթովպիայի և սսվեց աֆրիկյան երկրների միջնորդությամբ: Այն նախատեսում էր երեք շրջանների ինքնավարություն՝ ընդհանուր տարածաշրջանային ռեգիոնալ ղեկավարությամբ: 1983թ.-ին այն բանից հետո, երբ կառավարությունը քրիստոնեական-հեթանոսական հարավում սահմանել է շարիաթի օրենքների վրահիմնված դատական համակարգ, նոր հակամարտություն է ծավալվել: Սկիզբ առած երկրորդ քաղաքացիական պատերազմը ձախողել է կարգավորման փորձը: Արդյունքում, 2002թ.-ին Սուդանի կառավարությունն ուղիղ բանակցություններ է սկսել ազատագրական ուժերի հետ, և 2005թ.-ի հունվարի 9-ին կնքվել է խաղաղության պայմանագիր¹⁸²: Այդ պայմանագրի պայմաններով հուլիս ամսից Հարավային Սուդանը վեց տարով ստացել է ինքնավարություն, ինչից հետո 2011թ.-ին անցկացվել է հանրաքվե Հարավային Սուդանի անկախության վերաբերյալ, որի արդյունքներով Հարավային Սուդանը որպես անկախ պետություն անդամակցել է ՄԱԿ-ին:

Ղարաբաղյան հակամարտությունից Հարավային Սուդանի հիմնական տարբերությունը Սուդանի հակամարտության կրոնական բնույթն է: Միաժամանակ, հատկապես կողմերի հաշտեցման առաջին՝ 1971թ.-ի օրինակը ցույց է տալիս, որ կողմերի միջև թշնամանքի,

¹⁸¹ Ghaffar Abdel, Ahmad Mohamed, Sudan Peace Agreements:, Current Challenges and Future Prospects SWP2010 – 3, <https://www.cmi.no/publications/file/3645-sudan-peace-agreements.pdf>

¹⁸² Comprehensive Peace Agreement Between The Government of the Republic of The Sudan and The Sudan People's Liberation Movement, January 9, 2005, <https://unmis.unmissions.org/Portals/UNMIS/Documents/General/cpa-en.pdf>

սկզբունքային հակասությունների պարագայում սահմանափակ ինքնավարության տրամադրման միջոցով կարգավորման փորձերը ոչ միշտ են արդյունավետ և երկարաժամկետ: Բացի այդ, վերջնական կարգավորման գլխավոր գրավականներից մեկը եղել են Հարավային Սուդանի հետուղղակի բանակցությունները:

Երիթրեայի օրինակն ուշագրավ է անկախացման հանրաքվեի անցկացման և ՄԱԿ կողմից վերջինիս արդյունքների ճանաչման տեսակետից: Երիթրեան իտալական գաղութատիրության լուծարումից հետո 1950թ.-ին ՄԱԿ որոշմամբ մտել է Եթովպիայի հետ համադաշնության կազմի մեջ: Սակայն Երիթրեայում ծագած անկախացման պայքարը հանգեցրել է Եթովպիայի հետ պատերազմի: Կողմերի միջև հակասություններ առաջացրել և՛ տարածքային հարցերը, և՛ Եթովպիացիների կողմից խտրականությունն Երիթրեացիների նկատմամբ¹⁸³: Հակամարտությունը լուծում է ստացել Եթովպիայի պարտությունից հետո, երբ 1993թ.-ին Երիթրեայում անցկացվել է հանրաքվե, որի արդյունքները ճանաչվել են ՄԱԿ-ի կողմից, և Երիթրեան դարձել է ՄԱԿ անդամ պետություն: Հետագայում, 2000թ.-ին Եթովպիայի և Երիթրեայի միջև Ալժիրում կնքվել է համաձայնագիր, որի համաձայն ստեղծված հանձնաժողովը որոշել է երկու պետությունների սահմանները¹⁸⁴: Չնայած կողմերի միջև պահպանվող հակասություններին՝ Երիթրեան օրինակ է միջազգային հանրության ակտիվ դերակատարության, որն ինքնորոշման իրավունքի իրացումը դիտարկել է որպես \$իզիկական գոյության խնդիր, ընդունել է երկարաժամկետ խաղաղության հաստատման համար ինքնորոշման իրավունքի իրացման կարևորությունը և ճանաչել հանրաքվեի արդյունքները:

Չնայած այս ենթազլխում ներկայացված հակամարտությունների սահմանափակ ընդհանրություններին Ղարաբաղյան հակամարտության հետ՝ դրանց ուսումնասիրությունը

¹⁸³ The conflict between Ethiopia and Eritrea. Proceedings of scholarly conference on the Ethiopia-Eritrea conflict. Held in Oslo, Norway, 6-7 July 2006.

¹⁸⁴ Выступление Эритреи на 58-й сессии ГА ООН (общие прения), <http://www.un.org/ru/ga/58/plenary/eritrea.pdf>

հնարավորություն է տալ իս առանձնացնել կարգավորմանը նպաստած կամ խոչընդոտող հիմնական գործոնները, որոնք ցույց են տալ իս միջազգային միտումները: Հաջորդ ենթագլխում առավել խորքային ներկայացված են այն հակամարտությունները, որոնց փորձը կարող է կիրառելի լինել Ղարաբաղյան հակամարտության համատեքստում:

3.2. Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը. առանձնացված օրինակներ

Սույն ենթագլխում ներկայացված է ընտրված առանձին հակամարտությունների կարգավորման փորձը, բախումնային դրույթների հաղթահարմանն ուղղված ջանքերը և դրանց արդյունավետությանը: Դիտարկվել են հակամարտության բնույթն ու պատճառները, հիմնական խնդիրները, որոնք ուղղակի կամ անուղղակի առկա են նաև Ղարաբաղյան հակամարտության պարագայում՝ կարգավիճակի հարցը, կարգավորման դիտարկված տարբերակները, տարածքային խնդիրներն ու դրանց լուծման կիրառված եղանակները, կարգավորման մյուս բաղադրիչները՝ փախտականների վերադարձ, խաղաղապահ ուժերի տեղակայում, վստահության միջոցներ և այլն:

Դիտարկման համար ընտրվել են Կիպրոսի հակամարտությունը, որպես Ղարաբաղյան հակամարտությանը մոդելային տեսակետից առավել մոտ հակամարտություն, Կոսովոյի հակամարտությունը, որպես մոդելային նմանություն ունեցող և միջազգային ճանաչում ստացած ինքնորոշման օրինակ, Հյուսիսային Իռլանդիայի օրինակը, որպես ռազմական փուլից հետո բանակցային կարգավորման օրինակ՝ ինքնավարության տրամադրման մոդելով, և Շոտլանդիայի օրինակը, որպես հանրաքվեի միջոցով կարգավիճակի որոշման ոչ ի օգուտ անկախացման, ինչպես նաև Արևելյան Թիմորի օրինակը, որպես ֆիզիկական գոյության պահպանման համար անկախացման օրինակ:

Կիպրոսի հակամարտությունն Էթնիկ բնույթի հիմնախնդիր է, որը ծագել է դեռևս 20-րդ դարի 20-50-ական թվականներին՝ Մեծ Բրիտանիայի գաղութատիրության դեմ պայքարի տարիներին, երբ կղզում արդեն բավական մեծ թիվ են կազմել Էթնիկ թուրքերը: Դեռևս այդ շրջանում կղզու հունական բնակչության կողմից մշակվել է Էնոզիսը¹⁸⁵ (Յունաստանին՝ պատմական հայրենիքին, միանալու ծրագիրը), ինչին ի պատասխան Մեծ Բրիտանիան աջակցել է Կիպրոսի թուրքական համայնքի մոբիլիզացմանը: 1957թ.-ին թուրք-կիպրացիները և թուրքիան մշակել են Էնոզիսի հակակշիռը՝ թաքսիմը (կղզու բաժանում թուրքական և հունական մասերի՝ դրանց միացմամբ համապատասխանաբար թուրքիային և Յունաստանին): Արդյունքում, որպես փոխզիջումային տարբերակ ընդունվել է Կիպրոսին անկախության շնորհումը՝ Յունաստանի, Մեծ Բրիտանիայի և թուրքիայի երաշխավորմամբ: Յետագայում սրվել են հակասությունները Կիպրոսի թուրքական և հունական համայնքների միջև, թուրք-կիպրացիները կորցրել են իրենց տեղերը կառավարությունում, 1963-ին Կիպրոսի գործող նախագահն առաջարկել է կղզու թուրքական հատվածի կարգավիճակն իջեցնել մինչև ազգային փոքրամասնություն՝ առանց հատուկ իրավունքների, հույները սկսել են սահմանափակել ռազմավարական կարևորության ապրանքների հասանելիությունը թուրքաբնակ վայրեր:

1974թ.-ին Կիպրոսում հեղափոխությունից հետո իշխանության է եկել Նիկոս Սամխոնը, ով Կիպրոսը Յունաստանին միացնելու կողմնակից էր: Իրավիճակը սրվել է, և թուրքիան գորք է մտցրել Յունսիսային Կիպրոս՝ գրավելով կղզու 37%-ը: Թուրքական կողմի (ներառյալ՝ թուրք-կիպրացիներին) զոհերի թիվը գերազանցել է 800-ը, ևս 2 հազ. հոգի անհայտ կորել է, հունական և կիպրական կողմերի կորուստը 4500-6000 է¹⁸⁶: 1975թ.-ին Վիենայում կնքված համաձայնությանամբ 140-160 հազ. հույն-կիպրացիներ հեռացել են

¹⁸⁵ Точки Натали, Ковзиридзе Тамара, Кипр. Европеизация и разрешение конфликтов: конкретные исследования европейской периферии, Весь мир, 2005, с. 74.

¹⁸⁶ Cyprus, a country study, Foreign Area Studies, American University, U.S. Govt. Print. Off., Cyprus, 1980, p. 306.

Կիպրոսի ՅՆՈԼՍԻՍԻԳ կոզու Յարավ, 60 հազ. թուրք-կիպրացիներ՝ Յարավից ՅՆՈԼՍԻՍ¹⁸⁷: 1983թ.-ին հռչակվել է ՅՆՈԼՍԻՍային Կիպրոսի թուրքական Յանրապետությունը, որը ճանաչվել է միայն թուրքիայի կողմից:

Միջնորդների կողմից Կիպրական հիմնախնդրի կարգավորման հիմքում դրվել է երկու հավասար համայնքների սկզբունքով ֆեդերատիվ հանրապետության ստեղծման գաղափարը: Սակայն հիմնական բախումնային դրույթը պետության կառավարման համակարգի մեջ էր, հույն-կիպրացիները ցանկանում էին իրենց միջազգայնորեն ճանաչված պետության իշխանությունը տարածել նաև թուրքական Կիպրոսի վրա, չէին ընդունում պետական կառավարման մեջ հունական և թուրքական բնակչության հավասար ներկայացվածության սկզբունքը՝ պահանջելով բաշխում՝ ըստ բնակչության համամասնության: Թուրք-կիպրացիները ձգտում էին քաղաքականապես հավասար ֆեդերատիվ միավորներով պետության, որի կենտրոնական իշխանությունները կձևավորվեին հավասար բաշխման սկզբունքով¹⁸⁸:

1977թ. պաշտոնական Կիպրոսի և թուրք-կիպրական համայնքի ղեկավարների հանդիպման ժամանակ համաձայնություն է ձեռք բերվել¹⁸⁹, որ Կիպրոսը կդառնա անկախ, երկհամայնք ֆեդերատիվ հանրապետություն և համայնքներից յուրաքանչյուրը վերահսկի իր տարածքը: Այս հիմքի վրա 1979թ. մեկնարկած բանակցություններում, սակայն, չի հաջողվել համաձայնեցնել երկհամայնքության հայեցակարգը:

1992թթ. ՄԱԿ միջնորդների կողմից առաջարկվել է «Գաղափարների ամբողջություն» անվանումը կրող փաթեթը¹⁹⁰, որը նախատեսում էր քաղաքականապես հավասար երկու համայնքներով ֆեդերատիվ երկգոտի հանրապետության ձևավորում, որն ունենալ ու

¹⁸⁷ Точки Натали, Ковзиридзе Тамара, Кипр. Европеизация и разрешение конфликтов: конкретные исследования европейской периферии, Весь мир, 2005, с. 79.

¹⁸⁸ Migdalovitz Carol, Cyprus: Status of U.N. Negotiations and Related Issues, CRS report for Congress, July 20 2007, <http://www.fas.org/sgp/crs/row/RL33497.pdf>

¹⁸⁹ Framework Agreement between Makarios & Denktash, <http://www.cyprus-conflict.net/makarios-denktash%20talks.%2077.html>

¹⁹⁰ Boutros Ghali's "Set of Ideas", <http://www.argyrosargyrou.fsnet.co.uk/Ideas.htm>

Էր միասնական միջազգային ճանաչում և սուվերենությունը և բաշխում օրենսդիր մարմնում: Թուրքական Կիպրոսի ներկայացուցիչները համաձայնություն չտվեցին տարածքային ինդրի առաջարկված լուծմանը և տարբերակը հանվեց քննարկումից:

Բանակցությունները վերսկսվեցին միայն 2001-ին՝ Կիպրոսի՝ ԵՄ անդամակցության բանակցությունների մեկնարկից հետո, երբ կողմերը համաձայնեցին առանց նախապայմանների բանակցությունների: ՄԱԿ Գլխավոր քարտուղարի ներկայացրած մանրամասնեցված Անանի նախագիծը նախատեսում էր նախքան ԵՄ կազմ Կիպրոսն ընդունելու վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը հնարավորություն ընձեռել կղզու և համաձայնության գալ և միասնական պետության տեսքով անդամակցել ԵՄ-ին:¹⁹¹

Անանի նախագիծը մի քանի անգամ բարեփոխվել է, վերջնական տարբերակը ներկայացվել է 2004թ. մարտի 24-ին¹⁹²: Երկու կողմերն էլ ունեին իրենց դժգոհությունը. ըստ հունական կողմի, վերջին փուլում զիջումներ շատ են արվել՝ բավարարելու թուրքական կողմի պահանջները: Մասնավորապես՝ առաջարկվում էր ձևավորել կոնֆեդերատիվ «Միավորված Կիպրոսի Հանրապետություն»՝ կազմված երկու հավասարազոր միավորներից՝ հունական և թուրքական: Սա դիտարկվում էր, որպես թուրքական կողմին արված զգալի զիջում՝ նախագիծը հանրաքվեի դնելու համար¹⁹³: Բացի այդ, պահպանվելու էր նաև կղզում Թուրքիայի ռազմական ներկայությունը: Հունական կողմի նախագահը, ով անկախ թուրքական պետության կողմնակից էր, ևս դեմ էր նախագծին՝ համարելով, որ կենտրոնական իշխանության ինստիտուտները չափազանց մեծ իշխանություն ունեն:

ԵՄ-ին Կիպրոսի միացումից առաջ նախագիծը դրվում է հանրաքվեի միավորային սկզբունքով՝ առանձին կղզու հունական,

¹⁹¹ Бредихин О.. Кипрский конфликт: генезис и основные этапы развития, Москва, 2006, <http://knigi.link/vsemirnaya-istoriya/faktor-evrosoyuza-plan-9890.html>

¹⁹² http://www.hri.org/docs/annan/Annan_Plan_Text.html

¹⁹³ Сафрастьян Рубен, Турция и Кипрская проблема: эпизоды «Большой игры», «21-й ВЕК», № 2, 2005г, с. 54-66.

և առանձին՝ թուրքական հատվածում: Յուլի-կիսարացիների 76%-ը մերժել է Անանի նախագիծը, իսկ թուրք-կիսարացիների 65%-ը կողմ է արտահայտվել: Արդյունքում, Կիսրոսի Յանրապետության անդամակցել է ԵՄ-ին՝ դե-ֆակտո վերահսկողության չունենալով Կիսրոսի կղզու թուրքական հատվածի վրա:

2006թ.-ից հուլիսի 8-ին Կիսրոսի Յանրապետության նախագահի և Յուլիսիսային Կիսրոսի ղեկավարի կողմից համաձայնեցվել են այն սկզբունքները, որոնց հիման վրա պետք է մեկնարկելն քանակցությանները: Մասնավորապես նախատեսվում էր քանակցությաններ վարել երկհամայնք, երկգոտի ֆեդերացիա ստեղծելու շուրջ, հասնել ինդրի համապարփակ կարգավորման, ստեղծվել համապատասխան աշխատանքային խմբեր՝ մարդկանց ամենօրյա կյանքին առնչվող հարցերն ու կարգավորման բովանդակային դրույթները քննարկելու համար¹⁹⁴: Սակայն աշխատանքային խմբեր այդպես էլ չեն ստեղծվել և քանակցությաններում առաջընթաց չի գրանցվել:

2014թ. փետրվարի 11-ին քանակցությանները վերսկսվել են: Կիսրոսի Յանրապետության և Կիսրոսի թուրքական չճանաչված Յանրապետության ղեկավարների կողմից ընդունվել է համատեղ հայտարարություն, որով սկիզբ է դրվել նոր քանակցային գործընթացի: Նրանք ամրագրել են դաշնային միասնական հանրապետության ձևավորման մտադրությունը՝ երկհամայնք, քաղաքական հավասարություն ենթադրող իրավահավասար երկգոտի դաշնային կարգով: Դաշնային կառավարության լիազորությունները նախնական փուլում սահմանված չէ, դրանք պետք է որոշվեն Սահմանադրությամբ: Այսինքն, ի տարբերություն Անանի պլանի, որտեղ ամրագրված էին բոլոր մանրամասները, այդ թվում՝ երկու ֆեդերատիվ միավորների և դաշնային կառավարության լիազորությունները, այդ փաստաթղթում ամրագրված են միայն հիմնական սկզբունքները: Յամաձայնության

¹⁹⁴ The US House of Representatives adopted a resolution for the implementation of the 8th July Agreement, HRES 405 IH, 10/10/2007, <http://www.moi.gov.cy/moi/pio/pio.nsf/6645bc8e70e73e2cc2257076004d01c1/ee5d87c62a617c28c2257370002ef637?OpenDocument&print>

ձեռք բերումից հետո փաստաթուղթը պետք է կղզու երկու հատվածներում դրվի առանձին-առանձին հանրաքվեի: Ենթադրվում էր ավարտին հասցնել 2016թ. նոյեմբերի 22-ին՝ սակայն կողմերին չի հաջողվել համաձայնության գալ տարածքների և փախստականների հարցի շուրջ¹⁹⁵:

Տարածքային խնդիրները վերաբերում են հուլյն-կիպրական և թուրք-կիպրական կառավարման ներքո գտնվող ադմինիստրատիվ տարածքներին, այդ թվում՝ ափամերձ գոտուն:

Կարգավորման տարբեր փուլերում տարածքների հարցին տարբեր մոտեցում է ցուցաբերվել: 1977թ.-ին առաջարկվել է մի քարտեզ, որով Կիպրոսի կղզու 75 տոկոսը պետք է գտնվեր հուլյն-կիպրացիների կառավարման ներքո, մինչդեռ այսօր թուրքական կողմի իրավասության տակ է գտնվում կղզու 37 տոկոսը: Թուրքական Կիպրոսն այս առաջարկը չի ընդունել¹⁹⁶: 1992թ. ՄԱԿ Գլխավոր քարտուղարի առաջարկը ենթադրել է Վարոշա նախկին տուրիստական կենտրոնի և 30 գյուղերի վերադարձ հունական կառավարման ներքո: Մորֆու քաղաքը ևս ենթադրվել է վերադարձնել հունական Կիպրոսին՝ դրա դիմաց թուրք-կիպրացիներին տրամադրելով աջակցություն և փոխհատուցում: Դրա հիման վրա մշակվել է քարտեզ, որն ըստ միջնորդների պատրաստ է եղել քննարկման համար, սակայն մերժվել է թուրք-կիպրացիների կողմից¹⁹⁷: Անանի պլանով թուրք-կիպրական հատվածը նախատեսվում էր նվազեցնել մինչև 28,5 տոկոս: Հետագայում Անանի վերանայված պլանով թուրք-կիպրացիներին թույլատրվում է պահպանել Կարպասի թերակղզին, կղզու թուրքական հատվածի տարածքը նվազեցվում է մինչև 28,2 տոկոս: Նույն հարցն առանձին քննարկվել է նաև 2014թ.-ին մեկնարկած բանակցությունների փուլում: 2016թ. հունվարին տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Թուրք-կիպրական կողմը պնդում է, որ միասնական Կիպրոսի իր մասը պետք է զբաղեցնի կղզու

¹⁹⁵ <https://ria.ru/world/20161122/1481872571.html>

¹⁹⁶ <https://cscubb.ro/cop/cyprus-government-denies-submitting-territory-map/#.WFBLh1yYKnY>

¹⁹⁷ Migdalovitz Carol, Cyprus: Status of U.N. Negotiations, CRS Issue Brief for Congress, Congressional Research Service, May 19, 2005, <https://fas.org/sgp/crs/mideast/IB89140.pdf>

տարածքի 29.2 տոկոսը, հուլյն-կիպրական կողմը պնդում է, որ թուրքական կողմին պետք է տրվի տարածքի 28.2 տոկոսը: Այս հարցը բանակցությունների հիմնական խնդիրներից մեկն են եղել և կողմերն իրենց կազմած քարտեզները հանձնել են ընդհանուր փորձագիտական խմբին, որը պետք է մշակի իր առաջարկը: Չարցի շուրջ դեռևս համաձայնության հասնել չի հաջողվել:

Տարածքային վեճի հետ կապված մյուս խնդիրը՝ այն անվտանգության խնդիրների հետ կապելու թուրք-կիպրական կողմի ձգտումն է՝ Թուրքիայի մասնակցությամբ քննարկման դնելու նպատակով: Չուլյն-կիպրական կողմի համար նման մոտեցումն անընդունելի է: Թուրքական կողմը բարձրացնում է նաև Կիպրոսի Չանրապետությանը վերադարձվող տարածքներում այսօր բնակվող թուրքերին փոխատուցման տրամադրման հարցը: Չուլյնական կողմը տարածքային խնդիրները կապում է կառավարման և սեփականության հարցերի հետ:

Փախտականների վերաբերող հակասությունները կապված են թուրք-կիպրական ադմինիստրատիվ միավորներում հուլյն-կիպրացիների թվային գերակշռում թուլլ չտալու ձգտման հետ: Թուրք-կիպրական կողմի պահանջը կայանում է նրանում, որ կղզում վերամիավորումից հետո կղզու մի հատվածի բնակիչները, որոնք կտեղափոխվեն մյուս հատված, 20 տոկոսից ավել չկազմեն այդ միավորում: Չյուլսիսային Կիպրոսի իշխանությունների նպատակն է պահպանել թուրք-կիպրական մեծամասնությունն ու ադմինիստրատիվ կառավարումը կղզու իրենց հատվածում:

Չուլյն-կիպրական կողմը պնդում է 100 հազար փախտականների վերադարձի վրա՝ նրանց կորցրած գույքի վերադարձմամբ: Սակայն դրա հետ կապված է ևս մեկ բախումնային դրույթ: Այն է իրենց բնակության նախկին վայրերը վերադարձող հուլյն-կիպրացիների տներում այսօր բնակվող թուրքերի տեղահանման և նրանց փոխատուցման ապահովման հարցը:

Անանի ծրագրի հիմքում դրվում էր հետևյալ բանաձևը՝ «որքան հնարավոր է քիչ տեղահանել թուրք-կիպրացիներին և որքան

հնարավոր է շատ բնակեցնել հոլլանդացիներին»: Սահմանվում է ընդհանուր քաղաքացիությունը՝ որոշակի սահմանափակումներով ըստ բնակության վայրի: Ծրագրի վերանայված տարբերակում սահմանվում է վերադարձի իրավունք ունեցող փախստականների թիվը՝ 92 հազար, բայց սահմանափակմամբ, որ մոտակա 15 տարիների ընթացքում այն չպետք է գերազանցի այդ տարածաշրջանի բնակչության 21 տոկոսը: Փախստականների հարցը ևս 2014թ.-ից մեկնարկած բանակցություններում անհամաձայնության հիմնական խնդիրներից մեկն է:

Թուրքիայի գործերի դուրսբերման հարցը կարգավորման մյուս կարևոր բաղադրիչ է, և դրանց առկայությունը կղզու թուրք-կիպրական կողմի համար դիտարկվում է որպես անվտանգության երաշխիք:

1979թ.-ին բանակցություններում դիտարկվել է կղզու ապառազմականացման տարբերակը: 1984թ.-ին մեկնարկած բանակցությունների ժամանակ դիտարկվել է օտար գործերի դուրսբերման հարցը: 1992թ.-ին ՄԱԿ Գլխավոր քարտուղարի կողմից առաջարկվել է կարգավորման տարբերակ, որը նույնպես ենթադրել է թուրքական գործերի դուրսբերում: Անանի պլանի վերջին տարբերակում ամրագրվում է, որ Հունաստանի և Թուրքիայի գործերը կղզու տարածքում չեն կարող գերազանցել քառանիշ թիվը, Կիպրոսը ապառազմականացվում է: Այժմ բանակցվող առաջարկը ենթադրում է Թուրքիայի ռազմական ուժերի փոխարինում միջազգային ուժերով: 2002թ. առաջարկված Անանի պլանով ևս նախատեսվում էր ՄԱԿ խաղաղապահների տեղակայում այնքան ժամանակ, քանի դեռ միացյալ պետությունը տեսնում է դրա անհրաժեշտությունը:

Կարգավորման բանակցությունների հարակից կարևոր բաղադրիչ են **վստահության միջոցները**: Բանակցությունների ներկայիս փուլում որպես վստահության միջոցներ կողմերի միջև համաձայնությունն է ձեռք բերվել վիզային պահանջների չեղարկման վերաբերյալ: Կիպրոսի Հանրապետության

իշխանություններն, իրենց հերթին, թուրքական ղեկավարությանն են տրամադրել այժմյան ՅՆՍԻՍային Կիպրոսի տարածքի մինչև 1974թ.-ի ականապատման քարտեզները¹⁹⁸:

Կարևոր է նաև Երջանի օդանավակայանի հարցը: 1975թ-ի փետրվարից կղզու և մայրցամաքի միջև կապը պահպանելու նպատակով այս սկսել է շահագործվել՝ հիմնվելով այն փաստարկի վրա, որ «կղզու հարավային հատվածը հրաժարվում է ծառայություններ մատուցել Կանաչ գոտուց հյուսիս ընկած ազգաբնակչությանը»: Օդանավակայանի շահագործումն իրականացվում է ICAO-ի չափորոշիչներին համապատասխան, թեև ICAO-ն այն չի ճանաչում որպես Կիպրոսի տարածքում օրինական գրանցված օդանավակայան: Կիպրոսի թուրքական հատվածի և Թուրքիայի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի վարչությունների միջև կնքված պայմանագիրը համարվում է փոխգործակցությունը կարգավորող հիմնական փաստաթուղթը:

Կիպրոսի հակամարտության կարգավորման գործընթացում յուրահատուկ **դեր ունի նաև ԵՄ-ն** և ՅՆՍԻՍային Կիպրոսի հանդեպ նրա քաղաքականությունը: Հաշվի առնելով կղզու վերամիավորման հեռանկարը՝ ԵՄ-ն մի շարք պարտավորություններ է ստանձնել Կիպրոսի նկատմամբ: Այդ պարտավորությունների իրականացման համար ստեղծվել է Նպատակային խումբ Թուրքական Կիպրական համայնքի համար, որը ճրագրային Աջակցության Գրասենյակ (Programme Support Office (EUPSO)) ունի Նիկոսիայի հյուսիսային հատվածում:

2006 թ.-ին ԵՄ-ն հաստատել է Օգնության ծրագիրը (aid regulation 389/2006) թուրք-կիպրական համայնքի մեկուսացումը վերացնելու և վերամիավորմանը օգնելու նպատակով: Այն ուղղված է թուրք-կիպրական համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, թուրք-կիպրական համայնքը ԵՄ-ին

¹⁹⁸ Cyprus peace talks resume with confidence-building measures, 15.05.2015 <http://www.euronews.com/2015/05/15/cyprus-peace-talks-resume-with-confidence-building-measures>

մոտեցնել ունենալու և ԵՄ իրավական դաշտի մոտարկմանը¹⁹⁹: Հնգամյա ծրագրի համար հատկացվել է 259 մլն եվրո, 2011 թ.-ից այն շարունակվում է տարեկան 30 մլն եվրո հատկացումներով:

1974 թ.-ից «Կանաչ Գիծը»²⁰⁰ բաժանում է կղզու երկու հատվածները: ԵՄ «Կանաչ Գիծ» Կանոնակարգը սահմանում է այն պայմանները, որոնց ներքո մարդիկ և ապրանքները կարող են հատել այս գիծը, որը չի հանդիսանում ԵՄ արտաքին սահման: Գլխավոր գործնական արդյունքն այն է, որ հյուսիսային շրջանները դուրս են եկել ԵՄ մաքսային և ֆիսկալ տարածքից, բայց սաչի ազդում թուրք-կիպրացիների՝ իբրև ԵՄ քաղաքացիների իրավունքների վրա:

Կարևոր է հաշվի առնել նաև տարածաշրջանի հիմնական դերակատարների և գործընթացի վրա ուղղակի ազդեցություն ունեցող կողմերի շահերը: Կիպրոսի տնտեսական վիճակի բարելավումն ու կղզու նկատմամբ վերահսկողության վերականգնումը, որպես Կիպրոսի Հանրապետության դաշնակից, համահունչ է Հունաստանի շահերին: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա խնդրի կարգավորումը Թուրքիայի համար կարող է ազդեցության գոտի ստեղծել անմիջականորեն ԵՄ տարածքում: Մյուս կողմից, Թուրքիան, վախենալով իր ազդեցության թուլացումից, բավական կոշտ դիրքորոշում է ցուցաբերում թուրքական գործերի դուրսբերման հարցում՝ խոչընդոտելով հակամարտության կարգավորմանը:

Չնայած Կիպրոսի հակամարտության վերջնական կարգավորման հասնել դեռևս չի հաջողվել, այս հակամարտության ուսումնասիրումը կարևոր է երկհամայնք պետության ձևավորման միջոցով ինքնորոշման խնդրի կարգավորման համատեքստում: Կարևոր է նաև երկու կողմերի շարժառիթների և մոտեցումների ուսումնասիրումը:

¹⁹⁹ http://ec.europa.eu/enlargement/tenders/aid-programme-tcc/index_en.htm

²⁰⁰ 2004 թ.-ի ապրիլի 29-ին ԵՄ Խորհուրդը ընդունեց մի Կանոնակարգ (866/2004): Կանոնակարգը սահմանում է այն պայմանները, որոնց ներքո ԵՄ օրենքի դրույթները պետք է տարածվեն այն գծում, որտեղ Կիպրոսի Հանրապետությունն իրականացնում է արդյունավետ վերահսկողություն և որտեղ չի իրականացնում (կանաչ գիծ): Տես՝ http://europa.eu/rapid/press-release_IP-05-197_en.htm?locale=en

Կոսովոյի հիմնախնդիրը նույնպես էթնոքաղաքական հակամարտության է, որը կարևոր է դիտարկել որպես ինքնորոշվող միավորի միջազգային ճանաչման օրինակ, որում մեծ դերակատարում է ունեցել միջազգային հանրությանը՝ ընդհուպ մինչև պատերազմում ուղղակի ներգրավում:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Յարավսլավիայի կազմում գտնվող Կոսովոն բաժանվել է երեք շրջանների և անցել իտալացիների վերահսկողության տակ: Պատերազմի ավարտից հետո 1945թ.-ին Կոսովոն Յարավսլավիայի ազգային ֆեդերատիվ հանրապետության կազմում ինքնավար մարզի կարգավիճակով մտցվել է Սերբիայի կազմի մեջ: 1974թ. Յարավսլավիայի Սահմանադրությանը, Կոսովոյին տրվել է հանրապետության կարգավիճակ՝ առանց անկախանալու իրավունքի: Ի պատասխան Կոսովոյում սկսված անջատողական շարժումների՝ 1980թ.-ին Սերբիան գրկել է Կոսովոյին ինքնավար կարգավիճակից²⁰¹: 1990թ. սեպտեմբերի 28-ին ընդունված Սերբիայի նոր Սահմանադրությանը Կոսովոյին թույլատրվել է ունենալ միայն տարածքային և մշակութային ինքնավարություն²⁰²: Յարավսլավիայի խորհրդային հանրապետության ներքո ունեցած լիազորությունների համեմատ, Սերբիայի կազմում Կոսովոյի ինքնավարության լիազորությունները խիստ կրճատվել են: Կոսովոյի ալբանացիները չեն ընդունել այդ սահմանադրությունը, և զուգահեռաբար սկսել են ձևավորել իշխանության ալբանական կառույցները:

1991թ.-ի սեպտեմբերի 22-ին հռչակվել է Կոսովոյի անկախությունը, որը ճանաչել է միայն Ալբանիան: 1998թ.-ին Կոսովոյում պատերազմ է ծավալվել: ՆԱՏՕ-ն որոշում է կայացրել միջամտել հակամարտությանը, սերբական իշխանություններին մեղադրել են էթնիկ զտումներ իրականացնելու մեջ: 1999թ. մարտի 24-ին մեկնարկել է ՆԱՏՕ-ի «Միութենական ուժ» օպերացիան,

²⁰¹ Bartram S. Brown, Human Rights, Sovereignty, and the Final Status of Kosovo,80 Chicago-Kent Law Review, 2005, p.263. .,p. 236-271.

²⁰² <http://ria.ru/spravka/20130122/919218079.html>

ռմբակոծվել են սերբական քաղաքներ և ռազմական օբյեկտներ: Արդյունքում սերբական ուժերը դուրս են մղվել Կոսովոյից, Կոսովո են մտնում ՆԱՏՕ-ի ուժերը՝ KFOR(Kosovo Force), և Կոսովոն անցել է ՄԱԿ-ի հովանու տակ:

Պատերազմական գործողություններին զուգահեռ 1999թ. ՆԱՏՕ-ի կողմից կողմերին առաջարկվել է Ռամբուլյեի համաձայնագիրը²⁰³՝ նախատեսող Կոսովոյի բարձր ինքնավարություն ՆԱՏՕ-ի հովանու ներքո: Կոսովոյի ալբանացիների պահանջով ավելացվել է անկախացման հանրաքվեի հնարավորության դրույթը, որից հետո նրանք համաձայնություն են տվել²⁰⁴, իսկ Սերբիան մերժել է առաջարկը:

Դրա հիման վրա մշակվել է ՄԱԿ ԱԽ 1244 բանաձևը, որով 1999թ. հունիսի 10-ից կարգավորման գործընթացում կենտրոնական դերն ամրագրվել է ՄԱԿ-ին և Անվտանգության խորհրդին, Կոսովոյում ծավալվել է ՄԱԿ առաքելություն Կոսովոյի ժամանակավոր վարչարարության գործերով (UNMIK) և տեղակայվել են Կոսովոյի համար ուժերը(KFOR): Ամրագրվել է Կոսովոյում անցումային ադմինիստրացիայի ձևավորման դրույթը՝ զուգահեռ միջազգային ներկայության ապահովմանը, որը հնարավորություն կընձեռներ Կոսովոյում ապահովել բնականոն կյանքը, ինչպես նաև զգալի ինքնավարություն (substantial autonomy) կապահովեր Յարալսլավիայի ֆեդերալ հանրապետության կազմում²⁰⁵: Այն նախատեսում էր նաև Յարալսլավական Յանրապետության տարածքային ամբողջականության և սուվերենության սկզբունքների նկատմամբ հարգանքի վրա հիմնված հետագա քաղաքական շրջանակային համաձայնագրի կնքում, որը ինքնակառավարում կապահովեր Կոսովոյին:

²⁰³ Interim Agreement for Peace and Self-Government in Kosovo, Feb. 23, 1999, UN Doc. S/1999/648, June 7, 1999, [hereinafter RambouilletAccords].

²⁰⁴ Andrea Lorenzo Capussela, State-Building in Kosovo: Democracy, Corruption and the EU in the Balkans, I.B. Tauris, London-New-York, 2015, p.p. 5-6.

²⁰⁵ RESOLUTION 1244 (1999) UN Security Council, 10 June 1999, S/RES/1244, <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/kos%20SRES%201244.pdf>

2006թ.-ին ՄԱԿ հատուկ ներկայացուցչի ղեկավարի հիման վրա որոշում կայացվեց սկսել միջազգային բանակցությունները Կոսովոյի կարգավիճակի շուրջ: ՄԱԿ հատուկ բանագնաց նշանակվեց Մարտի Աիթիսարան, ով 2007թ. փետրվարին ներկայացրեց Կոսովոյի կարգավիճակի հարցի կարգավորման նախագիծը, որը պետք է հիմք ծառայեր ՄԱԿ Անհամապատասխան բանաձևի համար: Նախագիծն առանց «անկախություն» բառի հիշատակման Կոսովոյի համար նախատեսում էր անկախություն: Նախագիծում նշվում է, որ Կոսովոն պետք է ունենա սեփական սահմանադրություն, դրոշ, գինանշան ու հիմն, «իրավունք ունենա բանակցել և կնքել միջազգային պայմանագրեր և ձգտել անդամակցության միջազգային կազմակերպություններում; չի ունենա տարածքային նկրտումներ, չի ձգտի միություն մեջ մտնել որևէ պետության հետ կամ դառնալ նրա մասը»²⁰⁶: Նաև նշվում է, որ խրախուսվում է Սերբիայի և Կոսովոյի միջև համատեղ հանձնաժողովի ստեղծումը, որն ուղղված կլինի նրանց միջև համագործակցության և լավ հարաբերությունների ապահովմանը: Այս առաջարկի հիման ՄԱԿ Անհամապատասխան նախագծի վերջնական տարբերակը ներկայացվեց 2007թ. հունիսի 17-ին և նախատեսում էր 120 օրվա ընթացքում Կոնտակտային խմբի շրջանակներում բանակցությունների միջոցով գալ համաձայնության²⁰⁷: Սակայն այն ևս չեղյալ հայտարարվեց:

Համաձայնության չգալուց հետո 2008թ. փետրվարի 17-ին Կոսովոյի խորհրդարանը հռչակեց Կոսովոյի անկախությունը, ապրիլի 9-ն խորհրդարանի կողմից հաստատվել է Կոսովոյի Սահմանադրությունը:

2010թ. հունիսի 22-ին Միջազգային դատարանը խորհրդատվական եզրակացություն է տվել, ըստ որի Կոսովոյի անկախության հռչակագիրը չի հակասում միջազգային օրենքին: Սեպտեմբերի 9-ին ՄԱԿ Գլխավոր Ասամբլեան որոշում է կայացրել Կոսովոյի

²⁰⁶Comprehensive Proposal for the Kosovo Status Settlement, 26 March 2007, http://ahtisaariplan.info/pdf/comprehensive_proposal_for_the_Kosovo_status_settlement.pdf

²⁰⁷Belgium, France, Germany, Italy, United Kingdom of Great Britain and Northern Ireland and United States of America: draft resolution on Kosovo, S/2007/437, <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF99B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/Kos%20S2007%20437.pdf>

անկախության հռչակման՝ միջազգային իրավունքին համապատասխանելու վերաբերյալ: Այսօրվա դրությամբ այն ճանաչվել է արդեն 109 երկրների կողմից²⁰⁸:

Բանակցությունները Սերբիայի և Կոսովոյի միջև սկսվել են 2011թ. մարտի 8-ին, դրանք ուղղված են հասարակությանը վերաբերող, ինչպես նաև քաղաքական մի շարք հարցերի լուծմանը: 2013թ. ապրիլի 19-ին Սերբիայի և Կոսովոյի միջև կնքվել է «պատմական» համաձայնություն²⁰⁹, որով Սերբիան համաձայնել է Կոսովոյի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատել, ինչի դիմաց Կոսովոն պարտավորվել է ինքնավարություն տրամադրել Միտրովիցա շրջանում՝ Կոսովոյի հյուսիսում, բնակվող սերբերին:

Չորքերի դուրսբերման հարցը կարգավորվել է հետևյալ կերպ՝ ՄԱԿ կողմից 1999թ. ընդունված բանաձևով նախատեսվում էր Կոսովոյից բոլոր տեսակի զորքերի, ոստիկանության և կիսառազմական ուժերի դուրսբերում, որը պետք է ուղեկցվեր միջազգային ներկայության ապահովմամբ: Նախատեսվում էր, որ ամբողջական դուրսբերումից հետո որոշ թվով հարավսլավական և սերբական զինված ուժերի կթուլյալ տրվեր վերադառնալ Կոսովո համաձայնեցված գործառույթների ներքո²¹⁰: Անկախացումից հետո Կոսովոն ձևավորել է սեփական ոստիկանությունն ու բանակը, որոնց կայացմանը մեծ աջակցություն է ցուցաբերել ԵՄ-ն՝ EULEX առաքելության ներքո:

Պատերազմի ընթացքում շուրջ 900 հազար սլավոնացիներ ստիպված են եղել Կոսովոյից տեղափոխվել Ալբանիա և Մակեդոնիա, բացի այդ, շուրջ 210 հազար սերբեր և գնչուներ մինչ այժմ գտնվում

²⁰⁸ Countries that have recognized Kosovo as an independent state, <http://beinkosovo.com/en/countries-that-have-recognized-kosovo-as-an-independent-state>

²⁰⁹ First Agreement of Principles Governing the Normalisation of Relations, Kosovo - Serbia, 19 april 2013, <http://www.rts.rs/upload/storyBoxFileData/2013/04/20/3224318/Originalni%20tekst%20Predloga%20sporazu%20ma.pdf>

²¹⁰ RESOLUTION 1244 (1999) UN Security Council, 10 June 1999, S/RES/1244, <http://www.securitycouncilreport.org/atf/cf/%7B65BF9B-6D27-4E9C-8CD3-CF6E4FF96FF9%7D/kos%20SRES%201244.pdf>

են Սերբիայ ու մ²¹¹: ՄԱԿ բանաձևով նախատեսվում էր բոլոր **փախտականների վերադարձ** իրենց նախկին բնակության վայրեր: Վերադարձը պետք է իրականացվեր միասնական հրամանատարության ներքո գործող ՆԱՏՕ ուժերի ներկայությամբ, որոնք կերաշխավորեին անվտանգությունն ու կայունությունը: Չնայած միջազգային երաշխիքներին և միջնորդությանը՝ սերբերը մեծամասամբ չեն ձգտում վերադառնալ Կոսովո:

Ներկայումս սերբերը մեծամասամբ բնակվում են Յուգոսլավիայի Կոսովոյում և չեն ենթարկվում ոչ Սերբիայի, ոչ Կոսովոյի իշխանություններին: Նրանց անվտանգությունն ապահովում են UNMIK/KFOR ուժերը: Նրանք բնակվում են նաև Կոսովոյի հարավում՝ առանց միջազգային պաշտպանության, սակայն փակ համայնքներով: Սերբերը Կոսովոյում, չնայած խաղաղապահ ուժերի առկայությանը, միևնույն է, պարբերաբար ենթարկվել են հարձակումների, ինչպես դա եղել է դեռևս ՄԱԿ հովանու ներքո ինքնակառավարման ժամանակ, օրինակ՝ 2004 թվականին: Սամշտապես պահպանում է քաղաքացիական պատերազմի հավանականությունը²¹²:

Միջազգային ներկայությունը, բացի խաղաղարարական առաքելությունից և փախտականների խաղաղ վերադարձ, սրացումների կանխարգելում ապահովելուց, նախատեսվում է նաև միջազգային քաղաքացիական ներկայության ապահովում Կոսովոյում: Վերջինս ուղղված է ժողովրդավարական ինստիտուտների, հանրային կառավարման կայացմանը, ժողովրդավարական ընտրությունների կազմակերպմանը և այլն՝ այդ թվում պայմանների ապահովմանը՝ ժամանակավոր կարգավիճակից հետո քաղաքական կարգավորման հիման վրա նոր ինստիտուտների ձևավորման համար, հաղորդակցության ուղիների վերականգնում և այլն: Վերջինիս կազմակերպման համար անցկացվել է դոնորների համաժողով:

²¹¹ Andrea Lorenzo Capussela, *State-Building in Kosovo: Democracy, Corruption and the EU in the Balkans*, I.B. Tauris, London-New-York, 2015, p.p. 5-6.

²¹² Sterio Milena, *The Case of Kosovo: Self-Determination, Secession, and Statehood Under International Law*, Proceedings of the Annual Meeting (American Society of International Law), Vol. 104, *International Law in a Time of Change* (2010), p.p. 361-365.

ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ն անմիջական միջամտություն են ունեցել Կոսովոյի հիմնախնդրին՝ ռմբակոծության ենթարկելով Սերբիան և ռազմական և քաղաքացիական մասնակցություն ասպահովելով Կոսովոյում: Դա իր ազդեցությունն է ունեցել ինչպես ամբողջ հակամարտության ելքի, այնպես էլ Կոսովոյում պետականաշինության գործընթացի վրա: Ամերիկացի տեսաբան Նոամ խոմսկին հարցականի տակ է դնում Կոսովոյում ԱՄՆ և ՆԱՏՕ միջամտության մարդասիրական հիմքերը՝ պնդելով, որ նրանք առաջնորդվում էին բացառապես սեփական շահերով՝ այդ թվում ԱՄՆ ռազմական արդյունաբերությունը խթանելը²¹³:

Բացի այդ, Սերբիան այսօր ԵՄ թեկնածու երկիր է, և նրա անդամակցության հիմնական պահանջներից մեկը եղել է հարևան երկրների հետ հարաբերությունների կարգավորումն ու սահմանների հստակեցումը, ինչը ենթադրում է Կոսովոյի հետ հարաբերությունների հաստատում²¹⁴: Դրանով է պայմանավորված, որ միայն Կոսովոյի հետ համաձայնության կնքումից հետո ԵՄ-ն մեկնարկեց անդամակցության բանակցությունները Սերբիայի հետ:

Կոսովոն կարևոր է դիտարկել որպես **միջազգային պետականաշինության օրինակ**: 1999-2008 թթ. Կոսովոն գտնվել է ՄԱԿ անմիջական հովանու ներքո՝ երկրի գործադիր, օրենսդիր և արդարադատության ճյուղերի հանդեպ անմիջական հովանավորություն է իրականացվել Կոսովոյի միջանկյալ կառավարման ՄԱԿ առաքելության (UNMIK) կողմից: 2008թ. անկախացումից հետո Կոսովոն ժամանակավորապես գտնվել է Միջազգային քաղաքացիական գրասենյակի (ICO) հովանու ներքո: Ոստիկանությունը, սահմանների պաշտպանությունը և արդարադատությունը մինչ այժմ գտնվում է ԵՄ օրենքի գերակայության առաքելության (EULEX) հովանավորության ներքո: 2016թ. ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել ԵՄ-Կոսովո Կայունացման և Ասոցացման համաձայնագիրը, որով կարգավորվում են երկկողմ առևտրային, տնտեսական հարաբերությունները, ներդաշնակեցվում

²¹³ Хомский Н., «Новый военный гуманизм: уроки Косова»: Праксис; Москва; 2000.

²¹⁴ Serbia Progress Report, http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/009/sr_rapport_009_en.pdf

են օրենսդրական նորմերը, խթանվում է ժողովրդավարության կայացումը Կոսովոյում:

Այնուամենայնիվ, Կոսովոն դեռևս համարվում է Եվրոպայի «սև խոռոչ» և կիսահամախմբված ավտորիտար ռեժիմ²¹⁵: Կոսովոյում միջազգային պետականաշինության փորձերը բախվել են երեք հիմնական խնդիրների՝ սեփականության տնօրինման տեղական ձևերն ու նրանց ազդեցությունը պետական ինստիտուտների վրա, միջազգային բյուրոկրատների ոչ ճիշտ մոտեցումը՝ միջազգային չափորոշիչների տեղայնացման պարագայում, տեղական արժեհամակարգի և յուրահատկությունների հաշվի չառնելը և կոռուպցիայի բարձր մակարդակը²¹⁶:

Այսպիսով, Կոսովոյի հակամարտության կարգավորման գործընթացում որոշիչ դերակատարում է ունեցել միջազգային հանրությունը և Կոսովոյի պետականաշինությանը ցուցաբերված միջազգային աջակցությունը: Այդ թվում՝ այսօր շարունակվում է Սերբիայի վրա գործադրվող անուղղակի ճնշումը Կոսովոյի հետ հարաբերությունների կարգավորման հարցում:

Յյուսիսային Իռլանդիայի հակամարտությունն ազգային ինքնորոշման շուրջ ծագած հակամարտություն է, որի վրա որոշիչ ազդեցություն ունեն միաժամանակ մի քանի գործոններ՝ ազգային ինքնությունն ու կղզու հյուսիսում բնակվող իռլանդական և բրիտանական համայնքների հարաբերությունները, կրոնական գործոնը՝ կաթոլիկ և բողոքական համայնքների առկայությունը, որոնք հիմնական համընկնում են ազգային հետ, և կուսակցական հայացքներն ու քաղաքական գործոնը: Այդ պատճառով այս հակամարտությունը դժվար է միանշանակ դասել էթնիկ կամ էթնիկ-կրոնական հակամարտությունների թվին:

Մեծ Բրիտանիան և Իռլանդիայի թագավորությունը միավորվել են 1801թ.-ին: Սակայն իռլանդական կղզու վրա մշտապես ներքին

²¹⁵ Freedom House. Nations in Transit 2014: Eurasia's Rupture with Democracy, https://freedomhouse.org/sites/default/files/NIT2014%20booklet_WEBSITE.pdf

²¹⁶ Coelho Joseph, Building State Failure in Kosovo? Book Review, Contemporary Southeastern Europe, 2015, 2(2), p.p. 7- 15.

պայքար է ծավալվել բնիկ կաթոլիկ իռլանդացիների և աստիճանաբար ավելի մեծ թիվ կազմող անգլիացիների միջև, որոնց տրամադրվել են նաև լրացուցիչ արտոնություններ:

20-րդ դարում ՅՆՍԻՍԿԻՆ Իռլանդիայում գրանցվել է ինքնագիտակցության աճ ինչպես իռլանդացիների, այնպես էլ անգլիացիների շրջանում, ինչը զուգակցվել է կրոնական գործոնի խորացմամբ, և էթնիկ բնույթի հակասություններն էթնիկ-կրոնական բնույթ են ստացել:

Յակամարտության **տարածքային խնդիրը** նրանում էր, որ կաթոլիկ իռլանդացիները ձգտում էին Իռլանդիայի Յանրապետության հետ միավորման, մինչդեռ բողոքական եկեղեցուն հպատակ անգլիացիները կողմ էին թագավորության կազմում մնալուն:

Քաղաքական գործոնը պայմանավորված էր իռլանդացիների ինքնորոշման ձգտմամբ, սեփական քաղաքական ինստիտուտները ձևավորելու և իշխանությունն իրենց ձեռքը վերցնելու ցանկությամբ:

Սոցիալ-տնտեսական հիմքերը ՅՆՍԻՍԿԻՆ Իռլանդիայի տնտեսության մեջ բրիտանական ծագում ունեցող բողոքականների գերակայության մեջ էին, ինչը հանգեցնում էր կաթոլիկ իռլանդացիների հանդեպ

խորականության: **Կրոնական գործոնը** բողոքական փոքրամասնության և կաթոլիկ մեծամասնության միջև շարունակվող պայքարն էր²¹⁷: Ունիոնիստներն ու լեյբորիստներն իրենց համարում են բրիտանացիներ, իսկ նացիոնալիստներն ու հանրապետականները՝ իռլանդացիներ՝ դրավրա են հիմնված նաև

ՅՆՍԻՍԿԻՆ Իռլանդիայի կարգավիճակի հետ կապված այս քաղաքական ուժերի քաղաքական հայացքները:

Յերթական ապստամբությունից հետո 1919թ.-ին հռչակվել է Իռլանդիայի Յանրապետությունը, սակայն բրիտանական ուժերը փորձել են ճնշել ապստամբությունը, նրանց դիմակայել է

ռազմականացված Իռլանդական հանրապետական բանակը (IRA): 1921թ.-ին կնքվել է Անգլո-Իռլանդական պայմանագիրը, որոշվել է

²¹⁷ Вакарь Д., Вьюшин А., Конфликт в Северной Ирландии, ИАА «Центр Льва Гумилева», 21.03.2011, <http://www.gumilev-center.ru/konflikt-v-severnoji-irlandii/>

ձևավորել Իռլանդիայի Ազատ պետությունը, իսկ հյուսիսում գտնվող 6 կոմսություններ թողնել Մեծ Բրիտանիայի կազմում: Պայմանագրով ամրագրվել է, որ բրիտանական զորքերը դուրս կբերվեն Իռլանդիայի տարածքի մեծ մասից, Իռլանդիան կդառնա ինքնավար դոմինիոն Բրիտանական կայսրության կազմում (նման կարգավիճակ ունեին Կանադան, Ավստրալիան, Նոր Զելանդիան և այլն), Միացյալ Թագավորության միապետը համարվելու է Իռլանդական Ազատ պետության ղեկավար, նրա ներկայացուցիչը լինելու է գեներալ-նահանգապետը, Յուլսիսային Իռլանդիային հնարավորություն է ունենալու դուրս գալ Միացյալ պետության կազմից²¹⁸: Այս պայմանները չեն բավարարել Իռլանդիայի հանրապետական բանակին, և դա հանգեցրել է ռազմական բախումների:

Իռլանդիայի կախվածությունը Լոնդոնից աստիճանաբար թուլացել է, 1937թ.-ին հռչակվել է Իռլանդիայի Յանրապետությունը, իսկ 1949թ.-ին Իռլանդիան դուրս է եկել Մեծ Բրիտանիայի կազմից: Մինչդեռ Յուլսիսային Իռլանդիայում պահպանվել է ենթակայությունը թագին, 1972թ.-ին ձևավորվել է Յուլսիսային Իռլանդիայի խորհրդարանը և հաստատվել է Մեծ Բրիտանիայի կողմից ուղղակի կառավարման ռեժիմ:

Շարունակական բախումների տեսքով հակամարտությունը շարունակվել է, սակայն դրա անկյունաքարը եղել է 1972թ. հունվարի 30-ի «Արյունալի կիրակին», երբ կաթոլիկների ցույցի ժամանակ բրիտանական զորքերը սպանել են 13 անզեն քաղաքացիների: Դրանից հետո լարվածությունը մեծացել է, և այն նվազեցնելու համար Մեծ Բրիտանիան համաձայնություն է տվել Յուլսիսային Իռլանդիայում հանրաքվեի անցկացմանը: Յանրաքվեի ժամանակ մասնակիցները պետք է որոշեին՝ ցանկանո՞ւմ են, որ Յուլսիսային Իռլանդիան մնա Միացյալ Թագավորության կազմում, թե՞ միանա Իռլանդիայի Յանրապետությանը: Իռլանդական բնակչությունը բոյկոտել է հանրաքվեն, Սոցիալ-դեմոկրատական և

²¹⁸ Anglo-Irish Treaty, 6 December 1921, http://www.nationalarchives.ie/topics/anglo_irish/dfaexhib2.html

լ էյ բորիստական կուսակցության առաջնորդ Ջերրի Տիթը պարզաբանել է, որ իրենց կուսակցությունը կոչ է արել բոյկոտել ընտրությունները՝ բռնություն և բախումներ թույլ չտալու համար: Արդյունքում, քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող բնակչության միայն 58,66 տոկոսը, Միացյալ Թագավորության կազմում մնալու և կողմ է արտահայտվել նրանց 98,9 տոկոսը²¹⁹:

Մի քանի անգամ փորձ է արվել կարգավորել Իռլանդիայի Հանրապետության և Միացյալ Թագավորության հարաբերությունները: 1973թ.-ին կնքվել է Սաննիգոյալի համաձայնագիրը Իռլանդիայի խորհուրդ ստեղծելու վերաբերյալ, որի կազմի մեջ պետք է ընդգրկվեին իռլանդական կղզու երկու հատվածների նախարարներ և պատգամավորներ: Սակայն Հյուսիսային Իռլանդիայում խորհրդարանական ճգնաժամ է սկսվել այս հարցի պատճառով և դրավավերացումը ձախողվել է: Այս պայմանագրին աջակցող քաղաքական կուսակցությունները լայն աջակցություն չեն ստացել²²⁰:

Պարբերաբար բանակցվել են Հյուսիսային Իռլանդիայի և Իռլանդիայի Հանրապետության հարաբերությունները կարգավորող պայմանագրեր, սակայն Իռլանդիայի Հանրապետական բանակի (IRA) առավել ծայրահեղական ճյուղերը ձախողել են բանակցությունները՝ համարելով դրանք խոչընդոտ Իռլանդիայի վերամիավորմանը:

1985թ.-ին Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի Հանրապետության միջև կնքվել է Անգլո-իռլանդական համաձայնագիր, որը նախատեսում էր միջկառավարական համաժողովների անցկացնել Հյուսիսային Իռլանդիայում մարդու իրավունքների, անվտանգության հարցերի, տնտեսական, սոցիալական և մշակութային հարցերում անդրսահմանային համագործակցության շուրջ: Ունիոնիստական համայնքը դեմ է հանդես եկել այս

²¹⁹ The Referendums of 1973 and 1975, Northern Ireland Election, <http://www.ark.ac.uk/elections/fref70s.htm>

²²⁰ Wolff Stefan, The Road to Peace? The good friday agreement and the conflict in Northern Ireland, World Affairs, Vol. 163, No. 4, Spring 2001, p.p. 163-170.

համաձայնագրին, դրաներքո չեն համաձայնել զենքերը վայր դնել նաև Իռլանդական Հանրապետական բանակի ներկայացուցիչները²²¹: Անգլո-Իռլանդական համաձայնագրի ձախողումը մեծապես պայմանավորում են դրա միջկառավարական բնույթով, որը չէր նախատեսում Հյուսիսային Իռլանդիայի անմիջական ներգրավվածություն: Ունիոնիստական կուսակցության համար ընդունելի չէր, որ Իռլանդական կողմն այս համաձայնագրում ներկայացնում է Իռլանդիայի Հանրապետությունը²²²:

Նախորդ բանակցություններն ու կարգավորման ձախողված փորձերը ցույց են տվել, որ հակամարտության կարգավորումն առանց բոլոր կողմերն ընդգրկող բանակցությունների հնարավոր չէ: 1993թ.-ին Բրիտանիայի կառավարությունը ուղիղ բանակցություններ է սկսել Հյուսիսային Իռլանդիայի երկու համայնքների զինված կազմակերպությունների հետ, հաջողվել է հասնել հրադադարի երկարատև պահպանման: Մշակվել է «Համաձայնագրի նոր շրջանակ», որը նախատեսում էր զուգահեռ բանակցություններ Հյուսիսային Իռլանդիայի և Իռլանդիայի Հանրապետության, Բրիտանիայի և Իռլանդիայի միջև, ինչպես նաև դադարեցված բանակցությունների շարունակում մի կողմից Բրիտանիայի, մյուս կողմից՝ Հյուսիսային Իռլանդիայի քաղաքական կուսակցությունների միջև²²³: 1996թ. մայիսին անցկացվել են բանակցողների ընտրություններ, Շին Ֆեյնի (քաղաքական կուսակցություն՝ IRA-ի քաղաքական թևը) գլխավորությամբ IRA-ին չի թույլատրվել մասնակցել բանակցություններին, քանի որ այն չի ստորագրել բռնության չկիրառման Միտչելի սկզբունքները և վերսկսել է հարձակումները: Այդ սկզբունքները սահմանվել էին ամրագրելու համար հակամարտությունը խաղաղ և քաղաքական ճանապարհով, առանց բռնության կարգավորելու կողմերի հանձնառությունը, և

²²¹ Невилл Питер, Ирландия. История страны, ЭКСМО, Москва, 2009, с. 52-53.

²²² Wolff Stefan, The Road to Peace? The good friday agreement and the conflict in Northern Ireland, World Affairs, Vol. 163, No. 4, Spring 2001, p.p. 163-170.

²²³ Brendan O'Leary, "Afterword: What is Framed in the Framework Documents," in Ethnic and Racial Studies 18, no. 4, October 1995, p. 867.

ոստիկանության համակարգի բարեփոխում, որը պետք է հավասարեցներ կաթոլիկների և բողոքականների իրավունքները²²⁵:

Համաձայնագիրը հաստատվել է իռլանդական և բրիտանական կառավարությունների կողմից և ՅՆՍԻՍային իռլանդիայի խորհրդարանում: Դեմ են արտահայտվել դեմոկրատական ունիոնիստական կուսակցությունը և իռլանդական հանրապետական բանակի քաղաքական թևը՝ Շինն Ֆեյնը: Համաձայնագիրը միաժամանակ դրվել է հանրաքվեի ՅՆՍԻՍային իռլանդիայում և իռլանդիայի Հանրապետությունում: ՅՆՍԻՍային իռլանդիայում հանրաքվեի է դրվել ձեռք բերված համաձայնագրին աջակցության հարցը, իսկ իռլանդիայի Հանրապետությունում՝ սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու հարցը: ՅՆՍԻՍային իռլանդիայում դրան կողմ է քվեարկել բնակչության 71,1 տոկոսը (մասնակցությունը՝ 81,1 տոկոս), իռլանդիայի Հանրապետությունում՝ 94,4 տոկոսը (մասնակցությունը՝ 55,6 տոկոս)²²⁶: Դրա հիման վրա իռլանդիայի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարվել է համապատասխան փոփոխությունը:

Բել Ֆասթի համաձայնագիրն՝ ի տարբերություն նախորդ երկուսի, հաջողությամբ է պակվել բանակցություններին բոլոր կողմերի՝ այդ թվում զինված խմբերի մասնակցության և դրա ընթացքում հրադարարի պահպանման շնորհիվ: Որոշիչ է եղել նաև դրանում բոլոր պայմանավորվածությունների կատարման գործիքակազմի ամրագրումն ու այն և՛ ՅՆՍԻՍային իռլանդիայում, և՛ իռլանդիայի Հանրապետությունում հանրաքվեի դնելը, ինչով ամրագրվել է, ոչ միայն իշխանությունների, այլ և ժողովրդի կամքը: Բացի այդ, եթե Սինիսդալի պայմանագրի տապալումը նշանակում էր Միացյալ Թագավորության ուղղակի կառավարման վերականգնում, ինչը ձեռնտու էր Ունիոնիստական կուսակցությանը, ապա Բել Ֆասթի պայմանագրի տապալումը կարող

²²⁵ The Belfast Agreement, Agreement reached in multi-party negotiations, 10 April 1988, <http://cain.ulst.ac.uk/events/peace/docs/agreement.htm>

²²⁶ The 1998 Referendums, Northern Ireland Elections, <http://www.ark.ac.uk/elections/fref98.htm>

Էր նշանակել ՅՆՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆՊԻՅԻ ԿԱՆՈՒՄԻ ԻՌԼԱՆՊԻՅԻ ՅԱՆՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ և ՄԻԱԿՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ մԻԱԿՅԱԼ ՎԵՐԱԿՍԿՈՂՈՒԹՅԱՆ հաստատում, ինչը ձեռնտու չէր ոչ միայն Ունիոնիստներին, այլև Ազգայնականներին: Մեծ ազդեցություն է ունեցել նաև ԱՄՆ միջնորդությունը և ԵՄ աջակցությունը: ²²⁷

ԵՄ-ն 1989թ.-ից ֆինանսական աջակցություն է տրամադրել ՅՆՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆՊԻՅԻ Խաղաղ կարգավորման համար: Բել Ֆասթի համաձայնագրի կնքումից հետո այն աջակցել է ՅՆՍԻՍ-Յարավանդրասամային համագործակցության հաստատմանը՝ փոխվստահության և տնտեսական համագործակցության համար իրավական հիմքի ապահովման ու պահպանման միջոցով ²²⁸:

ՅՆՍԻՍԻՌԼԱՆՊԱԿԱՆ հասարակությունում պահպանվող են ազգային, կրոնական, քաղաքական ինքնագիտակցությամբ և ինքնորոշմամբ պայմանավորված ներքին պառակտումներն ու հակասությունները հարթելու համար տարբեր մեխանիզմներ են կիրառվում՝ հավասար ներկայացվածությունն ապահովելով, առկա խնդիրները խաղաղ հարթակներում քննարկելով, հասարակության տարբեր շերտերի հետ հետևողական աշխատանք տանելով ²²⁹: Յետկոնֆլիկտային փուլը դեռևս շարունակվում է և դրանում մեծ կարևորություն ունի հասարակության երկու համայնքների ինքնորոշման խաղաղ դրսևորումը՝ ինքնաիրացումը առկա ինստիտուտների միջոցով:

Այսպիսով, ՅՆՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆՊԻՅԻ ԿԻՄՆԱԽՆՊԻՐՆ ԱԶԳԱՅԻՆ, կրոնական, քաղաքական ինքնորոշման շուրջ ծագած և արյունահեղ բազմաթիվ փուլեր անցած հակամարտություն է, որին հաջողվել է քաղաքական խաղաղ կարգավորում ապահովել բազմակուսակցական, ընդգրկուն քաղաքական բանակցությունների և կղզու երկու

²²⁷ Wolff Stefan, The Road to Peace? The good friday agreement and the conflict in Northern Ireland, World Affairs, Vol. 163, No. 4, Spring 2001, p.p. 163-170.

²²⁸ Tonge Jonathan, The EU and the Irish Border: Shaping Aid and Attitudes?, European Studies Research Institute, University of Salford, Crescent House, 2005, https://www.qub.ac.uk/research-centres/CentreforInternationalBordersResearch/Publications/WorkingPapers/CIBRWorkingPapers/Filetoupload_174405.en.pdf

²²⁹ Byrne Sean, TRANSFORMATIONAL CONFLICT RESOLUTION AND THE NORTHERN IRELAND CONFLICT, International Journal on World Peace, Vol. 18, No. 2, JUNE 2001, p.p. 3-22.

կրոնական, ազգային համայնքների համար պետական առկա համակարգի ներքո լիարժեք ինքնաիրացման հնարավորություններն ձեռնելու միջոցով:

Շոտլանդիայի անկախացման շուրջ վերջին արշավը, որը հանգեցրեց անկախության հանրաքվեի անցկացման, մեկնարկել է 2011թ.-ին, երբ Շոտլանդիայի խորհրդարանական ընտրություններում հաղթանակ էր տարել Շոտլանդիայի ազգային կուսակցությունը, որը նախընտրական արշավում խոստացել է Շոտլանդիայի անկախացման հանրաքվե անցկացնել: Այս օրինակի դիտարկումը կարևոր է այն տեսակետից, որ Շոտլանդիայի անկախացման իրավական կարգավորիչի բացակայությունն պարագայում դրսևորվեց քաղաքական կամք հարցը դնել հանրաքվեի և Շոտլանդիայի ու Մեծ Բրիտանիայի միջև կնքվեց համապատասխան պայմանագիր:

Շոտլանդիան Միացյալ Թագավորության մաս է, 1707թ.-ին կնքված Միություն ակտով Շոտլանդական խորհրդարանը լուծարվել է, դրա լիազորությունների գերակշիռ մասը փոխանցվել է Վեստմինստերի խորհրդարանին: Սակայն 1998թ. Շոտլանդիայի ակտով 1707թ.-ի ակտը փոփոխության է ենթարկվել, Շոտլանդիայի խորհրդարանը վերականգնվել է՝ իրավունք ստանալով ընդունել օրենքներ և կառավարել հարկահանությունը, ձևավորվել է Շոտլանդիայի ադմինիստրացիան՝ կառավարությունը²³⁰:

Շոտլանդիայի անկախացման տրամադրությունները սկիզբ են առել դեռևս 2007թ.-ին, երբ Շոտլանդիայում փոքրամասնական կառավարություն է ձևավորել Շոտլանդիայի ազգային կուսակցությունը՝ Ալեքս Սալմոնդի գլխավորությամբ: 2010-ին կառավարությունն օրենքի նախագիծ է ընդունել, որով նախատեսվում էր հանրաքվեի դնել Շոտլանդիայի խորհրդարանի լիազորությունների ընդլայնման կամ Մեծ Բրիտանիայից անկախացման հարցը: 2011թ. մայիսին կրկին հաղթանակ տանելով ընտրություններում՝ ՇԱԿ-ը խոստացել է անկախության հանրաքվե

²³⁰ Qvortrup Matt, Referenduma and Ethnic Conflict, University of Pennsylvania Press, 2014, p.p. 71-80.

անցկացնել: Հանրաքվեն նշանակվել է 2014թ. սեպտեմբերի 18-ին, հանրաքվեի է դրվել հետևյալ հարցը. «Շոտլանդիան պե՞տք է անկախ երկիր լինի»:

Անկախության հանրաքվեի նախապատրաստման գործընթացում Լոնդոնի և Էդինբուրգի երկխոսության տեսակետից կարևորագույն նշանակություն ունի 2012թ. հոկտեմբերի 15-ին Մեծ Բրիտանիայի և Շոտլանդիայի միջև կնքված համաձայնագիրը, որն ուղղված էր համաձայնեցնելու Շոտլանդիայի և Միացյալ Թագավորության կառավարությունների քայլերը, որոնք հնարավոր կդարձնեին հանրաքվեի անցկացումը: Ամրագրվել է, որ Մեծ Բրիտանիայի և Շոտլանդիայի խորհրդարաններն օրենքի նախագիծ կընդունեն, որն ըստ 1998թ. գործող Շոտլանդիայի ակտի, հնարավորություն կընձեռի Շոտլանդիայի խորհրդարանին նման հանրաքվե անցկացնել²³¹:

Հանրաքվեի նախապատրաստական փուլում և՛ ՇԱԿ-ը, և՛ Մեծ Բրիտանիան պարբերաբար պաշտոնական վերլուծական փաթեթներ են հրատարակել՝ ներկայացնելով իրենց մոտեցումներն ու անկախացումից բխող հնարավորություններն ու մարտահրավերները:

Շոտլանդիայի հանրաքվեն և քարոզարշավը կառուցվում են երկու հիմնասյուների՝ տնտեսական շահի և ինքնության վրա: Ինքնության, ես-ի ինքնանույնացման հարցը մեծ դերակատարում է ունեցել հանրաքվեի արշավի և արդյունքների վրա: Հարցումները ցույց են տվել, որ իրենց «մաքուր շոտլանդացիներ» համարողները մեծապես հակված են եղել անկախության, իսկ Շոտլանդիայից դուրս ծնվածները, իրենց բրիտանացիներ համարողները՝ դեմ են եղել²³²: Միաժամանակ, ինքնությանը չառնչող հարցերում Շոտլանդիայի բնակչության հանրային կարծիքը գրեթե համընկնում է Անգլիայի հանրային կարծիքի հետ՝ ի տարբերություն իշխանությունների դիրքորոշման: Ուստի, հանրաքվեի արդյունքները բացառապես

²³¹ Agreement between the United Kingdom Government and the Scottish Government on a referendum on independence for Scotland, 15 Oct 2012, <http://www.gov.scot/Resource/0040/00404789.pdf>

²³² Curtice J., So Who votes Yes and No?, What Scotland Thinks blog, 26 September 2014.

ինքնուրույն հարց չէին²³³: Ինքնուրույն հարցի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ շոտլանդացիներն իրենց նույնականացնում են որպես և՛ բրիտանացի, և՛ շոտլանդացի :

Անկախացման հանրաքվեն տեղի է ունեցել 2014թ. սեպտեմբերի 18-ին: Ըստ արդյունքների, քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 84,6 տոկոսը, որոնցից 44,65 տոկոսը քվեարկել է անկախացման օգտին, իսկ 55,25 տոկոսը՝ Մեծ Բրիտանիայի կազմում մնալու²³⁴:

Չանրաքվեի արդյունքների հրապարակումից հետո Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Քեմերոնը հայտարարել է, որ 2015թ. խորհրդարանական ընտրություններից հետո նոր խորհրդարանը կվերանայի Շոտլանդիայի և թագավորության մյուս անդամների լիազորությունները՝ մեծացնելով հարկային, բյուջետային ծախսերի և սոցիալական ապահովության ոլորտներում նրանց լիազորությունները²³⁵: Շոտլանդիայի նոր ֆիսկալ շրջանակային համաձայնագիրն արդեն իսկ ստորագրվել է 2016թ. փետրվարից²³⁶:

Եվրամիության կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու վերաբերյալ 2016թ. հունիսի 23-ին տեղի ունեցած հանրաքվեի ժամանակ քվեարկության մասնակցած քաղաքացիների 51,89 տոկոսը կողմ քվեարկեց միությունը լքելուն, իսկ 48,11 տոկոսը՝ միության կազմում մնալուն²³⁷: Միաժամանակ, Շոտլանդիայում 62 տոկոսը քվեարկել է ԵՄ կազմում Մեծ Բրիտանիայի մնալու օգտին, և միայն 38 տոկոսը՝ դուրս գալու²³⁸:

²³³ Gallagher Jim, Making the Case for Union: Exactly Why Are We Better Together?, The Scottish Independence Referendum, Oxford University Press, 2016, p.p. 127-153.

²³⁴ Scottish Referendum Results, The Electoral Management Board for Scotland (EMB), <http://scotlandreferendum.info/>

²³⁵ David Cameron, September 19, 2014, <https://www.facebook.com/DavidCameronOfficial/posts/846948598662793>

²³⁶ Devolution of financial powers to the Scottish Parliament: recent developments, March 1, 2016, <https://researchbriefings.parliament.uk/ResearchBriefing/Summary/SN07077>

²³⁷ "EU referendum". Electoral Commission, <http://www.electoralcommission.org.uk/find-information-by-subject/elections-and-referendums/upcoming-elections-and-referendums/eu-referendum/electorate-and-count-information>

²³⁸ Նույնը

Brexit-ն արդիականացրեց Շոտլանդիայի անկախացման երկրորդ հանրաքվե անցկացնելու հարցը: 2016թ. հոկտեմբերի 20-ին Շոտլանդիայի կառավարությունը հրապարակել է երկրում կրկին անկախության հանրաքվե անցկացնելու մասին օրինագիծը՝ հետագա քննարկումների համար: Շոտլանդիայի նպատակը ԵՄ միասնական շուկայից դուրս չգալու իրավունք ստանալն է, այդ թվում՝ մնալով Միացյալ Թագավորության կազմում, բայց մեծացնել Շոտլանդիայի խորհրդարանի լիազորությունները միջազգային առևտրի մասնակցության և միգրացիայի հարցերում²³⁹:

Պահպանելով ազգային ինքնավարությունն ու քաղաքական գործընթացների հիմքում դնելով ազգային շահը՝ Շոտլանդիան ժողովրդավարական երկխոսություն է ծավալում Մեծ Բրիտանիայի կառավարության հետ՝ մեծացնելով ինքնավարության աստիճանն ու իշխանական լծակները: Սա օրինակ է, երբ իրացնելով ինքնորոշման իրավունքը, շոտլանդացի ժողովուրդն արտահայտեց իր կամքը և մնաց Մեծ Բրիտանիայի կազմում՝ ընտրելով ինքնաիրացման առավել լայն տարածքը: Այս խնդրի կարգավորման գործընթացում կարևորագույն հանգամանք է Լոնդոնի և Էդինբուրգի միջև երկխոսությունը:

Արևելյան Թիմորի անկախացման գործընթացն օրինակ է ազգային ինքնորոշման և դրա միջազգային ճանաչման՝ մարդու իրավունքների պաշտպանության դրդապատճառով և համատեքստում: Արևելյան Թիմորի անկախությունը ՄԱԿ կողմից ճանաչվել է այդ երկրում Ինդոնեզիայի կողմից իրականացվող մարդու իրավունքների զանգվածային խախտումները կանխելու նպատակով:

Արևելյան Թիմորը 1586թ.-ից եղել է Պորտուգալիայի գաղութներից մեկը: Ապագաղութացման գործընթացը մեկնարկել է 1974թ.-ին՝ Պորտուգալիան սահմանադրական օրենքով և ՄԱԿ Գլխավոր քարտուղարության հուշագրով ճանաչվել է Արևելյան Թիմորի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: 1975թ.-ին Պորտուգալիայի ընդունած մեկ այլ օրենքով տարածքի քաղաքական ապագան պետք է

²³⁹ Scottish independence: draft bill published on second referendum, 20/10/2016, <https://www.theguardian.com/politics/2016/oct/20/second-scottish-independence-referendum-bill-published>

որոշվեր ժողովրդի խորհրդի կողմից, որն ընտրվելու էր 1976թ. հոկտեմբերին: Սակայն, 1975թ. դեկտեմբերի 7-ին Ինդոնեզիան գորքեր է մտցրել Արևելյան Թիմոր և օկուպացրել տարածքը, 1976թ. մայիսին Արևելյան Թիմորի ժամանակավոր կառավարության կողմից նշանակված Արևելյան Թիմորի տարածաշրջանային ժողովրդական խորհուրդն ընդունել է օրենք Ինդոնեզիայի կազմի մեջ ինտեգրվելու վերաբերյալ: Ինդոնեզիայի կողմից ընդունված օրենքով Արևելյան Թիմորը դարձել է Ինդոնեզիայի 27-րդ նահանգ: ՄԱԿ-ի կողմից ընդունվել է Ինդոնեզիայի գործողությունները քննադատող բանաձև, ստեղծվել է Արևելյան Թիմորի խնդրով զբաղվող կոմիտե ՄԱԿ-ի ներքո²⁴⁰: Արևելյան Թիմորը Ինդոնեզիայի նահանգ ճանաչել է միայն Ավստրալիան:

Փաստացի, չնայած Պորտուգալիայի կողմից Արևելյան Թիմորի ապագադու թացման հիմքում դրվել էր ազգային ինքնորոշման սկզբունքը՝ ընտրված խորհրդարանի կողմից ընդունվող որոշման միջոցով Ինդոնեզիայի զինված ներխուժումը խափանեց ինքնորոշումը: Ժամանակավոր կառավարության ներկայացուցչականությունը և Լեզիտիմությունը հարցականի տակ դրվեց ՄԱԿ-ի կողմից²⁴¹:

Ինդոնեզիայի կազմում գտնվելու 24 տարիների ընթացքում Արևելյան Թիմորում տեղի են ունեցել մարդու իրավունքների միջարք խախտումներ, այդ թվում՝ անկախացման ձգտումների բռնի ճնշումներ, զինված բախումներ և այլն: Արևելյան Թիմորում ՄԱԿ ժամանակավոր կառավարության պահանջով CAVR (Comissao de Acolhimento, Verdade e Reconciliacao) հանձնաժողովի կողմից իրականացվել է Ինդոնեզիայի կառավարման ընթացքում՝ 1974-1999թթ., Արևելյան Թիմորում տեղի ունեցած բռնությունների գնահատում: Համաձայն զեկուլյցի տվյալների, հակամարտության պատճառով մահացել է

²⁴⁰ Maffei Maria Clara, The Case of East Timor before the International Court of Justice - Some Tentative Comments, 1993, p.p. 223-238.

²⁴¹ Guilhaudis Jean-François, "La question de Timor", Annuaire français de droit international, 1977, p. 314.

102 800 (+/- 12 000) մարդ, որոնցից մոտ 18 600-ը սպանվել է կամ անհետ կորել, 84 200-ը մահացել է սովից և հիվանդություններից²⁴²:

Արևելյան Թիմորի անկախության ճանաչման և հետկոնֆլիկտային կարգավորման գործընթացի վրա մեծ ազդեցություն են ունեցել երկու հիմնական գործոններ՝ Ինդոնեզիայի նախագահի փոփոխությունն ու նրա ծավալած ժողովրդավարական բարեփոխումները և միջազգային հանրության, մասնավորապես՝ ՄԱԿ-ի ակտիվ ներգրավումը: Իսկ անկախության հռչակման, այդ գործընթացում միջազգային աջակցության ապահովման հարցում որոշիչ դերակատարում են ունեցել Արևելյան Թիմորի նախկին վարչապետ և նախագահ ժոզե Ռամոնշ-Օրտան և արքեպիսկոպոս Կարլոշ Բելոն, ովքեր 1996թ.-ին Խաղաղության նոբելյան մրցանակի են արժանացել Արևելյան Թիմորի հակամարտության խաղաղ և արդար կարգավորման ուղղությամբ գործադրած ջանքերի համար:

1999թ.-ին Ինդոնեզիայի և Պորտուգալիայի միջև համաձայնագիր է կնքվել Արևելյան Թիմորի հարցի շուրջ, որով որոշվել է Արևելյան Թիմորում հանրաքվե անցկացնել²⁴³ և ընտրել երկու կարգավիճակների միջև՝ Յատուկ Ինքնավար Մարզի կարգավիճակ Ինդոնեզիայի կազմում կամ Արևելյան Թիմորի անկախացում Ինդոնեզիայից: Բացի այդ, Ինդոնեզիայի և Պորտուգալիայի միջև ձեռք բերված համաձայնագիրը ներառում է նաև «Արևելյան Թիմորի հատուկ Ինքնավարության սահմանադրական շրջանակ»՝ Ինդոնեզիայի կազմում Արևելյան Թիմորի Ինքնավարության և ինքնավարության ունենալի վերաբերյալ պայմանավորվածություններով²⁴⁴:

Յանրաքվեի արդյունքում քվեարկածների 78,5 տոկոսը դեմ է արտահայտվել Ինդոնեզիայի կազմում Ինքնավարությանը, 21,5

²⁴² Conflict-Related Deaths in Timor-Leste 1974-1999, The findings of the CAVR Report CHEGAI, <http://www.cavr-timorleste.org/updateFiles/english/CONFLICT-RELATED%20DEATHS.pdf>

²⁴³ Agreement Between the Republic of Indonesia and the Portuguese Republic on the Question of East Timor, 5 May 1999, http://www.usip.org/sites/default/files/file/resources/collections/peace_agreements/east_timor_05051999.pdf

²⁴⁴ A constitutional framework for a special autonomy for East Timor, https://web.archive.org/web/20080110074213/http://www.usip.org/library/pa/et/east_timor_05051999ques.html

տոկոսը՝ կողմ²⁴⁵: Ինդոնեզիան համաձայնել է ճանաչել հանրաքվեի արդյունքները:

Հանրաքվեի անցկացումը բռնության նոր ալիք առաջացրեց Արևելյան Թիմորում, ինչի արդյունքում ՄԱԿ ընդունեց համապատասխան բանաձև, ըստ որի ձևավորեց Արևելյան Թիմորի ՄԱԿ ժամանակավոր կառավարությունը, որը պետք է աջակցություն ցուցաբերեր Արևելյան Թիմորի պետական, ժողովրդավարական ինստիտուտների ձևավորմանը: Բանաձևը նախատեսում էր նաև խաղաղապահ ուժեր տեղակայել, ֆինանսական միջոցներ տրամադրել հաղորդակցության ուղիների վերականգնման համար, փախտականներին հնարավորություն և ընձեռել ընտրել իրենց բնակության նախկին վայրեր վերադարձի և բնակության նոր վայրերում մնալու միջև²⁴⁶: 2002թ.-ին Արևելյան Թիմորը դարձավ ինքնավար պետություն և անդամակցեց ՄԱԿ-ին:

Արևելյան Թիմորի անկախացման գործընթացը ազգային ինքնորոշման՝ որպես ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման երաշխիքի օրինակ է: Այս գործընթացում մեծ է նաև միջազգային, մասնավորապես՝ ՄԱԿ նշանակությունը Արևելյան Թիմորում և՛ անվտանգության ապահովման, և՛ պետականաշինության գործընթացներում:

Այս ենթազլխում դիտարկված հակամարտությունների առանձնահատկություններն ու կարգավորման վրա ազդող գործոնները հաշվի առնելով՝ այդ փորձի միանշանակ ընդօրինակում հնարավոր չէ: Սակայն առանձին հարցերում միջազգային մոտեցումներն ու առաջարկված լուծումները որոշակի տեղայնացման պարագայում կարող են իրենց կիրառելիությունը ստանալ նաև Ղարաբաղյան հակամարտության համատեքստում:

²⁴⁵ SECRETARY-GENERAL INFORMS SECURITY COUNCIL PEOPLE OF EAST TIMOR REJECTED SPECIAL AUTONOMY PROPOSED BY INDONESIA, UN Security Council, SC/6721, 3 September 1999, <http://www.un.org/press/en/1999/19990903.sc6721.html>

²⁴⁶ Резолюция 1272 (1999), <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N99/312/79/PDF/N9931279.pdf?OpenElement>

Կարևոր է ուշադրություն դարձնել, որ եվրոպական տարածաշրջանի հակամարտությունները մեծամասամբ կարգավորվում են հակամարտության անմիջական կողմերի երկխոսության միջոցով, փորձ է արվում գտնել այնպիսի լուծում, որը կբավարարի բոլոր կողմերի շահերին և չի հանգեցնի հետագա նոր սրացումների առաջացմանը: Արևելյան Թիմորի պարագայում որոշիչ դերակատարում են ստանում միջազգային դերակատարները՝ հակամարտության անմիջական կողմերի բավական ցածր քաղաքական կամքի պարագայում:

Չաջորդ ենթազլխում վերլուծության է ենթարկվել վերոնշյալ հակամարտությունների փորձի կիրառելիությունը Ղարաբաղյան հակամարտության համար և առանձնացվել են կիրառելի մոտեցումները:

3.3. Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունը Ղարաբաղյան հակամարտության համառոտում

Հակամարտությունները, չնայած նմանություններին և ընդհանուր տրամաբանության հատումներին, տարբերվում են միմյանցից թե՛ ներքին գործոններով՝ կողմերի առանձնահատկություններ, նրանց հարաբերություններ, պատմություն, թե՛ դրանց վրա տարածաշրջանային և միջազգային աշխարհաքաղաքական գործընթացների, երրորդ երկրների շահերի ազդեցությամբ:

Ըստ Տ.Գուրի, էթնիկ հակամարտությունները մշտական բնույթ են կրում և սոցիալ-քաղաքական համակարգի բաղադրիչ են²⁴⁷: Հակամարտությունների պատճառները Պ.Սոռոկինը տեսնում է բնակչության մեծամասնության բազային հիմնական բնագոյների ճնշման մեջ²⁴⁸, իսկ սոցիալ-հոգեբանական տեսության

²⁴⁷ Глухова А., Политические конфликты: основания, типология, динамика (теоретико-методологический анализ). – М.: Эдиториал УРСС, 2000, с. 234.

²⁴⁸ Сорокин П., Человек, цивилизация, общество. – М.: Политиздат, 1992, с. 272-273

կողմնակիցները պատճառների շարքին դասում են նաև մշակութային տրավմաները, փոխադարձ պահանջները և այլն²⁴⁹:

Չակամարտության նենտերի կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությանը հնարավորություն է տալիս դուրս բերել տարբեր հակամարտության նենտերի կարգավորման գործընթացի վրա ազդող գործոնները, կարգավորման համար անհրաժեշտ պայմանները և բախումնային առանձին դրույթների հաղթահարման ուղիները: Չակամարտության նենտերի համեմատական վերլուծությանը, որն իրականացվում է սահմանափակ թվով հակամարտության նենտերի խորքային և համատեքստային վերլուծության միջոցով, հնարավորություն է տալիս կատարել մի կողմից առավել արդյունավետ համատեքստային վերլուծության, մյուս կողմից առավել համակարգված չափումներ և հիպոթեզերի փորձարկում²⁵⁰:

Ստորև առանձնացված են դիտարկված միջազգային փորձի այն հիմնական դրույթները, որոնք կարող են նշանակություն ունենալ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի համատեքստում՝ անցկացված է համադրական վերլուծության բախումնային դրույթների հաղթահարման Ղարաբաղյան հակամարտության փորձի հետ, մատնանշված են հիմնական նմանություններն ու տարբերությունները:

Կիպրոսի հակամարտության պարագայում կարգավիճակի հարցի վերջնական առաջարկվող տարբերակների հնարավոր գուգահեռումը Ղարաբաղյան հակամարտության հետ նպատակահարմար չէ՝ ելնելով այն հանգամանքից, որ կիպրական կարգավորման հիմքում դրվում է կիպրական կղզու վերամիավորման հարցը, ինչն ընդունելի է երկու կողմերի համար էլ, որպես բանակցության նենտերի հիմք: Չիմնական բախումնային դրույթը Կիպրական հակամարտության ներքո կառավարման կարգն է՝ միավորված պետության ներքո կղզու երկու հատվածների լիազորությունների բաշխումը: Մինչդեռ Ղարաբաղյան հակամարտության դեպքում \$եդերացիայի

²⁴⁹ Арутюнян Ю., Дробижева Л., Сусоколов А. Этносоциология. – М.: Аспект Пресс, 1999, с. 94.
²⁵⁰ Collier David, The Comparative Method, Political Science: The State of the Discipline II, Washington, D.C.: American Political Science Association, 1993, p.p. 105-119.

ձևավորումը, որպես կարգավորման հնարավոր տարբերակ, այլևս արդիական չէ, քանի որ 1998թ.-ին Ադրբեյջանի կողմից մերժվել է, երբ պաշտոնական Բաքուն մերժել է «Ընդհանուր պետություն» փաթեթը: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի դինամիկան հանգեցրել է նրան, որ կարգավիճակի հարցը բացառապես պայմանավորվում է ժողովրդի կամարտահայտմամբ:

Կիպրոսի հակամարտության կարգավորման գործընթացում տարածքների վերադարձը դիտարկվում է որպես անհրաժեշտ քայլ, բայց միայն բոլոր մյուս բախումնային դրույթների հաղթահարումից հետո: Բացի այդ, կարգավորման տարբեր փուլերում տարածքների վերադարձի դիմաց ենթադրվել է թուրք-կիպրացիներին տրամադրել փոխհատուցում, \$իսանսական աջակցություն, ինչպես նաև տարածքների վերադարձի հարցը կախվածության մեջ է դրվել անվտանգության երաշխիքներից:

Փախտականների վերադարձի հարցը դիտարկվում է մի քանի այլ դրույթների հետ նույն փաթեթի ներքո՝ վերադարձի վայրերում նրանց թվային գերակշռում թույլ չտալը, այդ բնակավայրերից հեռացող թուրք-կիպրացիներին փոխհատուցում տրամադրելը և այլն: Ղարաբաղյան հակամարտության պարագայում բանակցային գործընթացի այս փուլում փախտականների վերադարձի հարցին առավել մանրամասն անդրադարձ դեռևս չի կատարվում: Սակայն, Ղարաբաղյան հակամարտության բանակցությունների հաջորդ փուլում՝ կարգավորման շրջանակային պայմանագրում, փախտականների հարցի հիմքում կարևոր է դնել երկու դրույթ՝ փախտականների միակողմանի վերադարձի անընդունելի լինելը և այն, որ վերադարձը չի կարող լինել ընդհանրական: Դա նշանակում է, որ պետք է նախատեսվի նաև պատերազմի ժամանակ Ադրբեյջանը լքած հայերի վերադարձ կամ փոխհատուցման տրամադրում, իսկ ադրբեյջանցի փախտականները պետք է վերադառնան միայն Ադրբեյջանի վերահսկողության ներքո հանձնվող տարածքներ՝ նրանց թվային գերակշռում թույլ չտալու և լարվածության նոր օջախներ չառաջացնելու համար: Այդ

փուլում արդեն, ինչպես և կիպրական խնդրի պարագայում, կարող են հիմքում դրվել թվային գերակշռում թույլ չտալու և անվտանգության ապահովման հարցերը:

Խաղաղապահների հարցը քննարկվում է երկու հակամարտության նկատմամբ պարագայում էլ, սակայն ոչ մեկում չկա այս հարցի շուրջ հստակություն:

Կողմերի միջև վստահության միջոցների տեսակետից կիպրական կղզում կարևոր է ռազմական գործողությունների, սահմանային և արվածության բացակայությունը, ինչը մեծացնում է խաղաղ երկխոսության հաջողության հնարավորությունը: Մյուս կարևոր քայլն էրջանի օդանավակայանի շահագործումն է՝ Յունսիսային Կիպրոսի չճանաչված և ինքնուրույն պարագայում գտնված իրավական որոշ և ուժումների շնորհիվ, ինչին Կիպրոսի Յանրապետությունը չի խոչընդոտում: Այս վստահության միջոցները հնարավոր են դարձրել խաղաղ բանակցություններն ու ընթացող բանակցությունների նկատմամբ վստահությունն ու իրական կարգավորման ակնկալիքները: Մինչդեռ Ադրբեջանն ամեն կերպ խոչընդոտում է Ստեփանակերտի օդանավակայանի շահագործումը՝ անկախ դրահումանիտար նշանակությունից: Բացի այդ, կիպրական հակամարտության կողմերի միջև ապահովված է մարդկանց ազատ տեղաշարժ՝ նույնիսկ իրականացվել է վիզային ռեժիմի ազատականացում:

2004թ. հանրաքվեից հետո, չնայած հասարակությունների մոտ \$րուստրացիոն գործընթացներին, բանակցությունների վերսկսման, երկխոսության հաստատման հարցում մեծ նշանակություն են ունեցել երկու կողմերի հասարակությունները, ՅԿ ներկայացուցիչները, որոնք ցույցեր են անցկացրել՝ պահանջելով միավորել կղզին: Այդ գործընթացում կարևոր դեր է խաղացել «Կանաչ գծի» բացումը և հասարակությունների միջև շփումների ակտիվացումը, նախկին բնակության վայրեր այցելելու հնարավորության ընձեռումը: Մարդկանց միջև շփումը առաջացրել է կարգավորման պահանջ

«ներքևից վերև», որն իշխանության է բերել կարգավորման ուղիներ փնտրող քաղաքական ուժերին²⁵¹: Մինչդեռ Ղարաբաղյան հակամարտության պարագայում Ադրբեջանի իշխանությունների ներկայիս քաղաքականությունն ամեն կերպ խոչընդոտում է հասարակությունների միջև շփումներին և ժողովրդական դիվանագիտությանը:

Կիպրական հիմնախնդրի կարգավորման, և մասնավորապես, կողմերի միջև երկխոսության հնարավորության մեծացման, ՅՆՍԻՍային Կիպրոսում ժողովրդավարական ինստիտուտների զարգացման, ընդհանուր չափորոշիչների տեղայնացման հարցում մեծ է ԵՄ դերակատարումը: Չնայած ՅՆՍԻՍային Կիպրոսի չճանաչված լինելուն, ԵՄ-ն ակտիվ համագործակցում է կղզու հյուսիսային հատվածի հետ՝ այդ կերպ նպաստելով վերջինիս բնականոն զարգացմանը ու կղզու երկու հատվածների միջև տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում մեծ տարբերությունների հաղթահարմանը:

Կիպրոսի պարագայում առկա է նաև դերակատարների հստակություն՝ ի դեմս երեք երաշխավոր երկրների՝ Յունաստանի, Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի, որոնք մի կողմից անմիջական շահագրգռվածություն ունեն հակամարտության կարգավորման ելքերի հարցում, մյուս կողմից՝ խորքային պատկերացում ունեն հակամարտության բոլոր բաղադրիչների վերաբերյալ: Ղարաբաղյան հակամարտության պարագայում երրորդ երկրների՝ ի դեմս հարևան երկրների, ներգրավումն ու ազդեցությունը գործընթացի վրա ավելի բազմաշերտ է: Բայց ի տարբերություն Կիպրոսի, միջնորդ և երաշխավոր հիմնական երկրները՝ ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա, ՄԱԿ ԱԽ մշտական անդամ են, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ հնարավոր համաձայնությունը կյանքի կոչելու հարցում:

Կոսովոյի հակամարտության կարգավորման գործընթացի դիտարկումը հնարավորություն է տալիս եզրակացություններ անել միջազգային ուժերի ակտիվ և ուղղակի ներգրավմամբ

²⁵¹ Hadjipavlou Maria, The “Crossings” along the Divide: The Cypriot Experience, The Walls between Conflict and Peace, Edited by by Alberto Gasparini, Brill Academic Pub; Lam edition, 2017, p.p. 197-215.

հակամարտության կարգավորման արդյունավետության վերաբերյալ և դուրս բերել այն հիմնական խնդիրները, որոնք լուծել չի հաջողվում նույնիսկ այդ դեպքում:

Կարգավիճակի հարցի որոշման հարցում Կոսովոյում որոշիչ ազդեցություն է ունեցել միջազգային հանրությունը, մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի մեծ աջակցությունը: Կոսովոն միակողմանի կերպով հռչակել է իր անկախությունը՝ համաձայնության չգալով Սերբիայի հետ, ինչին հասել է միջազգային հանրության աջակցությամբ և ճանաչվել է ՄԱԿ անդամ 100-ից ավելի երկրների կողմից: Կոսովոյում ալբանական պետության ստեղծումը պայմանավորված էր արտաքին ուժերի գործողությամբ, ինչի օրինականացման փորձ կատարվեց այն երկրների կողմից, որոնք ճանաչեցին Կոսովոյի անկախությունը: Նախքան ՆԱՏՕ միջամտությունը ալբանացիները փոքրամասնություն էին կազմում Չարավսլավիայի Դաշնային Չանրապետության անկման հետևանքով առաջացած Սերբիայի Չանրապետությունում: ՆԱՏՕ միջամտությունից հետո ալբանացիները մեծամասնություն կազմեցին Կոսովոյում, որտեղ սերբերը դարձան փոքրամասնություն²⁵²: Ղարաբաղյան հակամարտության պարագայում անկախության հռչակումը, չնայած իրավական հիմքերին, ոչ միայն չի ստացել միջազգային աջակցություն՝ այլ հանգեցրել է ֆիզիկական գոյության սպառնալիքի՝ ի դեմս Ադրբեյջանի սանձազերծած պատերազմի:

Կոսովոյի, ինչպես նաև Կիպրոսի հակամարտության պարագայում կարևոր դերակատարում է ունեցել այն հանգամանքը, որ բանակցություններն ընթանում են անմիջական կողմերի՝ Կոսովոյի և Սերբիայի միջև, մինչդեռ Ղարաբաղյան կարգավորման գործընթացում Ադրբեյջանը հրաժարվում է ուղղակի բանակցություններ անցկացնել Արցախի հետ:

²⁵² Խարալամբիդիս Յ., ՏՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՉՄՐ ԵՎ «ՊՐԱՅԱՅԻ ԶԱԽՃԱՊԱԿԻՆ» Կիպրոսի, Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների համեմատական վերլուծություն, «21-րդ ԴԱՐ», թիվ 2 (54), 2014 թ., էջ 32:

Կոստվոյ ու մ մեծ է միջազգային աջակցությունն ինչպես դեռևս ակտիվ կոնֆլիկտի, այնպես էլ հետկոնֆլիկտային փուլերում՝ ի դեմս Կոստվոյի պետական ինստիտուտների կայացման, զարգացման գործընթացում ԵՄ ու ղղակի ներգրավման և ֆինանսական ու տեխնիկական աջակցության:

Փախտականների հարցում Կոստվոյի օրինակը ցույց է տալիս, որ չնայած նույնիսկ չի իրականացվել փախտականների լիարժեք վերադարձ, այնուամենայնիվ համակեցության կազմակերպումը մեծ խնդիր է՝ հանգեցնող փակ շրջանների, չկառավարվող տարածքների ձևավորման պետության տարածքում: Այն, որ սերբերն այսօր Կոստվոյ ու մ ապրում են առանձին, փակ շրջանում և չեն ենթարկվում Կոստվոյի իշխանություններին, միաժամանակ ստեղծելով սահմանային լարվածություն Սերբիայի հետ, ցույց է տալիս, որ նույնիսկ միջազգային ներկայությամբ անվտանգության երաշխիքների ապահովումը չի չեզոքացնում փախտականների վերադարձից բխող համակեցության խնդիրները:

Յյուսիսային Իռլանդիայի հակամարտության կարգավորման գործընթացը դիտարկվում է որպես «մոդելային օրինակ» այլ հակամարտությունների համար, քանի որ ցույց է տալիս, որ նույնիսկ ամենաձգձգված հակամարտությունները կարող են լուծում ստանալ և նույնիսկ ամենաձայրահեղական դիրքորոշում ունեցող ուժերի ներգրավումը բանակցություններում կարևոր է խաղաղության հաստատման համար²⁵³:

Այս հակամարտության կարգավորման փորձն ու շագրավ է այն համատեքստում, որ լարվածության աճի փուլում բախումներից խուսափելու համար որոշում է կայացվել հանրաքվեի անցկացման վերաբերյալ: Յանրաքվեն դիտարկվել է որպես Յյուսիսային Իռլանդիայի կարգավիճակի հարցի կարգավորման առավել լեգիտիմ ճանապարհ, որը հնարավորություն կտա խուսափել ռազմական բախումների վերսկսումից: Միջազգային այդ ընկալմամբ է

²⁵³ Hughes James, *Reconstruction Without Reconciliation: Is Northern Ireland a “Model”?*, *After Civil War Division, Reconstruction, and Reconciliation in Contemporary Europe*, edited by Bill Kissane, University of Pennsylvania Press, 2015, p.p. 245-272.

պայմանավորված նաև այն հանգամանքը, որ երկարատև անարդյունավետ բանակցություններին և կարգավորման տարբեր փաթեթների մերժումից հետո Ղարաբաղյան հակամարտության կարգավորման միջնորդների կողմից առաջարկվել է վերջնական կարգավիճակի հարցը կարգավորել հանրաքվեի միջոցով:

Հյուսիսիռլանդական բանակցություններն ու կարգավորման ձախուղված փորձերը ցույց են տվել, որ հակամարտության կարգավորումն առանց բոլոր կողմերն ընդգրկող բանակցությունների հնարավոր չէ: Այդ պատճառով Բելֆասթի պայմանագրի բանակցություններում ներգրավվել են բոլոր քաղաքական ուժերը, այդ թվում՝ Իռլանդական հանրապետական բանակի քաղաքական թևը: Այս հանգամանքը ևս մեկ անգամ հիմնավորում է բանակցություններում Արցախի լիարժեք ներգրավման անհրաժեշտությունը:

Չնայած կարգավորման փուլերի մեծ տարբերությանը, հյուսիսիռլանդական հակամարտության փորձը նույնպես ցույց է տալիս, որ կարգավորման գործընթացում և, հատկապես, թե՛ փուլում, հրադարարի ռեժիմի խախտումների դեպքում կարևոր խնդիր է միջնորդների անհասցեականությունը, սրող կողմի անպատժելիությունը: Իռլանդական հակամարտության կարգավորման գործընթացի հիմքում այդ խնդրի հաղթահարման նպատակով ներդրվել են Միտչելի սկզբունքները՝ հրադարարի պահպանման մասին, ըստ որոնց, խախտող կողմը դուրս էր մղվում բանակցային գործընթացից: Դա, և ընդհանրապես այս հակամարտության կարգավորման գործընթացը, կառուցված է «մտրակի և բլիթի» սկզբունքի վրա, որը պայմանավորվածություններին պահպանման համար ենթադրում է խրախուսում, իսկ խախտման դեպքում՝ պատիժ: Այս մեխանիզմի ներդրումը կարող է առաջընթաց ապահովել նաև Ղարաբաղյան հակամարտության պարագայում:

Արցախի պարագայում շատ սահմանափակ է արտաքին աջակցությունը ժողովրդավարացման, պետական ինստիտուտների

զարգացման գործընթացներում: Ղարաբաղին պետական մակարդակով
ֆինանսական աջակցություն է տրամադրվում բացառապես ՀՀ և
մասամբ ԱՄՆ-ի կողմից: ԵՄ-ն առավելապես հանդես է գալիս
հետկոնֆլիկտային վերականգնումն ապահովելու, այդ
գործընթացում աջակցելու երաշխավորմամբ: Մինչդեռ
Հյուսիսային Իռլանդիայի դեպքում ԵՄ-ն 1989թ.-ից ֆինանսական
աջակցություն է տրամադրում խաղաղ կարգավորման համար,
աջակցում է Հյուսիս-Հարավ անդրսահմանային
համագործակցությանը՝ դերակատարում է ստանձնել
փոխվստահության հաստատման և տնտեսական համագործակցության
իրավական հիմքի ապահովման գործընթացում: Հյուսիսիռլանդական
օրինակը ցույց է տալիս, որ արտաքին աջակցությունը կողմերի
միջև երկխոսության կառուցման և հակամարտության կողմերում
բնականոն զարգացման գործընթացների խթանման հարցերում մեծ
դերակատարում ունի հակամարտության կարգավորման ընդհանուր
համատեքստում:

Համակեցության խնդիրը, ինչպես Կոսովոյի պարագայում,
առկա է նաև Հյուսիսային Իռլանդիայում: Չնայած, որ երկարատև
բանակցությունների և հետևողական գործընթացի միջոցով
հաջողվել է հասնել խաղաղության համաձայնագրի ստորագրմանը և
հաղթահարել հակամարտության սուր փուլերը՝
հյուսիսիռլանդական հակամարտությունը վերջնականապես
կարգավորված համարել հնարավոր չէ: Մշտապես պահպանվում է
լարվածությունը և խաղաղության փխրունությունը, և, օրինակ, ԵՄ
կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու հարցը ևս մեկ անգամ
անկայունության սպառնալիք առաջացրեց այս տարածաշրջանում:
Պահպանվող այս սպառնալիքի պատճառը կրկին հակամարտող երկու
կողմերի համակեցությունն է՝ անգլիացիների և իռլանդացիների
խաղաղ գոյակցման փորձը Հյուսիսային Իռլանդիայում: Չնայած
ստեղծված պաշտոնական մեխանիզմներին և իշխանության լծակների
բաշխմանը՝ այս փորձն ակնհայտորեն ցույց է տալիս, որ իբրև թե
հակամարտության կարգավորման նպատակով հակամարտող

Ժողովուրդներին արհեստական համակեցության պարտադրելը մշտապես պահպանում է հակամարտության վերսկսման սպառնալիքը:

Շոտլանդիայի անկախության հանրաքվեն օրինակ է կողմերի միջև կառուցողական երկխոսության, որը նույնիսկ իրավական անհրաժեշտ հիմքի բացակայության պարագայում հակասությանն ենթի խորացում թույլ չտալու նպատակով ստեղծեց անհրաժեշտ իրավական հիմքը և հարցի կարգավորման հիմքում դրեց ժողովրդի կամարտահայտումը:

Քաղաքակիրթ այս երկխոսության համատեքստում կարևոր է նաև, որ Մեծ Բրիտանիան, ի դեմս հիմնական բանակցողների՝ վարչապետի, իսկզբանե համաձայնել է ընդունել հանրաքվեի ցանկացած արդյունք և չի խոսել Շոտլանդիայի անկախացման հարցը Միացյալ Թագավորության ողջ տարածքում հանրաքվեի դնելու մասին: Մինչդեռ Ադրբեջանի կողմից հարց բարձրացվում է ողջ Ադրբեջանում հանրաքվե անցկացնելու վերաբերյալ: Սակայն, ազգի ինքնորոշումը բացառապես իր կամարտահայտման արդյունք է և չի կարող կախվածության մեջ դրվել այլ ժողովուրդներից և պետությանն ենթից:

Շոտլանդիայի օրինակը նաև ցույց է տալիս, թե ինչպես են եվրափնտեգում և ինքնավարության աստիճանի փոփոխությանն ենթարկում ազգային գիտակցության, նույնականացման վրա: Այս երկու գործընթացները մեծացրել են շոտլանդացիների տարածաշրջանային ինքնանույնականացումը, ազգային ինքնության կարևորումը և ինքնորոշման ավելի բարձր մակարդակի ձգտումը: Դրան գուճահեռ ազգային ի հետ մեկտեղ ամրապնդվել է նաև քաղաքացիական ինքնագիտակցությանը և ինքնանույնացումը²⁵⁴:

Արևելյան Թիմորի պարագայում, եթե անմիջապես կոնֆլիկտի կարգավորման գործընթացում շատ չեն գուճահեռման հնարավորությունները, ապա դրանք առկա են երկու առանձին բաղկացուցիչներում:

²⁵⁴ Фадеева Л., Идентичность на пересечении интеграции и деволюции: шотландский кейс, «Современная Европа», № 5, 2015, с. 91-99.

Օրինակ, Ապրիլյան պատերազմը, եթե շարունակություն է ունենար և չհաջողվեր կանխել դրա՝ երկարատև պատերազմի վերածումը, այն կարող էր ցույց տալ միջազգային հանրությանը, որ միակ անվտանգության երաշխիքն անկախության ճանաչումն է: Սակայն, սա ոչ բնական գործընթաց է, քանի որ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչման, այդ գործընթացին միջազգային աջակցության հարցը պայմանավորվում է ոչ թե միջազգային իրավունքով և ամրագրված իրավունքի իրացմանն աջակցություն ցուցաբերելով, այլ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգով և դրա չեզոքացման անհրաժեշտությամբ:

Մյուս խնդիրը միջազգային հանրության ուշադրությունն է փակ համակարգերի նկատմամբ: Արևելյան թիմորի պարագայում միջազգային հանրության ուշադրությունը հաջողվեց սկսել ինդոնեզական ուժերի կողմից իրականացվող զանգվածային ոչնչացման վրա միայն առանձին անհատների, նրանց գործադրած ջանքերի և ճանաչելիության շնորհիվ, ինչի արդյունքում ճանաչվեց Արևելյան թիմորի անկախությունը՝ ցեղասպանություն թույլ չտալու համար: Նույն կերպ, եթե միջազգային հանրության ուշադրությունն առավել ակտիվ սկսեվեր ԽՍՀՄ ներսում հասունացող Ղարաբաղյան հակամարտության և ԽՍՀՄ փլուզմանը զուգահեռ ընթացող գործընթացների վրա, ապա ակնհայտ կլիներ, որ Ադրբեյջանի ծավալած գործողությունները պատերազմի որոշակի փուլերում սպառնում էին Ղարաբաղում հայերի բնաջնջմամբ: Եթե Արևելյան թիմորի օրինակը ցույց է տալիս, որ ՄԱԿ-ն իր հումանիտար պարտքն է կատարել՝ աջակցելով Արևելյան թիմորի անկախացմանը, ապա Ղարաբաղի պարագայում ՄԱԿ-ը որևէ կերպ չի արձագանքել բնաջնջման սպառնալիքին, և այդ խնդրի լուծումն իր վրա է վերցրել Ղարաբաղի ժողովուրդը՝ Հայաստանի աջակցությամբ: Այս համատեքստի ներկայացումը միջազգային հանրությանը կարող է նպաստել հակամարտության բնույթի և նման զարգացման պատճառների մասին ամբողջական պատկերացման

ձևավորմանը, ինչը կարող է հանգեցնել նաև միջազգային հանրության ընկալու մեծերի որոշակի փոփոխության:

Բացի այդ, վերլուծությունները ցույց են տալիս, որ ՄԱԿ առաքելությունն Արևելյան Թիմորում ունեցել է մի շարք բացթողումներ, որոնք բխում են հակամարտության վերաբերյալ խորքային պատկերացում չունենալուց, իրավիճակին հակամարտության ողջ ընթացքում չհետևելուց, տեղական առանձնահատկությունները հաշվի չառնելուց²⁵⁵: Նույն խնդիրն առկա է նաև Արցախի պարագայում, քանի որ չճանաչվածության վրա հիմնվելով միջազգային հանրությանը մշտական ներկայություն չի ապահովում Արցախում, ինչը կարող է նույնաման խնդիրներ առաջացնել, ինչ Թիմորում:

Հակամարտությունների կարգավորման գործընթացների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ հակամարտությունների կարգավորման գործընթացում առաջընթաց ապահովելու համար կարևորագույն պայմանը բոլոր կողմերի ներգրավումն է բանակցություններում, պայմանավորվածությունների կատարման երաշխիքների ապահովումը, ինչը մեծապես կախված է կողմերի ժողովրդավարացման մակարդակից և միջազգային հանրության համապատասխան ներգրավումից: Կատարված հետազոտությունը թույլ է տալիս նաև արձանագրել, որ հակամարտության կողմերի քաղաքական արժեքաբանությունը, արդիականացման մակարդակն ուղղակիորեն ազդեցություն են ունենում քաղաքական բանակցությունների և հակամարտության կարգավորման՝ ելքի վրա:

Կատարված աշխատանքը հնարավորություն է ընձեռում առանձնացնել բախումնային նմանատիպ դրոյթների հաղթահարման միջազգային միտումները, առավել արդյունավետ մեթոդները: Վերոնշյալ վերլուծության հիման վրա աշխատանքի ամփոփիչ

²⁵⁵ Ofstad Olav, Reconciliation and conflict resolution in East Timor lessons for future peace operations, University of Oxford, 2012, <http://www.elac.ox.ac.uk/downloads/Reconciliation%20and%20conflict%20resolution%20in%20East%20Timor%20Apr%202012.pdf>

մասում ներկայացվում են համապատասխան առաջարկներ Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում առաջընթաց արձանագրելու, բանակցությունների համար կառուցողական միջավայր ստեղծելու համար, ինչպես նաև առաջարկվում են գործողություններ, որոնք անհրաժեշտ են միջազգային հանրության աջակցությունը մեծացնելու, միջազգային ընկալումներում փոփոխություններ արձանագրելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջազգային արդի քաղաքական զարգացումների համատեքստում Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդիրը նորովի ընկալում է ստանում՝ ոչ միայն որպես Եթևոքաղաքական բնույթի հակամարտության, այլև ողջ տարածաշրջանի արդիականացման, ժողովրդավարական, կայուն զարգացման գործոն:

Չուգահեռաբար, ինքնորոշման հիմնախնդիրն արդի միջազգային քաղաքական գործընթացներում աստիճանաբար ավելի մեծ դեր է սկսում խաղալ՝ ի դեմս ինքնորոշման իրավունքի իրացման շուրջ ծագող հակամարտությունների և դրանց կարգավորման ուղղության մեջ ծանրակշիռ քայլերի:

Այս համատեքստում Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման դիտարկումը լրացուցիչ հնարավորություն է ընձեռում ուղիներ որոնելու՝ միջազգային միտումներն ու արդի աշխարհակարգի կողմից ընձեռվող հնարավորություններն ի շահ Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրացման, ճանաչման, ինչպես նաև հիմնախնդրի կարգավորման ծառայեցնելու համար: Միաժամանակ, միջազգային փորձի դիտարկումը ցույց է տալիս, որ միջազգային պատմության մեջ չկան «հաջողված պատմություններ», որոնց փորձն ամբողջովին կիրառելի է Ղարաբաղյան հակամարտության համար, ուստի միջազգային փորձը դիտարկվել է բացառապես առանձին հարցերի լուծման եղանակների և/կամ դրանց ներքո կիրառված առանձին գործիքների տեղայնացման հնարավորության համատեքստում:

Կատարված աշխատանքի արդյունքում եկել ենք մի շարք եզրակացությունների, որոնց հիման վրա ներկայացվում են առաջարկություններ՝ ուղղված Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի հետագա զարգացումներից բխող հնարավոր մարտահրավերների կանխարգելմանը և, զուգահեռաբար, միջազգային հարաբերություններում Արցախի սուբյեկտայնությունը բարձրացնելուն: Բանակցային

գործընթացին առնչվող առաջարկություններն ուղղված են հայկական կողմերի շահերը թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում հետևողականորեն պաշտպանելուն՝ ելնելով բանակցային գործընթացի հնարավոր զարգացումներից:

Կատարած հետազոտության հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացում կարևոր դեր են խաղում հակամարտության կողմերի քաղաքական ընդհանրությունները, որոնք թեև չեն երաշխավորում, սակայն մեծացնում են խաղաղ կարգավորման հնարավորությունը: Իսկ հակամարտության կողմերի՝ տարբեր քաղաքականությունների պատկանելու պարագայում կարևոր է առնվազն ընդհանուր արժեքային դաշտի առկայությունը, որն զգալիորեն հեշտացնում է կողմերի երկխոսությունն ու հակամարտության կարգավորման ուղիների նկատմամբ փոխադարձ ընդունելի մոտեցումների ձևավորումը:

2. Հակամարտության կողմերի քաղաքական արդիականացման մակարդակը, ժողովրդավարության որակն ու արժեքային նմանությունները կամ տարբերությունները բավական էական նշանակություն են ստանում հակամարտությունների կարգավորման գործընթացում: Կողմերի արժեհամակարգն է պայմանավորում հակամարտության, դրա կարգավորման ուղիների ընկալումը, պատրաստակամությունն իրական քայլերի, ինչպես նաև սեփական հանրության հանդեպ իրականացվող քարոզչական քաղաքականությունը: Արցախյան հակամարտության պարագայում բանակցային ուղով կարգավորման առաջընթացի կարևորագույն նախադրյալներից մեկը հակամարտության կողմերի արժեքային դաշտերի և ընկալումների միջև մեծ տարբերությունների հաղթահարումն է, բայց ոչ արհեստական միջինացման ճանապարհով:

3. Ղարաբաղյան հակամարտությունը որոշակի ազդեցություն է ունենում նաև հակամարտության կողմերի ներքին զարգացումների

վրա՝ անվտանգություն-բանակցային գործընթաց-
ժողովրդավարություն փոխկապակցված շղթայի միջոցով: Այդ
համատեքստում կարող են դիտարկվել նաև Արցախում և
Հայաստանում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումները
(առաջինի դեպքում՝ անցումը նախագահական, երկրորդի դեպքում՝
խորհրդարանական կառավարման համակարգերի), որոնք որոշ
դեպքերում միանշանակ ընկալելի չեն՝ ելնելով պահպանվող
պատերազմի վտանգի պայմաններում արագ արձագանքի
անհրաժեշտությունից և այլ անվտանգային խնդիրներից: Ուստի
երկու հայկական պետություններին, մի կողմից, ջանքեր են
պահանջվելու՝ նման կերպափոխումներից բխող հնարավոր
մարտահրավերները հաղթահարելու համար, մյուս կողմից՝ որոշակի
ժամանակ և ճկունություն՝ ժամանակի ընթացքում դրանց
արդյունավետությունը գնահատելու և, անհրաժեշտության
դեպքում, կառավարման համակարգերը կրկին որոշակի փոփոխության
ենթարկելու համար:

4. Ղարաբաղյան հակամարտությունը դարձել է
հասարակություններին յուրաքանչյուրին պատկանող անհատների
ինքնորոշման բաղադրիչ, ինչը խորացնում է թշնամանքն ու
դժվարացնում փոխզիջումը: Եթե իկլարվածությունը նպաստում է
ազգերի մոտ «տուժած ազգի» և «օրինական իրավունքի»
սկզբունքների ամրապնդմանը, ինչն առաջացնում է թշնամական,
լարված հարաբերություններ: Ուստի, կարևոր է բալանսավորված և
կողմերի հիմնական շահերը բավարարող լուծումների ապահովումը,
ինչն ուղղակիորեն կախված է քաղաքական կարգավորման ընթացքում
փոխադարձ զիջումների գնալու և «win-win» ելքով
հակամարտությունը կարգավորելու քաղաքական էլիտաների
պատրաստակամությունից:

5. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (CRRC)
կողմից իրականացված «Կովկասյան բարոմետր» սոցիոլոգիական
հարցումների տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում և
Ադրբեյջանում հակամարտության կարևորումը տարբեր է, եթե

Ադրբեջանում Ղարաբաղյան հակամարտությանն ու դրան հարակից հարցերը կարևորվել են որպես երկրի համար առաջնային հարց, ապա Չայաստանում այն բավական փոքր կարևորում է ստացել հանրության կողմից (*հարցումն անցկացվում է միայն Չարավային Կովկասի ճանաչված երեք հանրապետություններում, ուստի Արցախում հանրային տրամադրությանն ենք վերաբերյալ տեղեկատվությանը բացակայում է, ինչը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել բոլոր կողմերի ընկալումների վերաբերյալ*): Դա ինչպես իշխանությանն ենք կողմից իրականացվող հռետորաբանության, տարվող ներքին քաղաքականության, այնպես էլ ժողովրդավարացման գործընթացի հետևանք է: Չայաստանի պարագայում Ղարաբաղյան հիմնախնդիրը դասվում է արտաքին քաղաքական առաջնային գերակայությանն ենք շարքին, սակայն առավելագույն նվազեցվում է դրա ուղղակի ազդեցությունը հանրության բնականոն կյանքի վրա:

6. Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ հակամարտության կարգավորման, հարատև խաղաղության հասնելու համար կարևոր է հակամարտության անմիջական բոլոր կողմերին բանակցային գործընթացում հավասար ձայնի իրավունքով ներգրավելը: Բացի այդ, անհրաժեշտ է վերջնական փաստաթղթում ամրագրել նաև տարածաշրջանային այլ դերակատարների պատրավորությունները՝ երաշխավորելով տարածաշրջանային բնականոն հաղորդակցության ապահովումը, բացառելով նրանց ազդեցության ներքո լարվածության նոր օջախների ստեղծումը, բաժանարար գծերի ձևավորումը և այլն: Նման փորձ կիրառվել է Կիպրոսի, Չյուսիսային Իռլանդիայի հիմնախնդիրների կարգավորման գործընթացում:

7. Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը բանակցային գործընթացում մի շարք կերպափոխումների է ենթարկվել՝ Ադրբեջանի կազմում տարբեր կարգավիճակների սահմանումից մինչև հանրաքվեի անցկացում: Չանրաքվեի միջոցով կարգավիճակի հարցի կարգավորումը միջազգային պրակտիկայում առավել ընդուն-

ված և արդյունավետ եղանակ է, որը կիրառվել է գրեթե բոլոր դիտարկված հակամարտության ռեժիմների պարագայում: Բանակցային գործընթացի հետագա կերպափոխումների պարագայում այս դրույթի պահպանումը պետք է սկզբունքային լինի հայկական կողմերի համար: Միաժամանակ, այսօր արդեն անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հանրաքվեի անցկացման ժամանակ հնարավոր ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ՝ չնայած ներկա պայմաններում քննարկվող տարբերակով կարգավորման ոչ իրատեսական լինելուն (օրինակ՝ հանրաքվեից առաջ փախտականների վարդարձի կազմակերպման դեպքում քվոտաների պահպանում՝ նախքան պատերազմը եղած հարաբերակցության խախտում թույլ չտալու համար, խորական քաղաքականության հետևանքով Արցախից հեռացած հայերի հաշվառում՝ նրանց խախտված իրավունքների վերականգնման և հանրաքվեին մասնակցության իրավունքի ապահովման նպատակով և այլն):

8. Ղարաբաղյան հիմնախնդրի բանակցային գործընթացի տարբեր փուլերում կատարված ուսումնասիրություննը հիմք է տալիս ենթադրելու, որ մի շարք դրույթներ սկզբունքայնորեն անփոփոխ են մնալու նաև գործընթացի հետագա փուլերում, այդ թվում՝ տարածքային զիջումների, փախտականների վերադարձին, հաղորդակցության վերականգնմանն առնչվող դրույթները և այլն: Ուստի անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հայկական կողմերի դիրքերի ամրապնդման, այդ դրույթներից բխող մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ:

9. Տարածքների հարցի շուրջ հակասությունները հաղթահարելու համար Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի կերպափոխման ընթացքում միջնորդները ձգտում են փոխզիջումային մոտեցման, որը հիմնված կլինի երկու կողմերի սկզբունքային պահանջների բավարարման վրա: Այն է՝ վերադարձնելով շրջաններից մի քանիսը՝ հնարավորություն ընձեռել Արցախի ժողովրդին հանրաքվեի միջոցով որոշելու վերջնական կարգավիճակը, միաժամանակ ապահովելու անվտանգությունը և

կայ ունույթ ունը: Ապրիլյան պատերազմից հետո տարածքային գի-
ջումների հարցի քննարկումն առավել բարդացել է, սակայն
նույնիսկ իրավիճակի փոփոխության դեպքում այն սերտորեն
կապակցված պետք է լինի Արցախի բնակչության անվտանգության
հստակ երաշխիքների ապահովման հետ՝ ապառազմականացրած
գոտիների ձևավորում, անխափան հաղորդակցության երաշխավորում
և այլն: Տարածքային հարցն առավել խնդրահարույց է նաև մի շարք
այլ հակամարտությունների, այդ թվում՝ Կիպրոսի, Կոսովոյի,
Մերձդնեստրի պարագայում:

10.Տարածքային հարցերի կարգավորման միջազգային փորձը, այդ
թվում՝ Կոսովոյի օրինակը, ցույց է տալիս, որ ինքնորոշվող
միավորում փակ անկլավների առկայությունն անկայունության
նոր օջախներ է ստեղծում: Հնարավոր անկլավներից բխող
անկայունության սպառնալիքների խնդիրը պետք է հաշվի առնվի
նաև Արցախի պարագայում՝ տարածքների և փախտականների հարցերի
կարգավորման ժամանակ:

11.Հակամարտության ամբողջական կարգավորման պարագայում
փախտականների վերադարձի շուրջ համաձայնության գալու և
հետագա անկայունության նկատմամբ ու նոր սպառնալիքներից
խուսափելու համար կարևոր է ապահովել փախտականների
վերադարձի և փոխհատուցման տրամադրման գործընթացի երկկող-
մանիությունը, իսկ վերադարձը կազմակերպել՝ հիմքում դնելով
նոր բռնության օջախներ չստեղծելու սկզբունքը: Կիպրոսյան
բանակցվող փաթեթն այս տեսակետից կարող է օրինակելի համարվել,
քանի որ նախատեսում է սահմանափակումների կիրառում և
Ժողովրդագրական բալանսի պահպանում (այն քանակով փախտական-
ների վերադարձ, որը թույլ կտա չխախտել բնակչության նախնական
տոկոսային հարաբերակցությունը):

Հաշվի առնելով Ադրբեյջանում ամրապնդող ավտորիտարիզմն ու
մարդու իրավունքների շարունակական խախտումները՝ որևէ
վստահություն չի կարող լինել փախտականների վերադարձի
կազմակերպման դեպքում վերադարձի կամավորության սկզբունքի

պահպանման, ինչպես նաև իրական փախստականներին վերաբնակեցնելու մտադրության նկատմամբ: Նման վստահության կարող է ստեղծել կամ Ադրբեջանի իրական ժողովրդավարացումը, կամ միջազգային երաշխիքների ապահովումը, ինչը գրեթե անհնար է այսօր: Ուստի, փախստականների վերադարձը նախապատրաստելու փուլում հատուկ ուշադրության պետք է հատկացվի վերադարձի կամավորության և գործընթացի թափանցիկության խնդիրներին՝ փաստաթղթերի ստուգում, միջազգային հսկողություն և միջնորդություն:

10. Հայաստանը դեմ է գրավյալ տարածքների վերադարձնելու դիմաց երկաթգիծը բացելու Ադրբեյջանի առաջարկին, 30.01.2004, <https://www.azatutyun.am/a/1573006.html>
11. Հատված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի "Անավարտ տասնամյակ" գրքից, 24.06.2011, <http://www.2rd.am/hy/Lernayin-Karabagh>
12. ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրատարականի հայտարարությունը, 1998թ. փետրվարի 3, <http://www.levonpresident.am/?catID=40&contID=83>
13. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի բացման խոսքը ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների հետ հանդիպման ժամանակ, 04.04.2016, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/04/04/President-ASerzh-Sargsyan-meeting-with-Ambassadors-of-OSCE-states-speech/>
14. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՎԵՐՁԻ ՍԿԻՉԲԸ, 25.06.2016, «ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ» 376, N264, <http://www.chi.am/index.cfm?objectID=80F51EE0-8DC0-11E0-9A42005056A30FF7&year=2011&month=6&legacyURL=110625/print>
15. Նախագահն ընդունել է Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Յերբերտ Չալբերին, 30.07.2014, <http://www.president.am/hy/press-release/item/2014/07/30/President-Serzh-Sargsyan-meeting-with-EU-special-representative/>
16. «Քի-Վեսթը "շեղում" էր բանակցային գործընթացի տրամաբանությունն ից», 4 Ապրիլ 2011, <http://www.mediamax.am/am/news/keywest/544/>
17. Алиев: для урегулирования конфликта в Карабахе Армения должна вывести войска, 20 июня 2016, <http://vognebroda.net/aliev-dlya-uregulirovaniya-konflikta-v-karabahe-armeniya-dolzhna-vyvesti-voyska>
18. Армении следует, проявив ответственность, освободить оккупированные территории Азербайджана - МИД АР, 23.05.2015, <http://www.1news.az/politics/20150523062731836.html>
19. Бакинский рабочий, 24 февраля 2001 года, <http://library.aliyev-heritage.org/ru/6753023.html>

20. Бредихин О.. Кипрский конфликт: генезис и основные этапы развития, Москва, 2006, <http://knigi.link/vsemirnaya-istoriya/faktor-evrosoyuza-plan-9890.html>
21. В чем причины и суть приднестровского конфликта?, 03.03.07, <http://www.nr2.ru/pmr/107536.html>
22. Заявление президента Азербайджана Ильхама Алиева на открытии заседания Кабинета министров, посвященного итогам социально-экономического развития в первом квартале 2010 года., 14.04.2010, <http://news.am/rus/news/19107.html>
23. Ильхам Алиев: вопрос Карабаха может быть решен военным путем, 08 ноября 2010, <https://www.kavkaz-uzel.eu/articles/176677/>
24. Инглхарт Р., Зачем социологи, психологи, экономисты и политологи изучают ценности?, Четвертая лекция цикла «Мировой класс», Москва, 2015, <https://www.youtube.com/watch?v=vqZWiv-h98c>
25. Интервью министра иностранных дел Вардана Осканяна телекомпании "А1+", http://archive.aravot.am/2001/aravot_rus/May/12/st01.htm
26. Итоговое выступление Призидента Азербайджанской Республики Гейдара Алиева на совещаниях в Гяндже и Агджабаде, проведенных в связи с ситуацией, возникшей в прифронтовых районах-12 декабря, 1993 года, <http://library.aliyev-heritage.org/az/4314044.html>
27. МИД: "Режим в Армении пытается восстановить полностью утраченные в обществе авторитет и доверие", 19 Апреля 2016, http://ru.apa.az/nagornyj_karabakh/mid-rezhim-v-armenii-pytaetsya-vosstanovit-polnostyu-utrachennye-v-obshestve-avtoritet-i-doverie-.html
28. На переговорах по Кипру не удалось договориться по трем вопросам, 22.11.2016, <https://ria.ru/world/20161122/1481872571.html>
29. Речь Президента, Верховного главнокомандующего Ильхама Алиева, 26 июня 2015, <http://news.day.az/politics/591463.html>
30. "22 года идут попытки мирного решения этого конфликта. Ну сколько же можно? Мы готовы к мирному решению вопроса. Но если не будет решаться мирным путём, то будем решать военным путем", - заявил Посол Азербайджана в РФ Полад Бюльбюль Оглы. 2 апреля, 2016, <http://govoritmoskva.ru/news/74103/>
31. Boutros Ghali's "Set of Ideas", <http://www.argyrosargyrou.fsnet.co.uk/Ideas.htm>

32. Conflict-Related Deaths in Timor-Leste 1974-1999, The findings of the CAVR Report CHEGA!, <http://www.cavr-timorleste.org/updateFiles/english/CONFLICT-RELATED%20DEATHS.pdf>
33. Countries that have recognized Kosovo as an independent state, <http://beinkosovo.com/en/countries-that-have-recognized-kosovo-as-an-independent-state>
34. CYPRUS: Government Denies Submitting Territory Map, November 4, 2014, <https://cscubb.ro/cop/cyprus-government-denies-submitting-territory-map/#prettyPhoto>
35. Cyprus peace talks resume with confidence-building measures, 15.05.2015 <http://www.euronews.com/2015/05/15/cyprus-peace-talks-resume-with-confidence-building-measures>
36. Cyprus talks hit impasse over territory, 22.11.2016, <https://www.euractiv.com/section/enlargement/news/cyprus-talks-hit-impasse-over-territory/>
37. David Cameron, September 19, 2014, <https://www.facebook.com/DavidCameronOfficial/posts/846948598662793>
38. Devolution of financial powers to the Scottish Parliament: recent developments, March 1, 2016, <https://researchbriefings.parliament.uk/ResearchBriefing/Summary/SN07077>
39. http://ec.europa.eu/enlargement/tenders/aid-programme-tcc/index_en.htm
40. "EU referendum results". Electoral Commission, <http://www.electoralcommission.org.uk/find-information-by-subject/elections-and-referendums/upcoming-elections-and-referendums/eu-referendum/electorate-and-count-information>
41. http://europa.eu/rapid/press-release_IP-05-197_en.htm?locale=en
42. <http://www.freedomhouse.org/report-types/freedom-world>
43. Foreign Minister Tuomioja: The Åland islands - a Finnish model for good governance, 12.3.20026 <http://formin.finland.fi/public/default.aspx?contentid=56674&contentlan=2>
44. Freedom House. Nations in Transit 2014: Eurasia's Rupture with Democracy, https://freedomhouse.org/sites/default/files/NIT2014%20booklet_WEBSITE.pdf
45. http://www.hri.org/docs/annan/Annan_Plan_Text.html
46. Jordi Muñoz and Raúl Tormos, Economic considerations play only a limited role in explaining support for Catalanian independence, but could be crucial in deciding the final outcome, Democratic Audit UK, 12/01/2015,

- <https://eprints.lse.ac.uk/62447/1/democraticaudit.com-Economic%20considerations%20play%20only%20a%20limited%20role%20in%20explaining%20support%20for%20Catalonian%20independence%20bu.pdf>
47. <http://www.levonpresident.am/?catID=41&contID=90>
48. Nations in Transit 2017, Freedom House Report, <https://freedomhouse.org/report/nations-transit/nations-transit-2017> .
49. Oxford dictionaries, <http://www.oxforddictionaries.com/definition/english/responsibility>
50. President Heidar Aliyev addresses parliament on Karabakh -23 February, 2001, [http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/President Heidar Aliyev on Karabakh 23FEB2001 parlimanet.pdf](http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/President%20Heidar%20Aliyev%20on%20Karabakh%2023FEB2001%20parlimanet.pdf)
51. <http://www.regnum.ru/news/1412963.html>
52. <http://ria.ru/spravka/20130122/919218079.html>
53. Scottish Referendum Results, The Electoral Management Board for Scotland (EMB), <http://scotlandreferendum.info/>
54. Serbia Progress Report, http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/009/sr_rapport_009_en.pdf
55. The Referendums of 1973 and 1975, Northern Ireland Election, <http://www.ark.ac.uk/elections/fref70s.htm>
56. Toni Rodon and Xavier Cuadras Morató, Catalonia's quest for independence: Plain dead or alive and kicking?, October 29, 2015, <http://www.the-plot.org/2015/10/29/catalonias-quest-for-independence-plain-dead-or-alive-and-kicking/>

| | Փաթեթային տարբերակ (1997թ. հոկտեմբեր) | Փոփոխական տարբերակ (1997թ. դեկտեմբեր) | «Շնչահանուր արտադրություն» տարբերակ (1998թ. նոյեմբեր) | Քի-Վեսթերմ «համաձայնեցված» փաթեթ (2001թ.) | Մադրիդյան սկզբունքներ (2007թ.-ից առ այսօր) |
|------------------------|---------------------------------------|---------------------------------------|---|---|--|
| Ժամանակակից կարգավիճակ | - | - | - | - | <p>Լեռնային Ղարաբաղի ժամանակակից կարգավիճակ, որը կտրամադրի անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ:</p> |

| | | | | | |
|------------------------------------|---|---|--|---|---|
| <p>Վերջնական կարգավիճակ</p> | <p>Լեռնային Ղարաբաղը պետական և տարածքային կազմավորում է Ադրբեյջանի կազմում:</p> | <p>Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը որոշվում է երեք կողմերի՝ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեյջանի միջև բանակցություններից և ներքին կարգավորման ստորագրումից հետո:</p> | <p>Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում և Ադրբեյջանի հետմիասին կազմավորում է «Ընդհանուր պետություն»՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններ</p> | <p>Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի տարածքը Ադրբեյջանի վերահսկողությամբ չի սահմանվում և անցնում Հայաստանի ինքնիշխանության ներքո: ԼՂ կարգավիճակը սահմանվում է Հայաստանի ներքո:</p> | <p>Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշումը իրավականորեն պարտադիր բնույթ կրող կամարտահայտման միջոցով:</p> |
|------------------------------------|---|---|--|---|---|

| | | | | | |
|---|---|--|------|---|---------------|
| | | | Լ մ: | | |
| Կարգավիճակի որոշման ուղի | Ադրբեջանի Հանրապետության և Լեռնայի Ղարաբաղի իշ- խանությունների միջև կնքված համաձայնագիր, որը հավանության կարժանանամինսկի համաժողովի կողմից և կներառվի Ադրբեջանի և Լեռնայի | Ադրբեջանի, Հայաստանի և Ղարաբաղի միջև կարգավորման ստորագրում, ենթակա է ճանաչման միջազգային հանրության կողմից հնարավորինս արագ իրավիքներ | - | - | Հանրապետ : |

| | | | | | |
|--|--|------------------------------------|--|--|--|
| | Ղարաբաղի սահմանադրու թյ ու Ն ն եր ու մ | Մինսկի համաժողովի ժամանակ :: | | | |
|--|--|------------------------------------|--|--|--|

**Ադրբեջանի Խորհրդային Չանրապետության
հայ աթախման քաղաքականությանը ԼՂԻՄ-ում
Վիճակագրական տվյալների համադրություն**

Խորհրդային Միության տարիներին Ադրբեջանի իրականացրած խորական քաղաքականության, այդ թվում՝ նպատակային հայ աթախության մասին վկայում են մարդահամարի տվյալներն ու դրանց համադրումը բնական աճի ցուցիչների հետ

Խորհրդային Միության տարիներին իրականացված մարդահամարների տվյալների համեմատությունը թույլ է տալիս պարզել, թե բնական աճի միջին ինչ ցուցիչներ են ունեցել հայերն ու ադրբեջանցիները Խորհրդային Միությունում: Հիմք ընդունելով ԽՍՀՄ մարդահամարի վիճակագրական թվերը՝ որպես միջին վերցնենք 1970 և 1979 թվականների տվյալները: Եթե 1970 թվականին Խորհրդային Միությունում բնակվել է 3 մլն 559 հազ 151 հայ 256, ապա 1979-ին հայերի թիվը հասել է 4 միլիոն 151 հազար 241-ի 257: Այս երկու թվերի համեմատությամբ կարող ենք ստանալ բնական աճի միջին ցուցիչը հայերի համար: Այսպիսով՝ 9 տարվա կտրվածքով այդ ցուցիչը հայերի համար կազմում է 16 տոկոս:

Հաշվի առնելով, որ ԽՍՀՄ տարիներին ԼՂԻՄ ձևավորումից հետո այդ տարածքում առաջին մարդահամարը անցկացվել է 1923-ին, իսկ ԽՍՀՄ վերջինը՝ 1989 թվականներին, ապա բնական պայմաններում այդ 66 տարվա համար հայերի բնական աճի միջին ցուցիչը կկազմի 217 տոկոս:

²⁵⁶ Болдырев В.А., Итоги переписи населения СССР. М., «Статистика», 1974, с.45.

²⁵⁷ НАСЕЛЕНИЕ СССР (По данным Всесоюзной переписи населения 1979 года), <http://www.sovetika.ru/sssr/nas79.htm>

Կրկին հիմք ընդունելով ԽՍՀՄ մարդահամարի վիճակագրական տվյալները՝ նշենք, որ 1923-ին Ղարաբաղում եղել է 149 600 հայ 258: Եթե կիրառենք 66 տարվա բնական միջին աճի ցուցիչը, 1989-ին Ղարաբաղում պետք է բնակվեր միջինում մոտ 325 հազար հայ: Սակայն, ըստ 1989 թվականի մարդահամարի տվյալների՝ հայերի թիվը Ղարաբաղում եղել է ընդամենը 145 500: Այսպիսով՝ թվերը փաստում են՝ խորհրդային կարգերի ընթացքում Արցախը լքել է 179 հազար հայ:

Միաժամանակ խորհրդային Միությանում բնակվող ադրբեջանցիների մարդահամարի տվյալները համեմատելիս պարզ է դառնում, որ 9 տարում նրանց բնական աճի միջին ցուցիչը կազմում է 25 տոկոս: Այսինքն՝ 66 տարում 283 տոկոս: Եթե 23 թվականին, պաշտոնական տվյալներով, Ղարաբաղում բնակվել է 7700 ադրբեջանցի, ապա 1989-ին բնական միջին աճի ցուցիչը կիրառելով՝ այդ թիվը պետք է լիներ 21 791: Իրականում, ԽՍՀՄ վերջին մարդահամարից հետո Արցախում բնակվող ադրբեջանցիների մասին ներկայացվել է 40 700 թիվը²⁵⁹: Այսինքն՝ բնական աճի տեմպերին զուգահեռ՝ ակնհայտորեն Արցախում ավելացել է 20 հազար ադրբեջանցի:

Չափի առնելով նաև այն հանգամանքը, որ Արցախում բնակվող էթնիկ այլ խմբերի ներկայացուցիչների թվի մասին տվյալները տարբեր ժամանակատվածներում բնական աճի տեմպերից քիչ են շեղվում՝ ակնհայտ է դառնում, որ խորհրդային տարիներին Բաքուն իր խորական քաղաքականության մեջ Արցախը հայաթափելու նպատակ է հետապնդել:

²⁵⁸ Данные стат. управления Облисполкома НКАО, <http://sumgait.info/caucasus-conflicts/historical-falsifications/historical-falsifications-2.htm>

²⁵⁹ НАСЕЛЕНИЕ СССР: по данным Всесоюзной переписи населения 1989 г. / Госкомстат СССР. - М.: «Финансы и статистика», 1990, с 37-40.

Ներքաղաքական զարգացումները հակամարտության և կողմերում բանակցային գործընթացի ընթացքում

Ղարաբաղյան հակամարտությանը՝ լիներով հակամարտության բոլոր կողմերի համար գերակա խնդիր, իր ազդեցությունն է ունենում նաև ներքաղաքական զարգացումների վրա: Բացի այդ, կողմերից յուրաքանչյուրի ներքաղաքական զարգացումները, իշխանության մոտ գտնվող ուժերի փոփոխություններն ու նրանց դիրքորոշումներն իրենց ազդեցությունն ունեն բանակցային տրամաբանության և ընթացքի վրա: Ստորև դիտարկվել են Ղարաբաղյան հակամարտության կարգավորման յուրաքանչյուր փաթեթի քննարկման ժամանակաշրջանում հակամարտության երեք կողմերի ներքաղաքական իրադարձությունը և հնարավոր կապը բանակցային գործընթացի հետ:

1997թ. մայիսից հունիս ԵԱՀԿ ՄԽ համանախագահները մշակեցին և կողմերին առաջարկեցին կարգավորման Փաթեթային տարբերակը:

1996թ. նախագահական ընտրություններից հետո ՀՀ-ում ներքաղաքական ճգնաժամ սկսվեց, որի հիմքում ընկած էին քաղաքական էլիտայի ներսում միջառք տարածայնություններն ու նախագահի լեգիտիմության պակասը: Ընդդիմությունը Վազգեն Մանուկյանի գլխավորությամբ հրաժարվեց ընդունել ընտրությունների արդյունքները: Օգտվելով 1991թ. ընտրությունների համեմատ ՀՀ նախագահի լեգիտիմության անկման հանգամանքից՝ ճնշումը Հայաստանի նկատմամբ ուժեղացավ, ինչը դրսևորվեց նաև Լիսաբոնի գազաթաժողովի ժամանակ: ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից արվեց հակամարտության կարգավորման սկզբունքների առաջարկ պարունակող հայտարարություն, որի նկատմամբ Հայաստանը ստիպված եղավ վետո կիրառել²⁶⁰: Սա դժգոհության նոր ալիք առաջացրեց հանրության շրջանակներում:

²⁶⁰ 1996թ. դեկտեմբերին Լիսաբոնում ԵԱՀԿ գազաթաժողովի ժամանակ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների կողմից առաջարկվեցին հակամարտության կարգավորման երեք

1996թ. նոյեմբերին՝ համաժողովրդական ընտրություններով ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը, ով Արցախյան շարժման քաղաքական առաջնորդներից էր և բավական կոշտ դիրքորոշում էր ցուցաբերում կարգավորման գործընթացում: 1997թ. Ռ.Քոչարյանի՝ ՀՀ վարչապետ նշանակվելուց հետո նրան փոխարինեց Արկարի Ղուկասյանը:

Ադրբեջանը 1993թ.-ից ղեկավարում էր Հեյդար Ալիևը՝ հաջորդելով Այազ Մութալիբովին ու Աբուլլահադ Էլչիբեյին: Հեյդար Ալիևի նախագահության առաջին տարիները բնորոշվում են որպես իշխանության համար նրա և այլ քաղաքական և ռազմական խմբավորումների միջև պայքարի տարիներ²⁶¹: Ալիևը ստանձնեց բանակաշինության գործը և 1993թ.-ին հանդես էր գալիս բանակի կառուցման կոչով՝ կորցրած հողերը հետգրավելու համար. «Մենք քաղաքական, դիվանագիտական ջանքեր են գործադրում: Սակայն եթե այդ ամենը արդյունք չտա, մեր հողերը արյունով, կյանքի գնով վերադարձնելու ուղղությամբ պետք է աշխատենք, միավորենք մեր ուժերը: Եթե նույնիսկ օկուպացված տարածքների ոչ ողջ երիտասարդությունը, այլ դրա մի մասը գնա ծառայելու, ապա բանակն ուժեղ կլինի և մենք համոզված կլինենք, որ ամեն գնով ետ կվերադարձնենք հողերը: Անհրաժեշտ է մտածել դրամասին», -ասել է Ալիևը 1993թ. դեկտեմբերի 12-ին սահմանամերձ շրջաններում ստեղծված իրադրության առթիվ Աղջաբադում և Գյանջայում տեղի ունեցած քննարկումների ժամանակ²⁶²:

Ինչ վերաբերում է 1997-ին միջնորդների կողմից առաջարկված կարգավորման փաթեթային տարբերակին, Ալիևը նշել է, որ

սկզբունքներ, որոնք կարևորում էին ՀՀ և Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, իսկ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը սահմանում Ադրբեջանի կազմում ինքնավարության բարձր աստիճանով, նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղի ու նրա բնակչության երաշխավորված անվտանգությունը, այդ թվում՝ բոլոր կողմերի փոխադարձ պարտավորությունն՝ կատարելու համաձայնագրի բոլոր կետերը: Հայկական կողմը չկարողանալով կանխել նմանատիպ առաջարկը, ստիպված եղավ կիրառել իր վետոյի իրավունքը:

²⁶¹ Huseynov Tabib, Nagorno-Karabakh: A traumatic experience that cripples a nation, http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/Spotlight_on_Azerbaijan_FPC_2012.pdf

²⁶² Итоговое выступление Призидента Азербайджанской Республики Гейдара Алиева на совещаниях в Гяндже и Агджабаде, проведенных в связи с ситуацией, возникшей в прифронтовых районах-12 декабря, 1993 года, <http://library.aliyev-heritage.org/az/4314044.html>

փաթեթային տարբերակը և ավագույնը չէր իրենց համար, սակայն այն Ադրբեջանի կողմից ընդունվել է տեսնելու համար, թե արդյոք այն կարող է առաջ գնալ, թե՛ ոչ²⁶³:

Փաթեթային տարբերակն ընդունվեց Ադրբեջանի կողմից, Յայաստանը որոշակի դիտողություններ արտահայտեց, սակայն, ընդհանուր առմամբ, դրական գնահատական տվեց փաթեթային տարբերակին, ԼՂՀ իշխանություններն այս տարբերակը մերժեցին:

1997թ. սեպտեմբերին առաջարկվեց կարգավորման «Փուլային տարբերակը»:

1997թ. նոյեմբերին, փուլային տարբերակի առաջարկից հետո, Լևոն Տեր-Պետրոսյանը հանրությանը զիջումների պատրաստելու քաղաքականություն էր վարում, ինչի նպատակով 1997թ. նոյեմբերի 1-ին հրապարակեց «Պատերազմ, թե՞ խաղաղություն. Լրջանալու պահը» հոդվածը²⁶⁴: Հոդվածում ընդգծում է պատերազմի բացառման անհրաժեշտությունը, ստատուս-քվոն երկար ժամանակ պահպանելու անհնարինությունը, փոխզիջման անհրաժեշտությունը: Հոդվածում հատուկ կարևորվում էր միջազգային հանրության դժգոհությունը Յայաստանի դիրքորոշմամբ և նշվում, որ «պետք է իրատեսլիկ և հասկանալի, որ միջազգային հանրությունը երկար չի հանդուրժելու Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրադրությունը, քանի որ այն սպառնում է տարածաշրջանային համագործակցությանն ու անվտանգությանը, ինչպես նաև Արևմուտքի նավթային շահերին», չբացառելով Ղարաբաղի վերադարձի հնարավորությունը կարևորվում էր «այն և իր ժեք կործանումից գերծ պահելը»:

Այս մոտեցումն ընդունելի չէր ո՛չ ժողովրդի, ո՛չ մյուս քաղաքական ուժերի համար, և 1998թ.-ին բարձրաձայնվեց Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի պահանջը: 1998թ. փետրվարի 3-ին նա հրաժարական տվեց՝ իր ելույթում նշելով, որ «իշխանության

²⁶³ President Heidar Aliyev addresses parliament on Karabakhk -23 February, 2001, http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/President_Heidar_Aliyev_on_Karabakh_23FEB2001_parliamet.pdf

²⁶⁴ <http://www.levonpresident.am/?catID=41&contID=90>

ճգնաժամում Արցախի հարցի արժարժույթն ընդամենը պատրվակ էր: Խնդիրը շատ ավելի խորն է և կապված պետականության հիմնադրույթների, խաղաղության ու պատերազմի այլ ընտրանքի հետ: Իսկ կյանքը ցույց կտա, թե ով ինչ է արել Արցախի համար, և ով է իրականում ծախում այն: Արտառոց ոչ ինչ տեղի չի ունեցել. պարզապես Չայաստանում խաղաղության և արժանապատիվ հաշտության կուսակցությունը պարտության է կրել»²⁶⁵: Արտահերթ ընտրությունների արդյունքում իշխանության եկավ ԼՂՀ նախկին նախագահ, ՉՉ վարչապետ Ռոբերտ Քոչարյանը:

1997թ. սեպտեմբերին անցկացված ԼՂՀ արտահերթ նախագահական ընտրություններում Արկադի Ղուկասյանը ձայների ճնշող մեծամասնությամբ ընտրվեց Լեռնային Ղարաբաղի Չանրապետության նախագահ, այնուհետև վերընտրվեց այդ պաշտոնում 2002թ.-ի օգոստոսին:

Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցությունները, որոնց թվում էին «Յենի Մուսավաթն» ու «Ժողովրդական ճակատը», քննադատության են ենթարկել փուլային տարբերակն այն հիմքով, որ փուլային կարգավորումը «չի պաշտպանում Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը» և ավելի քիչ քաղաքական լծակներ է թողնում Ադրբեջանին: Իր հերթին, Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլ ֆազ Էլ չիբեյը հայտարարել է, որ Ղարաբաղը պետք է չունենա ավելին, քան «մշակութային ինքնավարություն»²⁶⁶՝ կողմ արտահայտվելով հարցի ռազմական ուղղվածումը: Միաժամանակ, Ադրբեջանի ԱԳ նախարար Չասան Չասանովը գոհունակություն է հայտնել, որ Չայաստանը դրական պատասխան է տվել փուլային կարգավորմանը, և հույս հայտնել, որ համաձայնությունը կարող է ձեռք բերվել նախքան այդ տարվա ավարտը²⁶⁶:

²⁶⁵ ՉՉ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրատարականի հայտարարությունը, 1998թ. փետրվարի 3, <http://www.levonpresident.am/?catID=40&contID=83>

²⁶⁶ Tchilingirian Hratch, Nagorno Karabakh: A Time for Thoughtfulness?, War Report, No. 56, November 1997, http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/Tchilingirian_Hratch_A_Time_for_Thoughtfulness_1997.pdf

Փուլային տարբերակը ևս մերժվեց ԼՂՀ իշխանությունների կողմից: Տվյալ դեպքում Ադրբեջանի և Հայաստանի դիրքորոշումների վերաբերյալ հստակություն չկա:

1998թ. նոյեմբերին կողմերին առաջարկվեց կարգավորման «Ընդհանուր պետություն» տարբերակը: 1998թ. փետրվարին կայացած արտահերթ նախագահական ընտրություններից հետո իշխանության եկած Ռոբերտ Քոչարյանի օրոք ՀՀ դիրքորոշումը բանակցային գործընթացում կոշտացավ, Հայաստանը հրաժարվում էր ստորագրել որևէ փաստաթուղթ, որում կնշվեր, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի մաս է²⁶⁷:

Ադրբեջանում, իշխանության մոտ էր գտնվում Հեյդար Ալիևը, ով 2001թ.-ին Միլի Մեջլիսում իր ելույթում անդրադառնալով կարգավորման այս տարբերակին, նշեց. «Ես ասացի, որ նույնիսկ չեմ ցանկանում քննարկել դա: Նրանք շատ ջանք գործադրեցին բացատրելու համար: Ես ասացի, որ չեմ ուզում քննարկել դա: Դուք մեզ դնում ենք մի իրավիճակի մեջ, որտեղ Ադրբեջանի տարածքում երկու պետություններ են լինելու՝ Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը, և Ադրբեջանը իրավունքներ չի ունենալու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ... Ես ասացի, դուք կարծում են, որ մենք այնքան հիմար ենք, որ չե՞նք կարող հասկանալ, թե սա ինչ է»²⁶⁸: Այս տարբերակը առաջացրել է նաև ադրբեջանական ընդդիմադիր ուժերի դժգոհությունը, որոնք մեղադրել են Հեյդար Ալիևին՝ նշելով, որ նացանկանում է ընդունել ընդհանուր պետության տարբերակը:

«Ընդհանուր պետություն» տարբերակը մերժվեց Ադրբեջանի կողմից: Այս դեպքում ևս, Հայաստանի և ԼՂՀ-ի հստակ դիրքորոշումները հայտնի չեն:

«Ընդհանուր պետություն» տարբերակից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դե-յուրե այլևս չէր մասնակցում բանակցային գործընթացին, հանդիպումները սկսեցին կրել

²⁶⁷ Интервью министра иностранных дел Вардана Осканяна телекомпании "A1+", http://archive.aravot.am/2001/aravot_rus/May/12/st01.htm

²⁶⁸ President Heidar Aliyev addresses parliament on Karabakhk -23 February, 2001, http://www.oxbridgepartners.com/hratch/images/pdf/President_Heidar_Aliyev_on_Karabakh_23FEB2001_pa_rlimanet.pdf

երկկողմ բնույթ՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև: Ռոբերտ Քոչարյանը, ով մինչ այդ զբաղեցրել էր ԼՂՀ նախագահի պաշտոնը, սկսեց ընկալվել որպես միաժամանակ երկու հայկական կողմերի ներկայացուցիչ, և ԼՂՀ ներկայացվածությունը բանակցային գործընթացում անուղղակի բնույթ ստացավ:

2001թ.-ին Փարիզում, այնուհետև Քի-Վեսթում կայացան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հանդիպումները:

Փարիզ-Քի-Վեսթ բանակցությունները, և դրանց վերաբերյալ թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական կողմի հայտարարությունները, որոնք որոշ դրույթներ էին հրապարակում բանակցությունների արդյունքների վերաբերյալ, դժգոհության ալիք բարձրացրեցին Հայաստանում: ՀՀ ԱԺ-ն հայտարարեց, որ Ղարաբաղի կարգավիճակը քննարկման ենթակաչ է և մերժեց ցանկացած զիջում:

ԼՂՀ-ն այս փաթեթի վերաբերյալ իներտություն և երցուցաբերում՝ ընդգրկված չլինելով բանակցություններում և հնարավորություն չունենալով անմիջականորեն ծանոթանալ քննարկման արդյունքներին: Ղարաբաղյան կողմը պատրաստակամություն էր հայտնում դիրքորոշում հայտնել միայն քննարկման արդյունքների գաղտնագերծման պարագայում:

Ադրբեջանի իշխանությունները պատրաստ էին զիջումների, քանի որ Հեյդար Ալիևը, ում 2003-ին փոխարինելու էր իր որդին, ցանկանում էր անձամբ ստանձնել հակամարտության կարգավորման պատասխանատվությունը՝ այդ բեռը որդուն չփոխանցելու համար:

Բացի այդ, Քի-Վեսթի ձեռք բերված համաձայնությունը զգալի զիջում էր երկու կողմերի համար էլ, և ինչպես նշում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ (1999-2001թթ.) Քերի Քավանոն. «Փակ դռների ետևում երկու առաջնորդներն եկան այդ եզրակացությանը և պատրաստ էին դիմել քայլերի: Սակայն հրապարակայնորեն նրանք դացույց չէին տալիս՝ շարունակելով պնդել, որ իրենց բոլոր պահանջները պետք է կատարվեն: Ադրբեջանում դա կրկնակի դժվար էր, քանի որ Ալիևը խիստ

սահմանափակել էր գործընթացին տեղյակ մարդկանց քանակը, և դրա մասին գիտեր մարդկանց շատ նեղ շրջանակ, որում ընդգրկված չէին նույնիսկ նրա հիմնական խորհրդատուներից շատերը: Դա պահանջում էր նույնիսկ ավելի մեծ քաղաքական խիզախություն և գործողությունների և որոշում կայացնելու համար, ինչը կհանգեցներ հասարակական հզոր արձագանքի»²⁶⁹:

Յետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ 2001թ.-ին Յեյ դար Ալիսն իր ելույթներից մեկում անդրադարձ է կատարել պատերազմ սկսելու վերաբերյալ ընդդիմադիրների պահանջներին՝ հիմնավորելով դրանք նպատակահարմար լինելը: «Ոմանք ասում են, որ պետք է պատերազմել, Ադրբեջանը հզոր բանակ ունի: Ադրբեջանն ունի հզոր բանակ: Ես մի քանի անգամ քննարկել եմ այդ հարցը Անվտանգության խորհրդում: Կարելի է պատերազմել: Բայց արդյոք պե՞տք է դա: Ով պատերազմի կողմնակից է, թող գրի, թե ինչ կլինի պատերազմի հետևանքով: Առաջին, Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս, մենք ունենք յոթ օկուպացված շրջաններ: Մարդիկ ապրում են վրաններում: Որքան ժամանակ, մարդկային կյանքեր կպահանջվեն յուրաքանչյուր օկուպացված տարածքի ազատագրման համար: Երկրորդ, միջազգային հանրության շրջանակներում ո՞վ կընդունի պատերազմ: Երրորդ, միջազգային հանրությունը արդեն վաղուց ի վեր կարծում է, որ այնտեղ ադրբեջանցիներն են ոչնչացրել հայերին: Իսկ եթե մենք հիմա պատերազմ սկսենք, կասեն՝ այո՛, ադրբեջանցիները, ինչպես և նախկինում, այժմ ևս ցանկանում են ոչնչացնել հայերին: Բայց ես պատերազմից չեմ փախնում: Եթե մեր ամբողջ հասարակությունը որոշի, հիմնավորի այն, և պատերազմել ցանկացող մարդիկ ստույգ ռազմավարություն ունենան, որ անհրաժեշտ է պատերազմել և ինչպես

²⁶⁹ Մեդիամաքս գործակալության բացառիկ հարցազրույցը ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ (1999-2001թթ.) Քերի Քավանոյի հետ, <http://www.mediamax.am/am/news/keywest/514/#sthash.3Rh9c6fc.dpuf>

պետք է պատերազմել, ապա մեր բանակը բավականաչափ հզորություն ունի: Չանհանգստանաք», - ասել է նա²⁷⁰:

2003թ.-ին Յեյ դար Ալիևին փոխարինելու եկավ նրա որդին՝ Իլհամ Ալիևը, ով զգալիորեն կոշտացրեց Ադրբեջանի դիրքորոշումը: Նա կտրականապես հերքեց մինչ այդ առաջարկված բանակցային բոլոր փաթեթները՝ հայտարարելով, որ պետք է սկսել զրոյից: Նրա օրոք կտրուկ աճեց ռազմատեսչ հռետորաբանությունը և 2003թ.-ի իր նախընտրական քարոզարշավի ընթացքում Ալիևը բացահայտ կոչ արեց հասարակական կազմակերպություններին և Ադրբեջանի քաղաքացիներին զերծ մնալ հայերի հետ շփումներից²⁷¹:

2007թ.-ին բանակցությունների սեղանին դրվեց բանակցային նոր փաթեթ՝ Մադրիդյան սկզբունքները, որոնց շուրջ, որոշակի վերախմբագրմամբ, բանակցությունները շարունակվում են մինչ օրս:

Մադրիդյան սկզբունքների համաձայնեցման գործընթացը մեկնարկել է Յայաստանի կողմից ՅՅ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ժամանակ, ով 1998թ.-ին ընտրվեց նախագահի պաշտոնում և վերընտրվեց 2003-ին: Դրանց շուրջ բանակցությունները շարունակվեցին նաև ՅՅ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի օրոք, ով այդ պաշտոնում ընտրվել է 2008-ին և վերընտրվել 2013թ.-ի մայիսին: Յայաստանի գործող իշխանությունների կողմից չի բացառվում փոխզիջումների հնարավորությունը, բայց միայն դրանց համաչափության և դիմացի կողմի կառուցողականության պարագայում, միաժամանակ շեշտվում է, որ Արցախի ճակատագիրը որոշողը պետք է լինի ժողովուրդը: 2016թ. Ապրիլյան պատերազմից հետո առաջին անգամ մղվել կողմերի փոխվստահության և հրադարձի պահպանման հարցը, քանի որ առկա պայմաններում զիջումների շուրջ երկխոսությունն ընկալելի չէ հայ հասարակության համար:

²⁷⁰ Бакинский рабочий, 24 февраля 2001 года, <http://library.aliyev-heritage.org/ru/6753023.html>

²⁷¹ Юнусов А., Азербайджан в начале XXI века: конфликты и потенциальные угрозы, Баку, 2007.

Ղարաբաղյան հակամարտությանը, լինելով հակամարտության կողմերից յուրաքանչյուրի համար առաջնային կարևորության հարց, չի կարող չարժածվել ներքաղաքական ընտրական գործընթացներում: 33-ում 2017թ. խորհրդարանական ընտրություններում քաղաքական ուժերից միայն Կոնգրես-3ԺԿ կուսակցությունների դաշինքն է շեշտը դրել հարևան երկրների հետ հաշտության վրա՝ այդ թվում հնարավոր համարելով տարածքային գիշումները: Այս ուժը, սակայն բավական ձայն չի հավաքել՝ անցողիկ շեմը հաղթահարելու համար: Ձայների մեծամասնությունն է ստացել 334-ն, որը սատարել է ԵԱՀԿ Մեջանքերին և շեշտադրել Արցախի բնակչության կողմից Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշման կարևորությունը:

ԼՂՀ-ում 2012թ. կայացած նախագահական ընտրությունների ժամանակ երկու հիմնական թեկնածուների մոտեցումները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացին հիմնականում համընկնում էին. նրանք հանդես են եկել ԼՂՀ-ի՝ բանակցային գործընթացին հավասար կողմի կարգավիճակով մասնակցության օգտին, դեմ են արտահայտվել որևէ տարածքի վերադարձին և անհրաժեշտ են համարել ԼՂՀ անկախության միջազգային ճանաչման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը: ԼՂՀ ԱԺ խմբակցությունները և խմբերը մի քանի անգամ հանդես են եկել համատեղ հայտարարություններով՝ իրենց հավատարմությունը հայտնելով խնդրի խաղաղ կարգավորմանը և կոչ անելով Ադրբեյջանին «հրաժարվել թշնամանքի և ատելության անհիմն ու անպատասխանատու քաղաքականությանից»²⁷²: 2017թ. փետրվարի 20-ին ԼՂՀ-ում տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեն ևս մեկ անգամ ամրապնդեց պետականությունը՝ ժողովրդավարական առաջընթաց արձանագրելով մարդու իրավունքներին առնչվող մի շարք ոլորտներում:

Ադրբեյջանում նախընտրական քարոզչության հիմքում ընկած է եղել բանակցային գործընթացի անհաջողության դեպքում

²⁷² ԼՂՀ Ազգային ժողովի 2012թ. փետրվարի 23-ի լիազումար նիստի ԼՂՀ ԱԺ խումբ-խմբակցություններն համատեղ հայտարարությունն:

նազմական ուժով հարցի կարգավորման մոտեցումը, եղել են ուժեր, որոնք դեմ են արտահայտվել բանակցային գործընթացը շարունակելուն և պնդել են զենքի կիրառման անհրաժեշտությունը:

Ադրբեջանը մշտապես հանդես է գալիս խիստ նազմատենչ հռետորաբանությամբ, որը բացասաբար է անդրադառնում բանակցային գործընթացի մթնոլորտի վրա: Իրենց բացասական հետևանքն են թողնում նաև սահմանային սրացումներն ու հրադարարի ռեժիմի խախտման դեպքերը: Բացի այդ, բանակցային գործընթացի և վստահության մթնոլորտի վրա բացասական ազդեցությունն է ունենում նաև Ադրբեջանում հակահայկական քարոզչությունն ու հայաստացույթան սերմանումը, Շնդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության եվրոպական հանձնաժողովի 2011թ. Ադրբեջանի վերաբերյալ զեկոլյցում²⁷³ հատուկ ուշադրություն է հրավիրվում այս հանգամանքի նկատմամբ:

Բացի այդ, Մադրիդյան սկզբունքները ենթարկվում են բազմապիսի մեկնաբանությունների, իսկ հասարակության տեղեկացվածության և բանակցությունների էության մասին հստակ պատկերացում ունենալը հարցի տակ է դրվում երկրում ազատությունների ցածր մակարդակի պատճառով:

Ըստ Freedom House-ի ամենամյա զեկոլյցի 2012թ.-ին Ադրբեջանը դասվել է անազատ երկրների շարքին քաղաքական ազատությունների 6,93 միավորով (1-7 սանդղակով, որտեղ 1-ն ազատությունների առավելագույն մակարդակն է, իսկ 7-ը նվազագույնը): Հայաստանը դասվել է մասամբ ազատ երկրների շարքին, քաղաքական ազատությունները՝ 5,39²⁷⁴: Լեռնային Ղարաբաղը՝ մասամբ ազատ երկրների շարքին, համապատասխանաբար՝ 5: Ադրբեջանի ավտորիտարիզմը լրացուցիչ ամրապնդվեց նաև 2016թ. տեղի ունեցած սահմանադրական հանրաքվեով, որի արդյունքում նախագահի

²⁷³ Ecri report on Azerbaijan, European Commission against racism and intolerance, 31 May 2011, <http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/country-by-country/azerbaijan/AZE-CbC-IV-2011-019-ENG.pdf>

²⁷⁴ Nations in Transit 2017, Freedom House Report, <https://freedomhouse.org/report/nations-transit/nations-transit-2017>.

պաշտոնավարման ժամկետը երկարացվեց երկու տարով,
ընդլայնվեցին նրա լիազորությունները, ինչպես նաև սահմանվեց
փոխնախագահի պաշտոն, որը զբաղեցրեց Ի.Ալիևի կինը՝ Մեհրիբան
Ալիևան:

Տարածքային խնդիրները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման փաթեթներում

Ստորև մանրամասն ներկայացված է միջնորդների կողմից Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առաջարկած փաթեթների անդրադարձը տարածքային խնդրին:

1997թ. մայիսից հունիս ԵԱՀԿ ՄԽ համանախագահները մշակեցին և կողմերին առաջարկեցին կարգավորման Փաթեթային տարբերակը:

Փաթեթային տարբերակը ենթադրում էր Լեռնային Ղարաբաղին ինքնավարության տրամադրում Ադրբեյջանի տարածքում: Յամապատասխանաբար գործերի դուրսբերում մինչև 1988թ. ԼՂԻՄ սահմանագծից: Լաչինի շրջանով նախատեսվում էր տրամադրել միջանցք ԼՂ-ն Յայաստանի հետ կապելու համար, սակայն վերջինս ներառում էր ոչ ամբողջ Լաչինի շրջանը՝ Լաչին քաղաքը, ինչպես նաև միջանցքից դուրս շրջանի տարածքը հանձնվում է Ադրբեյջանի վարչարարությանը, իսկ միջանցքը վարձակալության էր տրվում ԵԱՀԿ-ին, որն այն տրամադրում էր Ղարաբաղին: Ծուշին և Ծահումյանը համապատասխանաբար նախատեսվում էր հանձնել Բաքվի և Ստեփանակերտի վարչարարության ներքո:

Փաթեթային տարբերակում ասվում է. «Յայաստանի ուժերը դուրս են բերվում Յայաստանի Յանրապետության տարածք: Լեռնային Ղարաբաղի ուժերը դուրս են բերվում Լեռնային Ղարաբաղի ինքնավար Յանրապետության 1988թ. սահմանագծից ներս (ստորև՝ VIII և IX կետերում նշված բացառություններով)²⁷⁵: Ադրբեյջանի ուժերը դուրս են բերվում դեպի թիվ 1 Յավելվածում²⁷⁶ համաձայնեցված գծեր՝ Բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականների հիման վրա»²⁷⁷:

²⁷⁵ *Նշված կետերը վերաբերում են Լաչինի միջանցքին և Ծուշի քաղաքին ու Ծահումյանի շրջանին:*

²⁷⁶ *Գաղտնագերծ ված չէ*

²⁷⁷ ԼՂ հարցի կարգավորման փաթեթային տարբերակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր (նախագիծ), Յամաձայնագիր թիվ 2 – կարգավիճակը, 1997թ. հունիս:

«Ուժերի դուրսբերման ավարտին Բուժերային գոտին տեղակայված է լինում 1988թ. ԼՂԻՄ սահմանագծի և հայ-ադրբեջանական սահմանի հյուսիսային մասի երկայնքով»: «Լեռնային Ղարաբաղի վարչական սահմանները գծվում են նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմաններով»:

Լաչինի միջանցքի վերաբերյալ ամրագրվում է. «Ադրբեջանը Միջանցքը վարձակալությամբ տրամադրում է ԵԱՀԿ-ին, որը պայմանագիր կկնքի՝ Միջանցքը բացառապես Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից օգտագործվելու մասին: ԵԱՀԿ-ն հետևում է Լաչին քաղաքը շրջանցող ճանապարհի շինարարությանը: Շինարարության ավարտից հետո Լաչին քաղաքը հանվում է Լաչինի միջանցքից: Այն վերադարձվում է ադրբեջանական վարչարարության ներքո (որպես Բաժանարար գոտու մաս), և նրա նախկին բնակիչները կկարողանան վերադառնալ: Լաչինի շրջանի տարածքը՝ Միջանցքի շրջանակներից դուրս, համարվում է Բաժանարար գոտու մաս»:

Նշվում է, որ կողմերը դուրս են բերում իրենց զինված ստորաբաժանումները Շուշի քաղաքից և Շահումյանի շրջանից, տեղահանված անձինք վերադառնում են իրենց նախկին բնակավայրերը և «համապատասխանաբար ներկայացված կլինեն Բաքվի և Ստեփանակերտի խորհրդարաններում և ընտրական խորհուրդներում, այդ վայրերի ոստիկանությունում և անվտանգության ուժերում»:

Փաթեթային տարբերակն ընդունվել է Ադրբեջանի կողմից, Չայաստանը որոշակի դիտողություններ է արտահայտել, սակայն, ընդհանուր առմամբ, դրական գնահատական է տվել փաթեթային տարբերակին, ԼՂՀ իշխանություններն այս տարբերակը մերժել են: Տարածքների հարցի առումով Չայաստանն անհամաձայնություն է հայտնել Լաչինին վերաբերող կետի առնչությամբ՝ նշելով, որ այն «չի լուծում Լեռնային Ղարաբաղի անկլավային գոյության մասին խնդիրը»:

1997թ. սեպտեմբերին առաջարկված «Փուլային տարբերակը» ենթադրում էր Արցախյան զորքերի դուրսբերում մինչև ԼՂԻՄ 1988թ.

սահմանագիծը և Լաչինի շրջան: Ազատագրված մյուս շրջանների տարածքում ենթադրվում էր բուժերային և բաժանարար գոտու ստեղծում և բնակչության վերադարձ: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի, ինչպես նաև Լաչինի, Շուշիի և Շահումյանի հարցերը հետագայում պետք է կարգավորվեին բնակչության ունենքի միջոցով:

Փաստացի, ազատագրված յոթ շրջաններից վեցը համաձայնագրով վերադարձվում էին Ադրբեջանին, ԼՂԻՄ կարգավիճակը կորոշվեց բնակչության ունենքի արդյունքում, բնակչության ունենքով կորոշվեին նաև Շուշիի, Լաչինի և Շահումյանի շրջանների հարցերը:

Փաթեթում նշվում է. «Չայաստանի ցանկացած ուժ, որը տեղաբաշխված է Չայաստանի Չանրապետության սահմաններից դուրս, դուրս է բերվում այդ սահմաններից ներս: Լեռնային Ղարաբաղի ուժերը դուրս են բերվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 1988թ. սահմանագծից ներս՝ բացառությամբ Լաչինի շրջանի: Ադրբեջանի ուժերը դուրս են բերվում դեպի թիվ 1 Չավելվածում²⁷⁸ նշված սահմաններից անդին՝ բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականների հիման վրա, և դուրս են բերվում Չայաստանի ցանկացած տարածքից»²⁷⁹:

«Ուժերի դուրսբերման ավարտին Բուժերային գոտին տեղակայվում է 1988թ. ԼՂԻՄ սահմանագծի և Լաչինի շրջանի հյուսիսային և հարավային սահմանագծերի երկայնքով»:

Ամրագրվում է, որ Չամաձայնագրի երեք կողմերը, վերջ դնելով հակամարտության պատերազմական կողմին, «համաձայն են Մինսկի համաժողովի համանախագահների օժանդակությամբ բարեխղճորեն շարունակել վարել բնակչության ունենքի ԵԱՀԿ Գործող Նախագահի կողմից համապատասխանաբար հրավիրված այլ կողմերի հետ հակամարտության մյուս բոլոր կողմերի անհետաձգելի համընդգրկուն կարգավորմանը հասնելու նպատակով, ներառյալ

²⁷⁸ *Գաղտնագրած ված չ է*

²⁷⁹ ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակ, Չամաձայնագիր Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության դադարեցման մասին (նախագիծ), 2 դեկտեմբերի, 1997թ.:

քաղաքական կողմը, ինչը ներառում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումը և Լաչինի, Շուշիի և Շահումյանի հետ կապված խնդիրների լուծումը, այսպիսի կարգավորումը բանակցությունների ճանապարհով իրականանալու և վերոհիշյալ Կողմերի կողմից ստորագրվելու և հետո, ենթակա է ճանաչման միջազգային հանրության կողմից հնարավորինս արագ հրավիրվելիք Մինսկի համաժողովի ժամանակ»:

Փոլլային տարբերակը ևս մերժվել է ԼՂՀ իշխանությունների կողմից:

Հայաստանը համաձայնել է այս առաջարկն ընդունել որպես բանակցությունների հիմք: «Չնայած Համաձայնագրում ներկայացված՝ Շուշիի, Շահումյանի հետքաշումների և, հատկապես, Լեռնային Ղարաբաղի անվտանգության հարցերի շուրջ ունեցած լուրջ առարկություններին և վերապահումներին՝ Հայաստանը Համաձայնագրի սույն նախագիծն ընդունում է որպես բանակցությունների հիմք»²⁸⁰, - ասված է Հայաստանի դիրքորոշումն արտահայտող գրության մեջ:

Ինչպես նաև հայաստանյան դիրքորոշումը ներառում է դիտարկում առ այն, որ բաժանարար գոտին, որտեղ ենթադրում է իրականացնել նախկին բնակչության վերադարձ պետք է ներառի նաև Շահումյանի շրջանը:

1998թ. նոյեմբերին առաջարկված «Ընդհանուր պետություն» տարբերակն ամրագրում էր, որ «Լեռնային Ղարաբաղը Հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում պետք է լինի և Ադրբեյջանի հետ միասին կազմավորի «Ընդհանուր պետություն»՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում»: Այս փաթեթը ենթադրում էր գործերի դուրսբերում մինչև 1988թ. ԼՂԻՄ սահմանագիծը՝ բացառությամբ Լաչինի շրջանի: Լաչինի շրջանի վերաբերյալ հետագայում պետք է համաձայնություն ձեռք բերվեր Ադրբեյջանի և ԼՂ-ի միջև, հակառակ դեպքում այն պետք է մնար

²⁸⁰ ԼՂ հակամարտության կարգավորման փոլլային տարբերակ, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության դադարեցման մասին (նախագիծ), 2 դեկտեմբերի, 1997թ.:

ամբողջովին ապառազմականացված գոտի: Ադրբեջանցի բնակչությանը իրավունք էր ստանում վերադառնալ Շուշի քաղաք, իսկ հայ փախստականները՝ Շահումյան, Նրանց անվտանգությունը երաշխավորվում էր իշխանությունների կողմից և իրավունքները հավասարեցվում են մյուս քաղաքացիներին:

Փաստաթղթում ասվում է.«Լեռնային Ղարաբաղի սահմանները կհամապատասխանեն նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմաններին: Դրանց հնարավոր ճշգրտումները կամ փոփոխությունները կարող են լինել Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև հատուկ փոխադարձ պայմանավորվածությունների առարկա»²⁸¹:

Լաչինի վերաբերյալ ամրագրվում է, որ «Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև անարգել հաղորդակցություն ապահովելու նպատակներով Լեռնային Ղարաբաղի կողմից Լաչինի միջանցքն օգտագործելու հարցը հանդիսանում է առանձին պայմանավորվածության առարկա, եթե Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի համաձայնությանը չընդունվեն այլ որոշումներ Լաչինի շրջանի հատուկ ռեժիմի վերաբերյալ: Լաչինի շրջանը մշտապես պետք է մնա որպես լիովին ապառազմականացված գոտի»:

«Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ բոլոր ադրբեջանցի փախստականները կարող են վերադառնալ Շուշի քաղաքի իրենց բնակատեղիները: Նրանց անվտանգությունը կերաշխավորվի Լեռնային Ղարաբաղի համապատասխան իշխանությունների կողմից: Նույնափսի իրավունքներ կստանան նաև հայ փախստականները քաղաք Շահումյան վերադառնալու դեպքում»:

«Ուժերի դուրսբերման ավարտով ԲուՖերային գոտին տեղադրվում է ԼՂԻՄ 1988 թվականի սահմանագծի երկայնքով: Լրացուցիչ պայմանավորվածության հասնելու դեպքում այն կարող է անցնել նաև Լաչինի շրջանի սահմանագծերով»:

²⁸¹ ԼՂ հարցի կարգավորման «Ընդհանուր պետություն» տարբերակ Լեռնային Ղարաբաղի գինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին, Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, 10 նոյեմբերի, 1998թ.:

«Ընդհանուր պետություն» տարբերակը մերժվել է Ադրբեջանի կողմից:

Հայաստանը տվել է իր համաձայնությունն այս փաթեթին, որպես բանակցությունների հիմք: «Այս փաստաթղթում տեղ գտած մի շարք դրույթների վերաբերյալ Հայաստանն ունի վերապահումներ, սակայն դրանց կանդիդատնա բանակցությունների ընթացքում», - ասված է Հայաստանի պաշտոնական արձագանքի մեջ:

2001թ.-ին Քի-Վեսթում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Լեռնային Ղարաբաղը Լաչինի շրջանի մի հատվածով պետք է միանար Հայաստանի Հանրապետությանը: Այդ ժամանակահատվածում բարձր պաշտոններ զբաղեցրած անձանց հայտարարություններից բխում է, որ փաթեթը ենթադրում էր ազատագրված շրջանների վերադարձ Ադրբեջանին՝ բացառությամբ Լաչինի շրջանի մի մասի²⁸²:

Քի-Վեսթի բանակցությունների ժամանակ քննարկվել է նաև Ադրբեջանի և Նախիջևանի միջև կապն ապահովելու համար Մեղրիի շրջանն Ադրբեջանին հանձնելու հարցը, ինչը հայկական կողմը մերժել է: Այդ մասին իր հարցազրույցում նշել է Վարդան Օսկանյանը: «Ես նկատի ունեմ վերջին շրջանի խոսակցությունները, որ մենք տալիս ենք տարածքները: Խոսքը վերաբերում էր Մեղրիի շրջանի փոխանակման տարբերակին: Երբ այդ հարցը բարձրացավ, մենք միանշանակ հայտարարեցինք, որ մերժել ենք նման լուծման տարբերակը, բայց չենք ժխտել, որ նման տարբերակ եղել է: Մենք ասել ենք, որ նման առաջարկ եղել է, բայց մերժվել է», - ասել է Օսկանյանը²⁸³: Նույն հարցազրույցում նաև ասել է, որ ըստ Քի-Վեսթի պայմանավորվածությունների, բացի Լաչինից վեց շրջանները վերադարձվելու էին Ադրբեջանին: Քի-Վեսթում բանակցությունների թե՛ փաստից, թե՛ արդյունքներից ադրբեջանական կողմը հետագայում հրաժարվել է:

²⁸² «Քի Վեսթը «շեղում» էր բանակցային գործընթացի տրամաբանությունից», , 4 Ապրիլ 2011, <http://www.mediamax.am/am/news/keywest/544/>

²⁸³ Интервью министра иностранных дел Вардана Осканяна телекомпании "A1+", 12 мая 2001, http://archive.aravot.am/2001/aravot_rus/May/12/st01.htm

2007թ.-ին բանակցությունների սեղանին դրված, հետագայում թարմացված «Մադրիդյան սկզբունքներում» առավել ընդհանրական ամրագրվում է Ղարաբաղի և Հայաստանի միջև միջանցքի անհրաժեշտությունն ու ազատագրված տարածքների վերադարձի անհրաժեշտությունը՝ շրջանների քանակի, տարածքի, Շահումյանի մասին որևէ մանրամասն պայմանավորվածություններ այսփուլում չեն ակնկալվում (համենայն դեպս գաղտնագերծված կետերից ելնելով):

Լ'Ակվիլայի հայտարարության մեջ, մասնավորապես ասված է.«Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության տակ: Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցք»²⁸⁴:

²⁸⁴ Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009.